Գ.Հ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

# ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

## ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

ԵՐԵՎԱՆ
ՀԱԱՀ
2015

ՀՏԴ 37.016 : 821.19(07)
ԳՄՏ 74.268.3 g7
Կ 530

**Գրախոսներ՝** բան. գիտ. թեկն.,
դոցենտ Օ.Մ.Խաչատրյան

**Խմբագիր՝** բան. գիտ. թեկն.
Ն.Պ.Սարգսյան

**Կիրակոսյան Գագիկ Հակոբի**
Կ 530 Հայ գրականության դասավանդման մեթոդիկա
Ուսումնամեթոդական ձեռնարկ Գ.Հ.Կիրակոսյան - Եր.: ՀԱԱՀ, 2015 - 200 էջ:

Դասավանդման նոր պահանջների ոգով գրված այս աշխատությունն աչքի է ընկնում ժամանակակից մեթոդիկայի արդյունավետ ձևերի ու եղանակների հմուտ կիրառմամբ, փաստական հարուստ նյութով: Դասավանդման միանգամայն տարբեր մեթոդների ընտրությունը նախատեսում է գիտելիքի փոխանցում ոչ թե ավանդական սկզբունքով, այլ հնարավորություն է տալիս ինքնուրույն հասնել նյութի իմացությանն ու տալ անձնական գնահատական, արտահայտել վերաբերմունք և հայտնել սեփական կարծիքը:

ՀՏԴ 37.016 : 821.19(07)
ԳՄՏ 74.268.3 g7

ISBN 978-993-54842-5

© Գ.Հ.Կիրակոսյան, 2015
© Հայաստանի ազգային ագրարային համալսարան, 2015

# *Սովորողը գրականության ժամին պետք է կարողանա*

- ✓ պահպանելով ուղղախոսական կանոնները՝ կարդալ սահուն, առոգանությամբ, արտահայտիչ՝ ընկալելով կարդացածի ենթատեքստը, փոխաբերական, այլաբանական և խորհրդանշական իմաստը, լեզվաոճական առանձնահատկությունները.
- ✓ վերարտադրել սյուժեն.
- ✓ պատմել նյութը մանրամասնորեն.
- ✓ պատմել նյութը համառոտելով.
- ✓ վերլուծել ստեղծագործությունը.
- ✓ վերնագրել դասի առանձին հատվածները.
- ✓ փոխել նյութի ավարտը.
- ✓ բացատրել նյութի անհասկանալի բառերը.
- ✓ պատասխանել հարցերին.
- ✓ կազմել պլան.
- ✓ անել սեփական եզրակացություն.
- ✓ բացահայտել դասի դաստիարակչական նպատակը.
- ✓ բխեցնել բարոյախրատական եզրակացություն.
- ✓ մեկնաբանել կարդացածը և վերլուծել.
- ✓ բնութագրել գրական հերոսին, նրա արարքները մեկնաբանել սոցիալ-հոգեբանական տեսանկյունից.
- ✓ արտահայտել կարծիք կարդացածի և լսածի մասին՝ հիմնվելով փաստացի ապացույցների վրա.
- ✓ արդիականացնել նյութը.
- ✓ տարբերել հիմնական ասելիքը երկրորդականից.
- ✓ տարբերակել գրական ժանրերը.
- ✓ տարբերակել գրականության շրջաբաժանումները.
- ✓ զատել միմյանցից իրական, պատմական և գեղարվեստական փաստերը.
- ✓ տարբերակել գրական ուղղություններն ու հոսանքները.
- ✓ երկխոսություն, բանավեճ վարել, տրամաբանված կարծիք, տեսակետ, համոզմունք հայտնել.
- ✓ գեղարվեստական խոսքի միջոցով արտահայտել իր հույզերը, ապրումներն ու մտորումները, անել ինքնուրույն ստեղծագործելու փորձեր.
- ✓ հանդես գալ ընդարձակ և հակիրճ ելույթներով.
- ✓ ստեղծագործաբար կիրառել ձեռք բերած գիտելիքները.
- ✓ երևակայել, խորհել և ենթադրություններ անել.

- ✓ լսել, ընկալել և համարժեք վերաբերմունք դրսևորել.
- ✓ ըստ նշանակության և տեղին օգտագործել սովորած տերմիններ /եզրերը/, հասկացությունները և արտահայտությունները.
- ✓ հասկանալ և ճիշտ օգտագործել հաղորդակցման ոչ խոսքային միջոցները.
- ✓ բանավոր և գրավոր տրամաբանված խոսք կառուցել.
- ✓ ընկալել և տեսնել գեղարվեստական խոսքի յուրահատկությունները, արժևորել և սեփական գնահատականը տալ երկին.
- ✓ ինքնուրույն հետազոտական աշխատանքով բացահայտել գրական երկի կառուցվածքի, բովանդակության, գործողությունների զարգացման յուրահատկությունները.
- ✓ առաջադրել գրական երկում դիպաշարի, գործողությունների զարգացման սեփական վարկածը:

# *Կենսագրության ուսուցման մեթոդիկա*

«Գրողի կենսագրությունը նրա
ստեղծագործության ամենալավ
մեկնությունն է. իսկ
ստեղծագործությունը՝ նրա
կյանքի լավագույն
հիմնավորումը»:
Բելինսկի

Գրողին հանրության ճանաչմանը ներկայացնելիս նկատելի է արմատացած մի մոտեցում՝ ներկայացնել հիմնականում գրական ժառանգությամբ և այդ ժառանգության վերլուծական արժեքավորումներով:

Ներշնչանքի զորեղ աղբյուր է նաև գրողի կյանքի պատմությունը, որը և գրականության դպրոցական դասընթացի կարևոր բաղադրիչն է: Սակայն գրականության դասավանդման պրակտիկայում գրողի կյանքի ուսումնասիրման գործը դեռևս բավարար չէ:

Մեր նախնիները դեռևս պատմական խոր անցյալում քաջ գիտակցել են դաստիարակչական այն մեծ ուժը, որն իր մեջ պարունակում է նշանավոր մարդկանց կյանքի պատմությունը, և այդ ուժի գործադրման հիանալի նմուշներ են կտակել գալիք սերունդներին: Բավական է հիշել Կորյունի «Վարք Մաշտոցի» գիրքը, որը կենսագրական բնույթի է: Ուզում եմ հենց Կորյունի խոսքերով ներկայացնել Կորյունի նպատակը, երբ գրում էր «Վարք Մաշտոցին». «Ի քաջալերիչ օրինակ իրենց հոգևոր զավակներին և այն ամենքին, որ նրանց միջոցով աշակերտելու են սերնդեսերունդ:»

Սովորողներին մատուցվող կենսագրականները դեռևս հեռու են գրողի՝ իբրև մտածող ու հուզվող, տառապող ու տքնող, մաքառող ու մարտնչող մարդու կենդանի և հյութեղ նկարագիրը լինելուց:

Կենսագրական նյութի ճանաչողական ընդգրկումների անհրաժեշտ չափի պակասը կենսագրական նյութը զրկում է ազդելու, ներգործելու վիթխարի ուժից, նվազեցնում գրականության դասընթացի կրթադաստիարակչական արժեքը:

Գրողի կյանքը պետք է ծառայեցնել աշակերտների դաստիարակության գործին, պետք է վարակել նրանց գրողի հայրենանվեր վարքի ու գործի, բնավորության արժեքավոր գծերի ու առաքինությունների օրինակով, դաստիարակել հումանիզմի ու ժողովրդասիրության, ընդհանուրի շահերի նկատմամբ սրտացավության, հասարակական պարտքի գիտակցման ոգով:

Այն հանգամանքը, որ գրողի կյանքը բանալի է նրա ստեղծագործական իրողությունների պարզաբանման համար, հենց դա էլ արժևորում է գրողի կենսագրության դաստիարակչական դերը:

Դասավանդողի նպատակը պետք է լինի գրողի կյանքը դարձնել սերունդների ճակատագիրը դարբնող ճշմարիտ ուղեցույց:

Իսկ ինչպե՞ս ներկայացնել գրողին ու նրա կյանքը, ի՞նչ մոտեցում հանդես բերել արվեստի նշանավոր գործիչների կյանքը քննելիս:

Գրողին պետք է ուսումասիրել ոչ թե մասնակի մոտեցմամբ, այլ ամբողջության մեջ, նրա կյանքի ու գործունեության վերաբերյալ բազմապիսի տեղեկությունների ընդգրկմամբ: Որքան խորն ու ամբողջական է գրողի անցած ուղու ուսումնասիրումը, այնքան ավելի մեծ է կենսագրական նյութի ճանաչողական և դաստիարակչական նշանակությունը: Գրողի կյանքի ուսումնասիրումը պետք է իրագործել հաղորդվելիք նյութի օրինակով սերունդներին քաջալերելու, կրթելու, դաստիարակելու միտումով:

Ելնելով վերոհիշյալից՝ առաջարկում եմ գրողի կենսագրության ուսուցման մոտավոր պլան.

Ունենալ գրողի մեծ դիմանկարը և կյանքը լուսաբանող նկարներ, ալբոմներ

1. Հայ և օտարազգի նշանավոր մարդկանց ասույթներն ու կարծիքները գրողի և նրա ստեղծագործության մասին.
2. Բանաստեղծություններ՝ նվիրված գրողին ու նրա ստեղծագործությանը.
3. Ժամանակակիցների հուշերը գրողի մասին.
4. Գրողի ապրած ժամանակաշրջանը.
5. Ինքնակենսագրական նյութեր.
6. Ծննդավայրը.
7. Ծնողները.
8. Մանկությունը.
9. Ուսումնառությունը.
10. Գրական գործունեությունը.
11. Հասարակական-քաղաքական դիմանկար.
12. Գրողի դերն ու նշանակությունը գրականության պատմության մեջ.
13. Գրողի նամականին (նրա ուղարկած և իրեն հասցեագրված նամակները).
14. Գրողի կենսագրությանն առնչվող լրացուցիչ նյութեր, փաստեր.
15. Էքսկուրսիա գրողի տուն-թանգարան:

Այժմ փորձենք հնարավորինս ներկայացնել Սայաթ-Նովայի կենսագրությունն՝ ըստ այս ընդհանուր պլանի:

Փակցնում եմ գրողի գունավոր մեծ դիմանկարը և ասում, որ

Սայաթ - Նովայի իսկական, հարազատ պատկերը մեզ չի հասել, ինչպես չեն հասել միջնադարի ու ավելի ուշ շրջանի գրողների նկարները: Սովորողներին տեղեկացնում եմ, որ փակցված լուսանկարը Հրաչյա Լիպարիտի Ռուխկյանի ձեռքի գործն է (1945): Ցույց եմ տալիս Ռուխկյանի նկարների ալբոմը և ավելացնում, որ ՀՍՍՀ վաստակավոր նկարիչ Հր. Ռուխկյանը ծնվել է 1915թ. Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի): 1941 թվ. ավարտել է Թբիլիսիի գեղարվեստական ակադեմիան: 1941-44 թվ. մասնակցել է Հայրենական Մեծ պատերազմին: Ռուխկյանի բազմաթիվ նկարներ գտնվում են նախկին ՍՍՀՄ տարբեր թանգարաններում (այդ թվում՝ Արևելքի ժողովուրդների արվեստի պետական թանգարանում (Մոսկվա) և Հայաստանի պետական պատկերասրահում):

Սրանից հետո անցում եմ կատարում պլանի 2-րդ կետին, քանի որ Սայաթ - Նովայի մասին խոսելիս անհնար է չհիշել հայ մշակույթի բարեկամների խոսքերը մեծ երգչի մասին: Լսում եմ սովորողների գրած հայ և օտարազգի նշանավոր մարդկանց աույթներն ու կարծիքները Սայաթ - Նովայի և նրա ստեղծագործությունների մասին (աշխատանքը հանձնարարված էր նրանց մի քանի դաս առաջ): Լսելուց հետո ես ինքս եմ կատարում որոշ լրացումներ նախօրոք իմ գրածներից, որը ներկայացնում եմ նաև Ձեզ:

«Սայաթ - Նովան մեկն է այն առաջնակարգ բանաստեղծներից, որոնք իրենց հանճարի ուժով արդեն դադարում են լինել մեծ ժողովրդի սեփականությունը և դառնում են բովանդակ մարդկության սիրելին»:

**Վալերի Բրյուսով**

«Սայաթ - Նովան՝ որպես մեծ, ոչ մտացածին զգացմունքների երգիչ, գովաբանեց մարդկային գեղեցկությունը և մտածեց վեհ ձգտումներով ապրող և շահերի ու արքաների քմահաճություններին ոչ ենթակա մարդու մասին»:

**Նիկոլայ Տիխոնով**

«Համարյա երեք հարյուր տարի է անցել, բայց դեռ չի կտրվել Սայաթ - Նովայի քամանչի լարը, և ոչ միայ չի կտրվել, այլև օրեցօր ավելի հուժկու, ավելի պայծառ է դառնում նրա երգը»:

**Նոդար Դումբաձե**

«Սայաթ - Նովան Անդրկովկասի ժողովուրդների եղբայրության առաջին երգիչն է, ամենամեծ հայրենասերը: Կեցցե հայ ժողովրդի ծոցից ելած Անդրկովկասի մեծ հանճարը»:

**Իրակլի Աբաշիձե**

«Սայաթ - Նովան մեր սրբությունն է, մեր ժողովուրդների բարեկամության ամրակուռ հիմնաքարերից մեկը»:

**Կոստանտին Գամսախուրդիա**

«Սայաթ - Նովան Անդրկովկասի ժողովրդի մութ անցյալի լուսավոր աստղն է»:

**Գեորգի Լեոնիձե**

Բերենք նաև հայ մշակույթի երախտավորների խոսքերը գուսանի մասին:

«Եվ այսօր էլ՝ երկու դար հետո էլ, մենք նրանից (Սայաթ - Նովա) սովորում ենք ամենադժվարին գիտությունը՝ ազնվորեն ապրել և դժվարագույն արվեստը՝ բոլորանվեր սիրելը…»

**Պ. Սևակ**

«Սայաթ - Նովան մինչև հիմա կախարդել է ինձ, և ես չեմ կարող ելնել երևակայական դյութանքից»:

**Ավ. Իսահակյան**

«Սայաթ - Նովան երկպառակությունների, ազգային գժտության անզիջում հակառակորդն էր, նա Կովկասի բոլոր ժողովուրդների բարեկամության համոզված կողմնակիցն էր, սիրո և բանկանության կոչ էր անում: Նա Անդրկովկասի համաժողովրդական և համազգային աշուղն էր»:

**Հր. Հովհաննիսյան**

«Քանի՞ տարի մեջլիսներում տաղ ես ասել, Սայա՛թ - Նովա,
Քանի՞ տարի դու սրտերի հետ ես խոսել, Սայա՛թ - Նովա,
Կարոտ բլբուլ, ամեն գարուն եկել ես դու վարդերի հետ
Ու սիրելով ու սիրվելով մեզ՞ ես հասել, Սայա՛թ - Նովա»:

**Սիլվա Կապուտիկյան**

«Ախ՞, թե գայիր, քեզ կտայինք՝ փառքի հազար դարեր վրան՝
Մասիս սարը՝ քեզ քյամանչա, ձյունը սադաֆ քարեր վրան,
Արծաթ Զանգու, ոսկի Արազ՝ միշտ հայախոս լարեր վրան,
Դու դարդիման իմ հայ սրտով Կովկասի յար Սայաթ - Նովա»:

**Հովհաննես Շիրազ**

«Խաղով եկավ,
Ախով գնաց Սայաթ - Նովան.
Երգով եկավ,
Վերքով գնաց Սայաթ - Նովան.
Սիրով եկավ,
Սրով գնաց Սայաթ - Նովան.
Սիրով մնաց Սայաթ - Նովան»:

**Հովհաննես Թումանյան**

«Ոսկե բառեր, անգին քարեր, լալ ու գոհար շարել ես դու,
Քեզ միայն քո յարն է վառել - քանի՞ յարեր վառել ես դու:
Ո՞ր շահն ունի այդքան ոսկի ու անգին քար, Սայաթ - Նովա,
Չի ունեցել քեզ պես շռայլ խալխը՝ նոքար Սայաթ - Նովա»:

**Եղիշե Չարենց**

«Անմահ երգի շող ու շարբաթ ու ադամանդ այնքան գտար,
Գյոզալների գովքը արիր, ոչ մի գյոզալ քեզ չգթաց,
Ձայնդ հասավ Հինդ ու Հաբաշ, Արաբստան ու Չինմաչին,
Բայց ոչ մի տեղ վառվող վերքիդ դեղ ու դարման դու չգտար»:

**Համո Սահյան**

Սայաթ - Նովային
Քանի դեռ կա այս աշխարհը,
Չես դադարի դու սիրվելուց,
Գերեզմանիդ մարմար քարը
Կմաշվի լոկ… համբուրվելուց:

**Լ. Թորոսյան**

Սայաթ - Նովա

Ամեն սազի միջին գոված, սազիդ ոսկե լարն է անգին,
Նման մի սազ չնվագեց ուրիշ մեկը, Սայաթ - Նովա,
Ուրիշ գյոզալ յարերի մեջ քո գյոզալի նազն էր անգին,
Շահնշահի սիրտ գերողն էր քո նազանին, Սայաթ - Նովա:

Սիրտդ սիրո հրից վառվեց,դաղվեց սիրտդ սիրո հրից,
Երբ Աննայիդ խլեց քեզնից արքան անգութ, Սայաթ - Նովա,
Ռաբուն դարձար մի խուլ վանքում, խալխի ցավով տառապեցիր,
Յարիդ սիրուց Մեջնուն դարձար, անզուգական Սայաթ - Նովա:

Ոսկի, գոհար, լալ, ադամանդ չունեն գինը քո երգերի,
Ժանգ են դրանք փառքիդ դիմաց, երգիդ դիմաց, Սայաթ - Նովա:
Աշխարհի մեջ քանի դեռ կան բաղ ու բլբուլ, բույրը վարդի,
Երգերը քո հավերժ կապրեն վարդի բույրով, Սայաթ - Նովա:

**Սերգեյ Եպիսկոպոսյան**

## *Վերջին գիշեր*

Սայաթ - Նովային

Գիշերվա այս խորունկ ժամին
Ո՞վ է արդյոք լուռ մաքառում՝
Հոգին խռով, ցասումնալի,
Վերջին ձեթով կանթեղ վառում:
Մտորում է նա ինքնիրեն
Քամանչի հետ իր անբաժան,
Մի՞թե խուցն է տան փոխարեն
Բանտել նրա վիշտը դաժան…
Ո՛չ պատերը սև, սառնաշունչ,
Ո՛չ զգեստը վանականի,
Չեն սպանել սեր ու անուրջ,
Չեն մոռացրել „ռաշ-նազանին…”
Լսում է նա սիրակարոտ
Հորովելը անուշ ու հեգ,
Մեկ թռչում է Աննայի մոտ՝
Սրտում հազար հառաչ ու վերք:
Մեկ բլբուլի հետ է լալիս
Վանքը նեղ է, սիրտն անսահման,
Մեկ երեկվան երնեկ տալիս՝
Վանդակն ընկած ղշի նման:
Մեկ ռամիկի ձայնն է լսում.
«Արի համով շուլլուղ արա»,
Ինքը մեկն է, վիշտը՝ բազում,
«Վուր կրակին նա դիմանա»:
Գիշեր է խոր, այդ ուշ ժամին
Նրա հոգին արթուն է դեռ,
Գույժ են բերում, որ թշնամին
Իր հայրենի հողն է մտել:
Եվ կանթեղն է վառվում վերջին…
Անհավասար կռվի բոցում
Թշնամին է վշտոտ երգչի
Խոցված սիրտը նորից խոցում:
«Քանի գուզե քամին տանե՝
Չի պակասի ծովից ավազ»,
Բայց աշխարհի մեջլիսներից
Պակասում է ոսկե մի սազ…
Ու հասնում է երգի հուրը,
Հրդեհվում է նրա հոգին,
Ով խմում է նրա ջուրը,
Վարդ է բացվում նրա կրծքին,
Ամեն մարդ է գերվում, այրվում
Ոսկեփնջան նրա գրով,
Ամեն մարդ է սիրահարվում
Նրա երգած վարդի բույրով:
Երգչի սերը վարդի փոխված՝
Շրթից շուրթ է անցնում անվերջ,
Ու ապրում է Սայաթ - Նովան
Ամեն սրտում, դարերի մեջ:

**Սուրեն Մուրադյան**

## *Սայաթ - Նովա*

Երազ դառած ման ես գալիս
Տխուր-տրտում, Սայաթ - Նովա,
Որոնում ես, բայց գյոզալիդ
Դու չես գտնում» Սայաթ - Նովա:

Ա՜խ, չգիտեմ՝ այդ ինչ սեր է,
Որ չի հանգչում այսքան տարի,
Այդ ինչ հուր է, որ վառվում է
Ամեն սրտում, Սայաթ - Նովա:

Այն մութ դարում, խավար դարում
Լույսի անմար ջահ ես եղել,
Արքայական պալատներում
Հոգով անաչառ ես եղել:

Դու մի ռամիկ, խալխի նոքար,
Մեծ ու հանճարեղ ես եղել,
Արևի պես դու անվախճան
Ու անհատնում Սայաթ - Նովա:

**Հրաչյա Բեգլարյան**

Սովորողների գրածներին լրացում կատարելուց հետո հանձնարարում եմ գրականության տետրերում 5 րոպեի ընթացքում գրել այն, ինչ գիտեն Սայաթ - Նովայի կյանքի մասին:

Լսելով նրանց գրառումները Սայաթ - Նովայի կյանքի մասին՝ կենսագրության հաղորդման ժամանակ աշխատում եմ չծանրանալ այն հարցերի վրա, որոնց տեղյակ են սովորողները, այլ ավելի հանգամանորեն անդրադառնալ սովորողներին անհայտ փաստերին, դեպքերին, եղելություններին:

Պատմում եմ հետևյալը՝

### Կյանքը

Սայաթ - Նովան ինքնակենսագրություն չի թողել, և ոչ էլ իր ժամանակակիցներից որևէ մեկն է գրել նրա կենսագրությունը: Մեզ չի հասել նաև Սայաթ - Նովայի պատկերը: Ուստի Սայաթ - Նովային պետք է տեսնել իր երգերի մեջ: Այդ երգերում են ամփոփված նրա կյանքի փաստերը, մնացածը հուշ է, զրույց, լեգենդ, որ հյուսված է երգչի ուրախություններից ու վշտերից, նրա ապրած տառապանքներից ու վայելքներից, երազանքներից ու հուսախաբություններից:

Տարբեր ուսումնասիրողներ երգչի ծննդյան և մահվան տարեթիվը ճշտելիս հանգել են տարբեր թվականների: Սայաթ - Նովայի ծննդյան տարի են համարում 1707-1722 ընկած թվականները: Առավել շեշտված են 1712, 1717 և 1722 թվականները, որոնք էլ տեղ են գտել «Հայկական սովետական հանրագիտարանում»: Ասլան Ասլանյանի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Սայաթ - Նովան ծնվել է 1707 թվականին: Այս թվականն է ընդունում նաև Ալդա Գրիգորյանը՝ հիմք ընդունելով «Ալիփ ալահի սեվարսան, բէի բանդա» բանաստեղծությունը: Թարգմանաբար նշանակում է՝ «Առաջինը Աստծուն սիրեք, երկրորդը՝ կապ-

վեք»: Այս խաղի 20-րդ տողում ասված է՝ «Լամ Ալիֆ լամ, ձ ու իքի րե»: Սա ծածկագիր է, ուր Սայաթ - Նովան ասում է, որ ինքը 47 տարեկանից արդեն քայլել է 48: Ծածկագիրը արաբական տառերի հերթական համարով է: Այսինքն՝ Լամ = 23, Ալիֆ = 1, լամ = 23 ընդհանուր գումարը 23+1+23=47, իսկ մյուս կեսում՝ ձ ու Ալի իքի րե ձ = 27 Ալիֆ = 1, րե = 10, քանի որ իքի րե - կնշանակի 2x10. կլինի 27+1+20=48: Խաղը գրված է 1755թ. եթե 1755 - 48=1707: Ուրեմն Սայաթ - Նովան ծնվել է 1707 թվականին:

Իսկ Պարույր Սևակը 15 փաստով ապացուցում է, որ Սայաթ - Նովան ծնվել է 1722 թ: Եվ սա ավելի ճիշտ է. առաջին բանաստեղծությունը գրել է 30 տարեկանում և թվագրված է եղել 1752թ. 1752 - 30=1722: Երկրորդ փաստն այն է, որ Հերակլի քույրը՝ Աննան, ծնվել է 1722թվ-ին՝ /Ինձ ու իմ սիրած յարին մի տարի բերած գիտենաք/ վկայակոչելով վրացական աղբյուրները:

Ե՞րբ է ծնվել Սայաթ - Նովան, ո՞ր օրը, ե՞րբ է մահացել, ո՞ր օրը: Սրանով ոչինչ չի փոխվում: Իսկ ի՞նչ է մնում մեզ: Մնում է երախտագիտությամբ գլուխ խոնարհել նրա ծնողների առաջ: Իսկ ովքեր են եղել Սայաթ - Նովայի ծնողները:

Սայաթ - Նովայի նախնյաց հայրենիքը Կիլիկյան Հյաստանն է, իսկ հոր ծննդավայրը՝ Ադանան կամ Հալեպը. հորը կոչել են մահտեսի Կարապետ: 18-րդ սկզբներին երկար թափառումներից հետո հասել է Անդրկովկաս, հաստատվել Թիֆլիս քաղաքում, ամուսնացել հավլաբարցի Սառայի հետ: Սայաթ - Նովայի մոր ծնողներն էլ, ենթադրվում է, Լոռվա Սանահին գյուղից են: Խաղերից մեկում բանաստեղծ - աշուղն ինքը ասում է.

Սայաթ - Նովու վաթանիցըն հարց կու տան.
Մեկը կոսե Հինդ է, մեկը՝ Համադան…
Վաթանըս Թիֆլիսն է, կողմը՝ Վրաստան,
Մերըս՝ հավլաբարցի, հերըս՝ հալաբլու…

Սայաթ - Նովայի հայրը ուխտ է գնացել Երուսաղեմի սուրբ վայրերը ու այդ պատճառով «մահտեսի» պատվանունն է ստացել: Վերոհիշյալը հաստատվում է նաև 1766թ. Կախի քարվանսարայում արտագրած իր կրոնական մի ժողովածուի հիշատակագրության մեջ, ուր Սայաթ - Նովան ասում է.«Ով ընթերցող, զգծող գրոյս Մեղապարտ Ստեփանոս քահանայս, որ Սայաթ - Նովային կոչեն և հայրն իմ մահտեսի Կարապետ և մայրն իմ Սառա: Սայաթ - Նովայի ընտանիքը Թիֆլիսի մոքալաքներից (քաղաքային արհեստավորներ) էր:

## Կրթությունը

Որտե՞ղ և ի՞նչ կրթություն է ստացել Սայաթ - Նովան, հայտնի չէ: Վրաց գրականության մեջ անցյալ դարի 70-ական թվականներին,

հիմնվելով բանավոր տեղեկությունների վրա, գրում են, որ Սայաթ - Նովայի հայրը որդուն տվել է Դալիայի վանքը՝ գրագետ դառնալու: Այս կարծիքը տպագրվել է Թիֆլիսում հրապարակվող «Դրոյեբա» ամսագրում 1878 թ-ին: Գրել-կարդալ սովորել է նախ վրացերեն, իսկ հետո հայերեն, իմացել է նաև արաբերեն այբուբենը: 12 տարեկանից Սայաթ - Նովային տվել են արհեստի («Ինձ հանձնեցին ուստաքարի»)

Տասնըերկու տարեկանում ինձ հանձնեցին ուստաքարին
Տասնըերեք տարեկանում իմ արհեստում տըվի, անցա.
Տասնըչորսում իմ շնորհքով վարպետս պարգև ստացավ:

Ըստ Գ. Ախվերդյանի հավաքած տեղեկությունների՝ նա սովորել է ջուլհակություն և կարճ ժամանակում այնքան հմտացել, որ կտավը հինելու և գործելու նոր դազգահ է պատրաստել:

## Բանաստեղծի գրական անվան պատմությունը

Հայտնի է, որ յուրաքանչյուր ստեղծագործող իր համար գրական անուն ընտրելիս նկատի է առնում զանազան հանգամանքներ: Նախ՝ որպեսզի ստեղծագործողը կոչվի աշուղ և ունենա անուն, պետք է աշակերտի վարպետին: Իսկ աշակերտ եղած ժամանակ վարպետը, տեսնելով աշակերտի ով լինելը, ընդունակություններն ու հոգեբանությունը, նրան տալիս է համապատասխան անվանում (օր՝ Շիրին - քաղցր, Ջիվանի - երիտասարդ, Միսկին Բուրջի - աչքը կկոցված, Մահուբի Գևորգ - դժբախտ Գևորգ): Նույնիսկ մրցակիցները, լսելով մեկը մյուսի անունը, արդեն գիտեին, թե նա ում աշակերտն է եղել և ում հետ է գործ ունեցել: Այդպես է եղել և Հարություն Սայադյանի անցած ճանապարհը: Նա աշակերտ եղած ժամանակ ունեցել է «Աշուղ Օղլան» կեղծանունը, որը նշանակում է աշուղ-տղա: 1738 թվականից Աշուղ Օղլանը իրեն ճանաչում է Սայաթ - Նովա (սայաթ արաբերեն նշանակում է որսորդ, իսկ նովան՝ երաժշտություն, մեղեդի):

## Աշուղության մեջ կատարելագործվելը

25 տարեկան հասակում Աշուղ Օղլանը դառնում է ինքնուրույն վարպետ և մրցության ասպարեզ է մտնում: Մինչև 30 տարեկան հասակը աշուղը կատարելագործվել է աշուղական արվեստի մեջ, սովորել գլխավոր եղանակները և պարզ ու խառը չափերը, հորինել խաղեր՝ հարմարեցնելով հատուկ մեղեդիների: Հավանաբար ոչ քիչ տարիներ նա շրջել է Մերձավոր Արևելքում, եղել է Պարսկաստանում, Հնդկաստանում և Օսմանյան կայսրությանը ենթակա երկրներում, ուխտի գնացել հայ աշուղների հովանավոր «Մշո սուլթան Սուրբ Կարապետ» վանքը, մինչև որ ձեռք է բերել համընդհանուր ճանաչում:

Հայաստանում լինելու երազանքը դադար չի տալիս նրան: Ինչը

երազ էր թվում ու ցանկություն, դառնում է իրականություն, ինչը անհուսալի էր համարվում՝ տեսնում է և շոշափում: Դրանից հետո իր տաղերից մեկում գրում է. «Էջմիածնա մայր աթոռը և ազիզ ցեղը մերն է»:

Արդյոք գրերի հայր Մաշտոցի շիրիմը՞ չէր, որ մեր երգչին հուշեց «Գիր սիրե, ղալամ սիրե, դավթար սիրե» անմահ տողը: Եվ նույն սուրբ շիրի՞մը չէր դարձյալ, որ նրա հոգում խոսեց.«Գրիր ինչ լեզվով որ կամենում ես, ինչ լեզվով որ կարող ես՝ ազրբեջաներեն, վրացերեն, ֆրանսերեն, սակայն իմացիր, որ մայրենի լեզվով գրելիք քո երգերի մեջ է քո անմահությունը նախ և առաջ…»:

Սայաթ - Նովայի ուսումնառության գործում նախ և առաջ որոշակի դեր են կատարել Անդրկովկասի հայ աշուղները և ուշ միջնադարի հայ տաղերգուների՝ Նաղաշ - Հովնաթանի ստեղծագործություններն ու աշուղ Դոստիի խաղերը:

Ըստ ավանդական սովորույթի՝ ստեղծագործական առաջին քայլերը Սայաթ - Նովան սկսել է ադրբեջանական խաղերով, ապա աստիճանաբար անցել է հայերենի ու վրացերենի: Մեզ հասած ավելի քան 230 խաղերից 66-ը հայերեն են, 36-ը՝ վրացերեն, 125-ը՝ ադրբեջաներեն: Հայերեն են թարգմանված նրա վրացերեն բոլոր երգերը, իսկ ադրբեջաներենից՝ 85-ը: Սայաթ - Նովայի խաղերից շատերի մեղեդիները մոռացվել ու առմիշտ կորել են:

## Սայաթ - Նովան՝ վրաց արքունիքի երգիչ

1742թվականին, երբ Վրաստանի Թեյմուրազ թագավորի որդին՝ Հերակլ 2-րդը, ընտրվեց Կախեթի թագավոր, հենց նույն թվականին էլ նա պետք է ստեղծեր իր արքունիքի կազմը, այդ թվում նաև գուսանների (ժամանակին դա եղել է ընդունված կարգ, որ արքունիքը ունենա իր երաժշտական խումբը): Սայաթ - Նովան վանական եղած ժամանակ իր հյուրին՝ վրաց աբեղա Խելաշվիլուն, պատմել է հետևյալը. «Ես հիանալի չոնգուր էի նվագում և միաժամանակ պարսկական ձևերի վրա հորինում - հարմարեցնում վրացերեն երգեր: Այդպիսի բան դեռ չէր եղած: Երբ էրակլե թագավորը երաժիշտներիս մեջլիս հրավիրեց, ես պարսկական ձևերով ու եղանակներով վրացերեն երգեցի: Թագավորին շատ դուր եկավ և ինձ խալաթ պարգևեց: Դրանից հետո շատերը ցանկացան իմ օրինակին հետևել»:

1744թվականից Սայաթ - Նովան դառնում է արքունիքի երգիչ:

Սայաթ - Նովայից առաջ վրաց պալատական երգիչն էր նրա անմիջական նախորդ հայ նշանավոր աշուղ և նկարիչ Նաղաշ Հովնաթանը:

Խաղաղ չի անցել Սայաթ - Նովայի կյանքը պալատում, դավեր են նյութել նրա դեմ, արտաքսել պալատից 2 անգամ, նախ՝ 1753-ին, ապա՝ 1759 -ին վերջնականապես:

Սայաթ - Նովան արքունիքում ունեցել է նվիրական սիրո գաղտնիք, գաղտնիք, որ միայն իր տաղերին է վստահել և իր զմայլելի երգերի դավթարին՝ իր հոգու գաղտնարանին:

Բանասիրությունը ավելի հավանական է համարել այն կարծիքը, որ բանաստեղծի սիրո առարկան եղել է Թեյմուրազ արքայի դուստրը՝ Հերակլ II- ի քույրը՝ Աննան:

Սայաթ - Նովան պալատամերժ էր. նա երբեք հոգեկան հանգիստ չգտավ արքունիքում, չշլացավ այնտեղ տիրող փարթամությամբ: Ընդհակառակը, այդ կյանքը նրա մեջ ավելի ևս խտացրեց տերերի նկատմամբ եղած ատելությունը: Նա շանթարձակ խոսքեր նետեց վերնախավի մարդկանց հասցեին, մերկացրեց նրանց ընչաքաղցությունն ու անմարդկային արարքները՝ միշտ խորին հարգանք և սեր տածելով «ազնիվ մարթու» հանդեպ.

Ազնիվ մարդը ապրուստի է ման գալի,
Ամեն գյադա զարբաբի է տիրացել:

## Սայաթ - Նովայի կյանքի վերջին շրջանը

Թանձր մշուշով է պատված Սայաթ - Նովայի կյանքի վերջին շրջանը: 1759 թվականի կեսերին ավարտվում է Սայաթ - Նովայի՝ իբրև բանաստեղծի և երգահան - երաժշտի կյանքը, և նա մուտք է գործում եկեղեցական - վանական գործունեության ապարեզ նախ՝ որպես քահանա (մինչև 1768 թ), իսկ այնուհետև՝ որպես աբեղա՝ Տեր - Ստեփանոս անունով:

1759 թվականին Հերակլ II-ի հարկադրանքով Սայաթ - Նովան քահանա է ձեռնադրվել և ուղարկվել Կասպից ծովի հարավային ափերին ընկած էնզելի նավահանգիստը: Այստեղ երգիչն ապաշխարել և արտագրել է Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմը (1760):

Ըստ որոշ տեղակությունների՝ Սայաթ - Նովան ամուսնանում է 1753թ լոռեցի Մարմարի հետ: Սակայն շատ շուտով վախճանվում է նրա կինը՝ թողնելով 4 անչափահաս երեխաներին՝ Հովհաննեսին, Մելիքսեթին, Սառային և Մարիամին:

1766 թ-ին նա եղել է Կախի փոքրիկ ավանում որպես քահանա, որտեղ արտագրել է մի ուրիշ ձեռագիր (երկու ձեռագրերն է լ պահպանվում են Մաշտոցի անվան Մատենադարանում):

1768 կամ 1769 թվականին Տեր - Ստեփանոսը փոխադրվել է վանք, ծառայել Թիֆլիսում հաստատված Հաղպատի միաբանության առաջնորդարանում, իսկ 1778 -ից, երբ տևական ամայությունից հետո վերաշինվել է Հաղպատի վանքը,. կարգվել է Սուրբ Նշան վանքի լուսարար: Հետագայում՝ հավանաբար 1784-ին, միաբանության հետ նորից վերադարձել է Թիֆլիս:

Սայաթ - Նովայի ժամանակակիցների հուշերից իմանում ենք, որ

1795 թվականին, երբ պարսից շահ Աղա Մահմեդ խան Դաչարի զորքը գրավեց Թիֆլիսը, Հաղպատի ծերունի վանական Սայաթ - Նովան Թիֆլիսում էր և Սուրբ Հակոբի վանքի մեջ սրախողխող եղավ շահի զինվորների ձեռքով: Շահի զինվորը Սայաթ - Նովային ասում է, որ նա դուրս գա եկեղեցուց: Սայաթ - Նովան պատասխանում է. «Իսիդան դոնմիրամ, քելիսադան չխմիրամ» (Հիսուսից չեմ հրաժարվի, եկեղեցուց դուրս չեմ գա): Այտեղ էլ նահատակվում է Սայաթ - Նովան՝ իր արյամբ ներկելով եկեղեցու սալքարերը: Թումանյանի խոսքերով ասած. «Սիրով եկավ, սրով գնաց Սայաթ - Նովան»:

Ըստ վրացական մեկ - երկու աղբյուրի՝ Սայաթ - Նովան ոչ թե սպանվել է 1795 -ին, այլ վախճանվել է իր բնական մահով 1800 -ից հետո:

Վրաստանի Սուրբ Գևորգ եկեղեցու բակում է մեծ սիրերգակի վերջին հանգրվանը:

## Սայաթնովայագիտության հիմնադիրը

Աշուղությունը վաղուց թողած Սայաթ - Նովա - Տեր Ստեփանոսի ողբերգական վախճանից հետո նրա կյանքի անցուդարձերն աստիճանաբար սրբվում են սերունդների հիշողությունից, իսկ խաղերը՝ գրեթե մոռացվում են:

Մեծ բանաստեղծին հարություն տվողը և սայաթնովայագիտության հիմնադիրը դարձավ հայագետ Գևորգ Ախվերդյանը: Վերջինս Մոսկվայի բժշկական համալսարանն ավարտած, ռուսական կայսրության ռազմական մինիստրի ածնական բժիշկն էր, որը 1846 թվականին հրաժարվում է ծառայությունից, գալիս է հայրենիք և զբաղվում աշուղի երգերի հավաքումով (հավաքմամբ):

1848 թվականի մայիսին Ախվերդյանի ընկերն ու մտերիմ բարեկամը՝ բժիշկ Հովհաննես Պոնդոյենցը, Սայաթ - Նովայի թոռից՝ Տեր - Մովսեսից՝ Ջգրաշեն եկեղեցու ավագ քահանայից, աղաչանքով վերցնում է աշուղի «Դավթարը» և տալիս Ախվերդյանին: «Մատյան Դավթարը» կազմված էր 140 էջից: Առաջինից մինչև 101 էջը գրի է առնված 114 թուրքերեն խաղ, 102 էջից մինչև 139 էջը՝ 39 հայերեն խաղ: Թուրքերեն խաղերը գրված են հայատառ թրքաբառ:

Հետազոտական տքնաջան աշխատանքից ու որոնումներից հետո՝ 1852 -ին Ախվերդյանը լույս ընծայեց Սայաթ - Նավայի հայերեն խաղերի առաջին ժողովածուն՝ կցելով հիշողությունների հիման վրա կազմված բանաստեղծի կենսագրությունը, Թիֆլիսի բարբառի քննությունը և առաջին բանաստեղծությունների բառապաշարին վերաբերող արժեքավոր մեկնություններ: Դա ծրագրվող «Գուսանք» մատենաշարի միակ գիրքը եղավ:

Սայաթ - Նովայի գրական ժառանգությունը ժողովրդականացնելու գործում մեծ վաստակ ունեն նաև Հովհաննես Թումանյանը, նկարիչ Գ.Բաշինջաղյանը, գրականագետ Ն.Աղբալյանը և ուրիշներ, որոնց ջանքերով 1936թվ. տոնվեց Սայաթ - Նովայի ծննդյան 200-ամյա հոբելյանը: Արժեքքվոր է նաև Պ.Սևակի «Սայաթ - Նովա» աշխատությունը:

## Լրացուցիչ նյութեր

### *Աշուղ*

Աշուղը հասարակական - ժողովրդական բանաստեղծ - երգիչ և նվագածու է Անդրկովկասի և Մերձավոր արևելքի ժողավուրդների մեջ:

«Աշուղ» բառը արաբական ծագում ունի՝ աշըգ, որը նշանակում է «սիրահար», «տարփածու»: Այս բառը փոխառության ճանապարհով թուրքերենից անցել է հայոց լեզվի մեջ՝ աշըգ, աշըղ՝ հետագայում ընդունելով հայացած աշուղ ձևը:

Իրենց խաղերը հյուսելիս ի՞նչ նյութեր են զբաղեցրել աշուղներին առհասարակ և մեր աշուղների մասնավորապես: Ամենքից առաջ և ամենքից շատ աշուղական գրականության մեջ մեծ տեղ է գրավել սերը: «Աշուղ» բառի սկզբնական նշանակությունն արդարացած ենք տեսնում առանց բացառության բոլոր աշուղների մոտ:

Քնարական տեսակետից սիրային երգերից հետո հին աշուղների մեջ խոշոր տեղ են գրավում կրոնա - բարոյագիտական, ինչպես և խրատական բովանդակություն ունեցող ոտանավորները:

Աշուղական գրականության մեջ երրորդ տեղը բռնում են հեղինակների՝ իրենց ժամանակում պատահած նշանավոր դեպքերի նկարագրությունները (երկրաշարժ, հեղեղ, պատերազմ, սով):

Իրենց թվով չորրորդ տեղը հայ աշուղների գործերի մեջ հասարակական - սոցիալական մոտիվներով երգերն են:

Հինգերորդ տեղում են աշուղի, այսպես ասած, հարձակողական երգերը, որոնք գրված են ակնհայտ երգիծանքով, հեգնանքով, խարազանում ու ծաղրում են հասարակական բացասական երևույթներն ու դեմքերը:

Աշուղական երգերի մեջ վեցերորդ տեղում այն ոտանավորներն են, որոնց նյութը հեղինակների անձնական կյանքն է:

Յոթերորդ և վերջին տեղում են այն երգերը, որոնք մտքեր են, դատողություններ, եզրակացություններ աշխարհի, կյանքի մասին:

Գարեգին Լևոնյան «Աշուղները և նրանց արվեստը»

Հայպետհրատ, Երևան, 1944

## *Քամանչա*

Ժողովրդական լարային-աղեղնավոր նվագարան է: Իրանը գնդաձև է՝ ծածկված թաղանթային մեմբրանով: Կլոր կոթից իրանի միջով անցնում է մետաղյա կաղապարաձող, որը նվագարանի համար ծառայում է նաև որպես «ոտք»: Նվագում են ծնկի վրա ուղղաձիգ բռնած դիրքում: Լայնորեն տարածված է Անդրկովկասում, Իրանում ու հարևան այլ երկրներում:

20-րդ դարի սկզբներից քամանչան քառալար է (մետաղյա):

## *Հաղպատ*

Հաղպատի վանքը հիմնադրվել է 976 թվականին՝ Բագրատունի Աշոտ Գ-ի թագավորության ժամանակ: Վանքը միջնադրյան Հայաստանի խոշոր մշակութային կենտրոններից էր, ուր գործել են ժամանակի նշանավոր գործիչներ, գրվել և նկարազարդվել են բազմաթիվ ձեռագրեր, որոնց թվում 1211թ. «Հաղպատի Ավետարանը», որն այժմ գտնվում է Մատենադարանում:

Վանքի իսկական անունը Հաղբատ է, հետագայում ընդհանրական է դարձել Հաղպատ ձևը: Անունը կազմված է երկու մասից՝ հաղբ և ատեմ: Հաղբ նշանակում է որոգայթ: Հաղբատ նշանակում է ատեմ զհաղբ, այսինքն՝ ատում եմ կամ խույս եմ տալիս որոգայթից:Այս անունը վանքին տվել են առաջին միաբանները, որոնք, աշխարհը, աշխարհիկ կյանքը որոգայթ համարելով, փախել են նրա ունայնությունից և մտել վանք:

## *Հաղպատ*

Հաղպատի վանքի քար լռության մեջ
Սրբատաշ ու սև քարերն են խոսում,
Վանքում ծվարած ծիծեռնակների
Հակիրճ ծիվ - ծիվում դարերն են խոսում,
Սայաթ - Նովայի տրտունջն ու մեղան,
Թե՞ քամանչայի լարերն են խոսում…
Ծնված անողոք ժամանակներից,
Վայրագ հողմերից ու ոսոխներից,
Իմաստուն ու մի անօգ մանկան պես
Վանքը լռում է,
Սարերն են խոսում:
Վարդ Ղազարյան

## *Աղա - Մահմեդ Խան Ղաջար*

Իրանի շահ 1796-ից, Ղաջարական դինաստիայի հիմնադիր: Պարսկական գերիշխանությունը Անդրկովկասում վերահաստատելու նպատակով 1795 թվականին արշավեց Ղարաբաղ, Երևան և Շամախի: 30 օրվա պաշարումից հետո Երևանը: Անհաջողություն կրելով Շուշվա բերդի մոտ՝ արշավեց Վրաստան: Սեպտեմբերին գրավեց Թիֆլիսը: 1797թվականին երկրորդ անգամ արշավեց Անդրկովկաս, մտավ Սյունիք,գրավեց Շուշվա բերդը, ուր և սպանեցին նրան նրա հարազատ մարդիկ՝ չհանդուրժելով նրա բռնություններն ու դաժանությունները:

## Գրողի կենսագրությանն առչվող լրացուցիչ նյութեր, փաստեր

## Այլ տեղեկություններ կյանքից

Իր սիրած էակին՝ Աննային (Աննան ծագումով վրացուհի էր և դուստրը Ջալ Աբաշիձեի), Արութինը՝ Սայաթ - Նովան, 1730 թվականի հունիսի 9-ին 23 տարեկան հասակում մատանի է նվիրում՝ ի նշան իր սիրո և հավատարմության, տեղեկացնում, որ ինքը պետք է շրջագայի, շփվի տարբեր ազգերի աշուղների հետ, մրցության մեջ մտնի, փորձ ձեռք բերի:

1733 թվականին 26 տարեկան հասակում մեկնում է շրջագայության մինչև 1737 թ 30 տարեկանը (Մինչ այդ չի ամուսնանում, որովհետև աշուղը իրավունք չուներ մինչև 30 տարեկանն ամուսնանալ): Երգիչը վերադառնում է Թիֆլիս և իմանում, որ Աննան ամուսնացել է իշխան Քայխոսրո Ցիցիշվիլու հետ:

## Սայաթ - Նովայի հիշատակի հավերժացումը

1. «Սայաթ - Նովա» օպերա - / կոմպոզիտոր Ա. Հարությունյանը/
2. Սայաթ - Նովա գյուղ / ՀՍՍՀ Մասիսի շրջանում/
3. Սայաթ - Նովայի անվան հայկական գուսանական երգի անսամբլ - ստեղծվել է 1938թ., գոյատևել է մինչև 1969թ. (Հայկ. սովետ. հանրագ. Երևան,1984, էջ 163 հ10)
4. Սայաթ - Նովայի անվան երաժշտական դպրոց Երևանում
5. Սայաթ - Նովայի անվան փողոց Երևանում
6. Գեղարվեստական կինոնկար «Սայաթ - Նովա»
7. 1963 թվականին Խաղաղության համաշխարհային խորհրդի որոշմամբ նշվեց Սայաթ - Նովայի ծննդյան 250-ամյակը, իսկ 1976թ. Մոլորակագիտության միության պատվավոր պրեզիդենտ Գ.Կատերֆելդի առաջարկությամբ Սայաթ - Նովայի անունով կոչվեց Մերկուրի մոլորակի խառնարաններից մեկը:

# *Կերպարի ուսուցման մեթոդիկա*

Աշխարհայացքի ձևավորման ու վարքագծի մշակման, գեղագիտական-բարոյական դաստիարակության, կամքի կոփման ու զգացմունքների հղկման, հուզաշխարհի ազնվացման և հոգևոր հարստության կուտակման անսպառ ակունք է ստեղծագործության հերոսների օրինակը:

Ինչպես ժամանակակից կյանքը, այնպես էլ հեռավոր անցյալը պատկերող ստեղծագործություններում իրականությունը վեր է հանվում և արտացոլվում հիմնականում կերպարների միջոցով: Կերպարը հեղինակի խոսափողն է: Գրական կերպարը հեղինակի մտքերի, հույզերի, տրամադրությունների արտահայտիչն է: Կերպարի միջոցով հեղինակը դրսևորում է իր համակրանքն ու հակակրանքը, սերն ու ատելությունը, մերկացնում կամ դրվատում գոյություն ունեցող օրենքները, պետական կարգերը, ծառանում ընդդեմ օտար բռնակալների և ներքին թշնամիների: Կերպարը բնութագրելիս ուսուցիչը պետք է օգտագործի բոլոր այն ուշագրավ դրվագները, որոնք դաստիարակչական խոր իմաստ են պարունակում: Աշակերտները պետք է նկատեն, որ դրանցում դրսևորվում են հերոսի նվիրվածությունը, նպատակադրումը, աշխատասիրությունը, դժվարությունները հաղթահարելու մեծ հավատը, հաստատակամությունն ու վճռականությունը, բողոքը հոռի բարքերի դեմ:

Կերպարը բնութագրելիս կարելի է առաջնորդվել հետևյալ պլանով.

1. հեղինակի տեղն ու դերը մեր գրականության մեջ.
2. ուսումնասիրվող երկրի տեղն ու դերը նրա գրական ժառանգության մեջ.
3. հերոսը՝ ուսումնասիրվող գործի բովանդակության բացահայտման միջոց.
4. հերոսի արտաքինը նկարագրող, բնավորությունը բացահայտող էական գծեր.
5. հերոսի ծագումը, մանկությունը, շրջապատը.
6. բացահայտել հերոսի գաղափարական և բարոյական դիրքորոշումը.
7. հերոսի ինքնաբնութագրումը.
8. շրջապատի կարծիքը հերոսի մասին.
9. գործողությունների դրդապատճառները.
10. բացահայտել հերոսի գաղափարական եսը.
11. հերոսի քաղաքական-հասարակական գործունեությունը.
12. բնագրից բերել փաստեր՝ ասածները հաստատելու.
13. հեղինակի վերաբերմունքը հերոսի նկատմամբ, քո կարծիքը,

ընդունված մեկնաբանությունը.

14. հերոսի նախատիպը, հեղինակի շեղումները, նպատակը.

15. ուրիշ ի՞նչ հեղինակներ կամ արվեստագետներ են անդրադարձել այդ կերպարին, ի՞նչ նպատակով և ինչպե՞ս.

16. գրական հերոսի արդիական լինելը՝ համաժամանակայնությունը:

# *Աղասու կերպարի ուսուցումը*

Գրականությունը սովորեցնում է մարդկանց ճիշտ ապրել կյանքը, լինել բարի, անաչառ, ճշմարտախոս և ազնիվ, մարդկային և մարդասեր, հայրենասեր, ծնողասեր և ընկերասեր: Այս ամենը կարելի է ամփոփել մեկ նախադասությամբ՝ օժտված լինել բարոյական բարձր հատկանիշներով, ունենալ բարոյական բարձր սկզբունքներ: Աղասու կերպարի ուսուցումը մեզ տալիս է հնարավորություն՝դաստիարակելու բարոյական բարձր հատկանիշներով օժտված մարդ:

Ակտիվ ուսումնառություն ապահովելու, որոնողական աշխատանքի մղելու, ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու նպատակով ես Աղասու կերպարի մասին ոչ մի խոսք չեմ ասում աշակերտներիս: Կերպարի ամբողջ ներկայացումը թողնում եմ իրենց վրա: Ուղղակի մի երկու դաս առաջ տալիս եմ Աղասու կերպարի բնութագրման պլան և պահանջում պլանի բոլոր կետերի վերաբերյալ գրականության տետրերում նշումներ կատարել՝ «Վերք Հայաստանի» վեպից ընտրելով համապատասխան տողեր և արտահայտություններ:

***Պլան***

1. «Վերք Հայաստանին»՝ ականատեսի վկայություն
2. Հերոսի ընտրության հարցը
3. Աղասու անձնավորության խնդիրը
4. Աղասու ուժի և արտաքինի նկարագրությունը
5. Աղասին՝ բնության զավակ. նրա փիլիսոփայությունը մարդու մասին
6. Աղասու կյանքի նշանաբանը
7. Ծնողների և մեծերի հանդեպ նրա տածած սերն ու պատկառանքը
8. Խեղճին օգնելու բարձր գիտակցությունը
9. Շրջապատի վերաբերմունքը Աղասու նկատմամբ
10. Աղասուն բնութագրող այլ տողեր
11. Վեպի մյուս հայրենասեր հերոսները:

Մինչ անցնելը պլանի հարցերի քննարկմանը, կարդում ենք նշանավոր մարդկանց ասույթները «Վերք Հայաստանի» վեպի մասին, որպեսզի աշակերտները լավ պատկերացնեն վեպի արժեքը, նրա տեղն ու դերը մեր գրականության մեջ:

«Ավելի դյուցազներգություն է, քան թե վեպ: Պարզ ու համեստ մարդեր չեն իր հերոսները, այլ հսկաներ, որոնք իրենց «էրված սիրտը»

ողջակեզ կբերեն ազգին: Եվ, այսպես, Աբովյանի տիպարները իրականությունեն դուրս կուգան կարծես ու կմտնեն հեքիաթային, առասպելական աշխարհի սահմաններեն ներս»:

«Վերք Հայաստանին» նոր օրերու «Նարեկն» է, տարերային բխումով ստեղծված գործ մը, որ ձեռագիր վիճակի մեջ իսկ տուն-տուն կարդացվեցավ երկյուղածությամբ: Ընթացիկ առումով վեպ մը չէ սա: Դյուցազներգություն է և բանաստեղծություն նույն ատեն: Առաքյալի մը և մարգարեի մը սիրտը կտրոփե անոր էջերուն մեջ »:

«Մեծ կիրքե ծնված հեղեղանման գործ մըն է: Հոն բառերը կգոռան և կպայթեն: Այդ կիրքը Աբավյանի խորունկ սերն է իր ժողովրդին հանդեպ: Հեղինակը խառնված է Հայաստանի քարին, հողին, պատմության, ներկային և գալիքին: Հայաստան իր ծնողքն է, իր զավակը և սիրուհի»:

**Մուշեղ Իշխան**

«...Որքան սրբազան ոգևորությամբ է լցվում կարդացողի սիրտը. ահա ձեզ մի գրվածք («Վերք Հայաստանի»), որ ամբողջովին «հեղինակի արյունով» է շաղախված, ամբողջովին բանաստեղծություն ու անկեղծ ոգևորության արտահայտություն է»:

**Ստ. Շահումյան**

«Վերք Հայաստանին» և՛ հայրենասերի ողբ է՝ կսկիծով ու հառաչանքով լիքը, և՛ ազգային դյուցազներգություն է, որ ուժ ու հպարտություն է շնչում, և՛ բարերարվածի ու փրկվածի ներբող՝ ողողված ուրախության արտասուքներով, երախտագիտական բացականչություններով ու օրհնություններով: Եվ ամենը, ինչ որ դուրս է գալիս նրա սրտից, նրա բերնից, նրա գրչի տակից, անկեղծ է, լիասիրտ ու ճշմարիտ, որովհետև ինքն ապրել, աչքով տեսել, ականջով լսել ու պատմել է»:

«Վերք Հայաստանին» մի ողբ է, ողբ հայրենիքի թշվառության վրա, ողբ հայրենասերի՝ բխած մի զգայուն սրտից, զարգացած ուղեղից: ...Գեղարվեստական տեսկետից «Վերք Հայաստանին» սրտի խորքից բխած մի բնական ժայթքումն է»:

**Հովհաննես Թումանյան**

Սրանից հետո անցնում ենք պլանի կետերի հաջորդական քննարկմանը՝լսելով սովորողների՝ գրականության տետրերում նախօրոք կատարած գրառումները.

## 1. «Վերք Հայաստանին»՝ ականատեսի վկայություն

**Աշակերտ**

- Աբովյանը բազմաթիվ էջերում գրում է, որ ինքը ոչ միայն ականջալուր է, այլև ականատեսն է կատարվածի: «Ծնող, տուն, երեխայություն, ասած, լսած բաներ էնպես էին կենդանացել, որ էլ աշխարքը միտս չէր գալիս: Ինչ խուլ, կորած, մոլորած մտքեր ունեի, բոլորը բացվել, եդ էին եկել»:

## 2. Հերոսի ընտրության հարցը

**Աշակերտ**

-«Վերքի» առաջաբանում խոսելով հերոսի ընտրության մասին՝ Աբովյանը գրել է.«Մեկ բարիկենդանի՝ աշակերտներս՝ որ բաց թողի, սկսեցի ինչ որ երեխայությունիցս լսած կամ տեսած բան գիտեի, տակ ու գլուխ անիլ: Վերջը իմ ջիվան Աղասին միտս ընկավ, նրա հետ հարիր քաջ հայի տղերք էլ իրանց գլուխը բարձրացրին ու ամենն էլ ուզում էին, որ իրանց ոտը գնամ: Մյուսները մեծ-մեծ մարդիկ էին, շատերն էլ դեռ հլա սաղ - սալամաթ. փառք աստծո, Աղասին աղքատ ու մեռած, նրա սուրբ գերեզմանին ղուրբան: Ասացի կեղծավորություն չանեմ, նրան ընտրեցի»:

## 3. Աղասու անձնավորության խնդիրը

**Աշակերտ**

-Աղասին Աբովյանի երևակայության ծնունդ չէ, այլ իրական անձնավորություն, որը մասնակցել է 1827-1828թթ. ռուս-պարսկական պատերազմին:

**Աշակերտ**

-Աղասու իրական անձնավորություն լինելու մասին է վկայում նաև Աբովյանի հետևյալ վերհուշը .«Ես՝ ողորմելիս, նրա գերեզմանին ղուրբան, ա՜խ՝ բաս նա՝ որ ինձ էնքան երեխա ժամանակ իր ծնկան վրա խաղացրել ու ինձանով մխիթարվել ա...»:

## 4. Աղասու ուժի և արտաքինի նկարագրությունը

**Աշակերտ**

«Նրա սուրահի բոյը, նրա թուխ-թուխ աչքերը, նրա ղալամով քաշած ունքերը, նրա աննման, գեղեցիկ պատկերը, նրա անուշ լեզուն, քաղցր ձենը, նրա լեն թիկունքը, բարձր ճակատը մարդի խելք էին տանում, տեսնողը մաթ էր մնում, չէր կշտանում»:

## Աշակերտ

«Բեղերն ապրշումի պես ոլորել, էնպես էր թշի տակովն տարել, որ ամեն մեկի մեկ ծերը ականջներին էին դիպչում: Մտիկ անողի խելքը գնում էր»:

## Աշակերտ

«Էնքան ղվաթով էր, որ ձեռը մեկ տղամարդի գոտիկը որ չէր քցում, հավի ճուտի պես բարձրացնում, գլխի ծերն էր հանում, պտիտ տալիս, էլ եդ վեր բերում: Ձին հի ըլելիս, որ ձեռը չէր բարձրացնում, ասլան ձին կզանում էր ու մեջքը դեմ անում»:

## Աշակերտ

-Աղասու արտակարգ ուժն ու ճարպկությունը երևում է նաև «ջիրիդի» տեսարանում. «Ձիու ականջը մըտած՝ էնպես էր քշում, կրակին տալիս՝որ հենց իմանաս՝ թևավոր ղուշ ըլի: Շատ անգամ ջիրիդը հեռու տեղից շպրտում, ձին չափ էր գցում, ու գետնիցը ծուլ ըլելիս ձիու վզիցը բռնում էր, էլ եդ քցում:Շատ անգամ հենց էնպես դուզ շպրտում էր, ու կրակի պես ետևիցը հասնում, կալանում, էլ եդ ծուլ անում: Գետնին վեր ընկած տեղիցն էլ՝ էնպես էր թամքի միջիցը կռանում, բարձրացնում, որ ջիրիդն առաջին դողում էր: Ընկերտանց վրա էլ որ վախտ-վախտ ջիրիդ չէր քցում, էնպես էր նշանում, որ գդակների ծերին էր դիպչում, կամ գդակը հետը տանում»:

## Աշակերտ

«Հինգ մարդ վրա թափվեին, բռանց ձեռ կոլորեին: Գոմշի կամ եզան բողազը մեկ թուր խփելով՝ էնպես դուս կտրում, որ թրի ծերը գետինն էր խրվում: Շատ անգամ քսան հարամի հենց թրի ոռքով էր հետ ածում: Թուրքերը նրա անունը լսելիս՝ լեղապատառ էին ըլում: Շատ անգամ կռիվ քցած վախտը՝ հենց նրա ձենն իմանում էին թե չէ, ճանճի պես ցրվում, դես ու դեն էին կորչում, գյում ըլում: Ավելի անունը՝ Ասլան Բալասի էին դրել: Ձեռներն էլ կապած, որ հարամու, թուլու մեջ բաց թողեիր, կարող էր, որ իր գլուխը պրծացներ»:

## Աշակերտ

«…էն ժամանակ նա իրան թրի, թվանքի ու կռան հունարը էնպես էր ցույց տալիս, որ թշնամին մնում էր կատու դառած…»:

## Ուսուցիչ

-Իսկ որտե՞ղ ենք մենք «ականատես լինում» Աղասու հերոսական արարքներին:

Աշակերտ

-Աղասու հերոսական արարքներին մենք «ականատես ենք լինում» նրա հայրենի Քանաքեռում, Ապարանի լեռներում, Անիի ավերակներում, Երևանի բերդի պատերի տակ և այլուր:

## 5. Աղասին՝ բնության զավակ. նրա փիլիսոփայությունը մարդու մասին

Աշակերտ

-Լինելով բնության ազատ զավակ՝ Աբովյանի հերոսը այդ բնության շնորհիվ իմաստնանում է և հասնում այն պարզ փիլիսոփայությանը, որ մարդ պետք է բարի ու անկաշառ լինի, նմանվի բնությանը. «…ծառի պես պտուղ տա, ծաղկի պես հոտ, սարի պես աղբյուր, դաշտի պես մասիլ, երկրի պես հաց, երկնքի պես լիս»:

Աշակերտ

«…հանդ էր դուս գալի, իր մասիլն ու պտուղը, դաշտերի ծառն ու ծաղիկը, երկնքի պայծառ արեգակի, լուսնի, աստղերի լիսը տեսնելիս նրա հոգին վերանում էր, խելքը թռչում, շատ անգամ աչքերը ծով դառած՝ տեղն ու տեղը մնում կանգնած, հենց իմանում էր՝ թե իրան դրախտը տարան»:

## 6 . Աղասու կյանքի նշանաբանը

Աշակերտ

-Նրա նշանաբանն էր.«Մարդը պետք է ինքը աշխատի, որ կերածը հալալ ըլի»:

## 7 . Ծնողների և մեծերի հանդեպ նրա տածած սերն ու պատկառանքը

Աշակերտ

«Էս հասակը հասել էր, քսան տարին անց կացել՝ նա դեռ հորնը մոր առաջին էնպես էր, ինչպես մեկ անմեղ գառը: Մեկ օր նրանց խոսքիցը չէր դուս էկել, մեկ օր նրա բերնիցը մեկ թթու խոսք չէր լսված, աչքը նրանց աչքին առնելիս, նա նրանց միտքը իսկույն իմանում ու գլուխը մահու էր տալիս, որ նրանց կամքը կատարի»:

Աշակերտ

-Այս հերոսը ծնողասեր է.«Տես՝ էս սուրը որ ձեռիս բռնած եմ, առանց թշնամու՝ իմ սրիտս կխրեմ. մինչև քո աչքի, քո տան առաջին հարիր թշնամի քեզ մատաղ չըլին, մինչև էս ձեռս գյուլլա քցողին՝ հավի

պես չմորթի քո ոտիդ տակին…»:

## Աշակերտ

-Աղասին մեծ սեր, հարգանք ու պատկառանք էր տածում ոչ միայն իր ծնողների, այլև մեծերի հանդեպ. «նրա ձենը մինչև էն օրը ՝ իր հերնը մերն էլ չէին լսել»:

## Աշակերտ

-Շատերը «երանի էին տալիս նրա հորն ու մորը»:

## Աշակերտ

«Բայց ինչ կուզե, որ աներ, Աղասին իրանց տանն էնպես էր, ինչպես մեկ հարսը»:

## 8. Խեղճին օգնելու բարձր գիտակցությունը

## Աշակերտ

«Որբ էր նրա դուռը գալիս, սուփրեն էր բաց անում, կամ քիսեն, ում գութան չուներ, իրանցը բանը տալիս. ում եզն ու հոտաղ չուներ, իրանցն ուղարկում. ում փող չուներ՝ որ մշակ բռնի՝ իքին էտի, փորի, յա թաղի, կամ թաղը ետ տա, ինքն էր առաջ ընկնում, գեղի տղերքը հավաքում ու գնում նրա բանն՝ առանց կանչելու, առանց խնդրելու անում…»:

## Աշակերտ

-Աղասին միշտ ու ամեն պահի խեղճի կողքի է. դա է վկայում Թագուհուն փախցնելու տեսարանը. «Առյուծի պես ներս ընկավ հսկա երիտասարդը. ճամփին ականջովն էր ընկել՝ թե ի՞նչ խաբար ա: Երկուսի գլուխը սրբելեն ետև, մյուսներն ուզեցան, որ թուր հանեն, բայց Քաջն Աղասի, որ բերանը բաց չի արեց. «Դժոխքի որդիք՝ ձեզ ո՞վ ա ղրկել էս տեղ, ու՞մ վրա եք էդպես կատաղել, ասենք՝ հայը ձեն չի հանում, պետք է նրան սաղ-սաղ ուտե՞ք…», որ չասեց ու մեկ էլ ուսը վեր բերեց, մյուսի աղիքը վեր ածեց, էն վեցը տեսան, որ ճար չկա, ձիանը նի էլան ու ընչանք բերդը մեկ գնացին»:

## Աշակերտ

«Մեկին մեկ փորձանք դիպչելիս, կամ մեկ դարդ ունենալիս, նա իր գլուխը եդ էր դնում, նրա մուրազին հասնում: Բերնի թիքեն հանում էր, ուրըշին ուտացնում է: Նքան իր ապրանքին, իր հանդի ու մալին չէր մուղայիթ, որքան իր հարևանների»:

Աշակերտ

«Աղքատի ու նաչարի ընկերն էր»:

## 9. Շրջապատի վերաբերմունքը Աղասու նկատմամբ

Աշակերտ

«Գեղըցիքը բոլոր նրա արևովն էին խնդում, նրա գլխովն օրթում ուտում: Ամենքի աչքը նրա վրա էր, նրան էր գովում, նրան էր օրհնում»:

Աշակերտ

«Գեղըցիքը հենց նրան տեսան թե չէ, ծափ տվին, պար էկան, ձեն-ձենի տվին ու սկսեցին նրա խաղն ասիլ, նրա գովքն ածիլ. «Աղասի ջան, գլխիդ ղուրբան, էս թասը խմենք քո արևսադաղին, արևիդ մեռնիմ, մեր գլխիցը ոչ պակսիս...» ամեն կողմից ձեն տվին ու Աղասու թասը խմեցին: Ազնիվ երիտասարդն էլ ով որ իրան էսպես պատիվ էր տալիս, գդակով էր անում, քաղցր երեսով գլուխ տալիս ու անց կենում»:

Աշակերտ

«Սաղ գեղը էնքան էր նրա սիրովը վառվել, որ մինչև նրա վրա խաղ էին հանել, իրանք ասում, էրեխեքանցը սովորեցնում»:

Աշակերտ

«Շատ մոր աչքեր մնացել էր կարոտ, որ նրան իր փեսա շինի, նրա գլխովը պտիտ տա»:

Աշակերտ

«Ձահել աղջկերքը նրա ձենը կամ անունը լսելիս, ուզում էին, որ հոգիները տան: Շատ անգամ ջրի ճամփին կամ տան կտրներին կանգ-նած տեղը, որ Աղասուն անց կենալիս չին տեսնում, էնպես էին կարծում, թե հրեշտակ է անց կենում, մնում էին քար դառած, մայիլ էլած: Նրա ձենը լսելիս, նրա բոյը տեսնելիս, սիրտըները կրակ էր ընկնում, խելքըները գնում, ուզում էին իրանց հոգին հանեն, նրան տան: Ձանգյուլում ասելիս կամ ֆալ գցելիս, կամ թիզ բաց անելիս, ամենն էլ իրանց մտքումը նրան էին դնում, երազում նրան տեսնում, վեր կենում՝ նրա սիրուն ա՜խ, ո՜խ քաշում»:

## 10 . Աղասուն բնութագրող այլ տողեր

Աշակերտ

«Բայց էսքան զարմանալի հատկություններ ունենալով՝ էլի երե-խի հետ երեխա էր, մեծի հետ՝ մեծ»:

## Աշակերտ

«Խանի, շահի առաջի էնպես էր կանգնում, ջուղաբ տալիս, որ հենց իմանաս՝ թագավորի որդի ըլի»:

## Աշակերտ

«Ծիծաղն ու խնդությունը նրա երեսից պակաս չէր հարկիզ, էնքան պարզ էր նրա սիրտը, էնքան հանգիստ նրա խղճմտանքը, էնքան արդար նրա հոգին»:

## Աշակերտ

«Նրա ամեն մի խոսքը անգին ջավահիր էր»:

## Աշակերտ

«Աղասու բարի խասիաթը, բարի սիրտն ու հոգին քիչը կունենան»:

## Աշակերտ

«Սիրտն էնքան բարի էր, որ նհախ տեղը ղուշ էլ չէր սպանիլ, մրջիմը չէր կոխիլ»:

## Աշակերտ

-Ես էլ ուզում եմ շարունակել իմ ընկերոջ ասածը՝ մեջբերելով Աբովյանի խոսքերը, ցույց տալու, թե որքան բարի, մարդասեր ու ինչ քնքուշ սիրտ ունի Աղասին: Դա երևում է Թագուհու հանդեպ ցուցաբերած վերաբերմունքի մեջ. «Վայ իմ աչքին, իմ արևին, ինչպես փետացել, սառել ա: Թագուհի ջան, քո ջանին ղուրբան, առ, հոգիս առ, թող ես մեռնիմ, դու կենդանացիր և քո խեղճ մոր սիրտը մի դուս կտրիր, մի դուս ճոռթիր, երեսս ոտիդ տակը»:

## Աշակերտ

«Ինչ տեղ մեկ մեջլիս կամ մեկ սուփրա էր բաց ըլում, նա էր նրանց գլուխը, ուրախությունը ու քեֆ շհանց տվողը»:

## Աշակերտ

«Սազը ձեռն առածին պես քարին, փետին շունչ, հոգի, լեզու էր տալիս: Ղորդ ա, արևն երեսն էրել, գույնը փախցրել էր, ամա ծիծաղելիս, որ աչք ու ունքը չէր բաց անում, հենց իմանաս՝ վարդ էր բաց ըլում, երեսիցը լիս վեր թափում»:

Աշակերտ

«Նրա թվանքի գյուլլեն դատարկ չէր անց կենալ»:

## 11. Վեպի մյուս հայրենասեր հերոսները

Աշակերտ

-Վեպի հայրենասեր հերոսներից է դսեղցի Մեհրաբյան-Թումանյան Հովակիմն. «Նա մեծացել էր սարերի ու ձորերի մեջ, գազանի ու հարամու արինը թափելով,- գրում է Աբովյանը:-Երկու մարդ նրա մեջքը չէր կարող խտտել»:

Աշակերտ

-Հայրենասեր հերոսներից է նաև Սարգիսը: Պարսիկները պաշարում են Խլղարաքիլիսան: Սարգիսը կոչ է անում դիմագրավել բարբարոսներին: Սկսվում է անհավասար կռիվը: Ի՞նչ կարելի է անել Հասան խանի 5000-անոց բանակի դեմ: Աբովյանը դառնացած ու սրտի կսկիծով է նկարագրում յոթժամյա կռվից հետո ավերված, կործանված գյուղը: «Խոտի դեզերի կրակն ու բոցը, խեղճ օղլուշաղի հարայ-հրոցը, դարմանի ծուխը, կալերի մուխը ամպի պես էլին, օրը խավարեցին»:

Աշակերտ

-Գեներալ Վալերի Մադաթով (Ռուստամ Մադաթյան), որի սխրանքներին անդրադառնալիս Աբովյանը գրում է. «Քանի կովկասյան սարը կա, Մադաթովի արածը հավիտյան կհիշվի, կասվի: Աշխարհքը տակն ու վրա կըլնի, բայց նրա հիշատակը անջնջելի կմնա մեր ազգի միջին և մեր աշխարհքում»:

Աշակերտ

-Վերք Հայաստանի» վեպի հերոսներին թվարկելիս չի կարելի չնկատել քնարական հերոսին՝դեպքերի ականատես հերոսին, որն իր արցունքախառն աչքերով մեզ է նայում վեպի ամեն մի տողից, տողեր, որոնք գրված են ոչ թե թանաքով, այլ արցունքով և արյունով:

Աշակերտ

-Վարդ Վարդանի կերպարի մեջ խտացրել է ժողովրդի լավագույն հատկանիշները, ազատության համար մարտնչելու նրա վեհ ձգտումները, նրա արաքների միջոցով դրսևորել է մեր ժողովրդի հերոսական բնավորությունը: Պատկերելով նրա արտաքին բարեմասնությունները՝ «լեն ճակատը», «պարթև բոյը», «արծվի աչքերը», «գեղեցիկ պատկերը», «անուշ լեզուն», Աբովյանը այդ կերպարի մեջ դրել է մի ազնիվ

հոգի:

Վարդ Վարդանին համարելով հինգերորդ դարում նույն պարսիկների դեմ մղված պատերազմում նահատակված Վարդան Մամիկոնյանի շառավիղը՝ Աբովյանը նրան օժտել է այդ տոհմին հատուկ բացառիկ գծերով՝անկեղծ հայրենասիրությամբ և անսովոր քաջությամբ: Հեղինակի խոսքերով ասած՝ «հրաշագեղ», «թագավորածին» և «հզոր» այդ պատանին է, որ մի զարկով երկու կես է անում Օքյուզ Աղին, իսկ «հինգ սհաթումը քառասունից ավելի մարդ է սպանում կամ յարալու անում»:

Այսքանով ավարտում եմ Աղասու կերպարի ուսուցումը և համոզված եմ, որ եթե դուք էլ փորձեք նման մեթոդով առաջնորդվել, կունենաք շոշափելի արդյունք:

# *Սամվելի կերպարի ուսուցում*

Բոլոր ժամանակներում, բոլոր ժողովուրդներին ու ազգերին բնորոշ է համամարդկային այնպիսի մի երևույթ, ինչպիսին է հայրենասիրությունը:

Բարձրարժեք է այն գրական երկը, որ, ունենալով ազգային հող ու ազգային սյուժե, կատարում է խոր ընդհանրացումներ, արծարծում համամարդկային արժեքներ: Այդպիսի երկերը հարատևում են դարերով, կրթում ու դաստիարակում սերունդներին: Այդպիսի մնայուն արժեք է Ռաֆֆու «Սամվել» վեպը, որը սերունդներին հայրենասիրության դասեր է տալիս:

Դպրոցում գրականության ուսուցումը ոչ միայն ճանաչողական, կրթական այլև դաստիարակչական նշանակություն ունի: Ուսուցչի առաջնահերթ խնդիրներից է նաև աշակերտների մեջ հայրենասիրության դաստիարակումը, հայրենասիրության մասին ամբողջական պատկերացում տալը: Այստեղ արժի հիշել վեպի առաջաբանից հետևյալ տողերը. «Խրախուսվելով այն գաղափարով, թե որքան մեծ կրթողական ազդեցություն ունի պատմական վեպը ընթերցողի համար, երբ նա տեսնում է յուր նախնյաց մեծագործությունները և աշխատում է հետևել նրանց առաքինություններին, տեսնում է նրանց մոլորությունները, աշխատում է հեռու պահել իրեն նրանց կատարած սխալներից…»:

**Դիդակտիկ պարագաներ՝** Ռաֆֆու մեծադիր նկարը, ասույթներ հայրենասիրության մասին, պատմական Հայաստանի քարտեզը, Մարտիրոս Սարյանի «Առավոտ» և Գ.Նալբանդյանի «Արարատյան դաշտավայրը» կտավների լուսանկարները:

## *Խթանման փուլ*

Դասի խթանման փուլի ժամանակ երկի հուզական ընկալումն ապահովելու, կրթադաստիարակչական մի շարք խնդիրներ լուծելու նպատակով ընթերցում և մեկնաբանում ենք արդեն իսկ նախորդ դասին հանձնարարված ասույթները հայրենիքի և հայրենասիրության մասին, որոնցից մի քանիսը տրվում է ստորև.

«Կա հանցագործություն, որ չեն ներում. դա հայրենիքին դավաճանելն է»:

**Ժ. Բուաստ**

«Եթե խոսենք կյանքի գեղեցկության մասին, ապա հենց հայրենիքի համար անձնուրաց պայքարն է գեղեցիկ կյանքի բարձրագույն դրսևորումը»:

**Մ. Կալինին**

«Լուսավորյալ ժողովուրդների իսկական քաջությունը հանուն հայրենիքի ինքնազոհաբերման պատրաստակամության մեջ է»:

**Գ. Հեգել**

«Հայրենիքի հանդեպ պարտականությունը մարդու սրբությունն է»:

**Վ. Սուխոմլինսկի**

«Հայրենասիրություն չի նշանակում միայն սիրել իր հայրենիքը: Դա անհամեմատ ավելի շատ բան է...Դա հայրենիքից իր անբաժանելիության գիտակցումն է և նրա երջանիկ ու դժբախտ օրերը նրա հետ միասին անբաժանելիորեն վերապրելը »:

**Ա. Տոլստոյ**

Երբ հիմնական ուշադրությունը դարձվում է միայն Սամվելի կերպարի վերլուծությանը և նրա միջոցով հայրենասիրության բացահայտմանը, ստացվում է միակողմանի, ոչ համոզիչ: Դրա համար նախ պետք է ծավալել զրույց հայրենասիրության մասին, իմանալ սովորողների պատկերացումները հայրենասիրության մասին, իմանալ, թե իրենք ինչքանով են հայրենասեր, որն է իրենց դերը հայրենիքում, իրենք ինչի են պատրաստ հանուն հայրենիքի:

Շատ աշակերտների կարծիքով հայրենասեր կարելի է դառնալ միայն հայրենիքի համար կռվելով, պատերազմներին մասնակցելով: Բայց ոմանց կարծիքով էլ հայրենասիրությունը չի սահմանափակվում միայն նրա ազատության համար կռվելով ու նահատակվելով: Մեկն էլ կարծում է, որ ամեն մարդ իր ուժերի, կարողությունների չափով պետք է նպաստի իր հայրենիքի բարգավաճմանը, հզորացմանը: Մյուսի կարծիքով՝ սերը մայրենի լեզվի ու մշակույթի նկատմամբ ևս հայրենասիրության արտահայտություն է: «Հայրենիքի նկատմամբ սեր է անգամ մի ծառ տնկելը»,- արտահայտվում է մի երրորդ աշակերտ: Իսկ իմ այն հարցին, թե ինչպե՞ս է արտահայտվում իրենց՝ աշակերտի հայրենասիրությունը, եղան հետևյալ պատասխանները՝խնամքով վարվել դպրոցական գույքի հետ,հարգել մեծերին, փողոցում չքքել, ծառ չկոտրել, մշակույթի օջախներում ծամոն չծամել, քաղաքը չկեղտոտել արևածաղկի սերմերով, լինել հարգալից օտարերկրացիների նկատմամբ, սիրել ազգային մշակույթը, պահպանել ազգային ավանդույթները,

լինել հայ Առաքելական եկեղեցու զավակ, մասնակցել շաբաթօրյակներին և այլն:

Պետք է լսել մինչև վերջին աշակերտի կարծիքը հայրենասիրության մասին, թույլ տալ, որ նրանք բանավիճեն, իսկ վերջում ուսուցիչը պետք է կատարի աշակերտների արտահայտած մտքերի ամփոփում և բացատրի հայրենսիրության էությունը:

**Ուս.** -Հայրենասիրությունը հայ ժողովրդի բնավորության անբաժան գիծն է՝ փոխանցված նախնիներից գեներով: «Հայրենիքին հասցված վերքը մեզանից յուրաքանչյուրը զգում է իր սրտի խորքից».- գրել է Վիկտոր Հյուգոն: Իրոք, մարդու համար ամենաթանկը, ամենանվիրականը, ամենասուրբը, անփոխարինելին հայրենիքն է: Առանց հայրենիքի մարդը ժամանակի ու տարածության քմահաճույքներին մատնված ավազահատիկ է: Հայրենիքը մոռանալը անկարելի է: Կա այսպիսի մի ասույթ. «Ավելի լավ է չոր հաց սեփական տանը, քան բազում կերակուրներ՝ օտար երկրում»: Օտար երկրիը երբեք հայրենիք չի դառնա, քանի որ հայրենիքում է քո և՛ անցյալը, և՛ ապագան: Օտար երկրում՝ միայն ներկան: Սերը դեպի հայրենիքը քաղաքակիրթ մարդու առաջին արժանիքն է: Մարդ պետք է անկեղծ սիրի իր երկիրը, ամբողջ հոգով նվիրվի նրան, միշտ և ամենուր հպարտանա իր հայրենիքով, որովհետև հայրենիքն այդ երկիրը մշակող և շենացնող ժողովրդի ոգին է, նրա մշակույթը: Հայրենիքը լքելը դավաճանության դասական տեսակ է:

## *Իմաստի ընկալման փուլ*

Աշակերտներին ամբողջական պատկերացում տալու վեպի մասին, ինչպես նաև կերպարը սպառիչ բնութագրելու համար մեկնաբանման ողջ ընթացքում պետք է միշտ դիմել հեղինակին, մեջբերումներ կատարել վեպից: Առանց փաստերի ու օրինակների՝ վերլուծությունը զուրկ է որոշակիությունից, վերացական է:

Ուսուցիչը աշակերտին պետք է մղի ինքնուրույն, ստեղծագործական աշխատանքի՝ նախապես որոշ ուղղություն տալով:

Սամվելի կերպարի ամբողջական բացահայտման համար աշակերտների միջև աշխատանքի բաժանում եմ կատարում: Աշակերտներից ամեն մեկը ինքը պետք է կարդա իր գրի առած հատվածները, ինքը մեկնաբանի, արտահայտի իր վերաբերմունքը՝ հիմք ընդունելով նախօրոք տրված պլանը.

1. Սամվելը՝ պատմական անձնավորություն.
2. Ընթերցողի առաջին հանդիպումը Սամվելի հետ.
3. Սամվելի ժողովրդականությունը.
4. Սամվել և Աշխեն.

**5.**Հերոսի ներքին դրաման ու տագնապը.

**6.** Որդու և ծնողների գաղափարական հակամարտությունը.

**7.** Զգացմունքների պայքար.

**8.** Հայրենիքի սերը և ծնողական- մարդկային ներքին զգացումը .

**9.**Հոր և որդու երկխոսությունը .

**10.** Շողացող սուրը մաքրեց փառավոր տոհմի անվան վրա դրված սև բիծը.

**11.** Արյան մեջ թավալվող հոր և երկար ժամանակ անշարժ արձանի նման կանգնած Սամվելի հոգեկան ծանր դրաման.

**12.** «…այն սուրը, որ սպանեց դավաճան հորը, կսպանե և ուրացող մորը».

**13.** Հոգեբանական ավարտի արագ ու համոզիչ լուծումը:

## *Սամվելը՝ պատմական անձնավորություն*

**Աշ.-** Սամվելը պատմական անձնավորություն է: Ռաֆֆին իր հերոսի մասին տվյալներ է քաղել Փավստոս Բուզանդի պատմությունից, ուր տրված է հետևյալ ժլատ տեղեկությունը. «Ապա Վահանի մի որդին՝ Սամուել անունով, զարկեց սպանեց իր հայր Վահանին և իր մայր Որմիզդուխտին՝ պարսից Շապուհ թագավորի քրոջը, և ինքը փախավ գնաց Խաղտյաց երկիրը»: Այս մի քանի տողերը հնարավորություն են ընձեռել Ռաֆֆուն՝ Սամվելին դարձնելու վեպի գլխավոր հերոս, ստեղծելու մի անմոռաց, հոյակապ կերպար:

**Աշ.-** Օգտվելով Փ.Բուզանդի այն վկայությունից, թե Սամվելն իր հարազատ հորն սպանելուց հետո սպանեց նաև խորթ մորը՝ Ռաֆֆին փոխել է պատմական փաստը. խորթ մայրը դարձնելով հարազատ մայր՝ նա ընդգծել է այն միտքը, որ եղել են ու կան իրենց երկրի ու ժողովրդի ազատության համար անձնական երջանկությունը զոհաբերող հերոսներ:

**Աշ.-** Այո՛, պատմությունից հայտնի է, ինչպես նկատեց իմ ընկերը, որ Սամվելը սպանում է իր խորթ մորը: Սակայն Ռաֆֆին փոխել է պատմական փաստը, և Սամվելը սպանում է հարազատ մորը: Ինչո՞վ բացատրել այս փոփոխությունը: Այս բանը կատարվել է հայրենասիրական զգացման խորությունն ավելի ընդգծելու համար, քանի որ հերոսին տառապանք չէր բերի հայրենիքին սպառնացող վտանգի պահին խորթ մորն սպանելը, դա արտակարգ երևույթ չէր լինի և ոչինչ չէր ավելացնի Սամվելի կերպարի հերոսականությանը:

## *Ընթերցողի առաջին հանդիպումը Սամվելի հետ*

**Աշ.**- Մենք՝ ընթերցողներս, առաջին անգամ Սամվելին տեսնում է «Գուժկան» գլխում, ուր ներկայացված են և՛ հերոսի կենցաղը, և՛ նրա հոգու խռովքը: «Ողական ամրոցի սենյակներից մեկի մեջ՝ թանկագին գորգերով պատած գահավորակի վրա, որի երեք կողմը դրած էին շքեղ կերպասներով պատած բարձեր, նստած էր մի երիտասարդ: Նա, ինչպես երևում էր նրա քնեած դեմքից, դեռ նոր էր դուրս եկել յուր քնարանից և դուրս էր եկել յուր զարթնելու ժամից շատ վաղ: Ոչ հագնվել էր, ոչ լվացվել էր և ոչ սանդրվել էր: Մի լայն, ասրյա նուրբ վերարկուի մեջ փաթաթված էր նա, և բաց գլխի երկար գիսակները, գագաթից իջնելով, մեղմ ալիքներով սփռվել էին թիկունքի վրա, և երբեմն սքողում էին նրա գեղեցիկ, գունաթափ դեմքը: Նրա անհանգիստ մատները անդադար ոլորում էին՝ փոքր-ինչ ուռած, կարմրագույն շրթունքի նորաբույս ընչացքը, թեև ոլորելու շատ պաշար չէին գտնում: Այդ ցույց էր տալիս սրտի խորին խռովությունը: Իսկ սևորակ նշաձև աչքերի մեջ նշմարվում էր մի անբացատրելի վրդովմունք: Քսանհինգ տարեկան հազիվ կլիներ նա, նուրբ կազմվածքով և փոքր-ինչ մուգ-դեղնագույն դեմքով, որ պահպանվել էր նրա մեջ ժառանգական արյունից»:

## *Սամվելի ժողովրդականությունը*

**Աշ.**- «Որսորդություն» գլխում կա մի հատված, ուր պատկերված է Սամվելի ժողովրդականությունը և նրա նկատմամբ հասարակ շինականի՝ նախարարական տների մեծամիտ երիտասարդների կողմից արհամարհված ժողովրդի անկեղծ սերն ու համակրանքը: Ժողովուրդը նրան տեսնելիս խոնարհ դեմքով կանգնում էր ու գլուխ տալիս: Իսկ Սամվելը, ի պատասխան այդ ջերմ վերաբերմունքի, կանգնում էր, ողջունում, զրուցում նրանց հետ: «Սամվելը շատ սիրված էր ժողովրդից: Նրա քաղցր ու մեղմ բնավորությունը, նրա անսահման գութն ու բարությունը՝ թե՛ դեպի շինականը և թե՛ դեպի քաղաքացին նրա անձը պաշտելի էին կացուցել: Նա,- գրում է Ռաֆֆին,- չուներ նախարարական տների մեծամիտ երիտասարդների ոչ անգթությունը և ոչ արհամարանքը, որոնց աչքում իրենց ազնվագույն նժույգը, շունը, բազեն ավելի արժանավորություն ունեին, քան ռամիկը»:

**Աշ.**- Տեղյակ լինելով իր հանդեպ ժողովրդի այդ վերաբերմունքին՝ նա «...հեռվից ձեռքով նշան էր տալիս, որ չանհանգստացնեն իրանց: Բայց նրանք չէին դադարում արժանավոր հարգանք մատուցանել իրանց երիտասարդ իշխանին»:

**Աշ.**- «Կարծես իշխան չլինի, ոչ ծեծում է և ոչ հայհոյում,-ասում էին Սամվելի մասին շինականները»:

## *Սամվել և Աշխեն*

**Աշ.-** Այն, որ Սամվելը ամեն ինչից վեր է դասում հայրենիքի շահը, երևում է նաև իր սիրած առջևա՝ Ռշտունյաց օրիորդի՝ Աշխենի հետ հանդիպման ժամանակ: Երկար ժամանակ տեսած չլինելով իրար և նույնիսկ լուր չունենալով միմյանցից՝ նրանք սրտատրոփ սպասում են հանդիպման երջանիկ պահին՝ հանգստացնելու իրենց կարոտակեզ սրտերը: Սակայն երբ Սամվելը հանդիպում է Աշխենին, դառնորեն խոստովանում է. «Լսի՛ր, Աշխեն, ես ինձ շատ դժբախտ եմ համարում, որ երկար անջատումից հետո, երբ կրկին պատահում է հանդիպել միմյանց, ես, փոխանակ սքանչանալու քո սիրո քաղցրությամբ, փոխանակ վայելելու այն անսպառ երանությունը, որ բաշխում է սիրված աղջիկը սիրող երիտասարդին, ստիպված եմ քեզ հետ խոսել վշտի և դառնության խոսքեր: Մենք հանդիպում ենք միմյանց որպես երկու սգավորներ»:

**Աշ.-** Այո՛, սիրո քնքուշ խոսքերի փոխարեն նրանք պատմում են հայրենիքի օրհասական վիճակի մասին: Աշխենի այն հարցին, թե որտեղից է գալիս Սամվելը և ուր է գնում, երիտասարդը պատասխանում է. «Այժմ կասեմ քեզ, սիրելի՛ Աշխեն, թե ինչու՞ համար եկա կամ ո՞ւր եմ գնում: Երկու սիրելիներ դրված են իմ առջև, մեկը՝ վտանգի մեջ գտնվող հայրենիքը, մյուսը՝ վտանգի մեջ գտնվող կինը՝ դու: Երկուսն էլ ինձ համար հավասար չափով պաշտելի են, երկուսն էլ ինձ համար հավասար չափով անգնահատելի են: Երկուսի ձայնն ևս կոչում են ինձ: Երկար ես տանջվում էի այն մտքով, թե դեպի ո՞րը դիմեմ: Երկուսի համար ևս ես ուխտել եմ անկեղծ անձնազոհություն: Բայց իմ զգացմունքները դժվարացնում են ինձ վճռել, թե որի՞ն պետք է նվիրել առաջին զոհը: Ահա, իմ սրտագին ըղձերը, իմ ամենաջերմ փափագները թափում եմ քո առջև, սիրելի՛ Աշխեն, դու ցույց տուր ինձ ճանապարհը, թե դեպի ո՞րը գնամ:»

**Աշ.-** Իբրև պատասխան Սամվելի հոգեկան դժվար կացության՝ Աշխենն ասում է. «Դեպի հայրենիքի փրկության գործը…դու ինձ արժանի չես լինի, Սամվե՛լ, եթե քո արյունը չխառնվի այն անբավ արյան հեղեղների հետ, որ պիտի թափվեն մեր աշխարհի ազատության համար: Եվ ոչ ես արժան կլինեմ քեզ, եթե նույնը չանեմ….

- Դու՜,-բացականչեց Սամվելը, և նրա տխուր դեմքը փայլեց անսպառ ուրախությամբ: -Թույլ տուր գրկել իմ հրեշտակին, վրեժխնդրության և արդար բարկության հրեշտակին….

Նրանք գրկախառնվեցին:

-Աշխարհի բոլոր երանությունները չէին կարող այնպես մխիթարել ինձ, որպես այդ խոսքերը, որ թռավ քո շրթունքներից, սիրելի՛ Աշխեն: -Այդ խոսքը լցնում է իմ սիրտը մի սրբազան հպարտությամբ, որ ես

վայելում եմ հայոց քաջազնուհիներից ամենաընտրյալի սերը »:

Այս խոսքերը կարծես յուրօրինակ հավատարմության խոսքեր են, որոնք Սամվելի սիրտը լցնում են հպարտությամբ: Սա յուրօրինակ անձնազոհություն է հանուն հայրենիքի, սա սիրող սրտերի սերը հայրենասիրության սուրբ զգացմանը զոհելու մի հերոսական արարք է: Եվ՝ Սամվելը, և՝ Աշխենը առաջնորդվում են սոսկ հայրենիքի նկատմամբ ունեցած մաքուր, անաղարտ սիրով:

**Ուս.**- Իսկ ինչպիսի՞ն էր Աշխենը: Կկարդա՞ք նրան բնութագրող տողեր:

**Աշ.**- Իմ կարծիքով ճիշտ Սամվելին արժանի մի օրիորդ: Մեջբերեմ գրքից. «Զինված էր նա: Հոր անդրանիկը լինելով, նա փոխարինում էր և՝ տղայի, և՝ աղջկա: Այդ պատճառով ծնողքը տվեցին նրան այրական կրթություն, թեև Ռշտունյաց օրիորդները իրենց քաջությամբ ետ չեն մնում տղամարդերից: Գլխին դրած ուներ ոսկենկար սաղավարտ, մեջքը սեղմել էր պողպատյա զրահի մեջ, աջ ձեռքում կրում էր մի թեթև նիզակ: Այդ զինավառության մեջ նմանվում էր Աքենաս-Պալասին, որ կարծես եկել էր այցելություն գործելու քարացյալ Նիոբեի արտասուքներից գոյացած աղբյուրին»:

### *Հերոսի ներքին դրաման ու տագնապը:*

**Աշ.**- Երբ Սամվելը լսում է հոր՝ Վահան Մամիկոնյանի և մորեղբոր՝ Մերուժան Արծրունու դավաճանության լուրը, ընկնում է հոգեկան ծանր վիճակի մեջ, ցնցվում է ողջ էությամբ, դառնանում է հոգին, սիրտը լցվում է անհուն վշտով. «Մոգերով ու մոգպետներով է գալիս իմ հայրը, գալիս է ոչնչացնելու մեր եկեղեցիները, մեր դպրոցները, մեր դպրությունը, գալիս է պարսկացնելու մեզ: Նա գալիս է ձեռք ձեռքի տված Մերուժանի հետ: Թագավորությունը սպանեցին, այժմ պետք է սպանեն ազգությունը...»: Սամվելին հունից համում է նաև այն միտքը, որ հոր և մորեղբոր արարքները արատավորում են իրենց տոհմի անունն ու պատիվը: Խոցվում է Սամվելի սիրտը, բայց ոչ ընկճվում: Նա վճռում է քավել հոր մեղքը և մաքրել այն սև բիծը Մամիկոնյան տոհմի վրայից, որ քաշել էր իր հայրը:

### *Հոր և որդու երկխոսությունը*

Աշակերտները պետք է գիտակցեն և հասկանան, որ հայրենասիրությունը այնքան խորը զգացմունք է, որի առաջ կարող են խոնարհվել մարդկային մի շարք զգացմունքներ: Հենց այս հանգամանքը բացահայտելու գործին ուսուցիչը առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնի այն ժամանակ, երբ խոսվում է Սամվելի՝ ծնողներին սպանելու արարքի մասին:

Չպետք է պարզունակ ձևով ներկայացնել սովորողին, թե հորն ու մորը սպանելը Սամվելի համար մի հասարակ բան էր: Ծնողասիրությունը սուրբ բան է, ու եթե մեկը ձեռք է բարձրացնում ծնողի վրա, նշանակում է նրա արարքը պետք է պատճառաբանված լինի՝ հանցագործ չկոչվելու համար:

**Ուս.**- Ի՞նչ տողեր կարող եք կարդալ, ուր նկարագրվում են Սամվելի հոգեկան ապրումները, նրա հոգեկան տանջանքները:

**Աշ.**- Աշխենի հետ հանդիպման ժամանակ Սամվելը ցավով ասում է. «Դու կորցրած մայր ունես, իսկ ես կորցրած հայր: Քո մայրը կորավ յուր առաքինության համար, իսկ իմ հայրը կորած է յուր չարագործության համար: Մտնելով քո հայրենի երկիրը, ես անցա կրակի և մոխիրների միջով: Ես տեսա քո քաջ նախահարց պատկառելի ամրոցների ավերակները: Ամոթը և նախատինքը պատում է ինձ, երբ մտածում եմ, որ այդ բոլորը կատարվել է իմ հոր ձեռքով... Այն մարդու ձեռքով, որի հարսը պետք է լինես դու...»:

**Աշ.**- Մերուժանի վրանի մոտ Սամվելը տեսնում է տանջամահ արված հայերի գլուխներից կազմված բլուրներ, շղթայակապ գերիների խմբեր, խարույկներ, ուր մոգերը այրում են հայկական մագաղաթյա գրքերը:

**Աշ.**- Ամենուրեք տեսնելով հոր և մորեղբոր ձեռքով ավերված գյուղեր ու քաղաքներ, խոշտանգված դիակներ, Վան քաղաքի միջնաբերդում հոր ձոռքով կախված Համազասպուհուն՝ Սամվելի մեջ զայրույթն ու վիրավորանքը փոխվում է ատելության:

**Աշ.**- Սամվելի մեջ պայքարում են երկու հզոր ուժեր՝ որդիական սերը և հայրենիքի սերը: Նա որդի է նախ հայրենիքի, ապա ծնողների համար:

**Աշ.**- Ծնողներին սպանելը կատարվում է երկար տվայտանքներից հետո, և դա նախապես Սամվելի կողմից որոշված չի եղել: Հոր սպանության վճիռը նա ընդունում է հոգեկան ապրումների բարդ և հակասական բովով անցնելուց հետո:

Սամվելը համառորեն ձգտում է համոզել ծնողներին, ետ կանգնեցնել հայրենիքին դավաճանելու ուղուց:

**Աշ.**- «Այն օրից, որ դուրս եկա մեր ամրոցից, այն օրից, որ թողի Տարոնը, մինչև այստեղ հասնելը ես անցա մի շարք ավերակների, մի շարք բարբարոսությունների միջով: Տեսա մոխիր դարձած քաղաքներ, տեսա անմարդացած գյուղեր, տեսա կործանված վանքեր ու տաճարներ... Ամեն քայլում ես ոտք էի կոխում արյան վրա, և իմ հայրենակիցների արյան վրա...Ո՞վ կատարեց այդ անգթությունները, հա՛յր, և ինչո՞ւ համար...»:

Աշ.- «Լսի՛ր, հա՛յր, ընդունի՛ր տառապյալ որդուդ աղաչանքը, մի՛ արատավորիր Մամիկոնյանների պայծառ անունը հավիտենական ամոթով: Դեռ ուշ չէ: Դեռ կարելի է վնասի կեսից ետ դառնալ: Ցրեցեք այդ անիծյալ պարսկական բանակը, որի ներկայությունը պղծում է Հայոց երկիրը:

…-Ես չկարողացա հասկացնել քեզ,- ասում է հայրը Սամվելին,-ո՛չ իմ միտքը, ո՛չ իմ նպատակները: Այժմ մնում է հարցնել քեզ. դու ո՞ր կուսակցության ես պատկանում:

-Այն կուսակցությանը, որ հավատարիմ է մնացել հայրենի եկեղեցուն և սիրելի թագավորին:

-Ուրեմն, դու իմ որդին չես: Ով մեզ հակառակ է, մեզանից չէ: Մենք անխնա պատժել գիտենք այնպիսիներին:

-Եվ ոչ դու իմ հայրն ես:

-Սամվե՜լ….

-Ի՞նչ է, դավաճա՜ն….

.«Հայրը ձեռքը տարավ յուր սուրը: Բայց որդու սուրը արդեն մերկացված էր: Նա շողշողաց և կայծակի նման մխվեցավ հոր սրտի մեջ»:

Աշ.-Սամվելը սպանում է, որովհետև կա մի գերբարձր զգացմունք՝ հայրենասիրություն, որին ստորադասվում է ոչ պակաս բարձր մի այլ զգացմունք՝ ծնողասիրությունը:

Աշ.- Դավաճան հորը սպանող որդին սպանում է նաև մորը, որը ստիպում է Սամվելին պաշտել պարսկական կրոնը, երկրպագել ատրուշանի մեջ այրվող կրակը: «Սամվելը թախծալի աչքերով նայեց կրակի վրա, նայեց և մոգերի վրա: Փոփոխությունը չափազանց անմխիթարական էր: Մտաբերեց, որ այժմյան ատրուշանը այն եկեղեցին էր, որտեղ աղոթել էին յուր նախնիքը, և որի սուրբ ավազանից ինքը ծնունդ է առել:

-Մա՛յր,-ասաց նա խռովյալ ձայնով,-ես ինձ բոլորովին դժբախտ եմ համարում, որ վերադառնալով իմ հայրենական ամրոցը, ամեն կարգ, ամեն սրբություն խանգարված եմ գտնում: Եթե ցանկանում ես, որ ես քո որդին լինեմ, հանգցրու այդ կրակը:

Մոր աչքերը վառվեցան բարկության բոցով:

-Ես աստվածապաշտ լինել կարող չեմ, Սամվե՛լ,- պատասխանեց նա, զայրացած կերպով հրաժարվելով:-Եթե դու իմ որդին ես, պետք է երկրպագություն տաս այն սրբությանը, որ պաշտում է քո մայրը:

-Ուրեմն ես կսպանեմ քո աստծուն, մա՛յր:

-Չես համարձակվի, Սամվե՛լ:

…-Կրկնում եմ, մա՛յր, հանգցրու այդ կրակը….

-Անկարելի է, Սամվե՛լ….

-Կրկնում եմ, հանգցրու այդ պղծությունը, եթե ոչ….

-Եթե ոչ, ի՞նչ կանես….

-Քո արյունով կհանգցնեմ….

-Անիրա՜վ….

-Թող մարդիկ ինձ անիրավ կոչեն, թող մարդիկ ինձ եղեռնագործ կոչեն, ահա այն սուրը, որ սպանեց դավաճան հորը, կսպանե և ուրացող մորը….

Վերջին խոսքերի հետ՝ նա ձեռքը տարավ դեպի մոր գլուխը, բռնեց երկար գիսակներից, քարշ տվեց կրակի սեղանի մոտ: Սուրը շողաց, տաք արյունը թափվեցավ սեղանի վրա…

Բազմության միջից լսելի եղան ուրախաձայն աղաղակներ.

-Արժանի՜ էր…»:

Դասն ավարտում եմ՝ մի անգամ ևս հիշեցնելով հետևյալ ասույթը. «Կա հանցագործություն, որ չեն ներում. դա հայրենիքին դավաճանելն է»:

# *Հովհաննես Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի ուսուցումը խիկ համակարգով*

Մեծ է գրականության դերն աճող սերնդի աշխարհայացքի և մտահորիզոնի ձևավորման, ճանաչողական գիտելիքների հարստացման, բարոյական և գեղագիտական դաստիարակության գործում: Այս իմաստով լայն հնարավորություն է ընձեռում Հովհ. Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմը:

Այն ուսուցիչը, որը մտահոգված է 21-րդ դարի պահանջներով, աշխատում է խթանել, զարգացնել և խրախուսել իր աշակերտների ինքնուրույն և քննադատական մտածողությունը: Ուսուցչի աշխատանքը ապարդյուն կլինի, եթե ուսուցման ժամանակ չհիմնվի մեթոդիկայի բնագավառում ժամանակակից նվաճումների վրա: Վերջին տարիներին մեթոդիկայի բնագավառում ձեռք են բերվել զգալի նվաճումներ: Վերջիններից է «Քննադատական մտածողության զարգացումը կարդալու և գրելու միջոցով» (ՔՄԶԿԳՄ) ծրագիրը՝ ուսուցման նոր մեթոդների մի համակարգ, երեք մասից (խթանում, իմաստի ընկալում, կշռադատում (կարճ՝ խիկ) բաղկացած մի ամբողջություն, որը հաջությամբ գործադրում եմ դասավանդման ժամանակ:

Դասի պլանը կազմելիս բացառապես առաջնորդվել եմ խիկ համակարգով և աշակերտակենտրոն ուսուցման սկզբունքով, որը ենթադրում է ուսումնառության ընթացքում աշակերտների՝ հնարավորինս մեծ ակտիվության ապահովում և ուսուցչի՝ աջակից, խորհրդատու դերի հաստատում:

***Դասի թեման*** Հովհ. Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմը

***Նպատակը՝*** Հերոսականության, մարդկային առաքինության, մարդու անցողիկ կյանքի արժևորումը և վեհ գործերի անմահության գաղափարի դրվատումը

***Դիդակտիկ պարագաներ և տեխ.միջոցներ՝*** մագնիտոֆոն, «Ալմաստ» օպերայի ձայնագրությունը, «Թմկաբերդի առումը» պոեմի ձայներիզը՝ Սուրեն Քոչարյանի ընթերցմամբ

***Դասի տևողությունը՝*** 2 դասաժամ

## *Խթանման փուլ*

Աշակերտներին հանձնարարում եմ 5 րոպեի ընթացքում գրել փոքրիկ շարադրություն ներքոհիշյալ թեմաներից որևէ մեկով (ըստ ցանկության).

1.Ու՞մ եմ համարում կամ ո՞վ է համարվում լավ մարդ և ինչու՞:

2.Ու՞մ եմ հիշում երախտագիտությամբ, դրվատանքով կամ ո՞վ է հիշվում տարիների ու դարերի հոլովույթում և ինչու՞:

3.Ու՞մ եմ հիշում կամ ո՞վ է հիշվում տհաճությամբ և ինչու՞:

4.Ումի՞ց եմ օրինակ վերցնում և ինչու՞:

5.Ու՞մ կուզենայի նմանվել և ինչու՞:

5 րոպե անց դադարեցնում եմ գրելը և հարցնում կարդալ: Ընթերցումից պարզվում է, որ բոլոր 5 հարցերի ինչուների պատասխանը մեկն է՝ գործը: Ըստ աշակերտների՝ նա է համարվում լավ մարդ, նրան են երախտագիտությամբ հիշում, նրանից են օրինակ վերցնում, նրան են ուզում նմանվել, ով հիշարժան, ազգօգուտ, հայրենանվեր գործ է կատարել: 3-րդ հարցի պատասխանը նույնպես գործն է, բայց այս անգամ արդեն չար, մերժելի, անեծքով հիշվող գործը:

Բոլորի շարադրությունները լսելուց հետո տալիս եմ երկու րոպե ժամանակ, որպեսզի հիշեն կամ գրականության տետրերից կարդան առած-ասացվածքներ, թևավոր խոսքեր գործի մասին: Ահա մի քանի պատասխաններ.

«Մի գովիր մարդու տեսքը կամ անթիվ անցավոր գանձերը, այլ գովիր մարդու գործը»:

**Ֆրիկ**

«Ծառը պտղով է գովելի, մարդը՝ գործով»:

**Ժող. առած**

«Ամեն մարդու մասին դատում են ըստ նրա գործերի»:

**Սերվանտես**

«Արծանին գեղեցկացնում է տեսքը, իսկ մարդուն՝ նրա գործը»:

**Պյութագորաս**

«Հարկ չկա տարիները հաշվել: Մարդիկ ավելի երկար էլ են ապրում: Բանը ապրած տարիները չեն, այլ՝ կատարած գործերը»:

**Օվիդիոս**

«Մի բարի գործը այնպես կիպ մոտեցնել մյուսին, որ նրանց միջև նվազագույն ճեղք անգամ չմնա՝ ահա թե ես ինչն եմ անվանում կյանքից հաճույք ստանալը»:

**Մարկոս Ավրելիոս**

Ես էլ կարդում եմ հետևյալ բանաստեղծությունն ու պատմվածքը.

Ոչ' վշտացիր, ոչ' թախծիր դու,
Կյանք է, կանցնի, կգնա,
Որպես արծան անցնող մարդու՝
Նրա գործը կմնա:
Դարը կիջնի դարի վրա,
Դարը դարից ուժ կառնի,
Ու դարերի փոշին վրան՝
Պայծառ գործը կհառնի:

«Մի չար մարդ է եղել, որը որքան չարություն, վատություն ու վատ գործեր է արել, այնքան մեխ է խփել ծառի բնին: Այնքան է խփել, որ տեղ չի մնացել: Մի օր էլ գնացել է իմաստունի մոտ, պատմել արածը և խորհուրդ հարցրել: Իմաստունը խորհուրդ է տվել գնալ և բարի գործ անել և ամեն բարության հետ մի մեխ հանել:

Մարդը վարվում է այնպես, ինչպես ասել է իմաստունը: Որոշ ժամանակ անց այս մարդը նորից գալիս է իմաստունի մոտ ու ասում, որ բնին այլևս մեխ չկա, տեղ է բացվել: Իմաստունը, որ իսկապես շատ իմաստուն էր, տխրել ու ասել է.

- Մա՛րդ, ես քեզ այդ ամենը ասել էի, ոչ թե տեղ բացելու համար, այլ որ տեսնես ու հասկանաս, թե որքան էլ բարություն անես, չարությանդ հետքերը կմնան»:

Այս ամենից հետո հարցնեում եմ աշակերտներին, թե իրենց կարծիքով մեր նոր նյութը ինչի՞ մասին կլինի: Պատկերացրեք, որ բոլորը միաբերան պատասխանում են՝ կյանքի անցողիկության և գործի անմահության մասին:

Սրանով ավարտում եմ խթանման փուլը և անցնում իմաստի ընկալման փուլին:

## *Իմաստի ընկալում*

Նախքան ասմունքի անգերազանցելի վարպետի՝ Սուրեն Քոչարյանի կատարմամբ պոեմի լսելը, պատասխանում եմ ես իմ առաջ քաշած հետևյալ հարցին, թե ինչն է եղել «Թմկաբերդի առումը» պոեմի սյուժետային հիմքը:

Ասում եմ, որ այս պոեմի նյութը 1901թ. բանաստեղծը լսել է Ախալքալաքում: Պահպանվում է ժողովրդական փոքրիկ ավանդություն, որի բովանդակությունը հետևյալն է. «Թմկաբերդի քրդերը պատմեցին ինձ, թե մի ժամանակ Թմկաբերդում իշխում էր մի հայ իշխան: Պարսից թագավորն եկել, երկար պաշարել է այս բերդը, սակայն չի կարողացել առնել: Իշխանի կինը սիրահարվել է պարսից շահի վրա և ծածուկ առել է նորա հաճությունը յուր հետ ամուսնանալու, եթե ինքը սպանե յուր ամուսնուն և բերդը հանձնե շահին: Եվ իբր նա սպանել է ամուսնուն, հարբեցրել է զորքին և բերդի բանալիները ուղարկել շահին: Շահն այսպիսով տիրել է բերդին և հարցրել է մատնիչ իշխանուհուն. «Ես եմ գեղեցի՞կ, թե՞ ամուսինդ»: Եվ երբ սա պատասխանում է, թե ամուսինս գեղեցիկ էր, շահը հրամայել է կապել սորան ձիու ագիից և քաշ տալ մինչև մեռնելը՝ ասելով. «Եթե ամուսինդ գեղեցիկ էր, ինչու՞ դավաճանեցիր»» («Զավախքի բուրմունք», ժող. նյութեր, գիրք Բ, հավաքեց Ե.Լալայանը, Թիֆլիս, 1892թ, էջ 57):

Իրենց բովանդակությամբ սրան մոտ են ու միաժամանակ ինչ-որ չափով տարբեր այլ ժողովուրդների մոտ գրի առված լեգենդի տարբերակները: Հետաքրքիր է հատկապես վրացական ավանդությունը թագավոր Վախթանգ Գորդասալի (5-րդ դար) մասին: Սրա կինը մատնում է նրա անխոցելիության գաղտնիքը մուսուլման թագավորին՝ խոստում ստանալով, որ նա իր հետ կամուսնանա: Բայց երբ այդ ճանապարհով Վախթանգը սպանվում է, օտար թագավորն ասում է դավաճանին. «Դու չկարողացար գնահատել այդպիսի հերոսին և փառաբանված ամուսնուն, ինչպես պիտի ինձ գնահատես»: Նա հրամայում է կնոջը կապել ձիու պոչից. այդպես նա մաս-մաս եղավ: Վրացական այս լեգենդը գրի է առնվել Կախեթիայում և տպագրվել «Դրոեբա» («Ժամանակ») թերթում 1889թ.:

Ջրբաշյանը գրում է. «Կասկած չի կարող լինել, որ Կախեթիայում և Զավախքում միաժամանակ գրի առված լեգենդներն ինչ-որ ծագումնաբանական ընդհանրություններ են ունեցել»:

Հիշատակում են նաև հարավսլավական էպոսից Մոմլիչի պատմությունը: Սա ևս զոհ է դառնում իր կնոջ դավաճանությանը: Սիրահար երիտասարդը, որի համար կատարվեց այդ դավաճանությունը, ասում է. «Եթե դու դավաճանեցիր այդպիսի ամուսնուն, որի նմանը աշխարհում չկա, ապա վաղը կարող ես ինձ էլ դավաճանել»: Եվ հրամայում է քառատել նրան:

Թումանյանի արխիվում պահվում է մի պատառիկ. «Աղջիկը սիրահարվում է իր հոր թշնամի զորավարին, բերդի ջրի գաղտնիքը հայտնում է և դառնում բերդի անկման պատճառը»:

Ահա դավաճանության մասին այսպիսի ավանդությունները կազմեցին Թումանյանի պոեմի սյուժետային հիմքը:

Սրանից հետո աշակերտներին տալիս եմ հանրագիտարանային տեղեկություններ Թմկաբերդի մասին. «Թմկաբերդ, Թմուկ, Թմոք, Թմոգվի, Թմբուկ - միջնադարյան դղյակ Մեծ Հայքի Գուգարք նահանգի Վերին Ջավախք գավառում, Կուր գետի ձախ ափին: Բերդը գտնվում էր երեք բարձրադիր բլուրների վրա և ուներ մոտ 150մ երկարություն, 30մ լայնություն՝ շրջապատված պարիսպներով ու 3 բլրի վրա առանձին կառուցված աշտարակներով: Պարիսպները և աշտարակները շինված են սրբատաշ քարով ու կրով և ունեին մոտ 1,5մ հաստություն: Թմկաբերդն ուներ երեք դուռ՝ հարավային, հյուսիսային և արևելյան: Հարավային դռան մոտից ստորգետնյա ճանապարհը ժայռի միջով իջնում էր դեպի Կուր գետը:Բերդը հետագայում ավերվել է»: (Հայկական սովետական հանրագիտարան, հ.4, էջ 193, Երևան, 1978թ.)

Պարզաբանում եմ նաև, թե ով է եղել ժողովրդական ավանդության անորոշ «պարսից շահը», որը պոեմում դարձել է Նադիր շահ: Վերջինս թագավորել է 18-րդ դարի 30-40-ական թվականներին, արշավանքներ է կատարել դեպի Իրանի բոլոր հարևան երկրները, այդ թվում նաև Անդրկովկաս: Աչքի է ընկել իր դաժանությամբ և նենգությամբ:

Սրանից հետո լսում ենք «Թմկաբերդի առումը» պոեմի ընթերցումը Սուրեն Քոչարյանի կատարմամբ և «Ալմաստ» օպերան:

## *Կշռադատման փուլ*

Այս փուլում աշակերտները մտովի հետադարձ հայացք են գցում ու խորհում անցյալ դասի ընթացքում հանդիպած գաղափարների և ընկալած իմաստների շուրջ: Դրանց կիրառական դաշտն ընդլայնելու համար հարց եմ տալիս: Աշակերտները մեկնաբանում են, բանավիճում, հակադրվում միմյանց:

Ահա կշռադատման փուլի հարցերը. որոշ հարցեր կազմելիս օգտվել եմ Ա. Առուստամյանի «Հովհ. Թումանյանի ստեղծագործության ուսուցման իմ փորձից» գրքից:

1.- Ինչու՞ է Թումանյանը պոեմը վերնագրել «Թմկաբերդի առումը» և ոչ թե «Թմկաբերդի գրավումը»: Սա պատահակա՞ն է արդյոք, թե մտածված:

2.- Հաղթության փառքով ու գինով հարբած
Քընած են բերդի և' զորքերն և' տեր,
Ու հավիտյան էլ մընացին քնած,
Դավին անտեղյակ, ցավին անտարբեր:

3.- Ասել այն տողերը, ուր բնութագրված է Թաթուլ իշխանը:

4.- Համեմատեք և վերնագրեք պոեմի նախերգանքը և վերջը՝ 12-րդ հատվածը:

5.- Ինչու՞ է Թումանյանը իր ասելիքը հիմնավորում Ֆիրդուսու հայտնած մտքով.

Էդպես է ասել հընուց էդ մասին

Ֆարսի բյուլբյուլը, անմահ Ֆիրդուսին:

6.- Ինչու՞ դառնությամբ լեցուն շահը չի կարող հանգիստ նայել իր ստոր արարքի մեղսակցին՝ Թմկա տիրուհուն:

7.- Իսկ ինչու՞ էր շահը դառնացած. ավելի ճիշտ չէր լինի, եթե նա պատկերվեր հրճվագին տրամադրության մեջ այդ կարևոր ու հեշտ ձեռք բերված հաղթանակի առթիվ:

8.- Նայում է շահը անտեր գահույքին,

Մտքով անցնում է աշխարքի բանը…

- Որն է աշխարքի բանը, որ անցնում է շահի մտքով:

9.- Նկարագրեք Թմկա տիրուհուն Թումանյանի խոսքերով:

10. - Արդյո՞ք համապատասխանում են իրար Թմկա տիրուհու ներքին և արտաքին գեղեցկությունը:

11. - Ինչու՞ է շահը այսպես արհամարհական ու կոպիտ ձևով դիմում Թմկա տիրուհուն.

- Պատասխան տուր ինձ, մատնիչ սևաչյա…

12. - Ինչը՞ դրդեց իշխանուհուն դիմելու այդ ստոր արարքին:

13. - Ձեզ հանձնարարված էր գրել նշանավոր մարդկանց ասույթները փառամոլության մասին: Կարդացեք Ձեր գրածները:

Պատ. - «Ամեն մարդու մեջ ճիշտ այնքան փառամոլություն կա, որքան նրան պակասում է խելքը»:

**Ա. Պոպ**

«Հիմարությունն ու փառամոլությունը անբաժան ընկերներ են»:

**Բոմարշե**

«Փառամոլությունը ավելի շատ նշան է ոչնչության, քան մեծության»:

**Ջ. Սվիֆթ**

«Փառամոլությունը սարսափելի ուժ է, որը գործում է մեր ներսում ու հենց մեր դեմ»:

**Վ. Հյուգո**

«Մարդու փառամոլությունը նրա մեծագույն թշվառությունների աղբյուրն է դառնում»:

**Ժ.Ժ. Ռուսո**

14. - Ինչու՞ թմկա տիրուհին անուն չունի:

15. - Արդյո՞ք բանաստեղծը ներում է իր հերոսուհուն:

16. - Դուք արդարացնու՞մ եք, մեղադրու՞մ, թե՞ խղճում թմկա տիրուհուն: Հիմնավորել:

17. - Ի՞նչ բառեր, արտահայտություններ կընտրեք՝ բնութագրելու թմկա տիրուհու արարքը:

18. - Թմկա տիրուհուն հակադրեք մեր կին հերոսուհիներին:

19. - Տարան անտակ էն ժեռ քարից,
Որ կանգնած է մինչ էսօր,
էն ահավոր քարի ծերից
Գըլորեցին դեպի ծով:
- Ինչու՞ գլորեցին դեպի ձորը:

20. - Ինչու՞ է Նադիր շահը աշուղի ուղարկել Թմկաբերդ, այլ ոչ մեկ ուրիշի:

21. - Աշուղն ի՞նչ ձևով կարողացավ գրավել Թմկա տիրուհուն:

Ուսուցիչ. - Այո՛, ճիշտ է, գովասանքով: Ուզում եմ կարդալ Հայկ Խաչատրյանի «Վանատուր» գրքից մի պատմություն, որի վերնագիրն է՝

## «Կանանց որսում են գովասանքով».

- Իսկական այրը բանի տեղ չի դնում կեղծ գովասանքը, - ասաց Վանատուրը:

- Իսկ ինչու՞ միայն այրը. դու կարծում ես՝ կեղծ գովասանքը դու՞ր է գալիս կանանց:

- Այո՛, տիկին Վարսե, այրերը կականց որսում են գովասանքով: Յուրաքանչյուր կին սիրում է, երբ գովում են իրեն, նրան դուր է գալիս նույնիսկ կեղծ գովասանքը:

- Բայց մի՞թե չի կարող լինել մի կին, որն անտարբեր լսի տղամարդկանց գովասանքը:

- Քառասուն գովասանքից 39-ը արհամարհող կինը, միևնույն է, կլսի 40-րդ գովասանքը և կընկնի տղամարդու թակարդը: (Հայկ Խաչատրյան, «Վանատուր, սով. գրող., Երևան, 1978թ.»)

22. - Թմկաբերդի առման դեպքը պատմող աշուղի բերանով ամենայն որոշակիությամբ սահմանվում է մարդու՝ անմահության հասնելու միջոցը: Ո՞րն է այդ միջոցը:

23. - Թումանյանի խոսքերից ո՞րը կդարձնես քո կյանքի նշանաբանը:

24. - Ի՞նչ է խորհում մարդու անցողիկ կյանքի և լավ գործի մասին Ավ. Իսահակյանի «Համբերանքի չիբուխը» պատմվածքի հերոսը՝ կյանքի փորձությամբ իմաստնացած Օհան ամին:

25. - Արդյո՞ք միայն բարի գործն է հիշվում:

Ուսուցիչ. - Այո՛, չարն էլ կարող է «անմահանալ»՝ հերոստրատյան հիշատակ թողնելով իրենից հետո:

Բացատրում եմ **«Հերոստրատյան փառք»** թևավոր արտահայտությունը.

«Այս թևավոր խոսքը կապված է Եփեսոս քաղաքի բնակիչ Հերոստրատի անվան հետ, որն իր անունը անմահացնելու և փառքի հասնելու համար այրում է աշխարհի յոթ հրաշալիքներից մեկը՝ Արտեմիսի տաճարը, որը կառուցել էին եփեսոսցիները՝ ի պատասխան Արտեմիս աստվածուհու նկատմամբ տածած սիրո: Տաճարը ոչ միայն վեհաշուք էր, այլև զարդարված էր ոսկով, սուտակով ու շափյուղայով: Եվ ահա ցնցող լուր. 356թ. հուլիսին (մ.թ.ա.) այդ վերասքանչ կոթողն այրվեց: Կեսգիշերին մարդիկ սարսափահար վազում են դեպի տաճար: Բնակիչները ձեռքերը կառկառում են դեպի երկինք և օգնություն հայցում Աստվածներից: Ամեն ինչ իզուր էր: Փլվեց տաճարը: Ցավից կծկվեց Եփեսոսը: Երբ վշտալլուկ քաղաքացիները սթափվեցին, առաջին միտքը այն եղավ, թե ինչ պատիժ գտնեն այն մարդու համար, որը դատավորի հարցին, թե ինչու՞ հրդեհեցիր աշխարհի չքնաղ կոթողը, պատասխանում է.

- Ուզեցի հայտնի դառնալ և անմահանալ դարերում:

Դատարանը մահվան վճիռ է կայացնում: Հոնիական ազգային ժողովն էլ Հերոստրատի անունն իսպառ ջնջելու նպատակով հայտարարում է, որ ով նրա անունը արտասանի, չարաչար կպատժվի: Եփեսոսցիներին արգելվեց չարագործի անունը տալ նույնիսկ տաճարի հրդեհման պատմությունն անելիս: Չնայած բոլոր միջոցառումներին՝ նրա անունը մնաց և հասավ հետագա դարերին՝ որպես մի ամոթալի և սև գործի հեղինակի: Այստեղից էլ սերունդներին մնաց «Հերոստրատի փառք» թևավոր արտահայտությունը, որը գործածվում է եղկելի փառքի իմաստով:

Ի լրումն այս ամենի՝ կարդում եմ նաև Ավ. Իսահակյանի **«Ով է ապրում»** պատմվածքը:

Շատ դարեր առաջ արևելքում մի փառատենչ իշխան է լինում: Անունը մոռացվել է, բայց գործը հիշվում է:

... Մի անգամ հանկարծակի խուժելով մի հեռավոր իշխանության սահմաններից ներս, հասնում է երկրի մայրաքաղաքի փակ դռներին: Պաշարում է քաղաքը, բանակը զետեղում է ամրակուռ պարիսպների շուրջը, ինքն էլ նստում է արքայական վրանի մեջ՝ օր ու գիշեր հնարներ ու դավեր որոճելով քաղաքին տիրանալու:

... Մի օր իշխանը զորքի մեջ քննական պտույտ անելուց հետո վերադառնում է իր վրանը: Ճանապարհն անցնում է քաղաքի ընդարձակ գերեզմանատան միջով: Իշխանը քաշում է նժույգի սանձը, կանգ առնում և դիտում անծայրածիր գերեզմանները: Դիտում է ու խորհում

իր սրտի մեջ:

... Հարկավ ամեն մի քարի տակ մի հանգած կյանք կա, մի մեռած անհատ, ներկա ապրող աշխարհից առաջ մի անցած ապրող աշխարհ:

... Իշխանը իջավ ձիուց, մոտեցավ առաջին շիրմաքարին և կարդաց արձանագիրը. անուն, տոհմանուն, մեծահարուստ վաճառական, ծնվեց այս թվին, մեռավ այս թվին. չապրեց և ոչ մի օր:

Ինչ տարօրինակ խորագիր:

Կարդաց մի ուրիշը. - անուն, տոհմանուն, հռչակավոր զորապետ, միշտ հաղթանակ, ծնվեց, մեռավ, ապրեց միայն մի օր: Իշխանը զարմացած շարունակեց ընթերցումը հաջորդ մահարձանի. - մեծափարթամ կալվածատեր, ծնվեց - մեռավ, ապրեց 7 տարի:

... Ավելի զարմացավ իշխանը և շիրմաքարից շիրմաքար անցնելով՝ կարդաց մի այլ արձանագիր. - անուն, ազգանուն, խորիմաստ հեղինակ, ծնվեց - մեռավ, ապրեց իր կյանքի բոլոր օրերը:

Իշխանը մտասույզ կանգ առավ. ի՞նչ կնշանակե այս, ի՞նչ խորհուրդ ունեն այս գրությունները: Մտածեց, մտածեց և անկարող եղավ լուծելու այս գաղտնիքը: Հրամայեց գտնել - բերել տեղացի մի մարդ՝ գիտակ այս առեղծվածին: Ցրվեցին թիկնապահներն ամեն կողմ և մի պահ անցած՝ բերին մի ծերունի մարդ, որ բնակվում էր գերեզմանի ծայրին՝ մի հյուղակի մեջ:

-Կարո՞ղ ես բացատրել ինձ տապանագրերի իմաստը, - հարցրեց իշխանը:

-Կես դար է, - ասաց ծերուկը, - դեգերում եմ այս մեռելաքաղաքի բնակիչների մեջ: Այստեղ հանգչում են հայրերը և նրանց կողքին իրենց որդիները, իսկ թոռները հիմա մարտնչում են քո դեմ: Ես գիտեմ այս մեռելաքաղաքի գործերը - մահի և կյանքի առևտուրը: Կյանքն իր ծնված ժամից գրավ է դրված մահի մոտ: Մահը խիստ հզոր պարտատեր է: Ո՛չ հաղթապանծ իշխանը կազատվի այդ պարտքից, ո՛չ պարտված ստրուկը... Կյանքը սուտ է, միայն...

Իշխանը մեղմով կտրեց ծերունու խոսքը:

-Այո՛, այո՛, բայց խնդրում եմ ինձ մեկնես այս գրերի խորհուրդը:

Ծերունին մի պահ տրորեց ճակատը և խամրած ձայնով ասաց.

-Հնուց, դարերի մեջ սրբագործված մի սովորություն կա մեր քաղաքում: Երբ մեռնում է մի քաղաքացի, դատի են նստում քաղաքի իմաստուն ծերունիները: Քաջություն, խելք, հարստություն անարժեք են, երբ չի գործվում ուրիշի համար: Իրեն անձի համար ապրած օրերը նժարի մեջ կշիռ չունեն, բարիք գործած օրերն են ապրած համարում: Ուրիշի համար ապրողն է ապրում, որովհետև կյանքի իմաստը ուրիշի համար ապրելու մեջ է: Եվ այսպես հաշվում են ննջեցյալի բարիք գործած օրերը և թիվը գրում տապանի վրա:

... Իշխանը գոհացավ ծերունու խոսքերից, առատ վարձատրեց

նրան և հետիոտն, գլուխը քարշ, դանդաղ քայլերով գնաց վրանը:

Բոլոր գիշերը մինչև լույս նա առանձնացած գլուխն առավ ափերի մեջ, ո՛չ քնեց և ո՛չ հանգստացավ, մտածեց ու մտածեց: Երբ լույսը ծագեց՝ փոխանակ ռազմակոչ շեփոր զարկելու, կռիվը նորոգելու համար, նահանջի հրաման արձակեց:

Վերադարձավ իր երկիրը, բանակը ցրեց և ձեռնարկեց բարի և խաղաղարար գործեր՝ մնացած կյանքը ապրելով ուրիշների բարօրության համար»:

Սրանից հետո հանձնարարում եմ կին, գործ, դավաճանություն և սեր բառերով կառուցել պրիզմա:




Վերը բերված է աշակերտների կառուցած պրիզմաներից մեկ օրինակ, որի արդյունքում ստացվեց կին - անհատականություն, կին - կյանք, կին - հավատարմություն, գործ - անմահություն, գործ - տանջանք, գործ - օգնություն, դավաճանություն - ամոթ, դավաճանություն - պատիժ և այլն:

Դասն ավարտում եմ Իշխան Սիմոնյանի բանստեղծության ընթերցմամբ.

Մայրս ասում էր,
Թե մարդ իր կյանքում
Երեք անգամ է
Սրտագին երգում.
Առաջին երգը ծնունդ է նրա,
Երկրորդը գործն է կյանքում առօրյա,
Իսկ երրորդ երգը մահն է սևագույն,
Որ մարդիկ վերջին անգամ են երգում:
Եվ ասում էր նա.
- Աշխարհում, տղա՛ս,
Քո կյանքի ճամփան երգելով գնաս
Ու երբ այն վերջին երգին մոտենաս
Քո երկրորդ երգից մահը խլանա:

- Այո', իմ սիրելի աշակերտներ, եկեք միշտ լավ ու բարի, հիշարժան ու մնայուն գործ կատարենք.

- Որ մեզանից հետո չասեն լեզուները նենգ ու չար՝

Մարդը եկավ, մարդը գնաց՝ պարտք մնալով աշխարհին:

# *Չափածո ստեղծագործության ուսուցման փորձ «Ես իմ անուշ Հայաստանի...» բանաստեղծության օրինակով*

***Դասի թեման*** ՝ «Ես իմ անուշ Հայաստանի...» բանաստեղծության վերլուծություն

***Նպատակը՝*** մեկնաբանել բանաստեղծությունը, ցույց տալ գեղարվեստական առանձնահատկությունները և արժեքային համակարգը

***Խնդիրները՝*** ունկնդիրը կիմանա, թե ինչ գեղարվեստական հնարանքներ է օգտագործված այս բանաստեղծությունում, կիմանա այն արժեքային համակարգը, որ ներկայացված է բանաստեղծությունում, կկարողանա արտահայտիչ, հուզական և տրամաբանական շեշտադրությամբ արտասանել

***Հագեցվածությունը՝*** թղթապանակներ՝ Հայաստանի տեսարժան վայրերի, գրականության, երաժշտության, կինոյի, նկարչության, պարարվեստի, գիտության, ճարտարապետության բնագավառներում երևելի և համաժողովրդական ճանաչում ու հարգանք վայելող մարդկանց նկարներով

**Դասի տևողությունը՝ 80 րոպե**

***Խթանման փուլ***

Աշակերտներին առաջարկում եմ թերթել թղթապանակները, նայել նկարները, կարող են իրար հարցեր տալ, դատողություններ անել: Սրանից հետո օգտվում եմ խմբավորման մեթոդից. այն խրախուսում է աշակերտներին ազատ ու բաց մտածել որևէ թեմայի շուրջ: Այս մեթոդը կարելի է կիրառել և՛ խթանման, և՛ կշռադատման փուլում, այսինքն՝ խմբավորում կարելի է առաջարկել մինչև թեմայի ավելի խորը ուսումնասիրությունը, նաև որպես սովորածն ի մի բերելու միջոց: Խմբավորման քայլերը պարզ են և հեշտ հիշվող: Ահա այդ քայլերը.

1.գրատախտակի կամ թղթի կենտրոնում գրում եմ առանցքային բառը. տվյալ դեպքում՝ Հայաստան.

2.առաջարկում եմ գրել ընտրված առանցքային բառին առնչվող հնարավորին չափ շատ բառեր ու արտահայտություններ.

3.երբ բառեր ու արտահայտություններ գրելը վերջացնում ենք, գրատախտակի մոտ հերթականությամբ կանչում եմ մի քանի աշակերտի և հանձնարարում գծիկներով միացնել այն բառերը, որոնք առնչվում են իրար:

Խմբավորման մեթոդից օգտվելիս անհրաժեշտ եմ համարում

պահպանել մի քանի հիմնական կանոն.

✓գրի առնել միտքը եկած բոլոր բառերը.

✓թղադարեցնել գրել, քանի դեռ մտքեր են արտահայտվում.

✓այնքան միացման գծիկներ տանել, որքան հնարավոր է:

Խմբավորումն ավարտելուց հետո ամփոփում եմ և հանձնարարում 5 րոպեի ընթացքում գրել շարադրություն՝ առանցքային բառը դարձնելով վերնագիր, կիրառելով գծիկներով միացված բառերը: Ժամանակը լրանալուց հետո ցանկացողներին հարցնում եմ կարդալ, իսկ ունկնդիրներով որոշում ենք ամենալավ շարադրությունն ու անցնում հաջորդ քայլին: Հարցնում եմ կարդալ նշանավոր մարդկանց կարծիքները, տպավորությունները Հայաստանի մասին (հանձնարարված է եղել նախորդ դասին): Աշակերտներին լսելուց հետո կարդում եմ նկարիչ Ռոքուել Քենտի խոսքերը Հայաստանի մասին. «Եթե ինձ հարցնեին, թե երկիր մոլորակի վրա ամենից շատ որտե՞ղ կարելի է հանդիպել հրաշքների, ես ամենից առաջ Հայաստանի անունը կտայի: Ակամա ապշում ես աշխարհի այս փոքրիկ անկյունում տեսնելով այնպիսի հուշարձաններ և այնպիսի մարդկանց, որոնք կարող են լինել ամբողջ աշխարհի հպարտությունը»:

Մեջբերումն անելուց հետո հարցնում եմ աշակերտներին, թե իրենց կարծիքով որը կլինի մեր այսօրվա դասի թեման: Բոլորն էլ միաբերան ասում են, որ դասի թեման Հայաստանի մասին է: Հավանություն տալով՝ ասում եմ, որ դասը Եղիշե Չարենցի «Ես իմ ամուշ Հայաստանի…» բանաստեղծությունն է: Այնուհետև լսում ենք բանաստեղծությունը Վլադիմիր Աբաջյանի կատարմամբ:

Որպեսզի աշակերտներն իմանան, թե ինչպիսի մեծ նշանակություն ու կարևորություն ունի այս տաղը, ընթերցում եմ հետևյալները.

«Դա մեր այսօրվա աղոթքն է: Աղոթք, որը կարելի է թե՛ մտքում հյուսել, թե՛ մրմնջալ շշուկով, թե՛ արտասանել բարձրաձայն: Իսկ ինչի՞ հետ համեմատես «Ես իմ անուշը»: Քիչ կլինի ասել, թե բանաստեղծություն է: Պոեմ էլ չէ, վեպ՝ նույնպես, որովհետև իրենց ծավալով, մոնումենտալությամբ հանդերձ դրանք կյանքը ներկայացնում են այս կամ այն մասշտաբով: Այս բանաստեղծությունը, ավելի շուտ, բոլոր մասշտաբներից դուրս, պաննո է (պաննո- մեծ չափերի նկար քաթանի վրա): Պաննո՝ հասցված ժողովրդական էպոսի աստիճանի: Դա անհիշելի ժամանակներից եկող Հայասա - Ուրարտու - Արմենիա երկրի համապարփակ պաննո - դիմանկար է: Դա մեր ազգի կենսագրության ու վարքի կենդանի արտացոլանքն է, մեր կրած տառապանքների ու փայփայած իդեալների, մեր անկումների ու վերելքների, արհավիրքների ենթակա մեր ճակատագրի ու անմեռ մնալու մեր ձգտման գեղարվես-

տական սինթեզն ու բյուրեղացումն է: Այդպիսի մի երկ աշխարհ բերելու համար պետք է ամենաքիչը կիսաաստված լինել»:

**Մարտիրոս Սարյան**

«Չարենցը, Չարենցը ... «Ես իմ անուշ Հայաստանի...»: Անոր չհանդիպած գիտեի արդեն իր այս քերթվածը: Սկսած էի արտասանել Ամերիկայի մեջ: Ամեն մեկ բառ բացատրել տված էի ու գրեթե գոց սորված: Զայն մինչև այսօր կնկատեմ մեր երկրին, մեր հողին, մեր պատմության նվիրված ամենեն գեղեցիկ երգը, գովաբանական աղոթքը: «Հայր մեր» - ին նմանող աղոթք մը»:

**Վիլյամ Սարոյան**

«Չարենցի այս բանաստեղծությունը աղոթքի պես անկեղծ է ու անեղծ և սիրո երդումի պես ջերմ ու անդրժելի»:

**Հր.Քոչար**

«Եթե «Տաղարանը» իր քսան տաղով նմանեցնենք քսան խոսուն բացվածքից բաղկացած ճարտարապետական տարածուն շենքի, ապա նրա վերջին՝ «Ես իմ անուշ Հայաստանի... » տաղը այդ շենքի ավարտական դրվագն է, նրա վեր սլացող կոթողը»:

**Ա.Աղաբաբյան**

Սրանով ավարտում եմ խթանման փուլը և անցնում իմաստի ընկալման փուլին: Այս փուլում կազմակերպում եմ խմբային աշխատանք: Պարկից միանման խաղալիքների ընտրման կամ կտրված նկարների հավաքման միջոցով կազմում եմ 4 խումբ: Յուրաքանչյուր խմբի տալիս եմ մեկ քառատող և հինգ րոպե ժամանակ վերլուծության համար: Ժամանակը լրանալուց անմիջապես հետո անցնում ենք քառատողերի վերլուծությանը: Յուրաքանչյու խմբից ներկայացնում է այն մեկը, ում ընտրել է խումբը: Լսում ենք խմբերի վերլուծությունը, կարծիքներն ու մտքերը, դատողություններն ու եզրահանգումները: Վերլուծության բացը, թերի կողմերը լրացվում է հաջորդ՝կշռադատման փուլում:

***<u>Կշռադատման փուլ</u>***

Այս փուլում տալիս եմ հետևյալ հարցերը.

1. - Ո՞վ է բանաստեղծության քնարական հերոսը:

- Բանաստեղծության քնարական հերոսը Հայաստան - յարն է:

2. - Ինչու՞ է բանաստեղծն ասում. «Ես <u>իմ</u> անուշ Հայաստանի ... »:

- Այսպես է բանաստեղծն արտահայտում իր և հայրենի երկրի անքակտելի կապը:

3. - Ինչու՞ արևահամ բառ:

- Արևահամ բառ, քանի որ հնչում է իբրև մաքրամաքուր աղոթք և սրտագրավ մեղեդի: Դրանով բանաստեղծը ցույց է տալիս մեր բնավորության, խոսքի ու բառի ջերմությունը:

4. - Բացատրել «հին սազ, ողբանվագ, լացակումած լար» բառակապակցությունների իմաստը:

- Հին սազ, ողբանվագ, լացակումած լար, որովհետև աշուղները անհիշելի ժամանակներից ուղեկցել են մեր ժողովրդին և իրենց երգով ներկայացրել մեր պատմության ողբերգական էջերը:

5. - Ինչու՞ են ծաղիկներն արնանման:

- Արնանման բառն այստեղ հուշում է, որ մեր ծաղիկներն արյամբ են ցողված, ծաղիկներ, որոնց վրա դեռ չի չորացել հայ ժողովրդի արյունը, ժողովուրդ, որ զոհեց իր կյանքը պայծառ գալիքի և անկախության համար:

6. - Ինչու՞ է Չարենցը սիրում նաիրյան աղջիկների հեզաճկուն պարը: Մի՞թե սիրելու այլ բան չկար:

- Սիրում է պարը, քանի որ պարի մեջ կա կյանք, ուրախություն, ապրելու խորհուրդ: Պարը արվեստի ձև է, որի արտահայտչամիջոցը շարժումներն են:

Այս առիթն օգտագործում եմ և կարդում «Հայկական պար» բանաստեղծությունը.

## Հայկական պար

Պարելու պահին ով ամբողջովին ոտնաթաթերն իր չի դնում գետնին,
Հավանաբար նա արագիլի պես դեռ կիսով չափ է հավատում հողին:
Ազգ իմ, դու ոգով քո ուրարտական եղել ես երգ ու պարերի վարպետ.-
Միշտ հողին է քո ոտքը հաղթական, ուր ննջում են քո զոհերը ասպետ:
Պարերիդ նման պատմության միջով դու դոփելով ես առաջ գնացել...
Ո՞վ է ոտքերի ծայրին քայլելով կյանքում թեկուզ մի արահետ բացել:
Դրա համար էլ պարելիս այնպես ոտքդ ամուր ես խփում դու գետնին:
Դոփում ես ուժգին, որ ձայն տալու պես արթնացնես քո քնած քաջերին...
Եվ աշխուժորեն քո մկաններում խաղում է ուժը ոգուդ հանճարի:
Կուրծքդ այնպես ես դու առաջ մղում, ասես փշրում ես պատնեշը չարի:

7.- Ինչպե՞ս կբացատրեք երկինքը մուգ, ջրերը ջինջ, լիճը լուսե:

- Հիացմունք մեր գեղեցիկ բնության նկատմամբ:

8.- Իսկ ի՞նչ կասեք հաջորդ տողի մասին:

- Ներկայացված է հայկական խիստ և ուրույն կլիման:

9. - Արդյո՞ք «անհյուրընկալ պատերը սև» արտահայտությամբ

խոսվում է հայ ժողովրդի ոչ հյուրասեր լինելու մասին:

- Բոլորովին էլ այդպես չէ: Հայ ժողովուրդը եղել է հյուրամեծար, հյուրապաշտ, հյուրընկալ և է այդպիսին: Գետնափոր տները սևացել են մոմի, ճրագի, թոնրի ծխից:

10. - Մեկնաբանեք խնդրեմ «հնամյա քաղաքների հազարամյա քար» արտահայտությունը:

11. - Իսկ ի՞նչ կասեք «երկաթագիր գրքերը մեր» արտահայտության մասին:

- Հայ ժողովուրդը պաշտել է գիր ու գրականությունը, ունեցել է դպրության Աստված Տիր անունով:

- Այո, ճիշտ է,- միջամտում եմ ես,- մեր ժողովուրդը պաշտել է գիրքը: Նույնիսկ տեղահանության, փախուստի ժամանակ թողել է ամեն ինչ, բայց իր հետ է վերցրել գիրքը: Այդ է վկայում այն փաստը, որ այսօր Մատենադարանում պահվում է «Մշո ճառընտիրը»: Այն Մատենադարանի հազարավոր գրքերի մեջ ամենամեծն է, որն ունեցել է հետաքրքիր ճակատագիր: 1204թ. սելջուկներն սպանում են այս գրքի տիրոջը և կողոպտում նրա ունեցվածքը: Հայերը հավաքում են 4000 արծաթ դրամ, ետ են գնում ձեռագիրը և պահում Մշո Առաքելոց վանքում: 1915թ. գաղթողներն իրենց հետ տանում են գիրքը, որը կշռում էր երկու փութից ոչ ավելի: Ձեռագիրը բաժանում են 2 մասի, մի մասը հասցնում են էջմիածին, մյուսը թաղում էրզրումի եկեղեցու բակում, որը հայտնաբերվում է պատահաբար և հետագայում միացվում մյուս կեսին: 19 թերթ Վենետիկի Մխիթարյանների մոտ է:

Ավելացնում են նաև, որ առաջին հայ տպագիր գիրքը լույս է տեսել Վենետիկում (Իտալիա) 1512թ. «Ուրբաթագիրք» բժշկարանը: Հայ առաջին տպագրիչը Յակոբ Մեղապարտն է:

Իսկ ինչ վերաբերում է «Երկաթագիր» բառին, ասում եմ, որ երկաթագիրը հայկական գրատեսակ է, ստեղծել է Մաշտոցը՝ որպես գլխագիր: Նաև վիմագրության գիր է, գրվել է քարի վրա երկաթե գրոցով, որից ստացել է «երկաթագիր» անունը: Այս ձևի գրության ժամանակ երկար ու կարճ գծերը իրար են միանում ոչ թե ուղիղ, այլ կոր գծերով: Օգտագործվում է 5- րդ դարից մինչև այսօր (Հայկական սովետական հանրագիտարան, Երևան, 1977, հ 3, էջ 594):

12. - Ինչու՞ են հիշվում Նարեկացին և Քուչակը:

- Հիշվում են որպես հպարտության խորհրդանիշներ:
- Հիշվում են որպես հարատևման զորավիգներ:
- Հիշվում է Նարեկացին որպես սուրբ գրքի՝ «Նարեկի» հեղինակ և վերածննդի մեծ բանաստեղծ:

13. - Վերջին քառատողում «չկա» բառը կրկնվում է (հեքիաթ չկա, ճակատ չկա, գագաթ չկա): Իրո՞ք չկա:

- Ժխտման իմաստ արտահայտող բառը ոչ թե բացասում, այլ

հաստատում է փաստերի գոյությունը:

14. - Ինչու՞ Արարատ - Մասիս:

- Աչք ենք բացել ու դու մեր դեմ եղել ես, կաս, Արարատ,

Բայց ամեն օր մեզնից հեռու ու մեզ անհաս Արարատ ...

Աշխարհի մեջ ամեն հայի ամեն ծայրից երևում,

Բայց մնում ես հեռու, հեռու, մնում երազ Արարատ (Կապուտիկյան):

15. - Ինչի՞ շնորհիվ գոյատևեցինք, կանք. ի՞նչը մեզ պահեց հայ:

- Երևի թե աստվածային ինչ որ առաքելություն կա, որը մենք դեռ չենք կատարել, և որի կարիքն ունի այս մոլորակը:

Հարցերից հետո նորից կազմակերպում եմ խմբային աշխատանք 4 խմբով: Յուրաքանչյուր խմբի տալիս եմ մեկ հարց և հինգ րոպե ժամանակ. ահա այդ հարցերը.

1.Իսկ դուք ի՞նչն եք սիրում Հայաստանի:

2.Ի՞նչը չեք մոռանա, եթե Հայաստանում չլինեք:

3.Հայաստանի ինչո՞վ եք հպարտանում:

4.Կհեռանա՞ք Հայաստանից. եթե այո՝ինչու՞, եթե ոչ՝ ինչու՞:

Չորրորդ հարցի պատասխանը լսելուց հետո կարդում եմ Համո Սահյանի«Ախր ես ինչպես…» բանաստեղծությունը.

Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ,
ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ:
Ախր ուրիշ տեղ հայրեններ չկան,
Ախր ուրիշ տեղ հորովել չկա,
Ախր ուրիշ տեղ սեփական մոխրում
Սեփական հոգին խորովել չկա,
Ախր ուրիշ տեղ
Սեփական բախտից խռովել չկա,
Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ,
Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ:
Ախր ուրիշ տեղ
Հողի մեջ այսքան օրհնություն չկա,
Այսքան վաստակած հոգնություն չկա,
Ախր ուրիշ տեղ ձյունի մեջ՝ արև,
Եվ արևի մեջ այսքան ձյուն չկա:
Ախր ուրիշ տեղ տեղահան եղած,
Եկած ուսերով Արագած սարի
Ուսերին հենված Սասնա տուն չկա:
Ախր ուրիշ տեղ

Ամեն մի քարից, առվից, ակոսից
Իմ աչքերով իմ աչքերին նայող
Մանկություն չկա...
Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ,
Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ,
Ախր ես ինչպե՞ս ապրեմ առանց ինձ:

Բանաստեղծությունից հետո խոսում եմ «Ես իմ անուշ Հայաստանի…» երգի մասին: Բանասեր Ռ.Դավթյանը գրում է. «Ելնելով բանաստեղծության ներքին զգացողությունից՝ երաժշտությունը պետք է լիներ առնական, ունենար դրամատիկ հագեցվածություն: Սակայն բանաստեղծության նկատմամբ կոմպոզիտոր Աշոտ Սաթյանը ցուցաբերել է ինքնատիպ վերաբերմունք, որի հետևանքով էլ երաժշտությունը զարմանալիորեն հանդարտ է, զուսպ ու պարզ»:

Իսկ երբ 1970թ. Ամերիկայում հայկական արվեստի օրերին հնչեց «Ես իմ անուշ Հայաստանի» երգը Ռուբեն Մաթևոսյանի կատարմամբ, «Լրաբեր» թերթում գրվեց. «Այս երգը հայ ժողովրդի փառաբանությունն է»: Ավելացնում եմ նաև, որ այս երգը այնքան ժողովրդականություն էր վայելում, որ հայկական հեռուստատեսությունն իր հեռարձակման առաջին օրից մինչև վերջերս իր ծրագիրը սկսում և ավարտում էր այս երգով»:

**Տնային առաջադրանք**

1. Ի՞նչ կնկարես՝որպես Հայաստանի խորհրդանշան:
2. Պատրաստել գովազդ Հայաստանի մասին:
3. Գեղարվեստական ի՞նչ հնարանքներից է օգտվել Չարենցը:
4. Մեկնաբանել Մ. Սարյանի խոսքերը:
5. Էլ ի՞նչ բանաստեղծություններ գիտեք, որ ներկայացնում են Հայաստանը այս ձևով:
6. Գրել հնգյակ՝ նվիրված Հայաստանին:
7. Կետերը փոխարինել մակդիրներով.

Ես իմ ..... Հայաստանի ..... բառն եմ սիրում,
Մեր ..... սազի ....., ..... լարն եմ սիրում,
..... ծաղիկների ու վարդերի բույրը .....,
Ու ..... աղջիկների ..... պարն եմ սիրում:

Սիրում եմ մեր երկինքը ....., ջրերը .....,լիճը .....,
Արևն ..... ու ծմեռվա ..... բուքը .....,
Մթնում կորած խրճիթների ..... պատերը սև
Ու ..... քաղաքների ..... քարն եմ սիրում:

Ուր էլ լինեմ - չեմ մոռանա ես ..... երգերը մեր,

Չեմ մոռանա աղոթք դարձած ..... գրքերը մեր,
Ինչքան էլ սուր սիրտս խոցեն ..... վերքերը մեր
Էլի ես որբ ու ..... իմ Հայաստան յարն եմ սիրում:

Իմ ..... սրտի համար ոչ մի ուրիշ հեքիաթ չկա,
Նարեկացու, Քուչակի պես ..... ճակատ չկա,
Աշխարհ անցիր, Արարատի նման ..... գագաթ չկա,
Ինչպես ..... ..... ճամփա՝ ես իմ Մասիս սարն եմ սիրում:

# *Ուսուցչի հարցադրումը՝ որպես աշակերտի քննադատական մտածողությունը խթանող միջոց Եղիշե Չարենցի «Գանգրահեր տղան» նովելի ուսուցման օրինակով*

Դասավանդողի հաղորդած կամ դասագրքում տրված տեղեկությունները հասկանալն ու հիշելն արժեքավոր է ու կարևոր, բայց զարգացնող և ակտիվ ուսումնառություն ապահովելու համար սա բավարար չէ: Դասավանդողն իր գլխավոր նպատակը պետք է համարի սովորողի ինքնուրույն ու քննադատական մտածողության զարգացումը, որը խիստ անհրաժեշտ է նրանց կյանքում: Ինքնուրույն և քննադատական մտածողության զարգացումը, ակտիվ ուսումնառությունը պահանջում է դասի այնպիսի կազմակերպում, երբ գիտելիքները տրվում են ոչ թե պատրաստի վիճակում, այլ սովորողը ձեռք է բերում ինքնուրույնաբար, քանի որ սեփական ջանքերով հայտնաբերած գիտելիքները ոչ միայն ուշ են մոռացվում, այլ ոգևորում են սովորողին, նրան մղում որոնողական գործունեության: Ակտիվ ուսումնառության և քննադատական մտածողության զարգացմանը նպաստում են դասավանդողի կողմից նախապես ճիշտ մշակված, իմաստավորված հարցադրումները: Վերջինս ամենահաճախ կիրառվող ռազմավարությունն է, քանի որ հարցադրումներից է ծնվում և ակտիվանում մտածողությունը: Հարցադրման դերն ու նշանակությունը անգնահատելի է: Հարցադրումն օգնում է սովորողին ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերել: Հարցադրման միջոցով ուսուցման ընթացքում ծանրաբեռնվածությունն ընկնում է ոչ թե սովորողի հիշողության, այլ մտածողության վրա, ուսուցումը լինում է ոչ թե վերարտադրական, այլ ստեղծագործական գործունեություն:

Հարցերը՝ որպես ուսուցման միջոց, օգտագործվում են ինչպես խմբային, այնպես էլ անհատական աշխատանքի ժամանակ:

Ի՞նչ հարցեր ենք մենք ամենից հաճախ տալիս: Հետազոտությունները ցույց են տվել, որ դրանք լինում են՝

1. սովորողների հետաքրքրությունը շարժող և նրանց ուշադրությունը փաստերի վրա կենտրոնացնող.
2. գիտելիքների մակարդակը գնահատելու հնարավորություն ընձեռնող.
3. քննարկման հիմնական նյութին վերադարձնող.
4. դասը վարելուն օգնող.
5. թեմային խորությամբ անդրադառնալու.
6. սովորողների ուշադրությունը այլ թեմաների վրա հրավիրող.
7. սովորողների զգացմունքները կարգավորող.

8. արտահայտած կարծիքների հիմնավորումը ստուգող.
9. թեմայի ամբողջական ընդգրկումն ստուգող.
10.ախտորոշող:

Ուսումնառության ընթացքում հարցեր տալիս են նաև սովորողները: Նրանց հարցերն օգնում են ուսուցչին պարզելու, թե ինչն է մնացել չհասկացված, ինչ է բաց թողնվել, և որտեղից պետք է սկսի կամ շարունակի ինքը: Հարց տալն օգտակար է հենց իրենց՝ աշակերտների համար, քանի որ նպաստում է նրանց մտածողական և լեզվական կարողությունների զարգացմանը, հարստացնում է բառապաշարը:

Դասին պատրաստվելիս ուսուցիչը պետք է կազմի հարցերի հաջորդականությունը կամ սցենարը: Նա պետք է հստակ իմանա, թե որ հարցն ինչ ձևակերպմամբ պետք է հնչի և երբ: Սա անհրաժեշտ է, երբ մենք ուզում ենք օգնել աշակերտներին փաստերի ուսումնասիրությունից անցնելու դրանց ընդհանրացմանը և զարգացնելու մտածողության ավելի բարդ հմտություններ:

Հարցերին նախապատրաստվելն ու դրանք գրառելն ունի ևս մեկ առավելություն: Այն օգնում է, որ ոչ մի հարց չվրիպի ուսուցչի տեսադաշտից, և վերջինս հնարավորություն ունենա ամբողջությամբ վերահսկելու աշակերտների մտքի ընթացքը: Ի տարբերություն այն հարցերի, որոնք ծնվում են դասի ժամանակ, նախապես մշակված սցենարը նպաստում է դասը պլանավորած հունով տանելուն:

Ուսուցիչը չպետք է մոռանա, որ յուրաքանչյուր հարցի պետք է հետևի պատասխանին սպասելու անհրաժեշտ ժամանակը:

Այժմ հարցադրման միջոցով անցնենք Եղիշե Չարենցի «Գանգրահեր տղան» նովելի ուսուցմանը:

***Դասի թեման՝*** Եղիշե Չարենցի «Գանգրահեր տղան»
***Մեթոդը՝*** Հարցադրման
***Ակնկալվող արդյունքները.***

1. Ունկնդիրը կիմանա, թե ինչու է այս ստեղծագործությունը չափածո նովել.
2. Կիմանա նովելի բոլոր խորհրդանշական պատկերների իմաստը.
3. Կիմանա, թե ինչ է բանաստեղծական տեսիլք.
4. Կիմանա որոշ տեղեկություններ հին Երևանի մասին.
5. Կկարողանա նկարագրել ապագայի Երևանը՝ համաձայն իր պատկերացումների:

***Ռեսուրսներ***

Թուղթ, ֆլոմաստերներ, գունավոր կավիճներ, ֆլիպչարտ, գունավոր թղթեր, մագնիտոֆոն, ձայներիզներ:

Կազմակերպչական պահից հետո, երբ հայտնում եմ դասի թեման, անցնում եմ խմբերի ստեղծմանը: Գունավոր թղթերի միջոցով ունկնդիրներին բաժանում եմ հինգ խմբի:

Որպես խթանման միջոց՝ ընթերցում եմ Լևոն Միրիջանյանի՝ «Չարենցի արձանի առաջ» բանաստեղծությունը:

## *ՉԱՐԵՆՑԻ ԱՐՁԱՆԻ ԱՌԱՋ*

... Բանաստեղծն արդեն վաղուց է՝ չկա,
Անունը նրա լեգենդ է դարձել,
Նրա քնարած գալիքը ոսկյա
Բացվել է շքեղ ու պայծառացել:

Ձնգում է օրը նոր Երևանում՝
Արևոտ, կապույտ երկնքի ներքո,
Պիոներական վաշտերն են գնում
Նրա հարազատ, հաղթական երգով:

Ու ոչ թե հեռվում՝ դաշտի մեջ կորած,
Այլ ծաղկած բակում նորոգ դպրոցի,
Ոսկեհեր մանկանց կողքին իր սիրած՝
Երազն է շողում մեծ բանաստեղծի:

Երազը նրա, բայց ոչ հինավուրց,
Մի տապանաքար՝ դարձած գերեզման,
Ու ոչ թե շիրիմ՝ մամռոտած վաղուց,
Այլ՝ գրանիտե վսեմ պատվանդան:

Ու պատվանդանից նայում է ահա
Նա ինքը, ինքը՝ երբեք չմեռած
Փոթորկոտ երգեր շուրթերի վրա,
Խիղճը միշտ մաքուր, ճակատը միշտ բաց...

Ուրախ է այսօր գանգրահեր տղան,
Ուրախ է նա էլ՝բանաստեղծը մեծ,
Դեպի հավերժն է գնում հաղթական
Մի պայծառ անուն՝ Եղիշե Չարենց:

Բանաստեղծության ընթերցումից հետո ցույց եմ տալիս օդակաձև զբոսայգում տեղադրված Չարենցի հուշարձանի նկարը և հաղորդում հետևյալ տեղեկություններն արձանի մասին. «Երևանի օդակաձև զբոսայգում 18 մետր բարձրությամբ վեր է խոյանում բազմակերպար մոնումենտալ կոմպոզիցիան՝ մարմնավորելով չարենցյան ներքին մեծ ուժը, դինամիկան ու ազատատենչ ոգին: Հուշարձանը հենվում է կարմիր գրանիտից կերտված հսկա թեք պատվանդանին, որի մի կողմում Չարենցի ապրած տարիները բնորոշող 40 աղբյուրներն են, իսկ մյուսում բարձրանում է հավերժական կրակով հուշասյունը, որի վրա փորագրված են Չարենցի հրաշունչ բանաստեղծության տողերը. «Ես եկել եմ դարերից և գնում եմ հաղթական...»: Հուշարձանի հեղինակներն են քանդակագործ Ն.Նիկողոսյանը, ճարտարապետ Ջ.Թորոսյանը»:

Սրանից հետո բոլոր հինգ խմբին հանձնարարում եմ գրել շարադրություն՝ «Երևանն իմ պատկերացմամբ 25 տարի անց» վերնագրով: 10 րոպե անց խմբերն ընթերցում են իրենց գրած շարադրությունները: Գրատախտակին կամ ֆլիպչարտին գրում ենք այն բառակապակցություններն ու նախադասությունները, որոնք բնութագրում են Երևանը 25 տարի անց:

Այնուհետև լսում են «Գանգրահեր տղան» չափածո նովելը ասմունքի վարպետ Վլադիմիր Աբաջյանի կատարմամբ:

Սրանից անմիջապես հետո ընթերցում եմ գրականագետ Սուրեն Աղաբաբյանի գնահատանքի խոսքերը նովելի մասին. ««Գանգրահեր տղան» պայծառ հումանիզմով ու անհուն լավատեսությամբ շնչող, վառվռուն գույներով հարուստ ասք է՝ գալիք օրերի մասին»: «Գանգրահեր տղան» ստեղծագործությունը սկզբից մինչև վերջ մի շքեղ երգ է արդեն ձեռք բերած նվաճումների և գալիքում ստեղծվող նոր կյանքի մասին:

Նախօրոք նովելը բաժանել եմ 5 մասի՝ I մաս՝ 1-8-րդ տողը, II մաս՝ 9-20-րդ տողը, III մաս՝ 21-32-րդ տողը, IV մաս՝ 33-52-րդ տող, V մաս՝ 53-76-րդ տողը: Յուրաքանչյուր խմբի հանձնարարում եմ վերլուծել իրեն տրված հատվածը և վերնագրել: Այս աշխատանքին հատկացնում եմ 10 րոպե ու ստուգում հանձնարարությունը: Բոլոր խմբերին հանձնարարում եմ ընտրել վերնագիր վերջին 4 տողի համար և վերլուծել: Ստուգվում է այս աշխատանքը ևս:

Այս ամենից հետո հարցադրման միջոցով ուսուցանում եմ այն, ինչ չասվեց վերլուծությունների ժամանակ: Հարցերը մշակված են նախապես:

1. Ի՞նչ պատկերով է բացվում ստեղծագործությունը և ի՞նչ հնարավորություն է դա տալիս:

2. Ո՞վ է գանգրահեր տղան կամ ու՞մ եք տեսնում գանգրահեր տղայի կերպարում: Ում ե՞ք նմանեցնում նրան:

Մինչև 3-րդ հարցի ձևակերպումը տեղեկություն եմ տալիս պիոների մասին:

Պիոներ նշանակում է առաջին, առաջավոր, առաջամարտիկ: Աշխարհի բոլոր լեզուներով այդպես են անվանում նորի հիմնադիրներին, նրանց, ովքեր մարդկանց համար համարձակ ու դժվար ճանապարհ են բացում դեպի նորը:

1922 թվականի սկզբին Մոսկվայում հայտնվեցին պիոներական առաջին ջոկատները, իսկ մայիսի 19-ին որոշում ընդունվեց Մոսկվայի օրինակով պիոներական ջոկատներ ստեղծել ամբողջ երկրով մեկ: Հայաստանի պիոներական կազմակերպության ծննդյան օրը համարվում է 1922թ. հուլիսի մեկը:

Վ.Ի.Լենինի մահից հետո պատանի պիոներների կազմակերպությունը կոչվեց նրա անունով:

Պիոները համարվել է հայրենիքի ապագան:

Պիոները միշտ հավատարիմ է մնացել իր հանդիսավոր խոստմանը, որը տվել է այդ շարքերը մտնելու օրը: Ահա այդ խոստումը. «Ես՝ Սովետական Միության պատանի պիոներս, իմ ընկերների առջև հանդիսավոր կերպով խոստանում եմ ջերմորեն սիրել իմ հայրենիքը, ապրել, սովորել և պայքարել այնպես, ինչպես ավանդել է մեծ Լենինը, ինչպես սովորեցնում է կոմունիստական կուսակցությունը»:

Պիոներներն ունեին իրենց օրենքները.

- ✓ Պիոները սիրում է իր հայրենիքը:
- ✓ Պիոները հարգում է նրանց հիշատակը, ովքեր իրենց կյանքը տվել են հայրենիքի ազատության ու բարգավաճման համար մղված պայքարում:
- ✓ Պիոները բարեկամություն է անում աշխարհի բոլոր երկրների երեխաների հետ:
- ✓ Պիոները սովորում է ջանասիրաբար, կարգապահ է և քաղաքավարի:
- ✓ Պիոները սիրում է աշխատել և խնայում է ժողովրդական բարիքը:
- ✓ Պիոները լավ ընկեր է. հոգ է տանում իրենից փոքրերի մասին, օգնում է մեծերին:
- ✓ Պիոները համարձակ է և չի վախենում դժվարություններից:
- ✓ Պիոները ճշմարտասեր է, նա թանկ է գնահատում իր ջոկատի պատիվը:
- ✓ Պիոները կոփում է իրեն, ամեն օր անում է լիցքային վարժություններ:
- ✓ Պիոները սիրում է բնությունը. նա կանաչ տնկիների, թռչունների ու կենդանիների պաշտպանն է:
- ✓ Պիոները բոլոր երեխաների համար լավ օրինակ է:

Պիոներներն ունեին նաև իրենց համազգեստը. տղաները հագնում էին սպիտակ գույնի վերնաշապիկ և մուգ գույնի շալվար, իսկ աղջիկները՝ սպիտակ վերնաշապիկ և մուգ գույնի կիսաշրջազգեստ: Վերնաշապիկի օձիքի տակից կապում էին պիոներական կարմիր վզկապը, որի երեք ծայրերը երեք սերունդների՝ կոմունիստների, կոմերիտականների և պիոներների անխախտ բարեկամության նշանն էր:

3. Գնում է պիոներական ջոկատը հաստատ դոփյունով, աչքերը՝ հստակ, դեմքերը՝ թովիչ: Ո՞վքեր են այդ կենսախինդ, ծիծաղկուն պատանիները, որ անցնում են ձորի մոտով:

4. Իսկ որո՞նք էին ապագան մարմնացնող խորհրդանիշները:

5. Ինչու՞ է բանաստեղծի աչքերը հոգնած, ինչու՞ է ասում. «Փակում եմ հոգնած աչքերս մի պահ...»:

6. Ե՞րբ են տեղի ունենում նովելի գործողությունները և ինչու՞ հենց այդ ժամանակ:

7. Իսկ ո՞րն է Չարենցի հիշատակած խճուղին: (Աշակերտներին օգնելու նպատակով ասում եմ, որ այն ձգվում է կրկեսի մոտից մինչև մետրոյի «Գործարանային» կայարան):

8. Իսկ դուք գիտե՞ք, թե որ զբոսայգին է փռված այդ պողոտայի վրա նախկին գերեզմանատան փոխարեն և ինչո՞վ է հայտնի այդ այգին:

Այս հարցի պատասխանից հետո բացատրում եմ, թե ինչ է նշանակում «պանթեոն»:

Պանթեոն - բոլոր աստվածների կացարան:

<u>Պանթեոնը</u> հին հունարեն բառ է, որ կազմված է պան - նախածանցից և թեոն (թեիոն) բառից, տառացիորեն նշանակում է «բոլոր աստվածներին»: Այսպես կոչում էին բոլոր աստվածներին նվիրված տաճարները:

Դարեր հետո պանթեոն սկսեցին կոչել «աստվածային մեծություն» ներկայացնող անվանի մարդկանց հատկացվող գերեզմանոց - դամբարանները: Պանթեոն բառը հաճախ գործածվում է խորհրդանշական-փոխաբերական՝ «մեծությունների հավաքական սիմվոլիկ դամբարան» իմաստով:

Այս հարցի պատասխանից հետո սովորողներին լրացնում եմ ես:

***ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՋԲՈՍԱՅԳԻ***

Թաղված են պանթեոնում

1) Վահան Տերյան
   1885-1920
2) Վրթանես Փափազյան
   1866-1920

3) Հովհաննես Հովհաննիսյան
1864-1925
4) Ստեփան Եսայու Մանուկյան
1901-1930
5) Երվանդ Լալայան
1864-1931
6) Լեո-Առաքել Գրիգորի Բաբախանյան
1860-1932
7) Ճարտարապետ Թորոս Թորամանյան
1864-1934
8) Վասիլ Դավթի Ղորղանյան
1865-1934
9) Ինժեներ Սահակ Լիսիցյան-Երևանի ջրմուղի կառուցողը
1864-1934
10) Ստեփան Գուրգենի Դեմուրյան
1872-1934
11) Խնկո Ապեր -Աթաբեկ Խնկոյան
1870-1935
12) Ռոմանոս Հովակիմի Մելիքյան
1883-1935
13) Սպիրիդոն Ավետիքի Մելիքյան
1883-1935
14) Կոմիտաս
1869-1935
15) Շիրվանզադե
1858-1935
16) Ցոլակ Խորենի Խանզադյան
1886-1935
17) Տիգրան Պետրոսի Մուշեղյան
1886-1935
18) Ժողովրդական ճարտարապետ Ալեքսանդր Թամանյան
1878-1936
19) Հովհաննես Արտեմի Աբելյան
1865-1936
20) Նկարիչ Եղիշե Թադևոսյան
1870-1936
21) Վրթանես Գալուստի Ախիկյան
1872-1936
22) Ակադեմիկոս Հակոբ Համազասպի Մանանդյան
1873-1952

23) Ավետիք Իսահակյան
1882-1957
24) Տիկին Սոֆյա Իսահակյան
1882-1966
25) Հրաչյա Ներսիսյան
1895-1961
26) Ստեփան Զորյան
1889-1967
27) Սաթենիկ Զորյան
1901-1966
28) Վահրամ Փափազյան
1888-1968
29) Մարտիրոս Սարյան
1880-1972
30) Արզումանյան Գրիգոր Աղաֆոնի
1919-1976

9. Ո՞րն է բանաստեղծական տեսիլքի ամենալուսավոր երևույթը:

10. Ասացեք խնդրեմ՝ որ տողերում է Չարենցը ուժեղ հակադրություն ստեղծում հին ու նոր կյանքի միջև, ո՞ր տողերում է մահվանը հակադրված հավերժ շարունակվող, միշտ առաջ ընթացող կյանքը:

11. Պիոներների երթից բաժանվում է գանգրահեր տղան և մոտենում շիրմաքարին: Ինչու՞:

12. Իսկ ու՞ր է գնում պիոներական վաշտը:

13. Իսկ ինչու՞ դեպի Արարատ:

14. Ինչու՞ գանգրահեր տղա և ոչ թե աղջիկ:

15. Չարենցը չափածո նովելը գրել է 30-ական թվականներին: Այդ ժամանակ Չարենցը երազում էր մի բանի մասին, որ չկար Երևանում, բայց հիշատակել է իր նովելում: Ի՞նչ չկար:

16. Վերևում մի քանի անգամ ասվեց չափածո նովել: Ինչո՞վ է չափածո այս քերթվածը նովել հիշեցնում:

Հարցադրման ավարտից հետո հանձնարարում եմ խմբերին գրել շարադրություն «Նամակ ապագայի քաղաքացուն» վերնագրով: Շարադրությունների ընթերցման ժամանակ լսարանի օգնությամբ յուրաքանչյուր խմբի շարադրությունից ընտրել 2 նախադասություն, գրել ֆլիպչարտին կամ գրատախտակին: Այդ տաս նախադասությունը դասավորել ըստ բովանդակության: Վերնագրել համատեղ ուժերով գրված բանաստեղծությունը: Դասն ավարտում եմ հետևյալ երկու ասույթների քննարկմամբ. «Ապրենք ներկայով, նայենք ապագային, չմոռանանք անցյալը» և «Անցյալը պահում է, ապագան՝ անհանգստացնում, ներկան՝ փախչում»:

Հարցերն իրենց պատասխաններով.

**1**. - Ի՞նչ պատկերով է բացվում ստեղծագործությունը, և ի՞նչ հնարավորություն է տալիս դա:

- Նովելն սկսվում է տեսիլքի ձևով, որն էլ բանաստեղծին հնարավորություն է տալիս պատկերել չեղածը որպես իրականություն: Տեսիլքի ձևով բանաստեղծը պատկերել է գալիքի մի օրը:

**2**. - Ո՞վ է գանգրահեր տղան կամ ու՞մ եք տեսնում գանգրահեր տղայի կերպարում:

- Գանգրահեր տղան ժողովրդի երազների և հույսերի կրողն է, լուսավոր ապագայի մարմնացումը, ապագայի քաղաքացին՝ նոր օրերի մարդը:

- Գանգրահեր տղայի կերպարով Չարենցը արտահայտում է այն միտքը, որ ժողովրդի ապագան և այն գործը, որի համար մաքառեցին, կլինի վստահ ու մաքուր ձեռքերում:

**3**. - Գնում է պիոներական ջոկատը հաստատ դոփյունով, աչքերը՝ հստակ, դեմքերը՝ թովիչ: Ովքե՞ր են այդ կենսախինդ, ծիծաղկուն պատանիները, որ անցնում են այն ձորի մոտով:

- Կյանքի ծաղկունքն են, այդ կյանքի կրողն ու կերտողը:

**4**. - Իսկ որո՞նք էին ապագան մարմնացնող խորհրդանիշները:

- Շենքեր, ասֆալտապատ պողոտաներ, գործարաններ:

**5**. - Ինչու՞ է բանաստեղծի աչքերը հոգնած, ինչու՞ է ասում. «Փակում եմ հոգնած աչքերս մի պահ...»:

- Տարիներ շարունակ բանաստեղծը տեսել է իր ժողովրդի անլուր տառապանքներն ու տանջանքները:

**6**. - Ե՞րբ են տեղի ունենում նովելի գործողությունները և ի՞նչու հենց այդ ժամանակ:

- Գործողությունները տեղի են ունենում գարնանը և առավոտյան, քանի որ գարունը կյանքի զարթոնքի, ծլարձակման, վերածննդի եղանակն է, գարունը հեռանկարի առումով վախ չի ծնում: Գարունը եղանակների գանգրահեր տղան է: Առավոտն էլ նոր օրվա սկիզբն է, նույնպես սպասելիքների ժամանակ: Առավոտն էլ օրվա գանգրահեր տղան է:

**7**. - Իսկ ո՞րն է Չարենցի հիշատակած խճուղին: (Աշակերտներին օգնելու նպատակով ասում եմ, որ այն ձգվում է կրկեսի մոտից մինչև մետրոյի «Գործարանային» կայարան: Եթե ասում են պողոտայի անունը, լավ է, եթե ոչ, ես ինքս եմ ասում, որ այն կոչվում է Արշակունյաց պողոտա, նախկինում՝ Օրջոնիկիձեի, իսկ սրանից էլ առաջ՝ Ղամարլուի խճուղի):

**8**. - Իսկ դուք գիտե՞ք, թե որ զբոսայգին է փռված այդ պողոտայի վրա նախկին գերեզմանատան փոխարեն և ինչո՞վ է հայտնի այդ այգին:

- Արշակունյաց պողոտայի նախկին գերեզմանատան տեղը այժմ Կոմիտասի անվան զբոսայգին է: Այդտեղ է գտնվում մեր կուլտուրայի, գիտության, արվեստի, գրականության նշանավոր գործիչների պանթեոնը:

Ուսուցիչ.- Այո, այդ գերեզմանատան ննջեցյալների ժառանգներն են այսօր մեր ապագան խորհրդանշող գանգրահեր տղաները:

- Երկիրը նորոգ է, շեն ու խաղաղ, երգեհոնի պես զնգում է օրը, անցնում է պիոներական վաշտը, ջոկատը: Բանաստեղծը կերտել է երկրի ճշգրիտ, ճշմարտացի պատկերը: Ամեն ինչ կա՝ շենշող ներկա, հուսալի ապագա, բայց և անցյալ կա: Ո՞րն է այդ անցյալը:

- Ահա գերեզմանոցը. հանգչում են նրանք անանուն ու անգիր քարերի տակ, բայց նրանց հիշում են, նրանց, որ այրվել են այս լուսե գալիքի համար, երազել ու կերտել այդ գալիքը:

**9**. - Ո՞րն է բանաստեղծական տեսիլքի ամենալուսավոր երևույթը:

- Զանգվի ափով քայլող պիոներական ջոկատը, որը մի պահ կանգնում է այն մարդկանց շիրիմների մոտ, ովքեր մաքառեցին և այրվեցին գալիքի չքնաղ երազներով: Սերունդները պետք է հիշեն, գնահատեն ապագայի չքնաղ երազներով այրված, կյանքը իրենց մահով հաստատած մարդկանց:

**10**. - Ասացեք խնդրեմ, ո՞ր տողերում է Չարենցը ուժեղ հակադրություն ստեղծում հին ու նոր կյանքի միջև, ո՞ր տողերում է մահվանը հակադրված հավերժ շարունակվող, միշտ առաջ ընթացող կյանքը:

- Երբ Չարենցը իրար կողքի է դնում պիոներական կենսալի վաշտը և ճանապարհի երկայնքով ծգված գերեզմանատունը:

**11**. - Պիոներների երթից բաժանվում է գանգրահեր տղան և մոտենում շիրմաքարին: Ինչու՞, ի՞նչ է ուզեցել դրանով ասել Չարենցը:

- Ինչքան էլ պայծառ լինի մեր ներկան ու ավելի վառ մեր ապագան, պետք է ետ նայել, չմոռանալ նրանց, որոնց ջանքերով ստեղծվել է նոր կյանքը:

**12**. - Իսկ ու՞ր է գնում պիոներական վաշտը:

- Նոր Երևանից դեպի Արարատ:

- Ինչու՞:

- Վաղ ժամանակներից Արարատը դիտվում է որպես մի ժողովրդի հավերժության խորհրդանիշ: Չարենցը ցանկացել է ասել, որ մեր ժողովուրդը հավերժող է, ինչպես հավերժ է Արարատ լեռը:

**13**. - Ինչու՞ գանգրահեր տղա և ոչ թե աղջիկ:

- Որովհետև օջախի, տոհմի շարունակողը համարվում է տղան:

**14**. - Չարենցը չափածո նովելը գրել է 30-ական թվականներին: Այդ ժամանակ Չարենցը երազում էր մի բանի մասին, որ չկար Երևանում, բայց հիշատակել է իր նովելում:

- Ասֆալտ:

15. - ... Կոխոտի՛ր նրան ոտքերով քո լույս...

- Ինչու՞ է այդպես ասում, չէ՞ որ գերեզմանը սրբություն է և տրորելը սրբապղծություն: Ինչպե՞ս հասկանալ բանաստեղծի պատգամը:

- Միշտ հենվել հնի, ստեղծվածի վրա և առաջ ընթանալ: Ճիշտ է ասված. «Ապրենք ներկայով, նայենք ապագային, չմոռանանք անցյալը»:

16. - Ինչո՞վ է չափածո այս քերթվածը նովել հիշեցնում:

- Քերթվածը չափածո գրված սյուժետային ստեղծագործություն է, որի վերջին 4 տողը նովելին հատուկ անակնկալ ավարտով իմաստուն մի պատմություն է:

# *Պետրոս Դուրյանի«Լճակ» բանաստեղծության ուսուցումը*

Յուրաքանչյուր դասի արդյունավետության գրավականը դասի մուտքն է: Որքան լավ է կազմակերպված դասի մուտքը, այնքան մեծ է աշակերտների հետաքրքրության շրջանակը, սովորելու ցանկության խթանումը:

***<u>Խթանման փուլ</u>***

Դասն սկսում եմ ներածական զրույցով:

Կան բանաստեղծներ, որոնք աշխարհ են ստեղծում, կան բանաստեղծներ, որոնք աշխարհ են վերապատկերում, կան բանաստեղծներ էլ, որոնք ո՛չ աշխարհ են պատկերում, ո՛չ էլ աշխարհ ստեղծում: Նրանք բացում են իրենց աշխարհը: Պետրոս Դուրյանը բացեց իր աշխարհը, որ իրենից հետո կոչվեց ու կոչվելու է իր իսկ անունով՝ Դուրյանական: Իր կարճատև կյանքի ընթացքում Դուրյանն ստեղծեց գեղարվեստական մեծարժեք ստեղծագործություններ՝ դրամատիկական երկերի, հրապարակախոսական հոդվածների և քնարական բանաստեղծությունների ամբողջական շարքեր: Դուրյանի գրեթե երեք տասնյակ բանաստեղծությունները մեր պոեզիայի գանձերն են: Պետրոս Դուրյանը ոչ միայն հայ, այլև համաշխարհային դասական գրականության սակավաթիվ անուններից է, որ տակավին քսան տարեկանում ստեղծած գրական փայլուն արժեքներով զարմանք և հիացմուն պատճառեց հայ և նույնիսկ օտարազգի ընթերցողներին: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Միլանում տպագրվեց Դուրյանի բանաստեղծությունների ժողովածուն: Դրանից անմիջապես հետո թերթերը գրեցին. «Ի դեմս Դուրյանի՝ իտալական ծողովուրդը ծանոթանում է մի փոքրաքանակ ժողովրդի ներկայացուցչի, որն իր ազատագրության գաղափարներով ավելի քիչ չի ապրում, քան եվրոպական ուզածդ ժողովրդի բանաստեղծը»:

Ներածական այս փոքրիկ զրույցից հետո մեջբերում եմ Դուրյանի բանաստեղծությունները թարգմանող Վալերի Բրյուսովի խոսքերը. «Պատանի Դուրյանը մնում է հայ պոեզիայի պատմության մեջ որպես վառ, հրաշեկ շտրիխ: Ի թիվս մյուս, ավելի հանդարտ բանաստեղծների, նա ցույց տվեց, թե ինչ է նշանակում ստեղծագործության մեջ ավյունը, անմիջական ապրումների ուժը»:

Հարկ եմ համարում մեջբերել նաև հետևյալ խոսքերը.

«Ապրելու և սիրելու իրավունքով ծնված բանաստեղծը միայն կյանքի «սև կաթը» ըմպեց, բայց երբեք չդավաճանեց իր քնարին ու իր վեհ կոչմանը: Իր մեծ նախորդ Սայաթ-Նովայի մնան «զայրացավ», բայց երբեք չչարացավ, ատեց, բայց երբեք չանիծեց»:

**Հովհ. Թումանյան**

«Դուրյանն է ամենեն պարզը ու իր պարզութեանը մեջ զգացմանց ամենեն վեհ բարձրությանը հասնող, բուն ժողովրդային հանճարն է ըստ իս»:

**Գր. Զոհրապ**

«Մեր ժողովրդի տարաբախտ պատմության մեջ էլ եղել են բարեբախտություններ: Մեր ազգային բարեբախտություններից մեկն էլ Դուրյանն է՝ մեր ազնվության վկայականը աշխարհի առաջ: Նրա գալուստը հրաշքի պես մի բան էր…»:

**Պ. Սևակ**

Դասի հաջորդ քայլին հանձնարարում եմ գրել հնգյակ «լճակ» բառով:

Հնգյակ գրելու կանոնները հետևյալն են.

**1**.Առաջին տողը մեկ բառ է, որը նկարագրում է հասկացությունը (սովորաբար գոյական):

**2.**Երկրորդ տողը բաղկացած է հասկացությունը նկարագրող երկու բառից (սովորաբար ածական):

**3**.Երրորդ տողը բաղկացած է երեք բառից, որոնք արտահայտում են հասկացության հետ կապված գործողություններ (սովորաբար դեր-բայներ):

**4**.Չորրորդ տողը բաղկացած է չորս բառանի արտահայտությունից, որը ցույց է տալիս հասկացության նկատմամբ զգացմունք կամ վերաբերմունք:

**5**.Վերջին տողը մեկ հոմանիշ բառ է, որ այլ կերպ է արտահայտում նույն հասկացությունը:

Օրինակ՝

Լճակ

Ջմրուխտյա, գեղեցիկ

Գրավող, դյութող, ապրումակցող

Գեղեցիկ պահեր վերապրելու դրախտավայր

Ծովակ

Աշակերտների գրած հնգյակներին անդրադառնալու ենք քիչ ավելի ուշ:

Այսքանով ավարտում եմ դասի խթանման փուլը, անցնում իմաստի ընկալմանը:

## *Իմաստի ընկալման փուլ*

Լիովին ըմբռնելու համար բանաստեղծի հոգեկան ապրումները, նրանց տեղեկացնում եմ բանաստեղծության գրելու շարժառիթի մասին՝ ասելով, որ «Լճակ» բանաստեղծությունը գրելու շարժառիթը անձնական բնույթ ունի: Այստեղ մեջբերում եմ դերասանուհի Ազնիվ Հրաչյայի հիշողություններից մի հատված. «Մի անգամ Իսկյուտար Ազիզիե թատրոնում դերասանուհիների հետ խոսելու միջոցին ներս մտավ պատանի մը երկար հասակով ու երկար վզով. ուներ երկար քիթ, գունատ էր: Մոխրագույն ու շատ մաշված զգեստ էր հագած: Թևին տակ կար տետրակ մը: Երբ երևցավ, դերասանուհիները սկսան ծիծաղիլ, ըսելով. «Քա՝ Թերեզա, քուկինդ եկավ»: Իսկ Թերեզան պատասխանեց. «Այնքան գունատ է, որ ինձի պետք չէ, շուտով կմեռնի»: Դերասանուհին հաստատում է, որ այդ խոսքերը լսել է Դուրյանը, և խիստ դառնացել նրա հոգին:

Իսկ ո՞վ է տիկին Ազնիվ Հրաչյան. դերասանուհի/1853-1919թթ/, որը Դուրյանի մասին խոսում է իր «Իմ հիշողությունները» գրքի/1909թ. Փարիզ/ 31-րդ էջում. դերասանուհու պատմածից երևում է, որ անձամբ հանդիպել է հանճարեղ բանաստեղծին և մասնակցել նրա թաղմանը: Իր այնքան հետաքրքրաշարժ հիշողությունները տիկին Ազնիվ Հրաչյան գրի է առել Հովհաննես Թումանյանի խորհրդով ու գիրքն էլ ձոնել է հանճարեղ լոռեցուն:

«Անգամ մը, արդեն ծանրապես հիվանդ, Չամըլճա կերթա վերջին պտույտ մը ընելու, ետ դարձած ատեն կհանդիպի գինովի մը, որ անոր դժգույն դեմքը և դանդաղկոտ քայլվածքը տեսնելով, կըսե.«Աս ալ երթալոց է»»,-սա էլ հայագետ Արշակ Չոպանյանի վկայությունն է:

Գուցե «Լճակը» գրելու շարժառիթներ հանդիսացող այս երկու դեպքերն էլ ճիշտ են և իրողություն, բայց շատ ավելի հավանական է ու համապատասխանում է դերասանուհի Ազնիվի պատմածը:

Բանաստեղծության գրելու շարժառիթներն ասելուց հետո լսում ենք «Լճակ» բանաստեղծության՝ Հրաչյա Ներսիսյանի կամ Հրաչուհի Ջինանյանի անզուգական ընթերցումը:

Ընթերցման ունկնդրման ավարտից հետո արդեն շատ տեղին է մեջբերել Պարույր Սևակի խոսքերը. «Դուրյանի աշխարհում լճակ կա, և ի՞նչ լճակ. Եթե մի չար հրաշքով գոլորշիանան աշխարհի բոլոր լճակները, Դուրյանի «Լճակով» կարելի է վերստեղծել դրանք»:

## *Կշռադատման փուլ*

Դասի վերջին՝ կշռադատման փուլը կազմակերպում եմ հարցերի միջոցով, որպեսզի հնարավորություն տրվի աշակերտներին արտահայտելու իրենց զգացածն ու վերապրածը, զարգացնելու ինքնուրույն մտածողությունը, բանավոր խոսքը:

Այդ հարցերն են.

**1**.Ո՞վ է բանաստեղծության քնարական հերոսը, և ո՞ր տողերից եք դա հասկանում:

**2**. Պատահակա՞ն է արդյոք բանաստեղծի դիմումը լճակին և ոչ մարդկանց:

**3**.Ինչերի՞ միջև է զուգահեռներ անցկացնում բանաստեղծը:

**4.** Յուր վշտերին հաղորդակից դարձնելով լճակին,երբեմն հակադրելով, երբեմն համադրելով իր հոգեկան կացությունը «հատակում փրփուրներ պահած լճակի» հետ՝ բանաստեղծը պատմում է սեփական վիշտը, ցույց է տալիս մարդու հոգու խռովքի գերազանցությունը բնության տարերքի խռովքի համեմատությամբ: Որո՞նք են այդ տողերը:

**5.** Բանաստեղծության մեջ կա նաև խուլ բողոքի շեշտեր զգացմունքից զուրկ մարդկանց դեմ. ասեք այդ տողերը:

**6** Ու՞մ դեմ է Դուրյանի ընդվզումը:

**7**. Կա՞ արդյոք նմանություն բանաստեղծի և լճակի միջև և եթե՝ այո, ապա որո՞նք են դրանք:

**8.** Որ՞ն է բանաստեղծի ապրած հոգեբանական դրաման, որ տողերում է երևում բանաստեղծի արժանապատվության նվաստացման զգացումը:

**9.** Ոչ ոք չի փորձում անգամ խորանալ բանաստեղծի հոգու խորքը, տեսնել նրա հոգու հարուստ գանձերը և անսպառ հարստությունը: Իսկ ի՞նչ կա այնտեղ:

**10**. Կարո՞ղ եք հիշել մի այլ բանաստեղծություն, որի քնարական հերոսը խոսքի է բռնվում գետի հետ, ի՞նչ նմանություն եք տեսնում այդ երկու ստեղծագործությունների միջև:

**11**.Միայն մեկ նախադասությամբ բնութագրեք բանաստեղծությունը («Լճակը» կյանքից, սիրուց մերժված բանաստեղծի խորազգաց հոգու պատմությունն է»: «Բանաստեղծի գերզգայիկ հոգին բութ ու անտարբեր հասարակության մեջ զարնվել է անհոգի իրականությանը»: «Զգայուն անհատի դժգոհությունն ու բողոքն է անկարեկից միջավայրի դեմ»: «Լճակը» ինքնակենսագրական բնույթ ունի»: «Անարձագանք մնացած սեր, շրջապատի մարդկանց անհոգի վերաբերմունք, վիրավորվածություն հասարակությունից»:)

**12.** Պատկերավորման և արտահայտչական Ի՞նչ միջոցներ է օգտագործված բանաստեղծության մեջ, բերեք օրինակներ:

Հարցերից հետո անդրադառնում ենք աշակերտների գրած հնգ-

յակներին: Ցանկացողները կարդում են իրենց գրածները և համեմատում Դուրյանի պատկերած լճակի հետ:

Դասն ավարտում եմ Պարույր Սևակի խոսքերով.«Նա է մեր նոր քնարերգության առաջին մեծը և միշտ էլ կմնա վերջինի կողքին, որովհետև նա չի հնանում, ինչպես չեն հնանում ժպիտն ու հառաչը, ծիծաղն ու հեծկլտոցը »:

Հանձնարարում եմ տանը անգիր սովորել բանաստեղծությունը:

# *Դանիել Վարուժանի «Ձոն» բանաստեղծության ուսուցումը համագործակցային մեթոդի կիրառմամբ*

***<u>Դասի թեման</u>***՝ «Ձոն» բանաստեղծության ուսուցումը ինտերակտիվ մեթոդների կիրառմամբ

***<u>Խնդիրները</u>***՝ Այնպես կազմակերպել ուսուցումը, որ սովորողները կարողանան՝

1.տեսնել քնարական բանաստեղծության մեջ համադրված դրամատիկական, հերոսական ու վիպական տարրերը

2.զգալ նրա արտակարգ կանոնավոր, ռիթմիկ կառուցվածքը

3.զգալ ներքին երաժշտականությունը և հանգավորումը (թե արտաքին, թե ներքին)

4.բնութագրել նրանում արծարծված խնդիրների զարգացումը

5.հասկանալ բանաստեղծության բովանդակության և ձևի ներքին կապը, նրանց ներդաշնակությունը:

***<u>Ռեսուրսներ</u>***՝ թուղթ, ֆլոմաստեր, գունավոր կավիճներ, նկարներ, բաշխման նյութեր

Տևողությունը՝ 80 րոպե:

***<u>Խթանման փուլ</u>***

Կարդալ բանաստեղծություն, ասույթներ՝ նվիրված Դանիել Վարուժանին և «Ձոն» բանաստեղծությանը.

«Եվ զուլալ, արծաթյա ձայնով երգում էր արևի մասին,
Իր գյուղի՞ արևի մասին, որ մորթել էին ցերեկով...
Երգում էր հերկերի մասին, դաշտերի ու հողի,
Քրտինքն էր երգում գեղջուկի և նրա վաստակը արդար
Բայց փոխվում էր երգը հանկարծ և դառնում աղաղակ ոխի,
Եվ մոմե շրթերով քերթողի սկսում էր նա նզովք կարդալ»:

**Չարենց**

«Վարուժանը հսկայի քայլերով բարձրացավ դեպի կատարելություն՝ դրսևորելով իր բանաստեղծական վիթխարի ուժը, իր գրարվեստի հմայքը, նոր խոսք ասելու, մեր քերթության սահմանները հանճարի հզոր ճախրանքով ընդլայնելու և բանաստեղծ սերունդների համար ուսուցիչ լինելու մեծ կարողությունը»:

**Մինաս Հյուսյան**

«Իր խորունկ հայրենասիրությամբ, անսահման մարդասիրությամբ, սոցիալական ու քաղաքական բռնությունների դեմ ըմբոստացող ոգով, բնական ու հոգեկան գեղեցկությունների փառաբանությամբ, բանաստեղծական պատկերավոր մտածողությամբ Վարուժանի պոեզիան խոր հետք է թողել հետագա հայ բանաստեղծության վրա և շարունակում է «սրտերի նվաճման»

**Վազգեն Գաբրիելյան,**
**գրականագետ**

«Ձոնը»՝ մեր հայրենասիրական պոեզիայի գոհարներից մեկը, խտացնում է և՛ հայրենիքի անցյալ ազատ կյանքի պատկերները, և՛ ներկան՝ տառապանքի բոլոր կողմերով, և՛ ընդվզումը՝ պայքարի կոչով:

Ձևի և բովանդակության բացառիկ ներդաշնակությամբ, անթերի կառուցվածքով այս բանաստեղծությունը հեղինակի առ հայրենիք ունեցած անսահման սիրո խորունկ դրսևորումն է»:

**Վազգեն Գաբրիելյան,**
**գրականագետ**

«Ձոնը» ծանր վշտի և հայրենական կարոտի, տխուր ապրումների և միաժամանակ հերոսական զգացումների ամբողջությունն է

**Հր. Թամրազյան,**

Սրանից հետո կարդալ Դանիել Վարուժանի աշակերտի՝ Առաքել Պատրիկի հուշերից՝ կապված «Ցեղին սիրտը» գրքի լույսընծայման հետ. «1909 թվականին՝ Սեբաստիայի Ազգային Արամյան վարժարանում դասավանդելու տարին, Վարուժանը մի օր դասարան է մտնում ուռած պայուսակով և գոհունակությունից ճառագայթող դեմքով սեղանին դնում իր նոր լույս ընծայված բանաստեղծությունների գիրքը: Կտրատելով գրքի թերթերը՝ նա գուրգուրոտ հայացք է գցում նրանց վրա և աշակերտների համար, որոնք օգտվելով ուսուցչի տրամադրությունից անարգել նրա շուրջն էին խմբվել, սկսում է կարդալ հուզմունքից դողացող իր հնչեղ ձայնով.

Եղեգնյա գրչով երգեցի փառքեր.
-Քեզի ընծա իմ հայրենիք:

Հեղինակի քերթվածների երկրորդ ժողովածուն «Ցեղին սիրտն» էր այդ»:

Այս հուշը կարդալուց հետո կատարում եմ մի մեջբերում Դ.Վարուժանի նամակներից, որով ունկնդիրները Վարուժանին ամենից առաջ ճանաչում են որպես մեծ հայրենասերի. «Միակ նպատակս է

հայրենիքիս օգտակար դառնալ, ահա գաղափարականը, որ զիս կոգևորե և կկանգնեցնե. արդ միայն իրմով կապրիմ, իրմով եմ հաղթական:

1904-1907 շրջանն էր, երբ հայությունը կըխեղդվեր սուրի ու սովի մղձավանջին մեջ, ու ես չուզեցի տեղ տալ իմ անհատական ցավերուս, գրեթե լռեցուցի իմ սիրտս ու նախընտրեցի երգել ցեղին սիրտը, որուն բաբախյունները կզգայի իմ մեջս, իմ սեփական արյունիս խորը: Հայությունը կուլար ու կը մռնչեր իմ մեջս, և երգերս դուրս կուգային օտար երկնքի տակ՝ կարոտի լարովը միայն կապված մեր երկրի հողին ու մարդուն հետ»:

(1941թ. մարտի 20)

Մի այլ տեղ Վարուժանը գրում է. «Ցեղին սիրտը արյուն կուլա մեջս, հրդեհված քաղաքներեն եկած ամեն լուր՝ տաք մոխրի պես կթափվի գլխիս և սրտիս վրա: Բայց հայը պիտի ապրի... ժողովուրդներու սիրազարդ շղթային մեծ ոսկի օղակն ըլլալու համար»:

Այսքանից հետո անցնում եմ իմաստի ընկալման փուլին: Ունկնդիրներին բաժանում եմ թերթիկներ՝ հետևյալ գծապատկերով.

| Եթե երգվում կամ գրվում է բանաստեղծություն | Ու՞մ կամ ինչի՞ն կնվիրեք Դուք այդ բանաստեղծությունը | Ու՞մ կամ ինչի՞ն է նվիրել Դանիել Վարուժանը |
|---|---|---|
| Փառքի<br>կարոտի<br>արյան<br>տան<br>պայքարի } մասին | | հայրենիքին<br>պանդուխտներին<br>սուրի զոհերին<br>ալեհեր հորը<br>հայ մարտիկներին |

Հրահանգավորում եմ, որ երկրորդ սյունակը լրացնեն թերթիկները ստանալուց անմիջապես հետո, իսկ երկրորդ սյունակը՝ կշռադատման փուլի ժամանակ:

Բանն այն է, որ գրական տեսակը պահանջում է դասավանդման իր ուրույն մեթոդիկան: «Ձոնը» քնարական բանաստեղծություն է, և նրա առաջին և ամբողջական ընկալումը չափազանց կարևոր է: Եթե տեքստի անծանոթ բառերը նախապես չբացատրվեն, տեքստը չի ընկալվի ամբողջությամբ: Ուստի նախ անհրաժեշտ է կատարել բառարանային աշխատանք, ապա անցնել տեքստի ընթերցմանը: Բացատրում եմ հետևյալ բառերը.

| | |
|---|---|
| քուրմ | հեթանոսական կրոնի քահանա |
| տարաշխարհիկ | օտար աշխարհից եկած, օտարական, պանդուխտ |
| հեգ | խեղճ, թշվառ, ողորմելի, տառապյալ |
| կընյուն | կնյունազգիների ընտանիքին պատկանող բազմամյա, ուղիղ և ճկուն ճահճային խոտաբույս, ճիլ, պրտու |
| հոտել | կտրել, էտել |
| կարեվեր | ծանր վերքեր ունեցող |
| անթրոց | կրակխառնիչ |
| ձոն | ընծայական, ուղերձ |
| Սոսյաց անտառ | |

Այս վերջինիս բացատրությունը կարդում եմ Հայկ Խաչատրյանի «Սոսյաց անտառ» գրքից «Սոսյաց անտառ» պատմվածքը .

«Մեր թվականությունից շատ ու շատ դարեր առաջ, երբ դեռ չկար աշխարհի յոթ հրաշալիքներից և ոչ մեկը, Արարատյան դաշտում տնկվել է Սոսյաց անտառը, որ աշխարհի ամենահին արհեստական պուրակներից մեկն է:

Մովսես Խորենացին գրել է, որ այդ անտառը տնկել է Հայկ Նահապետի որդի Արամանյակը: Այս Արամանյակի որդի Արամայիսն էլ Սոսյաց անտառի կողքին հիմնել է Արմավիր քաղաքը: Սոսյաց անտառը սրբազան վայր էր համարվում: Մովսես Խորենացին գրում է, որ այս անտառին է նվիրվել Արա Գեղեցիկի թոռ Անուշավանը, որի պատճառով էլ ստացել է Սոսանվեր մականունը:

Հնում յուրաքանչյուր երկիր ունեցել է իր սրբազան ծառը: Հունաստանում այդպիսի ծառ է համարվել կաղնին, Հայաստանում՝ սոսին:

Սոսին հեթանոսական Հայաստանի խորհրդանիշն էր՝ Մասիսին հավասարազոր: Հայերը ռազմի դաշտ էին իջնում Սոսյաց անտառը պատկերող դրոշներով:

Ամենքդ էլ գիտեք, որ բոլոր ծառերի տերևներն էլ ինչ-որ չափով կարող են խշխշալ, շնկշնկալ, սվսվալ, փսփսալ, բայց հայոց նախնիք մյուս ծառերի տերևների շարժումներն անիմաստ են համարել և սոսի բառից կազմել սոսափել բառը:

Սոսյաց անտառը գոյատևել է 2300 տարի, մեր թվականությունից առաջ քսանհինգերորդ դարից մինչև երրորդ դարի վերջը: Պատմիչները չեն հաղորդում, թե ինչպես է կործանվել այդ անտառը, որից ոչ մի հետք չի մնացել: Բայց Հայաստանը չէր կարող մնալ առանց սրբազան անտառի: Եվ Արմավիրի Սոսյաց անտառին անմիջապես հաջորդել է Բագարանի Ծննդոց անտառը»:

Ասում եմ նաև, որ սոսին հայոց ծառերի նահապետն է ու կարդում եմ նույն գրքից մի այլ պատմվածք.

«Հայկ Նահապետի հոր անունը Թորգոմ էր, Թորգոմի հոր անունը՝ Թիրաս, Թիրասի հոր անունը՝ Գամեր, Գամերի հոր անունը՝ Հաբեթ: Հենց սա էլ հայոց առաջին ապուպապն է:

Մի անգամ Հաբեթը թավուտ անտառով անցնելիս սկսում է ինքն իրեն խոսել: Հետո զարմանում է, որ ծառերից ոչ մեկը չի պատասխանում իրեն: Ապա ձայնը բարձրացնում է, բացականչում ամբողջ ուժով: Կանգ է առնում և ունկնդրում: Նրան թվում է, թե ծառերից մեկն արձագանքում է իրեն: Մոտենում՝ վիթխարահասակ մի ծառի, որն ուներ մուգ դարչնագույն, ճաքճքված կեղևով բուն: Ծառի թաթաձև տերևներն այնպես էին սվսվում՝ ասես զրուցում էին ցածրաձայն: Հենց այդ պահին էլ Հաբեթը ծառը կնքում է սոսի անունով, որ նշանակում է բարձրահասակ, պերճագեղ, սեգ, վեհ: Հետո իր տոհմանդամներին ասում է .

-Խոսել գիտե միայն սոսի ծառը, մնացածները կամ համր են, կամ հայերեն չգիտեն:

Այդ ժամանակվանից էլ սոսին դարձավ հայոց ծառերի նահապետը»:

Վերոհիշյալ գրքի 116-124 էջերում կան ուրիշ պատմվածքներ էլ սոսի ծառի մասին, որ կարելի է կարդալ ժամանակի առկայության դեպքում կամ հանձնարարել տանը կարդալ:

Կապված «կընյուն» բառի հետ՝ կարդում եմ Ղուկաս Սիրունյանի «Հայ բույսը» փոքրիկ պատմվածքը. «Մի բույս կա մեր սարերում՝ Արագածի լանջերին, աճում է ժայռի ծերպերում: Նայում ես, թվում է, թե դուրս է եկել ուղղակի քարի միջից: Թերթերն էլ ասես քարի տաշեղներ լինեն՝ կոշտավուն, կլոր ու քիչ սրածայր: Բայց երբ դիպչում ես նրանց, նուրբ թավշյա մի զովություն է լցվում մաշկիցդ ներս: Թերթերը լի են կենարար հյութով: Ամենատոթ ու տոչոր եղանակներին այդ բույսը ունի թարմ տեսք՝ վառ կանաչ գույնով: Որտեղի՞ց է նա հավաքում այդքան ուժ ու պաշար՝ դժվար է ասել, երբ շուրջբոլորը ամեն ինչ չոր է, վառվում է արևի հրից...

Մի անգամ այդ բույսից պոկեցի մի ճյուղ, տարա տուն: Մտածում էի՝ կդնեմ ***ջրով լի բաժակի*** մեջ, թող ապրի սեղանիս վրա:

Վանեցի տատս տեսավ, ասաց.

-Բալա ջան, իզուր տեղը ջրի մեջ մի դիր: Մեկ է, էդ բույսը կապրի էնքան, ինչքան որ մեջը կյանք կա: Կուզե՞ս կախի պատից, մեկ է ... Եվ կախեցի ...

Անցան օրեր, բույսը չէր կորցնում վառ կանաչ տեսքը: Նույնիսկ ցողուն էր տվել, հետո էլ ծաղկեց ...

-Հայի պես է, բալա ջան, մի՛ զարմանա, -ասաց տատս: -Էդ որ

պատից կախ չի չորանա, ծաղիկ կըտա, հայ չէ, ապա ի՞նչ է: -Ասում էր ու գլոր-գլոր արտասվում իմ վանեցի տատը ... »:

Այս պատմվածքից հետո կարդում եմ բանաստեղծությունը: Գրական երկի արտահայտիչ ընթերցումը շատ կարևոր է, այն նպաստում է հեղինակի հույզերի ու մտքերի բացահայտմանն ու ըմբռնմանը, ունկնդիրների մեջ զարգացնում է գեղեցիկ, արտահայտիչ կարդալու հմտություն: Այդ իսկ պատճառով «Ձոնի» առաջին ընթերցումը կատարում է ուսուցիչը՝ կարևոր նշանակություն տալով ձայնի ելևէջներին ու հնչերանգին, շեշտադրությանն ու դադարառությանը: Իսկ եթե կա «Ձոնի»՝ ասմունքի վարպետների կատարումը, լսում են այդ:

«Ձոնը» լսելուց հետո լսարանը բաժանում եմ հինգ խմբի, յուրաքանչյուր խմբին տալիս բանաստեղծության մեկ տուն և պահանջում վերլուծել տող առ տող՝ իրենց ուժերի ներածին չափով: Այս աշխատանքի համար տալիս եմ 10 րոպե ժամանակ:

10 րոպե անց պահանջում եմ դադարեցնել աշխատանքը տեքստի վրա: Լսում եմ 5 խմբի վերլուծությունը:

### *1-ին խումբ.*

- Բանաստեղծության առաջին վեցնյակը ծոներգ է, ներբող փառքերի հայրենիքին: Նվիրական Սոսյաց անտառից կտրած եղեգնի, առասպելից վերցրած «եղեգան փողի» և քուրմերի պատկերով բանաստեղծը երգում է անցյալի փառքերը. մեզ տանում է մեր պատմության հեթանոսական շրջանը, դեպի այն երանելի ժամանակները, երբ հայրենիքը ազատ էր, երբ ամրապնդվեց հայ պետականությունը, հաղթանակների մեջ կոփվեց ժողովրդի ազատասիրական ոգին, որ պահպանվեց և հասավ մինչև մեր օրերը: Այդ հպարտ, ազատասեր ոգին էր, որ իբրև լույս եղավ մեր հին եղեգնափողից: Փառքերի հայրենիքը, որն իր քաղաքակրթությունը ստեղծել է անհիշելի դարերում, հպարտության զգացում է ծնում բանաստեղծի և մեր հոգում:

### *2-րդ խումբ.*

- Առաջին տան լուսերգակ բանաստեղծը երկրորդ տան մեջ ակնհայտորեն ողբերգակ է: Այստեղ բանաստեղծը մեզ տեղափոխում է պատմության մռայլ դարերը, երբ արշավանքների հետևանքով երկիրը քայքայվում, ավերվում և ծայր է առնումտարագրությունը: Այս տան մեջ հնչում է պանդուխտի կարոտի և վշտի երգը, որբացած օջախների, ամուսնուն սպասող հարսների, մարող հայ օջախների սրտառուչ երգը: Առաջին տան սլացիկ եղեգները այստեղ խոնարհված են: Այն հրեղեն եղեգնից, որ լույս էր դուրս գալիս, այժմ ողբ է դուրս գալիս: Եղեգան փողից դուրս եկող լույսը ողբի է փոխվում: Այս վեցնյակին համահունչ են «կարոտի նամակ» և «Ծեր կռունկ» բանաստեղծությունները:

### *3-րդ խումբ.*

- Երրորդ տան մեջ պատկերվում է առավել դաժան ժամանակներ, որ հասնում է մինչև համիդյան բռնակալության շրջանը: Այս տան մեջ բանաստեղծը անչափելի ողբերգություն է ապրում՝ կերտելով կրակի ու սուրի զոհերի եղեռնապատումը: Ավերվում է երկիրը, բայց չի մեռնում ժողովրդի ոգին: Այս տան մեջ բանաստեղծի սիրտն է դուրս պոռթկում եղեգնա փողից: Այս վեցնյակը կարծես լինի «Զարդը» բանաստեղծության մանրանկարը:

### *4-րդ խումբ.*

- Ոսոխը կրակի ճարակ է դարձնում բնակիչների տունն ու ունեցվածքը. մնում է միայն վերք ու տխրություն, ավերակ տուն: Այս վեցնյակը քայքայվող, բայց դեռ կանգուն հայրենի օջախների երգն է, օջախի, որի գաղափարը չի լքում բանաստեղծին: Բանաստեղծը մեծ հավատ ունի իր հայրենի օջախների անմարելիությանը, քանի որ

Ընդ եղեգան փող ծուխ ելաներ:

Այս վեցնյակն էլ խտացումն է «Մարած օջախ» բանաստեղծության:

### *5-րդ խումբ.*

- Հայ օջախներում առկայծող կրակների ծուխը պաշտպանելու, հայրենի տունը շենացնելու համար հարկավոր է ազատվել օտարի լծից, հարկավոր է պայքարել: Այդ է պատճառը, որ հայրենասեր բանաստեղծը հնչեցնում է պայքարի, վրեժի ու ցասման մոտիվը: Բանաստեղծն իր գրիչը դարձնում է «անթրոց սըրտերու հնոցի ... », այսինքն՝ գրիչը փոխակերպվում է կրակխառնիչի: Եղեգնափողից բոց է ելնում: Սա ազատագրական պայքարի խորհրդանիշն է:

Վերլուծելուց հետո լրացնում ենք այն կիսատ թողած գծապատկերը, որ լրացրել էինք մի մասը խթանման փուլում:

Իմաստի ընկալման փուլն այսքանով ավարտված եմ համարում և անցում եմ կատարում կշռադատման փուլին: Սովորաբար ես այս փուլն իրականացնում եմ հարց ու պատասխանի միջոցով:

### *Հարց 1-ին.*

- Ձեր վերլուծություններից եկանք այն համոզման, որ «Ձոնը» հայ հայրենասիրական պոեզիայի գլուխգործոցներից է:

Հայրենիքի նկատմամբ ունեցած իր խորունկ սիրո մասին Վարուժանից առաջ էլ ովքե՞ր են խոստովանանքի այդպիսի խոսքեր ասել:

Պատասխան.

- Իսահակյանը («Երնեկ ունենամ հազար ու մի կյանք»), Թումանյանը («Հայոց լեռներում»), Սիամանթոն («Ափ մը մոխիր, հայրենի տուն ...»), Տերյանը («Ինչպես չսիրեմ երկիրն իմ կիզված ...»), Չարենցը («Իմ Հայաստան յարն եմ սիրում»):

### *Հարց 2-րդ.*

- Ո՞վ է բանաստեղծության քնարական հերոսը:

Պատասխան.

- Հայրենիք ունեցող և հայրենիքի պատմական ճակատագրով, նրա բախտով ապրող մարդն է:

### *Հարց 3-րդ.*

- Ո՞ր ժամանակահատվածն է ընդգրկված «Ձոնում»:

Պատասխան.

- Վիթխարի է «Ձոնի» ընդգրկումը՝ սկսած հայ ժողովրդի հեթանոսական դարերից՝ ներառյալ 20-րդ դարի առաջին տասնամյակը:

### *Հարց 4-րդ.*

- Բանաստեղծության մեջ կարող եք ցույց տալ անցումները՝ ինչից-ինչ:

Պատասխան.

- Անցյալի փառքերից, երանելի ժամանակներից, երբ հայրենիքը ազատ էր, անցում ներկայի կյանք- բռնապետության թաթի տակ հեծծող հայրենիքի, պանդխտության, սրից և կրակից ընկած զոհեր, հրկիզված երկիր և այս ամենից ծնվող զայրույթ և ընդվզում:

### *Հարց 5-րդ.*

«Սոսյաց անտառեն էի զայն կըտրեր ...»

«Ան տարաշխարհիկ բույսի մ'էր ծըղոտ ...»

«Ան ծլած էր մոխրի մեջ իբրև կընյուն ...»

«Ցամքած աղբյուրեն մեր զայն հոտեցի ...»

«Գրիչս եղավ անթրոց սըրտերուն հնոցի ...»

- Այս տողերը մնում են իբրև թերատ, անավարտ խոսք՝ կախման կետերի արտահայտչական ոճավորումով:

Ի՞նչ է սա նշանակում (ենթադրում):

Պատասխան.

- Այդ 3 կետերը իրենց մեջ ընդհատված մեծ պատմություն են թաքցնում, պատմություն, որի վերածնումն ու շարունակումն թողնվում է ընթերցողի ենթագիտակցությանը:

### *Հարց 6-րդ.*

- Բանաստեղծությունից ասեք մեր ժողովրդի ողբերգական վիճակը նկարագրող բառակապակցություններ:

Պատասխան.

- Մեր ժողովրդի ողբերգական վիճակը պատկերված է «հեգ պանդուխտներ», «սուրի զոհեր», «ցամքած աղբյուր» և այլ պատկերներով:

### *Հարց 7-րդ.*

- Ի՞նչ նմանություն կա բանաստեղծության բոլոր վեցնյակների

միջև:

Պատասխան.

- Առաջին և հինգերորդ տողերի վերջում դրված է միջակետ, երկրորդ և չորրորդ տողերի վերջում անջատված են գծիկով, երրորդ տողի վերջում՝ կախման կետեր, իսկ 6-րդ տողի վերջում՝ վերջակետ: Բոլոր տների առաջին և հինգերորդ տողերը նույնն են՝ մի բառի փոփոխությամբ («Եղեգնյա գրչով երգեցի ...»), երկրորդ և չորրորդ տողերը («Քեզի ընծա ...») և վեցերորդ տողը («Ընդ եղեգան փող ...»):

*Հարց 8-րդ.*

- Ի՞նչ է ընդգծում նույն տողի կրկնությունը:

Պատասխան.

- Նույն տողի կրկնությունը ընդգծում է առաջատար տրամադրություն, իսկ տարբերվող բառը դառնում է վեցնյակի բովանդակության նախապատրաստությունն ու սկիզբը: Օրինակ՝ կարոտ բառը բնորոշ է երկրորդ վեցնյակին, քանի որ խոսվում է կարոտի, պանդուխտի և նրան սպասող հարսի մասին:

*Հարց 9-րդ.*

- Բանաստեղծության մեջ դրսևորվում է հեղինակի ոչ միայն հայրենասիրությունը, այլև ժողովրդի ազատագրության հզոր ձգտումը: Ինչպե՞ս: Վկայակոչեք համապատասխան տողերը:

Պատասխան.

- «Ու պայքա՜ր, պայքա՜ր, պայքա՜ր երգեցի ...»:

*Հարց 10-րդ.*

- Կարելի՞ է բանաստեղծությունը վերջացնել ոչ թե վերջին վեցնյակով, այլ նախորդներից որևէ մեկով: Հիմնավորեք Ձեր ասածը:

Պատասխան.

- Ո՛չ, չի կարող, քանի որ «Ձոնը» ճարտարապետական մի կոթող է, որի բոլոր մասերը՝ սովորական քարերն ու խոյակները, նախապես հաշվարկված են, պահում են մեկը մյուսին, և ամեն մի քար իր տեղում է:

*Հարց 11-րդ.*

- Բանաստեղծի սերն ունի իր հասցեն: Ո՞րն է այդ հասցեն:

Պատասխան.

- Այն է՝ հայրենիք, հայր, մայր, օջախ, զոհեր, մարտիկներ ...

Որպես ավարտ կշռադատման փուլի՝ հրահանգավորում եմ բոլոր խմբերին ամփոփել բանաստեղծությունը մեկ նախադասությամբ: Ստացել եմ հետևյալ ամփոփումները.

«Ձոնը» վարուժանյան պոռթկուն հայրենասիրության բյուրեղացումն է:

Բանաստեղծական ծավալով ընդամենը հինգ վեցնյակ, իսկ բովանդակությամբ մի աստվածատուր և աստվածապաշտ ժողովրդի պատմություն:

«Ջոնը» ի խորոց սրտի ասված սիրո խոստովանություն է առ հայրենիք:

Բանաստեղծը պատմում է հայրենիքի փառքերի ու տառապանքների, վրեժի ու պայքարի մասին:

«Ջոնը» հիմն է մի ժողովրդի, պատմություն, վրեժի ու պայքարի երգ:

Վահագնաուժ և Վահագնաբույր մի բանաստեղծություն է սա:

Վերջում ունկնդիրներին տալիս եմ մի քանի աբստրակցիոն ոճի նկարներ և պահանջում խմբերից ընտրել մեկ նկար՝ համապատասխան իրենց վերլուծած վեցնյակի և մեկնաբանել, թե ինչու ընտրեցին հենց այդ նկարը:

Դասն ավարտում եմ գրականագետ Մինաս Հյուսյանի խոսքերով. «Վարուժանը գրական ասպարեզ եկավ իբրև ըմբոստ քնարավոր, եկավ մրրկաշունչ թափով, Վահագնի հայացքով թափանցեց իրականության էության մեջ, իր ազգի և մարդկության տառապանքի խորությունը չափեց և ազատության ու լույսի, գեղեցկության ու հերոսության պատգամներ ավետեց իր դարի մարդկությանը»:

# *Ուսուցչի հարցադրումներով ուղղորդված ընթերցանության և կանխագուշակման մեթոդների կիրառումը Գրիգոր Զոհրապի «Երջանիկ մահը» նովելն ուսուցանելիս*

***Դասի թեման՝*** Գրիգոր Զոհրապի «Երջանիկ մահը» նովելը

***Նպատակը՝*** Սովորողների քննադատական, ինքնուրույն մտածողության և բանավոր խոսքի զարգացում

***Տևողությունը՝*** 2 ժամ

Զոհրապի նովելները իրենց ինքնատիպ, նրբագեղ արվեստով, հերոսների յուրօրինակ ճակատագրերի բազմազանությամբ, գաղափարական նպատակադրումներով ընդլայնում և հարստացնում են աշակերտների գիտելիքները, կրթում ճաշակը: Գրիգոր Զոհրապի նորավեպերի մեծ մասը նվիված է կանանց և սիրո հարցերին:

Պետք է ապահովել գրականության զգայական և տրամաբանական ընկալման միասնությունը: Կարդացողը պետք է տեսնի ու զգա պատկերների միջոցով արտահայտված գաղափարները, մարդկային հոգու ելևէջները:

Գիտնականներից մեկը նշում է, որ կա ընթերցանության երեք տեսակ. առաջին՝ կարդալ և չհասկանալ, երկրորդ՝ կարդալ և հասկանալ, երրորդ՝ կարդալ և հասկանալ նույնիսկ այն, ինչը գրված չէ: Այդ չգրվածի խորհուրդը աշակերտը պիտի խորհի, գտնի, հայտնաբերի ինքնուրույն դատողության, քննադատական մտածողության և վերլուծության միջոցով:

Նովելն առաջին անգամ ինքս եմ ընթերցում պարբերություն առ պարբերություն՝ սովորողների ակտիվ միջամտությամբ կատարելով համապատասխան մեկնաբանություններ:

***Խթանման փուլ***

Մինչ անցնելը նովելին, հարցնում եմ սովորողներին, թե իրենք ի՞նչ են հասկանում երջանկություն ասելով կամ կարող են տալ երջանկության հակիրճ սահմանումը:

**Աշ.-** Մարդկային երջանկությունը քչով բավարարվելու արվեստի մեջ է:

**Աշ.-** «Երջանկություն» բառը դեռ իր կատարյալ բնութագրումը չի ստացել և չի էլ կարող ստանալ:Չ՞է որ ամեն մարդ երջանիկ է յուրովի:

**Աշ.-** Սֆինքսի շուրթերով ծնվում է երջանկության իմաստի իսահակյանական փիլիսոփայությունը. «Գնա և պատգամիր աշխարհին հանուր՝ հարավին, նույնպես հյուսիսին, արևելքին, նույնպես արևմուտքին՝ երջանկության իմաստը չպետք է զգալ, չպետք է խորհել, չպետք է կամենալ, այլ միայն քարանալ, քարանալ, քարանալ…»

**Ուս.-** Իսկ ո՞րն է Իսահակյանի՝ երջանկության ակնթարթի մեջ քարանալու մեկնությունը:

**Աշ.-** Արբեցումի այդ կախարդական ակնթարթում քարանալ ու լինել միշտ երջանիկ:

**Աշ.-** Գեղեցիկ ու իմաստավորված ապրել կյանքիդ յուրաքանչյուր օրը:

Պատասխանները լսելուց հետո հանձնարարում եմ «երջանկություն» բառով կառուցել պրիզմա, կազմել նախադասություններ պրիզմայի աջ և ձախ եզրաբառերով:

Այս աշխատանքից հետո հանձնարարում եմ «երջանկություն» բառով կազմել բառակապակցություններ: Լսում ենք բոլոր կազմած բառակապակցությունները և գրում ֆլիպչարտին. ահա դրանք՝ երջանկահիշատակ մարդ, երջանիկ զուգադիպություն, երջանիկ զույգ, երջանիկ ընտանիք, երջանիկ կին, երջանիկ ամուսին, երջանիկ ծնող, երջանիկ մանկություն, երջանիկ ծերություն, երջանիկ ապրել, երջանիկ կյանք: Որպեսզի այս բառակապակցությունները չմնան որպես սոսկ վերացական հասկացություններ, որպեսզի զարգանա սովորողների բանավոր խոսքը, պահանջում եմ դրանցից մի քանիսը մեկնաբանեն, բացատրեն:

**Ուս.-** Կասեք՝ ո՞վ է երջանկահիշատակ մարդ:

**Աշ.-** Այն մարդը, ում անունը դարերի հոլովույթում հիշվում է երախտագիտությամբ:

**Աշ.-** Այն մարդը, ում հայրենանվեր գործը երբեք չի մոռացվում:

**Աշ.-** Այն մարդը, որն իր անձնականից վեր է դասել հայրենիքի շահը:

**Աշ.-** Այն մարդը, ով իր կյանքը ճիշտ է ապրում:

**Աշ.-** Այն մարդը, ով զոհել է իր ամենաթանկ բանը՝ կյանքը, հայրենիքի ապագայի և ազատության համար:

**Ուս.-** Իսկ ո՞վ է երջանիկ մարդ:

**Աշ.-** Այն մարդը, ով երբեք չի վհատվում:

**Աշ.-** Այն մարդը, ով չի նախանձում երջանիկներին:

**Աշ.-** Այն մարդը, ով չի կառչում անհաջողությունից:

**Աշ.-** Այն մարդը, ով ապագան պատկերացնում է միայն ամենա-

վառ գույներով:

**Աշ.-** Ով մարդկանց տալիս է ավելին, քան սպասում են:

**Աշ.-** Նա, ով ունի օգնական ընկեր, անդավաճան ընկեր, բարի խորհրդատու ընկեր և ցավակից ընկեր:

**Աշ.-** Նա, ով տեսնում է, լսում է, լռում է և համբերում է:

**Աշ.-** Մարդը երջանիկ կլինի, եթե միշտ հիշի երեք կարևոր բան՝ սեփական արժանապատվություն, հարգանք այլոց նկատմամբ, պատասխանատվություն սեփական գործողությունների նկատմամբ:

**Աշ.-** Նա, ով զուրկ է այս չորս չարիքից՝ փառամոլություն, ագահություն, կամակորություն, մոլեռանդություն:

**Աշ.-** Նա, ով զուրկ է յոթ մոլորությունից՝ հպարտությունից, նախանձից, բարկությունից, ծուլությունից, ագահությունից, որկրամոլությունից, բղջախոհությունից:

**Աշ.-** Նա, ով իր մեջ ունի յոթ առաքինությունները՝ խոնարհություն, եղբայրասիրություն, հեզություն, աշխատասիրություն, ողորմածություն, ժուժկալություն ողջախոհություն:

**Ուս.-** Ի՞նչ եք հասկանում «երջանիկ ապրել» ասելով: Ակնկալում եմ պատասխաններ եթե-ով սկսվող:

**Աշ.-** Եթե երբևէ պատիվդ չես գցել:

**Աշ.-** Եթե հավատարիմ ես եղել քո ընկերությանը:

**Աշ.-** Եթե շռայլորեն ես ապրել մարդկանց համար:

**Աշ.-** Եթե բոլորը վստահել են քեզ:

**Աշ.-** Եթե չես մոլորվել ճանապարհների խաչմերուկներում:

**Աշ.-** Եթե ապրել ես՝ ջերմացնելով սրտեր:

**Աշ.-** Եթե ստանալուց հետո մի բան էլ ավել ես վերադարձրել:

**Ուս.-** Իսկ ինչպե՞ս կբացատրեք «երջանիկ կյանք» բառակապակցությունը:

**Աշ.-** Երբ մարդ իր կյանքում չունենա անհրաժեշտի պակաս և ավելորդի ձգտում:

**Աշ.-** Երբ շատ փող ունենաս, կյանքդ էլ երջանիկ կանցնի:

**Ուս.-** Ես այդպես չեմ կարծում: Հիմա կկարդամ մի շատ փոքրիկ պատմվածք, դուք դրանից հետևություն կանեք.

«Աշակերտը հարցնում է ուսուցչին. «Ճի՞շտ է արդյոք այն խոսքը, թե երջանկությունը դրամիի մեջ չէ»:

-Բացարձակապես ճիշտ է,- պատասխանում է ուսուցիչը,- քանի որ դրամով կարելի է գնել անկողին, բայց ոչ քուն, ուտելիք, բայց ոչ ախորժակ, դեղորայք, բայց ոչ առողջություն, ծառա, բայց ոչ բարեկամ,

կին, բայց ոչ սեր, բնակարան, բայց ոչ ընտանեկան օջախ, ուսուցիչ, բայց ոչ գիտելիք, գրքեր, բայց ոչ խելք, զարդեր, բայց ոչ գեղեցկություն, ճոխություն, բայց ոչ բարեկեցություն, զվարճանք, բայց ոչ երջանկություն, կրոն, բայց ոչ հավատք»:

**Ուս.-** Իսկ ո՞ր ընտանիքն եք համարում երջանիկ ընտանիք:

**Աշ.-** Երջանիկ է այն ընտանիքը, որի տան պսակը աստվածապաշտությունն է, գեղեցկությունը՝ կանոնավորությունը, փառքը՝ հյուրասիրությունը, օրհնությունը՝ գոհունակությունը, զարդը՝ հյուրերը:

**Աշ.-** Երջանիկ է այն ընտանիքը, որի հիմքում դրված է փոխադարձ սերը:

**Աշ.-** Երջանիկ է այն ընտանիքը, որտեղ կա հարգանք փոքրից դեպի մեծ և մեծից դեպի փոքր:

**Աշ.-** Երջանիկ է այն ընտանիքը, որի տան պատերի ներսում միշտ թևածում է խաղաղության աղավնին:

Այս հարցի հետ կապված՝ դասարանում «թխում ենք» տորթ, որի անունն է «Երջանիկ ընտանիք»: Սովորողներից պահանջում եմ, որ իրենք կազմեն այդ տորթի բաղադրատոմսը: Ահա միահամուռ ուժերով կազմած տորթի մեր բաղադրատոմսը, որը փակցնում ենք գրատախտակի կենտրոնում.

## *«Երջանիկ ընտանիք» տորթի բաղադրատոմս*

«Վերցնում ենք 5 բաժակ սեր, 4 բաժակ խիզդ, 3 բաժակ հոգատարություն, 2 բաժակ հույս, 1 բաժակ ներողամտություն և հավատ՝ ըստ չափի: Խառնում ենք և այս բոլորը շաղախում նվիրվածությամբ ու զիջողականությամբ, վստահությամբ ու հարգանքով, փոխըմբռնմամբ ու ինքնազոհողությամբ, կարոտով ու սպասումով: Եփում ենք բորբ արևի տակ և տաք-տաք բաժանում այն մեր ընտանիքի անդամներին: Չմոռանանք բաժին հանել նաև նրանց համար, ովքեր դրա կարիքը շա՜տ, շա՜տ ունեն: անուշ լինի:»

**Ուս.-** Լավ,իսկ որն է երջանիկ մանկության ձեր պատկերացումը:

**Աշ.-** Երբ երեխան մեծանում է՝ վայելելով ծնողական գուրգուրանք:

**Աշ.-** Երբ երեխայի մանկությունն անցնում է խաղաղ, առանց ցնցումների:

**Աշ.-** Երբ երեխան մեծանում է հաշտ ու համերաշխ ընտանիքում:

**Աշ.-** Երբ նա մեծանում ու դաստիարակվում է հոր և մոր առկայությամբ:

**Ուս.-** Հարց միայն աղջիկներին՝ըստ ձեզ՝ ո՞վ է երջանիկ կին:

**Աշ.-** Երջանիկ է այն կինը, որն իր կողքին ունի իրեն նվիրված, հարգող, հասկացող և անդավաճան ամուսին:

**Աշ.-** Երջանիկ է այն կինը, որն իր կողքին ունի առնական, բայց ոչ կոպիտ ու անտաշ, համարձակ, բայց ոչ լկտի, ինքնավստահ, բայց ոչ լպիրշ ամուսին:

**Աշ.-** Երջանիկ է այն կինը, որը տանը խոհարար է, դրսում՝ թագուհի:

**Ուս.-** Հարց միայն տղաներին՝ ո՞վ է երջանիկ տղամարդ:

**Աշ.-** Նա է, ում կինը ի վիճակի է հասկանալ և գնահատել տղամարդու ինքնազոհությունը:

**Աշ.-** Նա է, ում կողքին կինը իրեն կին է զգում:

**Աշ.-** Նա է, ում կողքին կինն իրեն զգում է ապահով ու պաշտպանված:

**Աշ.-** Նա է, ով իր կողքին ունի երեխաներին նվիրված մայր:

**Աշ.-** Նա է, որի կինը իր կողքին է և՛ ուրախության, և՛ տխրության, և՛ դժվարության և՛ փորձությունների ժամանակ:

**Աշ.-** Նա է, ով ունի գեղեցիկ, խելամիտ, իմաստուն և անպայման շրջահայաց կին:

**Ուս.-** Իսկ ի՞նչ եք հասկանում«երջանիկ ծերություն» ասելով:

**Աշ.-** Երբ ծերության ժամանակ երիտասարդների համար լինես հենարան, այլ ոչ թե խոչընդոտ, ուսուցիչ, այլ ոչ թե մրցակից, աջակցող, այլ ոչ թե անտարբեր:

**Աշ.-** Երբ դեռ սեր է մնացել երաժշտության, թատրոնի, արտաքին աշխարհի, շրջապատիդ նկատմամբ:

**Աշ.-** Երբ իր կյանքի համեմատական բարձունքից ետ է նայում և տեսնում է, որ իզուր չեն անցել կյանքի օրերը:

**Աշ.-** Երբ ծերությանդ օրերին շրջապատված ես բարի, հոգատար և ուշադիր հարազատներով:

**Աշ.-** Երբ շրջապատված ես քեզ սիրող թոռնիկներով:

**Ուս.-** Մի բան եմ ուզում ձեզ ասել. միշտ հիշեք, որ դուք էլ եք մեծանալու, մեծահասակների հետ վարվեք այնպես, ինչպես որ դուք կուզենաք վարվեն ձեզ հետ: Կարծում եմ՝ այստեղ շատ տեղին կլինի կարդալ Գրիմ եղբայրների «Պապն ու թոռը» փոքրիկ պատմվածքը.

«Պապը շատ էր ծերացել: Նրա աչքերը լավ չէին տեսնում, ականջները ծանրացել էին, ձեռքերն ու ոտքերը ծերությունից դողում

էին այնպես, որ գդալը բերանը տանելու ժամանակ կերակուրը վրան էր կաթեցնում:

Այդ բանը չէին հանդուրժում որդին ու հարսը: Նրանք պապին իրենց հետ սեղան չէին նստեցնում, այլ վառարանի ետևի մի անկյունում և նրան ուտելու համար կավե ամանով էին կերակուր տալիս: Խեղճ ծերուկի աչքերը արցունքով էին լցվում, հա տխուր-տրտում նայում էր այն կողմը, ուր սեղանն էր պատրաստվում:

Մի անգամ կերակուր ուտելիս ծերունու ձեռքերը դողացին, ամանը գետնին ընկավ, կոտրվեց: Հարսն ու որդին ավելի բարկացան, նրանք մի փայտե պնակ գնեցին և այնուհետև դրանով էին ուտելիք տալիս իրենց հորը:

Ծերունին չորս տարեկան մի թոռնիկ ուներ: Մի անգամ մանկիկը, տախտակամածին նստած, փայտե իր էր շինում:

-Ի՞նչ ես շինում, զավակս,-հարցրեց մայրը:

-Փայտե պնակ եմ շինում,- պատասխանեց երեխան,- որ երբ հայրիկս ու մայրիկս ծերանան, նրանով նրանց կերակուր տամ:

Հայրն ու մայրը իրար նայեցին և ամոթից կարմրեցին: Դրանից հետո նրանք սկսեցին ծերունուն իրենց հետ սեղան նստեցնել և երբեք կոպիտ չէին վարվում նրա հետ »:

**Ուս.-** Հիմա էլ պարզենք, թե ովքեն են երջանիկ ծնողներ:

**Աշ.-** Այն ծնողը, որը վայելում է իր երեխաների սերն ու հարգանքը:

**Աշ.-** Այն ծնողը, որի օգնությամբ երեխաները հասել են իրենց նպատակին:

**Աշ.-** Այն ծնողը, որի երեխաները գտել են իրենց տեղը կյանքում:

**Աշ.-** Այն ծնողը, որի երեխաները կազմել են հաշտ ու խաղաղ ընտանիք:

**Աշ.-** Այն ծնողը, որի և՛ հարսն է լավը, և՛ փեսան:

## *Իմաստի ընկալման փուլ*

Այսքանից հետո անցնում ենք նովելի ընթերցմանը. ասեմ, որ վերնագիրը չեմ ընթերցում՝ թողնելով սովորողների գուշակմանը: Հրահանգավորում եմ, որ լինեն շատ ուշադիր, քանի որ վերնագրելու են յուրաքանչյուր ընթերցված հատված և պատասխանելու են որոշ հարցերի:

«Տոքթոռ Վահանյան սովորական բժիշկ մը չէ…»:

**Ուս.-** Այսպես է սկսվում մեր այսօրվա անցնելիք նովելը: Ըստ ձեզ՝ ինչու՞ սովորական բժիշկ չէ Վահանյանը:

Բոլոր պատասխանները լսելուց, քննարկելուց հետո շարունա-

կում եմ նովելի ընթերցումը, որպեսզի սովորողներն իմանան, թե ինչու Զոհրապը այդպես է բնութագրել նրան:

«… մարմնի հիվանդություններուն չափ ու, թերևս անոնցմե ավելի, հոգիի ցավերուն հետամուտ, հետաքրքիր բժիշկ է անիկա: Իր ըմբռնումին ու դատողության չափ՝ իր ներողության սահմանը ընդարձակ է: Գիտության ֆոռմյուլներուն, կամ իր արհեստին մեքենական կիրառումին մեջ տափկցած ու չքացած միտք մը չէ:

Իր հմտության մեծությունը՝ չոր ու ցամաք ապառաժի զանգվածին չի նմանիր բնավ, այլ դալար դաշտավայրի մը ծիծղուն երևույթը ունի:

Վաթսունի մոտ, մազը, մորուքը ճերմակած,տկարակազմ, բայց զվարթախոս մեկն է տոքթոռը:

Մահվան դեմ՝ իր քառասուն տարվան բժշկի մղած պայքարովը, մտերմություն մը հաստատած է կարծես անոր հետ, անոր ամեն դավերը ու խաղերը գիտե. անոր զարհուրելի, երբեմն հանկարծահաս ու երբեմն համեցող հարվածներուն բոլոր գաղտնիքները ուսումնասիրած է:

Իր խոսակցությունը օգտավետ դասերով, ուղիղ դիտողություններով ու իմաստուն խորհրդածություններով կը վխտա: Անձնական փորձառութենեն ու հիշատակներեն ընդելուզված պատմությունները հետաքրքրությամբ մտիկ կըրվին»:

Վերնագրում ենք այս հատվածն ու անցնում առաջ:

**Ուս. -** Իմացա՞ք, թե ինչու սովորական բժիշկ չէ Վահանյանը: Լավ, անցնենք առաջ ու շարունակենք ընթերցումը. «Քատը գյուղի իր տանը մեջ իրիկուն մը ժողովվեր էինք, և մարդոց համար ամենեն հետաքրքրական հարցումը մեջտեղ նետվեցավ հանկած»:

Այստեղ ընդհատում եմ ընթերցանությունը ու դիմում լսարանին.

-Կարող եք գուշակել՝ հավաքվածները ի՞նչ հարց սկսեցին քննարկել:

Առանց բացառության՝ լսում եմ բոլորի կարծիքները.

**Աշ.-** Հարցը վերաբերում էր քաղաքականությանը:

**Աշ.-** Խոսում էին սոցիալական իրավիճակին վերաբերող հարցերի մասին:

**Աշ.-** Քննարկում էին Երկրի իրավիճակին վերաբերող հարցեր:

**Աշ.-** Երիտասարդությանը վերաբերող հարցեր:

**Աշ.-** Կրթության որակին առնչվող հարցեր:

**Աշ.-** Վարվեցողության կանոններին վերաբերող:

**Աշ.-** Մարդու վնասակար սովորություններին վերաբերող:

**Աշ.-** Մարդկային առաքինություններին վերաբերող:

**Աշ.-** Աստվածաշնչյան թեմաներից բխող հարցեր:

**Աշ.-** Առողջ ապրելակերպին վերաբերող:

**Աշ.-** Հասարակությանը հուզող ժամանակի հրատապ հարցեր:

**Աշ.-** Առողջությանը վերաբերող:

Բոլորի պատասխանները լսելուց հետո նորից անցնում եմ ընթերցանության՝ զգուշացնելով, որ կարդում եմ քննարկվող հարցը. «Ո՞րն է հազար տեսակ մահերուն ամենեն քաղցրը, բժշկական և հոգեբանական կրկին տեսակետով»:

**Ուս. -** Ահա այն հետաքրքիր հարցը, որ սկսեցին քննարկել հավաքվածները: Ես ուզում եմ, որ այս հարցը դառնա նաև մեր քննարկման առարկան. դե, լսում եմ ձեզ:

Արտահայտվեցին ամենատարբեր կարծիքներ. ահա դրանցից մի քանիսը՝

**Աշ.-** Սրտի կաթվածը, քանի որ մարդ չի տանջվում:

**Աշ.-** Երբ մարդ չի գիտակցում իր մահը:

**Աշ.-** Հանկարծամահությունը:

**Աշ.-** Երբ մարդ չի մնում ուրիշի հոգածությանը:

**Աշ.-** Տատիկիս խոսքերն եմ ուզում կրկնել.«Չոր աչքով հող մտնեմ»:

**Աշ.-** Երբ որդիներն են ճանապարհում իրենց՝ բավականին տարիքն առած ծնողներին:

**Աշ.-** Երբ ապրելուց լավ է մահանալը:

**Ուս.-** Ինչպես ձեր հայտնած կարծիքների մեջ չկա համաձայնություն, այնպես էլ հավաքվածները չեկան հնդհանուր եզրակացության, թե որն է երջանիկ մահը: Դիմենք հեղինակին. «Հայտնված կարծիքներուն մեջ համաձայնություն չկար. առողջ ու կայտառ աղջիկ մը, որ Ռաֆայել կարդացած էր և դալուկ ու նիհար կազմվածքի մը կը տենչար, թոքախտի հյուծումն է, ըսավ, էն գեղեցիկ մահը. երիտասարդի մը կարծիքին նայելով՝ռեվոլվերի գնդակն է ուղեղին մեջ. ուրիշ մը՝ ծովահեղձ ըլլալը ամենեն քիչ տանջանք տվող վախճան մը ըլլալուն վրա պնդեց. քլորոֆորմը երկու կուսակից գտավ:

Բնության ու գիտության հնարած բոլոր միջոցները զատ-զատ քննվեցան ու քննադատվեցան. ամենքն ալ իրենց աղեկ ու գեշ կողմերը ունեին:

Տոքթոռ ինքը, մտիկ կըներ ամենուս, առանց բառ մը արտասանելու. վեճը կերկարեր ու համաձայնության մը գալե հեռու էինք:»

Այնուհետև խոսքը վերցնում է բժիշկը. «Ես,-ըսավ տոքթոռը, խոսքերնիս կտրելով- ամենեն քաղցր մահը տեսա, բայց չեմ կրնար

պնդել, որ ամեն անգամ մարդս կրնա զայն իր ձեռքին տակ ունենալ. մեկ հատիկ մահն էր ասիկա, զոր, իմ տեսած հազարավորներուս մեջեն, ոչ միայն ամենեն հեշտն էր կրնամ ըսել, այլ իրոք քաղցրն ու երջանիկն էր:

Պատմություն մը ուներ լեզվին ծայրը. խելոք կեցած տղոց պես մտիկ ըրինք զինքը:»

Այստեղ ընդհատում եմ ընթերցանությունը, վերնագրում ենք ընթերցված հատվածը ու հրահանգավերում սովորողներին, որ տասը րոպեի ընթացքում գրեն փոքրիկ շարադրություն, թե, ըստ իրենց, ի՞նչ պատմեց բժիշկը: Ժամանակը լրանալուն պես դադարեցնում ենք գրելը և լսում գրածները: Նորից իրարից բոլորովին տարբեր պատմություններ:

Սրանից հետո կարդում եմ բժշկի պատմությունը (բ գլուխ) ու սովորողների ուշադրությունը հրավիրում նովելի առանցքը կազմող կնոջ նկարագրության հետևյալ տողերի վրա.

«…քառասունը հազիվ թևակոխեր էր, բայց երեսունհինգ տարու չէր ցուցներ վրայեն. այն շատ սիրված կնիկներեն մեկն էր, որոնց սերունդը հետզհետե պակսելու, անհետանալու վրա է մեր մեջ»,

«Սուտ պարկեշտություններու, կեղծավոր կարմրություններու կինը չէր այն կինը. գլխեն մինչև ոտքը ամեն բան խիզախ ու համարձակ էր վրան»,

«Էն աղվոր երիտասարդները, էն շնորհքով մարդիկը իր շուրջն էին, թիթեռնիկներու պես դառնալով, երբեմն էրելով մրկելով, իր ջերմ ու կիզիչ մթնոլորտին մեջ»,

«Բոլոր կիները չէին քաշեր զինքը, կը նախանձեին, կը չարախոսեին իր վրա. անոր համարձակ վարմունքը իրենց պարտկված մեղքերուն, իրենց շինծու ամոթխածությանը դեմ պայծառ արև մը հալածիչ լույսին կը նմաներ՝խպնոտ ստվերներու վրա սփռված»,

«…մտքի ու սրտի տեր կին մըն էր»,

«-Դուք, բժիշկներ, կյանքը երկարացնելու աշխատող մարդիկ, կիներուն՝ այս հեք էակներուն կյանքը պահպանելու մի աշխատիք, քանի որ չեք կրնար այդ կյանքը իր թարմության, իր գեղեցկության մեջ անայլայլ ու հաստատ պահել. ճերմկած թափած մազերու, փոթփոթած երեսի, թուլացած միսի մը ավելի կամ նվազ տևողությունը նշանակություն չունի. կինը իր երիտասարդության, իր հրապույրներուն մեջ կրնա՞ք վար դնել, կեցնել»:

«Տարօրինակ բայց թերևս ամենեն ուղիղ ըմբռնումն էր իրենը՝ աշխարհիս մեջ կնոջ մը դերին և կոչումին վրա:Հույս և Ուրախությունն էր ինքը և անձնուրաց արիությամբ մը կը բաշխեր իր կենդանությունը, իր շնորհը, իր հրապույրը, երբոր ինքը պետք ուներ ատոնց…»:

«…իր հասակին ու արդուզարդին շքեղությամբը ամենայն զմայ-

լելիհ կը հանդիսանա»:

Վերնագրում ենք այս հատվածը ևս:

**Ուս.-** Լավ, այսքանը մեր նովելի հերոսուհու մասին, իսկ ինչպե՞ս եք պատկերացնում այն երիտասարդին, որին սիրահարված էր մեր հերոսուհին:

**Աշ.-** Բարեվայելուչ

**Աշ.-** Բարձրահասակ ու լայնաթիկունք

**Աշ.-** Ընդգծված ու շատ նուրբ դիմագծերով

**Աշ.-** Իր արժեքը իմացող, իրեն գնահատող

**Աշ.-** Մաքրասեր ու հետևողական իր անձի նկատմամբ

**Աշ.-** Շատ խնամված

**Աշ.-** Ժամանակակից հագուկապով

**Աշ.-** Հերոսուհուց տարիքով փոքր

**Աշ.-** Դոն Ժուանի բնավորությամբ

**Աշ.-** Բարձրաճաշակ ու խելացի:

**Ուս.-** Հիմա էլ կրկին դիմենք հեղինակին և տեսնենք, թե ինչպես է նա նկարագրել այն երջանիկ տղամարդուն, որին սիրահարված էր մեր այսքան գեղեցիկ, այսքան հրապուրիչ, այսքան խելամիտ ու շրջահայաց հերոսուհին.

«Երիտասարդը՝ տժգույն ու նիհար մեկն էր, զոր կիները իրարու ձեռքե կը խլեն»:

«Ուրույնություն մը ուներ անիկա, և իրեն հատուկ դրոշմը կար իրեն պատկանող ամեն բանի մեջ: Արհամարհոտ պզտիկ ժպիտ մը նուրբ ու սև պեխերուն ծայրը, կոպերը կտրած աչքերը, որոնք իր գիշերամոլ մարդու հոգնությունները կը պատմեին. ծես խրոխտություն մը, որ վաղաթարշամ երիտասարդությանը վրա ծավալած ծանրության պես բան մը կը նմաներ, կարծես ուսումներու և հսկումներու մեջ խորասուզված մարդու ծանրությունը:

Մտքի ու ճաշակի տեր մեկն էր:Իրավագիտություն սովորելու համար Եվրոպա եկած տարիներեն՝ միջակ վկայականով մը, բայց նրբացած իմացականությամբը վերադարձած էր հոս: Համալսարանին սրահներեն ավելի՝ գեղեցիկ կիներու քով, միանգամայն՝ տաղանդավոր մարդկանց և լավագույն ընկերության մեջ մտած ու ապրած էր, մսխելով փչացնելով ունեցածը և չունեցածը: Հոս ոչ փաստաբան եղեր էր և ոչ դատավոր. անկեղծությամբ, քաջությամբ խոստովանած էր իր ապիկարությունը: Ամեն ինչ չափավոր, գրեթե մեղմ էր իր վրա, իր ձայնը, իր շարժումները, բայց ատոր խերը կը տեսնայիր անձնավաստահ մարդու, կամ՝ ավելի ճիշտը ըսելու համար՝ իր գերազանցությունը գիտցող

մարդու մը անխռով հանդարտությունը: Աղջիկներու հետև չէր վազեր. երեխաներ անոնք՝ իր փորձ, գրեթե հայրական աչքին: Ձիջում մը, ստորացում մը պիտի ըլլար իրեն համար խռովել կույսի մը մաքուր հոգին՝այս կենցաղասեր մարդու մեջ ՝ ահա այս կերպ իր կյանքին հակասող ազնվություններ ալ կային… »:

**Ուս.-** Երիտասարդի արտաքին նկարագրությունից հետո Զոհրապն անմիջապես անցում է կատարում այս զույգի պարի նկարագրությանը. «Վալսին՝ տիկինն ալ ելավ այն երիտասարդին հետ, որ իր խոսակիցը եղած էր գրեթե շարունակ, և պարողներու մեջ ալ եղավ էն շնորհալի զույգը: Ձմայլած կը դիտեինք զիրենք.պար մը չէր այս, այլ շլացուցիչ բան մը, եթերային ու ցնորական սլացում մը, հափշտակություն մը, քերթված մը ամբողջ:

Մյուս պարողները իրենք ալ կանգ առեր էին այս զույգին շուրջը հիացած, հիացում, որուն մեջ նախանձը իր արդար բաժինը ուներ:

Հանկարծ… »:

**Ուս.-** Այստեղ ես մի անգամ դադարեցնում եմ ընթերցանությունը ու դիմում սովորողներին՝ ի՞նչ եք կարծում՝ ի՞նչ եղավ, կարո՞ղ եք նկարագրել դեպքերի հետագա ընթացքը:

Ու նորից ամենատարբեր պատասխաններն եմ լսում նրանցից. իհարկե լինում են նաև պատասխաններ, որոնք համընկնում են նովելի ընթացքին: Խրախուսելով բոլորի պատասխանները՝ նորից անդրադառնում ենք հեղինակին. «Հանկարծ սայթաքումի պես բան մը պատահեցավ, կինը իր բոլոր ծանրությամբը վար իյնալու պես եղավ. երիտասարդը մեծ ճիգով հաջեղեցավ իր գրկին մեջ բռնել զայն:

…Հյուրերը մեկիկ-մեկիկ մեկնեցան. բայց դեռ սանդուխներուն վրա անոնց ոտնաձայնը չմարած, անիկա իր հոգին ավանդեց, գլուխը իր սիրած տղուն գիրկին մեջ, նույնիսկ իր բույնին մեջ նետահար սպանված թռչունի մը պես, ժամանակ չձգելով, որ դեղ կամ դարման մը ընեմ:

Այս եղավ ահա իր վախճանը. կյանքին բոլոր երանությունները միացած խտացած էին այս երկվայրկյանին մեջ, ուր կյանքը կը թողուր . ասկե ավելի երջանիկ մահ մը կրնա՞ք երևակայել, պատրաստել, շինել ձեզի համար:

Հիվանդություններու, ցավերու մեջ չտառապեցավ, ծերությունը չփչացուց իր շնորհները. Պաշտելի ու պաշտված կինը մնաց մինչև վերջին վայրկյանին ու ընդհանուր զմայլումով մը ողջունված, իր սիրած տղուն թևին վրայեն գնաց հեռացավ անիկա: Բաժակի մը պես, որ կոչունքի ( հյուրասիրություն, հրավերք, ճաշկերույթ) մը սեղանին վրա, ցնծության մաղթանքներու, բախումներու մեջ կը փշրվի, փոխանակ դուրսը սպասավորներու ձեռքով, լվացքի աղտոտ ջուրին մեջ օր մը

կոտրելու անհետանալու, այս կինն ալ էն շնորհագեղ պատկերի մը մեջ գերագույն երջանկությունը զգացած ու պարգևած ժամուն անհետացավ»:

**Ուս.-** Վերնագրել ընթերցված հատվածը, գտնել շեշտված տրամադրությունը՝ համապատասխան մեջբերումներով:

## *Կշռադատման փուլ*

Դասի վերջին՝ կշռադատման փուլում տալիս եմ հետևյալ հարցերը.

1. Ի՞նչ տրամադրություն առաջացրեց նովելը:

2. Ի՞նչ երաժշտություն էիք մտովի լսում նովելի ընթերցման ժամանակ:

3. Ո՞ր գույնն է գերակշռում նովելում:

4. Ինչու՞ է նովելը վվերնագրված «Երջանիկ մահ»:

5. Հոգեբանորեն և տրամաբանորեն հիմնավորվա՞ծ է նովելի նմանօրինակ ավարտը, համոզի՞չ է նովելի լուծումը:

6. Որտե՞ղ է Զոհրապը տեսնում կյանքի գեղեցկություններն ու մեծությունները:

7. Նովելի ո՞ր մասերն են առանձնապես տպավորվել և հուզական: Ձեր խոսքը հաստատեք համապատասխան հատվածներից ընտրված օրինակներով:

8. Բերեք օրինակներ, ուր երևում են Զոհրապի՝ բառի, պատկերների խտացման ուժը:

9. Բացահայտեք գրողի վերաբերմունքը իր հերոսի նկատմամբ, ինչու՞ եք այդպես կարծում, ինչի՞ց է այն երևում կամ ինչու՞մ է դրսևորվում:

10. Ընդհանրապես հիվանդ մարդիկ զգուշավոր են լինում: Զոհրապը շեշտում է մի անզգույշ դեպք և դա արդարացնում սիրո աբեցողությամբ: Դուք էլ ե՞ք արդարացնում այդ քայլը:

11. Բնուրագրեք հերոսուհուն՝ օգտագործելով հեղինակային նկարագրությունները:

12. Ի՞նչ է ասում ձեզ գրվածքի ենթատեքստը:

13. Նովելից ընտրեք երկու բառակապակցություն և ապացուցեք, որ ձեր առանձնացրած օրինակում տվյալ մակդիրն այդ կապակցության մեջ ամենից հարմարն է:

Հարցերից հետո հանձնարարում եմ տնային առաջադրանք.

1.Խորհել հետևյալի շուրջը.«Աստված մարդուն ծեփեց կավից, և նրա մոտ չօգտագործված կավի մի կտոր մնաց:

-Էլ ի՞նչ ծեփեմ քեզ համար,-հարցրեց Աստված:

-Երջանկություն ծեփիր ինձ համար,-խնդրեց մարդը:

Աստված ոչինչ չպատասխանեց, միայն կավի չօգտագործված կտորը դրեց մարդու ափի մեջ»:

2.Շարունակել և ավարտել նախադասությունը.

Կյանքի այս խելացնոր պտույտում, ուր միմյանց մեջ խառնված են վայելքն ու տառապանքը, վիշտն ու խնդությունը, կորուստն ու ձեռքբերումը, հեշտ և գեղեցիկ կապրես, եթե …:

3.Մեկնաբանել հետևյալ նախադասությունը.«Պետք է վախենալ ոչ թե մահից, այլ փուչ կյանքից»:

# *Դաս-բանավեճ «Սպանված աղավնի» վիպակի օրինակով*

Տարբեր մարդկանց կողմից գեղարվեստական երկը տարբեր կերպ է ընկալվում՝ կախված անհատի մտածողությունից, ճաշակից, կրթությունից: Ինչքան էլ որ տարբեր ու հակասական լինեն ընկալումները, այնուամենայնիվ գրական երկի հիմքում ընկած է օբյեկտիվ ճշմարտություն, որի բացահայտման համար շատ կարևոր է ընտրված մեթոդը: Տարիների փորձը բերել է այն համոզման, որ այս ստեղծագործության ուսուցման ամենաարդյունավետ միջոցը դաս-բանավեճն է, որի միջոցով ուսուցիչը կարող է իրականացնել իր առջև դրված խնդիրներն ու նպատակները: Իսկ ո՞րն է դաս-բանավեճի առավելություն, ինչի՞ զարգացմանն ու ակտիվացմանն է այն նպաստում, ի՞նչ է խթանում, ի՞նչ է տալիս այն ուսուցչին և սովորողին:

Բանավեճը

***ակտիվացնում է*** աշակերտների ուսումնառության գործընթացը.

***խթանում է*** ուսումնասիրվող նյութի ստեղծագործական ընկալումը և իմացական հետաքրքրությունը.

***ապահովվում է*** ուսուցման գործընթացում սովորողների ներգրավվածության բարձր մակարդակ.

***միջոց է*** գիտելիքների ակտիվ փոխանցման.

***զարգացնում է*** արագ արձագանքման ունակությունները.

***զարգացնում է*** սեփական համոզմունքներն ու կարծիքը համապատասխան փաստարկներով ու տրամաբանությամբ պաշտպանելու կարողություն.

***զարգացնում է*** սովորողների բանավոր խոսքի կուլտուրան.

***զարգացնում է*** ինքնուրույն մտածողությունը.

***զարգացնում է*** մենախոսական կուլտուրան.

***մշակում է*** ուրիշի կարծիքն ու հայացքները հարգելու կուլտուրա.

***մշակում է*** բանավիճելու կուլտուրա.

***ձևավորում է*** փաստերի, ելույթների, դեպքերի ինքնուրույն համադրմամբ ու հակադրմամբ օբյեկտիվ եզրահանգումներ կատարելու հմտություն.

***օժտում է*** աշակերտներին նուրբ զգացողությամբ:

***օգնում է,*** որ ընկերները հաղորդակից լինեն միմյանց մտքերի, դատողությունների, ինչու չէ, նաև կենսափորձի:

Եվ որպեսզի բանավեճը ծառայի իր նպատակին, այսինքն՝ ակտիվացնի, խթանի, ապահովի, զարգացնի, մշակի, ձևավորի վերը թվարկածները, պետք է խստորեն պահպանել բանավեճի կանոնները: Ստորև

տրվում է բանավեճի կանոնները, որը վերցրել ենք «Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար. Երևան, Կրթության ազգային ինստիտուտ, 2004» գրքից:

## *Բանավեճի կանոնները*

1. Ցանկացած միտք, արտահայտություն, պնդում պետք է հիմնավորվի փաստերով:
2. Յուրաքանչյուր մասնակից պետք է արտահայտվելու հնարավորություն ունենա:
3. Պետք է խոսել կարճ և քննարկումը չդարձնել որևէ մեկի մեղաշնորհը:
4. Ամեն մի դիտողություն, տեսակետ պետք է ուշադրությամբ ուսումնասիրվի:
5. Քննարկման ընթացքում անթույլատրելի է անձը վիրավորելը, պիտակավորելը:
6. Խոսել միայն նախագահողի թույլտվությամբ:
7. Կրկնակի ելույթները կարող են լինել հիմնական ելույթներից հետո:
8. Անթույլատրելի է «լեզվակռիվը» մասնակիցների միջև:

Մեր կողմից էլ սրան ուզում ենք ավելացնել ևս մի քանի կետ.

9. Չընդհատել խոսողին:
10. Անհասկանալի հարցերը ձևակերպել գրավոր և հանձնել բանավեճը վարողին:
11. Պետք է տրամաբանական փաստարկները վկայակոչելով՝ հերքել անընդունելի

կեսակետերն ու կարծիքները:

12. Ուշադրությամբ լսել ելույթ ունեցողին, անհրաժեշտության դեպքում կատարել նշումներ:

## *Իսկ ո՞րն է բանավիճելու արվեստը*

Ա.Լեոնտևը նշում է, թե որպեսզի լիարժեքորեն և ճիշտ հաղորդակցվես բանավեճի ժամանակ, դու պետք է կարողանաս.

1. արագ և ճիշտ կողմնորոշվել հաղորդակցման իրավիճակում. գտնել քո խոսելու ամենահարմար պահը ոչ միայն ժամանակի, այլև մտքերդ այդ պահին «հավաքված», «ձևավորված» լինելու իմաստով: Այսինքն՝ պիտի որոշած լինես, որ քո մեջ ծագած մտքերը հենց այդ պահին պիտի ասես և հենց այդպես պիտի ասես:
2. արագ և ճիշտ նախագծել խոսքդ, որոշել ասելիքիդ բովանդակությունը: Այսինքն՝ պիտի իմանաս՝ ինչ պիտի ասես (ինչպիսի բովանդակություն պիտի ունենա խոսքդ), մտքերդ ինչ հաջորդականությամբ

պիտի դասավորես:

3. հմտորեն գտնել քո որոշած նախագծին համարժեք բովանդակությունը ներկայացնելու համար միջոցներ: Այսինքն՝ պիտի որոշես այն բառերը, արտահայտությունները, խոսքային կառույցները, որոնք միտքդ կներկայացնեն ճշգրտորեն:

4. ապահովել ունկնդիրների հետ հետադարձ կապը: Այսինքն՝ պիտի հետևես խոսքիդ ազդեցությանը (հասկացվում է, չի հասկացվում, կարիք կա՞ ինչ-որ մեկնաբանությունների և այլն), ունկնդիրների արձագանքին (հետաքրքրություն ներկայացնու՞մ է խոսքիդ նյութը, թե ոչ) և ըստ դրանց՝ կամ նույն ձևով շարունակես խոսել կամ փոխես ինչ-որ բան, կամ գուցե և ավարտես խոսքդ, ամփոփես:

Այս չորս քայլերից որևէ մեկի անտեսումը կամ խախտումը խոսքային գործունեությունը կդարձնի անարդյունավետ:

Բանավեճ կարող է ծավալվել ամենատարբեր թեմաների շուրջ: Դաս-բանավեճը մտքերի փոնանակում է, որը պետք է ծառայի ուսուցանվող նյութի համակողմանի և խոր ընկալման, ուստի բանավեճի թեման պետք է պարունակի ներհակ կարծիքների կռվաններ, որն էլ իր հերթին կնպաստի բանավեճի ոչ ստիպողաբար, այլ բնական ծավալմանը: Դաս-բանավեճը վարում է ուսուցիչը:

Ուսուցչի նպատակն է այս դասով ձևավորել և հարստացնել սովորողների բարոյական աշխարհայացքը, դաստիարակել բանավիճելու կուլտուրա, դպրոցականների մեջ զարգացնել ուսումնասիրվող նյութում գլխավորը, էականը առանձնացնելու, ուսումնասիրվող փաստերը համեմատելու, իր մտքերը տրամաբանված շարադրելու, ընդհանրացնելու կարողություն:

Ուսուցչի բոլոր ջանքերն ապարդյուն կլինեն և չեն տա ցանկալի արդյունք, եթե գրական երկը վերլուծելիս և առհասարակ դասավանդման գործընթացի ժամանակ պատշաճ տեղ չհատկացվի սովորողների ինքնուրույնությանն ու ակտիվությանը:

Վիպակում ծավալված դեպքերի, մարդկանց փոխհարաբերությունների, կերպարների, ստեղծագործության բովանդակության մասին ոչինչ չեմ ասում և ոչ էլ թույլատրում եմ կարդալ վիպակի մասին որևէ քննադատական-վերլուծական հոդված, որպեսզի սովորողները հայտնեն իրենց սեփական կարծիքները, այլ ոչ թե կրկնեն ուրիշների ասածները:

Գրականության դաստիարակչական հնարավորություններն անսահման են:

«Սպանված աղավնի» վիպակը ուսումնասիրելիս առանձնացնում եմ դաստիարակչական բնույթի հետևյալ հարցերն ու խնդիրները.

1. Զգացմունքների դաստիարակություն (սեր, ատելություն, կարեկցանք, միջանձնային հարաբերությունների կուլտուրա).

2. Խորհրդածություններ սիրո, ամուսնության, հավատարմության հարցերի շուրջ.

3. Անտարբերության վնասակարությունը, վտանգավորությունը.

4. Քաղքենիական կեղծ բարեպաշտության ու բարոյախոսության քննադատություն:

Գրականության դասավանդման հաջողությունը, դասի նկատմամբ հետաքրքրության առաջացումը ամենից առաջ ուսուցման ճիշտ մեթոդն ընտրելն է, որն էլ բերում է գրական երկի պատշաճ ներկայացմանը: Հենց այս է պատճառը, որ այս վիպակի ուսուցման համար ընտրել եմ դաս-բանավեճի մեթոդը:

Ներածական խոսքում ասում եմ, որ գործ ունենք մի ստեղծագործության հետ, ուր քննարկվում են կենցաղային-բարոյական թեմաներ, մարդու և միջավայրի, անհատի և հասարակության, շրջապատի անտարբերության, սիրո, կնոջ, ընտանեկան կյանքի,երկու սեռերի փոխհարաբերության հարցեր:

Մեկ նախադասությամբ ձևակերպում եմ, թե ինչ է վիպակը. վիպակը էպիկական ժանրի ստեղծագործություն է. վեպից տարբերվում է նրանով, որ իր մեջ ընդգրկում է կյանքի ավելի նեղ ոլորտ, պատկերում է ավելի սահմանափակ միջավայր, հանդես է բերում սակավաթիվ հերոսներ:

Դաս-բանավեճի ժամանակ շատ եմ կարևորում նաև սովորողների նստելու դիրքը: Սեղանները դասավորում ենք ո-աձև, որպեսզի բոլորը տեսնեն և նայեն միմյանց:

Իսկ այժմ ներկայացնեմ այն հարցերը, որոնք շոշափում ենք դաս-բանավեճի ժամանակ:

Ենթադրենք՝ Սառան և Թուսյանը նստած են մեր դիմաց: Ի՞նչ կարող եք ասել նրանց պաշտպանելու կամ մեղադրելու համար:

**1**. - Ինչու՞ է Նար-Դոսն իր վիպակը վերնագրել«Սպանված աղավնի»:

**2**.- Ո՞վ է Թուսյանը: Իր իսկ խոստովանությամբ. «…ինքն էլ չգիտե, թե ինչ է ինքը-մի սրիկա՞, թե՞ շատ սովորական մի մարդ, որոնցով լիքն է աշխարհս…»:

-Իսկ ըստ ձեզ՝ ո՞վ է նա:

**3**.- Հեղինակի առաջին եզրակացությունը Թուսյանի մասին այս է.«…Մի գիծ այդ բնավորության մեջ-թեև բացասական-կարծես թե գրավեց ինձ…նա ցինիկի պես անկեղծ էր, լրբի պես համարձակ և երեխայի պես անփույթ»:

- Ձեզ գրավե՞ց Թուսյանի բնավորության այս գիծը:

**4**.- Թուսյանն ունի կյանքից օգտվելու իր սկզբունքը. «Խլիր կյանքից այն ամենը, ինչ որ հաճույք կարող է պատճառել քեզ, և ոչ մի բանի մասին մի մտածիր»:

-Ինչո՞վ է վնասակար Թուսյանի փիլիսոփայությունը: Կարո՞ղ եք այն հերքել փաստերով: Իսկ ո՞րն է կյանքից օգտվելու ձեր սկզբունքը:

**5**.- Թուսյանը կյանքը համարում է սոսկ «րոպեական հաճույք և հաճոյական րոպեների մի շարահար շղթա:

-Արդյո՞ք ճիշտ մոտեցում է կյանքին կամ արդյո՞ք պետք է այդպես ընկալել կյանքը:

**6**.- Թուսյանը օրվա մարդ է, չունի հեռանկարներ. «Քերականության միջից պետք է ջնջել ապառնի ժամանակը:Ապագա չկա,որովհետև անհայտ է, իսկ ինչ որ անհայտ է, այդ մասին մտածելն ու հոգալը, բնականաբար, հիմարություն է: Վաղվա մասին մտածում են վախկոտները, այսինքն՝ նրանք, որոնք վստահություն չունեն իրենց ուժերի վրա»:

- Համամիտ ե՞ք այս ձևակերպմանը:

**7**.- «Հսկայական հիմարներ եմ համարում առհասարակ այն մարդկանց, որոնք ներկան զոհում են ապագայի համար»: Սրանք Թուսյանի խոսքերն են:

-Ինչպե՞ս բացատրել սա:

**8**.- Մի բան, որով կարող եմ պարծենալ, այդ այն է, որ ոչ ոքից և ոչ մի բանից չեմ քաշվում, որովհետև քաղաքավարությունը, համեստությունը, ամոթը և այլ մնան, այսպես կոչված, առաքինությունները քողարկված կեղծավորություններ եմ համարում, որ մարդիկ հնարել են իրենց վատ ներքինը ծածկելու համար, ինչպես աղբակույտը ծածկես թավշյա ծածկոցով: Տկլոր երեխան գլխիգլոր է գալիս, ցուցահանելով իր բոլոր հրաշալիքներն առանց ամաչելու: Ինչու՞: Որովհետև,- կասեիր դու,- նրա մեջ դեռ չի զարթնել ամոթի զգացումը: Իսկ ես ասեմ՝ որովհետև նրա հոգին դեռևս չի ապականվել: Ապականված հոգին է միայն, որ ամոթ է զգում:

- Ի՞նչ կասեք այս մասին:

**9**.- Սառային նա սկզբում սիրել է, հետո միանգամայն անկեծ կերպով ասում է՝ հեռացա, մոռացա:

-Ի՞նչ եք կարծում՝ դա եղել է իսկակա՞ն սեր կամ արդյո՞ք Թուսյանը սիրել է Սառային:

Խնդրեմ ասեք իսկական սիրո ձեր բանաձևը:

**10**.- Թուսյանը կարծես մի պահ, միայն մի պահ լրջանում է՝ լսելով Սառայի մահվան լուրը: Թվում է՝ նրա հոգում էլ արթնանում է մարդկային խիղճը: Բայց միայն թվում է: Ռոպեական բռնկման պահին փորձում է ինքնասպանություն գործել, բայց իսկույն սթափվում է.«Ես կենդանի մարդ եմ, սիրում եմ կյանքը և հանուն այդ սիրո պիտի շարունակեմ զոհել ամեն ինչ և ամենքին, ով կհամարձակվի խոչընդոտ կանգնել իմ ճանապարհին»:

-Այս մասին ի՞նչ կասեք:

**11.-** Սառան իր անկումը վերագրում է այն հասարակական պայ-

մաններին, որոնք սնուցել են Ռուբեն Թուսյանի նման բարոյապես փչացած մարդու. «Եվ դուք համարձակվում եք այդ ասել ինձ, ինձ, որ ոտից գլուխ անիրավության մի զոհ եմ և շուրջս համակ հանցավորներ եմ տեսնում: Ե՞ս հանցավոր, ես, և ոչ այն սրիկան, որ խորտակեց իմ մատաղ կյանքը, ե՞ս, և ոչ այն հասարակությունը, որ հանդուժում է իր մեջ այդպիսի սրիկաների, ե՞ս հանցավոր, որովհետև աշխարհի և մարդկանց հանդեպ պայծառ հայացք եմ ունեցել... Օ՜, այս ինչ անիրավ աշխարհ է, ինչ անիրավավ...Այս ինչ անտարբերություն և անարդարություն է, որ տեսնում եմ շուրջս...Ո՞ր մեղքիս համար է, որ գցելել են ինձ այսպես մենակ, անօգնական»:

- Իրավացի՞ է Սառան:

**12**.- «...Քանի որ ես ուրիշ հազարների պես չեմ կծկվել...ինքս եմ դուրս եկել ցույց տալու աշհարհին անպատվությունս...և վրեժ եմ պահանջում...շատ տարօրինակ է թվում ձեզ...որովհետև չպետք է անեն... որովհետև դա ամոթ է, սովորական մորալից դուրս մի բան է»:

- Կարո՞ղ ենք սա համարել Սառայի՝ միանգամայն իրավացի ինքնագնահատականը:

**13**.- Բայց արդյո՞ք Սառան «սպանված աղավնի է», զոհ,-հարցնում է բանասիրական գիտությունների թեկնածու Թեհմինա Մարությանը:

-Սառան «սպանված աղավնի» չէ, նա «սպանողն է».«սպանված աղավնին» անմեղ ու անլեզու երեխան էր, որին սպանեց Սառան, կործանեց նաև Գարեգինին,-պատասխանում է իր հարցին բանասերը:

-Դուք ի՞նչ կասեք այս ձևակերպմանը, համաձա՞ն եք բանասերի հետ:

**14**.- Ո՞վ է այս վիպակում իրական զոհը ըստ ձեզ: Սառա՞ն: Բայց Սառան ինքն անձնատուր եղավ Թուսյանին. չկար բռնություն, կար փոխադարձ սեր:

**15**.- Կարելի՞ է այսպես ձևակերպել. «Սառայի կործանման պատճառը ոչ թե Թուսյանն է, այլ հենց ինքը՝ իր անձնապաշտությամբ»:

**16**.- Ըստ գրականագետ Ստեփան Թոփչյանի՝ Սառան և՛ մաքրության, և՛ լուսե հմայքի մարմնացում է, և՛ անմեղ զոհ:

- Դուք էլ ե՞ք այդպես կարծում:

**17**.- Ճի՞շտ էր մտածում Սառան այս կամ այն արարքը կատարելիս կամ ուրիշ ի՞նչ կերպ կարող էր վարվել, համոզի՞չ են նրա արարքները, թե ոչ:

**18**.- Զուգահեռներ անցկացրեք Սառայի, Նար-Դոսի «Ադամամութին» պատմվածքի Շուշանիկի և Գր. Զոհրապի «Փոստալը» նովելի հերոսուհու՝ Տիգրանուհու միջև: Ու՞մ եք մեղադրում:

**19**.- Թուսյան. «...Մինչդեռ իմ սպանածը միայն մի աղավնի էր: Նա աղի արցունք էր թափում մի անպետք թռչունի համար և հանկարծ ինքն

իր ձեռքով սպանում է իր արգանդից նոր ելած մանուկը»:

-Ի՞նչ կասեք սրա մասին:

**20**.- Կասեք հեղինակի դիրքորոշումը Սառայի հանդեպ. արդարացնում է Նար-Դոսն իր հերոսին, թե՞ մեղադրում: Ի՞նչ հիմքեր ունեք ձեր ասածը պնդելու:

**21**.- Սառայի ողբերգության պատճառն իմ գնահատմամբ:

**22**.- «Թշնամիներից մի վխեցիր, վատթարագույն դեպքում նրանք կարող են քեզ սպանել: Մի վախեցիր ընկերներից, վատթարագույն դեպքում նրանք կարող են դավաճանել քեզ: Վախեցիր անտարբեր մարդկանցից, նրանք չեն սպանում, չեն դավաճանում, բայց նրանց լուռ համաձայնությամբ է, որ աշխարհում դավաճանություն և սպանություն գոյություն ունի»:

Ինչ՞ կապ ունի Ռոբերտ էբերդհարդտի այս խոսքերը մեր նյութի հետ:

Բանավեճի ժամանակ անխուսափելիորեն շոշափվում են տղամարդու բարոյական նկարագրի, կանացի արժանապատվության, աղջկական ամոթխածության և բազմաթիվ այլ հարցեր, որոնք դեռահասների մեջ արթնացնում են ինքնադաստիարակման, ինքնակատարելագործման, ինքնատիրապետման ձգտում:

Երբ ավարտում ենք բանավեճը, այպիսի առաջադրանք եմ տալիս սովորողներին.

տղաները պետք է խորհուրդ տան աղջիկներին, իսկ աղջիկներն էլ՝ տղաներին: Հինգ րոպե ժամանակ եմ տալիս առաջադրանքը կատարելու համար, այնուհետև անցնում ենք խորհուրդների ընթերցմանը:

Ուսուցչի գնահատման աշխատանքը հեշտացնելու համար տրվում է բանավեճի գնահատման թերթիկ, որը վերցված է «Մասնագիտական զարգացման ձեռնարկ» գիքից:

## Աշակերտներ

| | | Ա | Բ | Գ | Դ | Ե |
|---|---|---|---|---|---|---|
| +2 | քննարկվող հարցի մասին որոշակի դիրքորոշումը | | | | | |
| +1 | էական, տեղին միտք, դիտարկում, դիտողություն | | | | | |
| +2 | ապացույցներ, որոնք հաստատում են միտքը կամ փաստացի տվյալների մեջբերումը | | | | | |
| +1 | քննարկման մեջ մեկ ուրիշի ներգրավումը | | | | | |
| +1 | հարցեր՝ միտքը ճշգրտելու կամ քննարկումը շարունակելու նպատակով | | | | | |
| +2 | համեմատություններ գտնելը, զուգահեռներ անցկացնելը | | | | | |
| +2 | ընդհանուր հետաքրքրություններ կայացնող մտքերի բացահայտումը | | | | | |
| +2 | ոչ տեղին դիտողությունների բացահայտումը | | | | | |
| -2 | անուշադրությունը կամ ուրիշների ուշադրությունը շեղելը | | | | | |
| -2 | խոսողին ընդհատելը | | | | | |
| -1 | ոչ տեղին դիտողությունը | | | | | |
| -3 | քննարկման մենաշնորհումը | | | | | |
| -3 | անձնական վիրավորանք | | | | | |
| | ընդհանուր միավորները | | | | | |

# *Վահե Հայկի «Կաթիդ փարան չմոռնաս, մամա» պատմվածքի ուսուցումը*

Սովորողների համոզմունքներն ու կենսադիրքորոշումը ձևավորելու հոգեբանական բարդ աշխատանքն արդի պայմաններում դպրոցի առաջնահերթ խնդիրներից մեկն է: Ուսուցման ընթացքում պետք է հմտորեն զուգակցվեն կրթության և դաստիարակության հարցերը: Փաստական տվյալներն ինքնին աննպատակ բնույթ են կրում, եթե աշակերտը չի սեփականացնում փաստերից բխող եզրակացությունները:

Գրականության ուսուցչի հիմնական նպատակը պետք է լինի գրականության դասը ծառայեցնել հիմնականում երկու խնդրի լուծման. ա) աշակերտներին սովորեցնել կարդալ, մեկնաբանել, վերլուծել, բնութագրել կերպարները, բացահայտել գաղափարական և գեղարվեստական առանձնահատկությունները, անել ինքնուրույն եզրահանգումներ, փաստարկել ու հիմնավորել իր կարծիքը, բ) դաստիարակել գրական ստեղծագործության առաջատար գաղափարներով և գեղարվեստական արժանիքներով:

Գրականությունը լայն հնարավորություն է ընձեռում սովորողների բարոյագիտական համոզմունքների ձևավորման համար: Աշակերտների մեջ մարդասիրություն, ծնողասիրություն, պարտքի զգացում դաստիարակելու և սերմանելու մեծ հնարավորություն է տալիս Վահե Հայկի «Կաթիդ փարան չմոռնաս, մամա» պատմվածքը: Այս պատմվածքն ուսումնասիրելիս իրականացնում եմ դաստիարակչական բնույթի հետևյալ խնդիրը.

1. Զգացմունքների դաստիարակություն (սեր, ատելություն, կարեկցանք, ապրումակցում, միջանձնային հարաբերությունների մշակույթ).

2. Ծնողասիրության դաստիարակություն և պարտքի զգացման գիտակցում.

3. Հարգանք սրբությունների նկատմամբ:

Դասի առաջին՝ խթանման փուլը սկսում եմ պրիզմայի կառուցմամբ.

## *Պրիզմա*

Պրիզման մտածողության ընթացքը պատկերավոր, շոշափելի դարձնելու պարզ ձև է: Պրիզմայի հիմնակն նպատակը ներկայացվող գաղափարի, հասկացության վերաբերյալ ենթագիտակցական ոլորտում եղած ասոցիատիվ կապերի վերհանումն ու արձանագրումն է: Պրիզմանան կիրառվում է դասի խթանման փուլում՝ ապահովելով ինչ-

պես աշակերտների հետաքրքրությունն ու ակտիվությունը, այնպես էլ նյութի ուսումնասիրման գործընթացի արդյունավետ սկիզբը:

***Ընթացքը***

1. Գրատախտակի կենտրոնում գրվում է այն հիմնական հասկացությունը, միտքը, թեման, մեկնաբառը, ինչը ենթակա է ուսումնասիրության:

2. Հաջորդ քայլը առանց քննարկման գրանցվում են մեկնաբառի ազդեցությամբ մտքում ծագած առաջին երկու պատահական բառերը: Հարկ է նշել, որ խմբային աշխատանքի ժամանակ գրանցվում են առաջին հնչած բառերը: Պետք է հետևել, որ հնարավորինս կանխվեն գիտակցական մակարդակում ծնված բառերի ու հասկացությունների գրանցումը և խրախուսվեն ենթագիտակցական ոլորտում ծնված ասոցիատիվ կապերը:

3. Ասոցիատիվ մտածողության վրա հենվող այս ընթացքը շարունակվում է մինչև վերջ: Առավել արդյունավետ է երեք շերտով բաղկացած պրիզման (ինչպես տրված է օրինակում), որից հետո պրիզման սկսում ենք փակել: Այս անգամ բառը լրացվում է նախորդ երկու բառերի ասոցիատիվ կապը հաշվի առնելով:

4. Պրիզման եզրափակվում է վերջնաբառով:

5. Պրիզմայի ամփոփիչ քայլը մեկնաբառի ու վերջնաբառի միջև տրամաբանական կապ գտնելն է, որը պետք է իր արտացոլումը գտնի մեկ նախադասության կամ մտքի մեջ. վերջինիս կարելի է անդրադառնալ հետո՝ նյութի ամփոփման ժամանակ:

6. Որպեսզի միաժամանակ զարգանա նաև բանավոր խոսքը, կարելի է հանձնարարել պրիզմայի եզրաբառերով կազմել նախադասություն:

7. Այսպիսով, եթե պրիզմայի կառուցման ամբողջ ընթացքում ակտիվանում է ենթագիտակցական ոլորտը, ապա վերջին քայլում մեկնաբառն ու վերջնաբառը մեկ նախադասության մեջ կապելիս կամ եզրաբառերով նախադասություն կազմելիս, ակտիվանում է գիտակցական ոլորտը:

Ստորև բերված է վերոհիշյալ քայլերով կատարված մի օրինակ «մայր» բառով: Նույն այս բառով կարող են ստացվել պրիզմայի ամենատարբեր բազմաթիվ տարբերակներ:




Պրիզման կառուցել ավարտելուց հետո պահանջում են աջ և ձախ եզրաբառերով կազմել նախադասություններ: Այնուհետև աշակերտներին հայտնում եմ դասի վերնագիրը ու որոշ կենսագրական տեղեկություններ Վահե Հայկի մասին.

## *Վահե Հայկի կենսագրությունը*

Վահե Հայկը (Տինճյան Վահե Մկրտչի) ծնվել է Արևմտյան Հայաստանի Խարբերդ քաղաքում 1896թ. հունիսի 18-ին: Փայլուն առաջադիմությամբ ավարտելով Խարբերդի «Եփրատ» քոլեջը՝1915թ. գնում է Պոլիս՝ ուսումը շարունակելու: Սակայն այստեղ սկսվում են հալածանքները գավառացի հայերի նկատմամբ: Վահեն թաքնվում է մի հայի տանը՝նրանց զավակի՝ Հայկի անձնագրով: Իր և նրա անունով էլ հետագայում նա կազմում է իր գրական անունը՝ Վահե Հայկ: Սկսվում են քեմալական խստությունները, և շատերի նման Վահե Հայկը նույնպես հեռանում է Պոլսից:Անցնում է Հունաստան, ապա 1920թ. ԱՄՆ և Բոստոնի համալսարանում հետևում գրականության, պատմության և իրավաբանության դասընթացներին՝ միաժամանակ թղթակցելով սփյուռքահայ թերթերին ու հանդեսներին: Համալսարանն ավարտելուց հետո Վահե Հայկը հրավիրվում է խմբագրելու Կալիֆոռնիայի «Նոր կյանք» թերթը: Երկար տարիներ եղել է «Հայաստանի կոչնակ» թերթի խմբագիրը: Վահե Հայկը ջերմ կապերով էր կապված մայր հայրենիքի

հետ. մի քանի անգամ այցելել է Հայաստան: 1930թ. Վահե Հայկը հրատարակեց իր առաջին ժողովածուն՝«Հայրենի ծխան» խորագրով: Նույն խորագրով նա հետագայում լույս է ընծայում պատմվածքների հինգ հատոր: Առանձին գրքերով հրատարակել է նաև բանասիրական, պատմագիտական ուսումնասիրություններ:Ամեն ժամ և ամենուրեք ջանացել է իր գործով և գրչով նեցուկ լինել հայապահպանման գոյամարտին: Եղել է Ռամկավավար ազատական կուսակցության գործիչ: Մահացել է 1983թ.:

Կենսագրական այս տվյալները հաղորդելուց հետո հարկ եմ համարում հակիրճ խոսել գրողի որոշ ստեղծագործությունների մասին՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ աշակերտները ծրագրի շրջանակներում այլևս չեն անցնելու Վահե Հայկի ստեղծագործություններից, և իրենք էլ սեփական նախաձեռնությամբ չեն կարդալու:

Վահե Հայկը ուշադրությունը բևեռում է մարդկային բարոյական հարցերի, հոգեկան ապրումների բացահայտմանը: Պատմվածքներում գրողը քննում է անհոգի զավակների կողմից ծնողին լքելու, արհամարհելու, ծերանոց տանելու, նվաստացնելու անմարդկային բարքերը: Աշակերտներին ասում եմ, որ գրողը այդ պատմվածքների մեջ ընդգծում է հատկապես ծնողների հոգեկան ապրումները, տառապանքները, որ որքան էլ որդիները արհամարհում ու նվաստացնում են իրենց ծնողներին, վերջիններիս սերն ու գորովանքը չի պակասում դեպի իրենց անարժան զավակները:

***«Վերը Աստված կա, Կարապետ»*** պատմվածքի հերոսը՝ Կարապետը, որը բարձր դիրքի է հասել հոր շնորհիվ, հորը տարել է ծերանոց և նույնիսկ չի էլ հետաքրքրվում նրանով: Չնայած իր տառապանքներին, արհամարհված ու հարազատների կողմից լքված վիճակին՝ ծերունու ուշքն ու միտքը զավակն ու թոռն են: Իմանալով, որ թոռընիկը հիվանդանոցում է՝ փախչում է ծերանոցից, որպեսզի գնա թոռանը տեսության: Անցնելով ծաղկավաճառանոցի մոտով՝ փորձում է աղբարկղի միջից կոտրված ծաղիկներ գտնել, քանի որ դրամ չուներ ծաղիկներ գնելու ու չէր էլ ուզում դատարկաձեռն գնալ: Եվ հանկարծ այդ միջոցին լսում է անսիրտ որդու գայլային ոռնոցը. «Ի՞նչ գործ ունիս, ցնդած մարդ, հոս եկեր ուտելիք կը փնտրես, անպատկառ մարդ...»: Ասես սառը ջուր լցրեցին ծերունու գլխին: Ինչ նպատակով և ինչի համար էր եկել ու ինչի արժանացավ իրեն մոռացած ու հարազատներին նվիրված ծերունին:

«Մարգար աղան զարհուրելի սարսուռ մը ապրեցավ... Ձեռքերը կոտրված ճյուղերու պես վար ինկան, ծունկերը սկսան դողդողալ»: Արցունքները մշուշում են աչքերը և հազիվ կարողանում է շշնջալ. «Հերիք է, հերիք, յավրում, վերը Աստված կա, Կարապետ...Առաջ ինծի ըսեիր, թե ինչպես է անուշիկ Գևորգս, անուշիկ թոռնիկս, ա՛խ, ա՛խ...»:

***«Էսցեղ ճակտի գիր կ՚ըլլի, Աստված»*** պատմվածքի մեջ Սաթենիկը՝ հարսը, իր դաժան ու ամնարդկային վերաբերմունքով ողբերգության պատճառ է դառնում: Կինը, որ երկար տարիներ միայնակ ապրում էր Սիրիայում, գալիս է Ամերիկա՝ որդու ընտանիքին տեսության: Մի օր էլ, քանի որ տունը ամերիկացի հյուրեր պիտի գային, անհոգի հարսը ծեր սկեսրոջը նստեցնում է ցուրտ ավտոտնակում ու պատվիրում՝ «չըլլա որ վերև գաս, լավ չէ, որ քեզ տեսնեն»: Խեղճ պօառավին ոչինչ չէր մնում անելու, քան լուռ ու մունջ ենթարկվելու հարսին: Ցուրտ ավտոտնակում մրսում է ծեր կինը, հիվանդանում ու անտրտունջ մահանում, քանի որ «համակ սեր ու գորով» ուներ իր սրտում նրանց նկատմանբ:

***«Մամիկ ու թոռնիկ»*** պատմվածքը նման մի ողբերգություն է: Լսելով չարհոգի կնոջ անվերջանալի տրտունջներն ու բողոքները՝ տղան մորը ուղարկում է մի ուրիշ քաղաք՝ հեռավոր մի ազգականի մոտ: Որդուց, թոռից բաժանումը ծանր տանող մայրը կաթվածահար է լինու ու մահանում: Ու այսքանից հետո նրա վերջին խնդրանքն է լինում իր թոռնիկի նկարը դնել իր կրծքին:

Ինչպես այս երեք, այնպես էլ «Կաթիդ փարան չմոռնաս, մամա» պատմվածքներում Վահե Հայկը որդիների անհոգի, անմարդկային, դաժան ու անսիրտ վերաբերմունքին հակադրում է ծնողների մեծահոգությունը, անհիշաչարությունը, նվիրումը, սերն ու խանդաղատանքը:

Այսքանով ավարտում եմ խթանման փուլի աշխատանքն ու անցնում դասի հաջորդ փուլին՝ իմաստի ընկալմանը:Առանց նախաբանի, պատմվածքի մասին առանց մի խոսք ասելու ընթերցում եմ պատմվածքը՝ պահպանելով արևմտահայերենին բնորոշ առոգանությունը, թախծի ու զայրույթի նրբերանգները:Հայտնի փաստ է, որ գրականության դասի արդյունավետությունն ավելի է բարձրանում, երբ ուսուցման ընթացքում հմտորեն զուգակցվում են ընթերցանության հուզական և տրամաբանական որակները, երբ աշակերտի համար բացահայտվում են հույզը պայմանավորող գործոնները: Պետք է կարդալ այնպես, որ ուսուցչի ձայնը, շեշտվող բառի, նախադասության հնչերանգը համապատասխանի մարդկային հոգու ելևէջներին, հնչի այնպիսի հաճախականությամբ ու երանգների բազմազանությամբ, որ աշակերտներին լրիվ տեսանելի դառնան և՛ մամային սրտին բացված խորունկ վերքերը, և՛ խանութպանի՝ նույնիսկ կենդանական աշխարհին ոչ բնորոշ անտարբերությունը: Ապահովելով պատմվածքի հուզականությունը՝ աշակերտների մեջ կբևեռացնենք անմարդկայինը, այլանդակն ու տգեղը՝ նպատակամղելով նրան դեպի մարդկայինը, բարին ու գեղեցիկը:

Ընթերցումից հետո բացատրում եմ տեքստում եղած անծանոթ և անհասկանալի բառերը և անցնում դասի երրորդ՝ կշռադատման փուլին, որն իրականացնում եմ հարցերի միջոցով.

1.- Ի՞նչ ընդհանուր բան նկատեցիք վերոհիշյալ պատմվածքներում, ո՞րն է այդ պատմվածքների միտքը:

2.- Ո՞ւմ նկատմամբ և Ի՞նչ խոհեր, զգացումներ արթնացրեց պատմվածքը ձեր մեջ:

3.- Հարազատությունը պայմանավորված է արյունակցակա՞ն կապով, թե՞ մարդկային ջերմ վերաբերմունքով, սրտացավությամբ, մտերմությամբ ու հարգալից վարվեցողությամբ:

4.- Մայրն ի՞նչ տրամադրությամբ է մտնում որդու խանութը և ինչու՞:

5.- Բացատրեք «Մամա, անուշիկ, անտեր մամա» արտահայտությունը:

6.- «-Բարև, մամա, ինչպե՞ս ես, աղե՞կ ես: Պառավը կնայի ինձի նախ ապշությամբ և զարմանքով»,- գրում է հեղինակը: Ի՞նչն էր այդ զարմանքի պատճառը:

7.- Ի՞նչ կարող եք ասել նպարավաճառի բնավորության գծերի մասին:

8.- Որդին այպե՞ս պիտի հատուցի ծնողին, թե՞...:

9.- Ինչո՞վ եք հիմնավորում հեղինակի զայրույթը:

10. Ի՞նչ կանեիք դուք, եթե այդ պահին պատահաբար հայտնվեիք խանութում:

11.- Ձեր շրջապատում կա՞ն խանութպանի նմանները:

12.- Կա՞ ձեր մեջ մեկը, որ կարող է արդարացնել որդու արարքը, և արդյո՞ք արդարացում ունի մորն արհամարհելը, նվաստացնելը, վիրավորելն ու կոպտելը:

13.- Պատմվածքի վերջին պարբերության մեջ կան կախման կետեր: Էլ ի՞նչ է ուզել ասել հեղինակը:

14.- Հեղինակը, որ ներկայանում է որպես այդ պատմության դիտող-մասնակից, չի թաքցնում իր արհամարհանքը և զայրույթը որդու նկատմամբ: Ինչի՞ց եք դա զգում, ինչպե՞ս է դա արտահայտված հեղինակի կողմից:

15.- Ո՞ր տողերում է խտացված պատմվածքի գաղափարը:

16.- Մայր բառով կազմել բառակապակցություններ և բացատրել դրանց իմաստները:

17.- Ի՞նչ ենք հասկանում՝ ասելով «Հայի ավանդական օջախում ծնողի պաշտամունք կա»:

Այնուհետև պահանջում եմ կազմել Т-աձև աղյուսակ, որի մի սյունակում կգրվեն մորը բնութագրող տողեր, իսկ մյուսում՝ խանութպանին.

| Խանութպանին բնութագրող տողեր | մորը բնութագրող տողեր |
|---|---|
| անհոգի, դաժան, գծուծ, շահամոլ, երախտամոռ, կոպեկին կառչած, հաշվենկատ, անսիրտ, մեռած խղճով, խիղճը կորցրած, նյութապաշտ, իրամոլ, ընչաքաղց, անմարդկային, անասնակենցաղ | խեղճ ու կրակ պառավ, դժբախտ մամա, վշտից քիչ-քիչ սպառված, անուշիկ, անտեր մամա, չոր ու կծկտած պատավ, անհիշաչար, ներողամիտ, խղճի խորհրդանիշ, լքված մամա, անտարբերության զոհ մամա, անպաշտպան մամա |

Հանձնարարում եմ տանը կարդալ Ավ. Իսահակյանի «Մոր սիրտը», Հովի, Շիրազի «Հուշարձան մայրիկիս», գրել ասույթներ մոր մասին, պատմվածքից դուրս գրել անծանոթ և անհասկանալի բառերը: Եթե ժամանակ է մնում, ապա կարդում եմ նաև Գրիմ Եղբայրների «Պապն ու թոռը» պատմվածքը ու հարցնում աշակեևտներին, թե ինչու դա կարդացի:

## ***Պապն ու թոռը***

Պապը շատ էր ծերացել: Նրա աչքերը լավ չէին տեսնում, ականջները ծանրացել էին, ձեռքերն ու ոտքերը ծերությունից դողում էին այնպես, որ գդալը բերանը տանելու ժամանակ կերակուրը վրան էր կաթեցնում:

Այդ բանը չէին հանդուրժում որդին ու հարսը: Նրանք պապին իրենց հետ սեղան չէին նստեցնում, այլ վառարանի ետևի մի անկյունում և նրան ուտելու համար կավե ամանով էին կերակուր տալիս: Խեղճ ծերուկի աչքերը արցունքով էին լցվում, նա տխուր-տրտում նայում էր այն կողմը, ուր սեղանն էր պատրաստվում:

Մի անգամ կերակուր ուտելիս ծերունու ձեռքերը դողացին, ամանը գետնին ընկավ, կոտրվեց: Հարսն ու որդին ավելի բարկացան, նրանք մի փայտե պնակ գնեցին և այնուհետև դրանով էին ուտելիք տալիս իրենց հորը:

Ծերունին չորս տարեկան մի թոռնիկ ուներ: Մի անգամ մանկիկը տախտակամածին նստած փայտե իր էր շինում:

-Ի՞նչ ես շինում, զավակս,- հարցրեց մայրը:

-Փայտե պնակ եմ շինում,-պատասխանեց երեխան,-որ երբ հայրիկս ու մայրիկս ծերանան, դրանով նրանց կերակուր տամ:

Հայրն ու մայրը իրար նայեցին և ամոթից կարմրեցին: Դրանից հետո նրանք սկսեցին ծերունուն իրենց հետ սեղան նստեցնել և երբեք կոպիտ չէին վարվում հետը:

Բարոյական դաստիարակության հարցերն, իհարկե, մեկ դասով չեն ավարտվում: Այդ խնդրով մտահոգված ուսուցիչը միշտ էլ կարող է և պետք է հնարավորություն ստեղծի սովորողների բարոյական կերպարը տարբեր կողմերով և դրական հատկանիշներով հարստացնելու համար:

Դասն ավարտում եմ հետևյալ նախադասությամբ. «Մարդկային հասարակության արշալույսից մինչև հիմա մայրը որդիների կողմից պաշտվել ու պետք է պաշտվի ավելի շատ, քան հին ու նոր աշխարհների բոլոր Աստվածները միասին վերցրած»:

# *Ավետիք Իսահակյանի «Աբու- Լալա Մահարի» պոեմի ուսուցումը*

Ակտիվ է այն ուսումնառությունը, երբ սովորողն առավելագույնս է ներգրավված դասի ընթացքի, նյութի հետազոտման մեջ, երբ սովորողը դրվում է այնպիսի իրավիճակի մեջ, որ ինքն է ուզում կարդալ, խոսել, լսել, խորհրդակցել, մտորել, խորհել, խնդիրներ լուծել, երբ սովորողը ընդգրկված է հարցերի քննարկման մեջ, երբ գիտելիքները կառուցվում են սովորողի կողմից:

Ես ուսուցման գլխավոր նպատակս համարում եմ աշակերտի ինքնուրույն տրամաբանական մտածողության զարգացումը, որն անհրաժեշտ է նրան կյանքում: Ինքնուրույն տրամաբանական մտածողության զարգացումը պահանջում է դասի այնպիսի կազմակերպում, երբ գիտելիքները տրվում են ոչ թե պատրաստի վիճակում, այլ աշակերտը ձեռք է բերում ինքնուրույնաբար: Բոլորիս հայտնի փաստ է, որ սեփական ջանքերով հայտնաբերված գիտելիքները և ուշ են մոռացվում, և նրան մղում են որոնողական գործունեության:

Տրամաբանական մտածողության շնորհիվ տեսնում է առարկաների և երևույթների միջև եղած ներքին կապը: Որքան խորն է իմացության աստիճանը, այնքան լայն են ճանաչողության շրջանակները: Այդպես է նաև գրականության բնագավառում: Թափանցել գեղարվեստական երկի մեջ, նշանակում է տեսնել երկու պատկերվող երևույթների միջև եղած կապը: Կարդացողը պետք է տեսնի ու զգա պատկերների միջոցով արտահայտված գաղափարները, մարդկային հոգու ելևէջները:

Մտածողությունը ծնվում և ակտիվանում է հարցերի միջոցով: Հարցուպատասխանի միջոցով մի քանի կարևոր խնդիրներ են լուծում.

- ✓ նյութը դառնում է դյուրըմբռնելի.
- ✓ հնարավորություն է ստեղծվում այն առավել արդյունավետ ներկայացնելու համար.
- ✓ համակողմանի հարցաշարեր կազմելով՝ աշակերտներին օգնում եմ խորացնել բովանդակության իրենց ընկալումը:

Ճիշտ պատասխաններ ստանալու համար կարևոր են ճիշտ հարցադրումները, և դրանք տրամաբանական հերթականությամբ ներկայացնելը: Պետք է աշխատել, որ հարցը լինի հստակ, հակիրճ, նպատակաուղղված, դասարանի մակարդակին համապատասխան և մտածելու տեղիք տրվող: Վերոհիշյալն եմ նկատի ունեցել և դրանով եմ առաջնորդվել «Աբու-Լալա Մահարի» պոեմն ուսուցանելիս:

Մինչև «Աբու-Լալա Մահարի» պոեմն անցնելը թելադրում եմ այն առաջադրանքները, որոնք վերաբերում են պոեմին.

1. Տանը կարդալ ամբողջ պոեմը:
2. Դուրս գրել պոեմից բոլոր անհասկանալի բառերն ու բառակապակցությունները:
3. Գրականության տետրում գրել Իսահակյանի ժամանակակիցների, նշանավոր մարդկանց, գրականագետների խոսքերը «Աբու-Լալա Մահարի» պոեմի մասին:
4. Գրականության տետրերում գրել ասույթներ, թևավոր արտահայտություններ բարեկամի, ընկերոջ, ծանոթի, կնոջ, սիրո, հայրենիքի, հայրական տան, մարդու, ամբոխի, փողի, հարստության, օրենքի, իրավունքի, իշխանության մասին:
5. Անգիր սովորել նախերգանքը, վերջին սուրահը և երրորդ սուրահից հատվածներ:
6. Դուրս գրել մակդիրները, համեմատությունները և փոխաբերությունները:
7. Ինչ կարող եք պատմել պոեմի ստեղծագործական պատմության մասին:

## *Խթանման փուլ*

Դասն սկսում եմ աշակերտների կողմից «Աբու-Լալա Մահարի» պոեմի մասին նշանավոր մարդկանց գնահատանքի խոսքերի ընթերցմամբ: Աշակերտներին լսելուց հետո ինքս եմ կատարում լրացումներ, որոնք չընթերցվեցին:

«Եթե մինչև «Աբու-Լալա Մահարի» պոեմի լույս տեսնելը ոմանք Իսահակյանի պոեզիան համարում էին կես-գեղջական, կես-աշուղական, բայց երբ լույս տեսավ պոեմը, վերաբերմունքը փոխվեց մեկեն: Պոեմը ձեռքից ձեռք էր անցնում և արժանանում համընդհանուր հավանության: Պոեմի թեման, թափը, լեզվի գունագեղությունը և մտքի համարձակությունը այնքան արտակարգ էին, որ ոմանք հարցնում էին, թե արդյոք՞ թարգմանություն չէ մի օտար լեզվից: Իմանալով՝ պոետի համարումը բարձրանում էր ավելին»:

**Ստ. Զորյան**

«Աբու-Լալա Մահարի» պոեմը համաշխարհային պոեզիայի ժայթքած հրաբուխներից է»:

**Վարդգես Պետրոսյան**

«Աբու-Լալա Մահարի» պոեմը ատելության դասագիրք է մարդկային կեղծիքի, նենգության, կյանքը տգեղացնող, հեքիաթի, երազի պես շքեղ կյանքը ամյացնող բռնության դեմ ուղղված հզոր ատելություն»:

**Սուրեն Պետրոսյան (բանվոր)**

«Աբու-Լալա Մահարի» պոեմը համաշխարհային գրականության մեծագույն նվաճումն է:

**Վիկտոր Կոչևսկի**

«Աբու-Լալա Մահարին» իր դարաշրջանի ծնունդն է, ժամանակաշրջանի խորը հակասությունների արտացոլումը»:

**Գարիկ Հովհաննիսյան**

«Աբու-Լալա Մահարին» հանճարեղ փայլատակում է, ուժգին պոռթկում, ափեր ու ամբարտակներ խորտակող հեղեղ, կապ ու կապանք չհանդուրժող, հոգեխռով ու ալեկոծված բանաստեղծի ընդվզում աշխարհի սարք ու կարգի դեմ»:

**Վաչե Պարտիզունի**

«Աբու-Լալա Մահարի» պոեմով կարելի է դատել, թե ի դեմս Ավետիք Իսահակյանի, ինչքան մեծ վարպետ ունի գրականությունը»:

**Վալերի Բրյուսով**

«Իսահակյան բանաստեղծը եկավ ոչ թե ժխտելու, այլ հաստատելու կյանքը, սերը, բնությունը, «Տիեզերքի պերճ հյուսվածքը - մարդուն»:

**Վարդգես Պետրոսյան**

«Աբու-Լալա Մահարի» պոեմը կոլորիտային գույնի, շքեղ պատկերների խորիմաստ ու գեղեցիկ համեմատությունների, խոսուն խորհրդանիշների մի ամբողջ հեղեղ»:

**Գարիկ Հովհաննիսյան**

## *Իմաստի ընկալման փուլ*

Քանի որ նախօրոք սովորողները դուրս են գրել անծանոթ բառերն իրենց գրականության տետրերում, ուստի ասույթներն ընթերցելուց անմիջապես հետո անցնում ենք այդ բառերի բացատրմանը՝ սուրահ առ սուրահ.

### *առաջին սուրահ*

***խալիֆա*** **-** արաբական ամիրապետ, թագավոր,
***մեծատուն*** - հարուստ, ունևոր,
***խորոգին*** - սաստիկ,խիստ, ուժգնորեն,
***սուրահ*** **-** որևէ գրքի մաս, գլուխ,
***քաղցրալուր*** **-** լսելու համար հաճելի, բարեհունչ,

***մեղկ***(փափկության մեջ) - հեշտասեր, ցանկասեր, զգայասեր,

***ջեննաթ*** - դրախտ,

***գազել*** - արաբական տաղաչափությունից փոխառված բանաստեղծության հատուկ ձև, որտեղ յուրաքնչյուր զույգ տողի վերջը առաջին երկտողի վերջավորության կրկնությունն է,

***քյոշք*** **-** ապարանք,

***անշեղ դաշնակով*** - ներդաշնակություն, ներդաշնակ երգ, եղանակ,

***թափուր*** - ամայի, անմարդաբնակ,

***անդուլ*** **-** անդադար, շարունակ,

***զազիր*** **-** կեղտոտ, չար, ստոր,

***նանիր*** - ունայն,սին, դատարկ, փուչ,

***գարշանք*** - գարշելի գործ,

***նողկալ*** - զզվել, գարշել, սիրտը խառնել,

***թույր*** **-** այստեղ՝ գույն, երանգ,

***ոգել*** **-** ասել,

***սեգ*** **-** հպարտ, խրոխտ,

***մխրճվել*** - խրվել,

***շղարշել*** - ծածկել,

***սնար*** - գլխավերև, այստեղ՝ գագաթ,

***շեղջ*** - կույտ,

***վայրագ*** - կատաղի,

***թավ*** պարանոցին - խիտ և շատ մազեր ունեցող,

***շիթ*** - կաթիլ,

***մրմունջ*** - մեղմ ձայն, մրմնջոց, շշնջոց,

***ծիգ*** քարավան - երկարությամբ ձգված, երկարաձիգ,

***կույս - հեռաստանը*** - ոտք չդրած, հեռավոր տեղ:

## *երկրորդ սուրահ*

***խորշակ*** - այրող տաք քամի, որ առանձնապես փչում է անապատներում և անապատներից,

***պատրանք*** - սխալ, իրականությանը չհամապատասխանող պատկերացում որևէ բանի մասին,

***նախանձ*** - այրող,տառապեցնելով հյուծող,

***կավատ*** - միջնորդ կին, այստեղ՝ անառակ,

***նանրամիտ*** - *դատարկամիտ,ունայն,*

***վարար*** **-** այստեղ՝ցանկասեր, ցանկամոլ,

***իբլիս*** **-** դև,սատանա,

***բալասան*** **-** սպեղանի,դարման,

***տոչորված*** **-** այստեղ՝ այրված, վառված, բորբոքված,

***տառփանք*** **-** բուռն ցանկություն,

***պագշոտ*** **-** ցանկասեր,
***ընդերք*** **-** երկրի խորքը, երկրի ներքին շերտերը,
***եղեռն*** **-** (անսանձ)- ոճիր, ոճրագործություն, չարագործություն,
***շողոմ*** **-** շողոքորթ,
***դժնյա*** **-** այստեղ՝չար,անգութ,
***մահիճ*** **-** անկողին,
***երկունք*** **-** ծնունդ, ծննդաբերություն,
***վտառն*** - (իժերի)- խումբ,
***տռփանք*** - բուռն կիրք,
***ժահր*** - գարշահոտ թարախ, թույն,
***երանավետ*** - չքնաղ, հրաշալի, երանությամբ լի,
***հյուլե*** - մասնիկ տարր, ատոմ նախանյութ,
***գեհեն*** - անշեջ հնոց, ուր, իբր, այրվոմ են մեղավորները, դժոխք,
***մեղանչել*** - մեղք, հանցանք գործել,
***թովչանք*** - այստեղ՝ հրապույր, գրավչություն,
***դժնի*** - (տատասկ) - դաժան,
***շարքի*** - (ներն անուշ) - նվագ, երգ:

## *երրորդ սուրահ*

***լուսնկա*** **-** այստեղ՝ լուսին,
***բուրյան*** **-** բուրավետ, հոտավետ, բուրող,
***դյութական*** **-** կախարդական, դյութիչ, փխբ. խիստ գրավիչ, չափազանց հրապուրիչ,
***անխոնջ*** **-** առանց հոգնելու ծանձրանալու,
***դույզն*** **-** քիչ,սակավ, չնչին, աննշան չափով,
***գուլ(մարդիկ)*** **-** փխբ. բթամիտ, դժվար ըմբռնող,
***ջեհնեմ*** **-** դժոխք,
***ժահր*** **-** այստեղ՝ մահադեղ, թույն,
***խարազան*** **-** այստեղ՝ փխբ. պատժող, պատիժը գործադրող,
***խոյակա*** **-** կատաղի,
***անուրջը (վարդի)*** **-** երազանք(ը),
***եղկելի*** **-** (մարդիկ) - ողորմելի, խղճալի, թշվառ,
***ունայնաշունչ*** **-** դատարկ, անբովանդակ շունչ ունեցող,
***ապիկար*** **-** անճարակ, անկարող անձեռնահաս,
***օազիս*** **-** ջուր և բուսականություն ունեցող,
***ամոքել*** **-** մխիթարել, սփոփել,
***անհագ*** **-** չհագեցող, չբավարարվող, անկշտում,
***բռնադատել*** **-** բռնություն գործադրել,
***կաթոգին*** **-** շատ կարոտով, սիրով, գուրգուրելով, գուրգուրանքով:

## չորրորդ սուրահ

***մահասարսուռ*** **-** սոսկալի, մահի պես սարսուռ ազդող, մահատարած,

***ամեհի (հողմեր)*** **-** անզուսպ, կատաղի, զարհուրելի,

***ժանտ(քաղաքներ)*** **-** դաժանությամբ, անողոքությամբ օժտված,

***բազմաժխոր*** **-** աղմկալից, աղմկոտ,

***աչալուրջ*** **-** զգույշ, զգոն, ուշադիր,

***լլկել*** **-** տանջել, չարչարել,

***դրուժան*** **-** խարդախ, նենգ, չարամիտ,

***անհեթեթ*** **-** այլանդակ, տարօրինակ, անճոռնի ձև ունեցող,

***ջինն*** **-** դև, չար ոգի,

***խոժոռն (դեմքին)*** **-** խոժոռ, խոժոռված(մռայլություն, խստություն՝ դաժանաություն արտահայտող),

***ապարոշ*** **-** գլուխը կապելու փաթույթ, փաթաթոց,

***քղանցք*** **-** հագուստի ներքևի եզրը, փեշ:

## հինգերրորդ սուրահ

***մահիճ պրծել*** **-** ամուսնական հավատարմությանը դավաճանել,

***նողկալի (համայնք*** **-** խիստ զզվանք, գարշանք առաջացնող, սաստիկ զզվելի, գարշելի փխբ. ճնշող, կաշկանդող,

***հեղձուցիչ (օդակ)*** **-** այստեղ՝ փխբ. ճնշող, կաշկանդող,

***գարշ(իրավունքով)*** **-** զզվելի, գարշանք, առաջացնող, գարշելի,

***նախճիր*** **-** կոտորած, արյունահեղություն,

***կառափ*** **-** այստեղ՝ մարդու գլուխ, գանգ,

***հազարաճիրան*** **-** բազմաթիվ ճիրաններ՝ մագիլներ ունեցող,

***խոլ (կայծակները)*** **-** կատաղի, մոլեգին,

***մոլի*** **-** մոլեգնած, կատաղի,

***վաշտերն(ամպերի)*** - այստեղ՝ խմբերը,

***արշավասույր*** **-** սրարշավ, արագ արշավող,

***քինոտ(բռունցքից)*** **-** քեն պահող, ոխակալ:

## վեցերորդ սուրահ

***բարկ (արևի)*** - թեժ, այրիչ (այրող), բորբ,

***նարճիս*** **-** նարգիզ (ծաղիկ),

***ծոթոր*** **-** անուշահոտ բույս,

***ամբարտավան*** **-** իր մասին մեծ կարծիք ունեցող, մեծամիտ, գոռոզ,

***որոմ*** **-** ցորենի հետ աճող բույս, ցորենի նման սև, մանր հատիկներով, որ հացի հետ խառնվելով՝ նրան թթու, անախորժ համ է տալիս և ուտողին պատճառում գլխացավ, սրտխառնոց,

***ապիրատ (աշխարհ)*** **-** անիրավ, անօրեն, անարդար,
***տխեղծ*** **-** այստեղ՝ խակամիտ, ոչ խելահաս,
***վիժվածք*** **-** այստեղ՝ փխբ. հասարակության համար վնասակար տարրեր,
***շեյթան*** **-** սատանա,
***ներհակ*** **-** հակադիր՝ հակառակ ուղղություն, հատկություն ունեցող,
***տարփողել*** **-** փողի, շեփորի ձայնով մի լուր հռչակել, տարածել, բարձրաձայն հայտնել,
***լպիրշ*** **-** բարոյական կարգ ու կանոնը խախտող, անբարո,
***արբշիռ*** **-** հարբեցնող, զեխ, շվայտ,
***ներբան*** **-** ոտքի ստորին մակերևույթը, որով կոխում են գետինը,
***խոլ (քարավանը)*** - այստեղ՝ փխբ. սանձակոտոր, անսանձ, սրարշավ,
***խռիվ*** **-** այստեղ՝ խառնիխուռն,
***հանգրվան*** **-** հանգստանալու տեղ, կայան, իջևան:

## *յոթերորդ սուրահ*

***հակինթյա (ժայռին)*** **-** հակինթի գույն ունեցող, երկնակապույտ, դեղնակարմիր,
***հակինթ*** **-** թանկագին քար՝ երկնագույն - կապույտ կամ կարմրավուն - դեղին,
***անպարփակ (ազատ)*** **-** չպարփակված, չպարփակվող, (այսինքն՝ անսահման ազատ),
***ծիր (երի մեջ)*** **-** սահման, եզրագիծ,
***առապար*** **-** քարքարոտ, ապառաժոտ տեղ,
***բաղիե*** **-** անապատ,
***շահաստան*** **-** մեծ առևտրական քաղաք, թագավորանիստ քաղաք,
***կլա*** **-** ամրոց,
***սնդուսի*** **-** մետաքսե փայլուն գործվածք,
***սալամ*** **-** բարև,
***շյուքը*** **-** փառք, շնորհակալություն,
***անապակ (գինի)*** **-** անխառն, անարատ,
***ծիրանի (շքեղ)*** **-** ծիրանագույն պատմուճան,
***պատմուճան*** **-** երկար, զարդարուն զգեստ, պարեգոտ, թիկնոց,
***գերահրաշ*** **-** հրաշագեղ, հիասքանչ, գերսքանչ:

## *վերջին սուրահ*

***սամում*** **-** կիզիչ հարավարևմտյան քամի հյուսիսային Աֆրիկայի և

Արաբիայի անապատներում, խորշակ,

***բեդվին*** **-** անապատի քոչվոր արաբ,

***վուիաղի*** **-** հովիտ,

***սյուք*** **-** թեթև քամի, հովիկ, զեփյուռ,

***քասիդ*** **-** նվագ, երգ, բանաստեղծություն,

***գողտրիկ*** **-** քնքուշ, անուշիկ, ախորժելի, դուրեկան, մեղմանուշ,

***սոսափ*** **-** շրշյուն, շնկշնկոց. խշշոց,

***մերաբ*** **-** միրաժ (բնության այն երևույթը, երբ հորիզոնի ետևում են օդում շրջված ձևով, շնորհիվ օդի շերտերի անհավասար ջերմության և ճառագայթների որոշ բեկման):

***պարուսան*** **-** սանձ, պախուրց,

***խոլաբար*** **-** մոլեգնորեն, կատաղի կերպով,

***կայլակել*** **-** ցայտել,

***անքթիթ*** **-** անթարթ, ակնապիշ, առանց աչքը թարթելու,

***հոլանի*** **-** մերկ, առանց զգեստի, բաց, անծածկույթ:

Բառերի բացատրությունը վերջացնելուլուց հետո անցնում ենք առաջադրանքների 4-րդ կետին՝ասույթների և թևավոր արտահայտությունների ընթերցմանը:Բոլորին լսելուց հետո ես էլ եմ կատարում որոշ լրացումներ և մեկնաբանում.

«Որտեղ վերջանում են օրենքները, այնտեղ սկսվում է բռնակալությունը»:

**Ու. Պիտ**

«Քաղաքացիների իսկական հավասարությունը նրանում է, որ նրանք բոլորը միատեսակ ենթարկվեն օրենքին»:

**Ժ. Դալամբեր**

«Առանց հայրենիքի մարդը ժամանակի ու տարածության պատահականությունների քմահաճույքներին մատնված ավազահատիկ է»:

**Լակորդեր**

«Օտար երկիրը հայրենիք չի դառնա»:

**Գյոթե**

«Սերը բարի, վեհ, ուժեղ, ջերմ ու պայծառ ամեն ինչի արարիչն է»:

**Չերժինսկի**

«Ընկերությունը կրկնապատկում է ուրախությունը ու կիսով չափ պակասեցնում վշտերը»:

**Բեկոն**

«Սերը կրքերից ամենաուժեղն է, որովհետև նա միաժամանակ տիրում է գլխին, սրտին և մարմնին»:

**Վոլտեր**

«Կին՝ դա մեծ խոսք է:Նրանում օրիորդի անաղարտությունն է, նրանում ընկերուհու ինքնազոհությունն է, նրանում մոր սխրագործությունն է»:

**Նեկրասով**

Հարկ եմ համարում սովորողների համար անպայման կարդալ Ավ.Իսահակյանի ասույթները հայրենիքի, ազգի, լեզվի,սիրո,կնոջ և մոր մասին.

«Սրբություն է հայրենիքը, նա մեր հացն է, նա՝ մայրական գիրկը: Մեր մանկությունն է նա, մեր պապերի գերեզմանը և մեր մանուկների զվարթ օրորոցը: Նա մեր տարեգիրքն է և մեր հին ու նոր քնարը: Նա հայրական տան ծուխն է, որ մեր հրճվանքն ու վիշտը տանում է աստղերին: Նվիրական է նա, որովհետև մեզ գրկող բազուկներն ու սիրող սրտերը հող են դարձել այնտեղ»:

«…սերն իր բարձր առումով իմ պոեզիայի առանցքն է: Առանց այդ սիրո ոչ մի բանաստեղծ չէր կարող քնար հնչեցնել»:

«Համբուրելով այս երեք բառերը՝ ազգ, լեզու, հայրենիք, հանձնում եմ հայութքանը՝ պահելու, իրականացնելու, ամրացնելու, զարգացնելու, հավերժացնելու»:

«Դու արևի պես հեռու ես, բայց անմատույց, բայց լեյս ու ջերմություն ես տալիս ինձ, ով կին, ով իդեալ»:

«Հենց միայն մայր ունենալու համար արժե աշխարհ գալ»:

Իմաստի ընկալման փուլի հաջորդ քայլը պոմի ստեղծագործական պատմության մասին աշակերտներին տեղեկացնելն է: Կարդում եմ հատված Իսահակյանի «Հիշատակարանից».

«Կրկին հարցաքննությունից հետո Երևանից վերադառնում էի Ալեքսանդրապոլ: Երբ գնացքը դուրս եկավ կայարանից, անցա լոկոմոտիվի վտանգավոր պլատֆորմը և սկսեցի դիտել շրջակա լեռները, հեռագրասյուները, երկաթգիծը, որոնք գնացքի ընթացքի հետ փախչում էին աչքիս առաջին: Եվ քանի գնացքն արագացնում էր իր ընթացքն, այնքան ավելի կրկնապատվում էր իմ մեջ փախուստի տրամադրու-

թյունը: Մտածում էի, թե ինչքան լավ կլիներ, եթե գնացքն առանց կանգառի, այդպես անընդհատ գնար, դուրս գար երկաթգծից, ցարական տիրապետության սահմաններից և գնար հեռու՜, հեռո՜ւ:

Այս մտածումների մեջ էի, երբ հասանք Սարդարապատ: Լուսնյակ գիշեր էր: Հեռվից նշմարվեց Կողբի կողմից եկող ուղտերի մի ծիգ քարավան: Գնացքով փախչելու մտածումներս զուգորդվեցին քարավանի հետ և փոխարինվեցին քարավանով փախչելու ցանկության»:

Սրանից անմիջապես հետո անցում ենք կատարում պոեմի կառուցվածքին: Պոեմը, ինչպես հայտնի է, բաղկացած է նախերգանքից, յոթ սուրահից և վերջերգից: Հարց սովորողներին.

-Պատահակա՞ն է արդյոք 7 սուրահի բաժանելը և ի՞նչ պատմություններ ու արտահայտություններ գիտեք՝ կապված 7 թվի հետ:

Մինչ սովորողներին լսելը ասում եմ, որ արարչական թվերի մեջ առանձնահատուկ թիվ է համարվել 7-ը: Այն կոչվել է կույս թիվ (կամ Հերմես), քանի որ 1-10-ը թվերի մեջ ոչ որևէ 2 թվի արտադրյալ է, ոչ էլ բազմապատկելի: Այս պատկերացմամբ 7-ը կենդանի օրգանիզմների զարգացման սկիզբն է. հավի սաղմը զարգանում է 21(3x7) օրում, ջայլամինը՝ 49(7x 7) օրում, կատվինը՝546(8x 7) օրում, առյուծինը՝14x 7 օրում, մարդունը՝40x 7 օրում: Օրացույցը կրկնվում է 28 տարին մեկ(7 4), ծիածանն ունի 7 գույն, ձայնաշարը (օկտավա) ունի 7 ամբողջ ձայն՝ դո, ռե, մի, ֆա, սոլ, լյա, սի: Պատահական չէ նաև, որ Կորյունի «Վարք Մաշտոցի» աշխատաության մեջ ***Աստված, Հիսուս Քրիստոս, Տեր*** բառերը գործածված են 49 անգամ(7x 7):

**Աշ.-** Աշխարհը ստեղծվել է 7 օրում.«Եւ հանգեաւ յաւուրն եօթներորդի յամենայն գործոց իւրոց՝զոր արար: Եւ օրհնեաց Աստուած զօրն եօթներորդ»:

**Աշ.-** 7 սարի հետև, 7-ը տալ/մահացածի/, 7 օր 7 գիշեր հարսանիք անել, 7 գոմշի ուժ ունի, 7 տարվա գինի, 7-ը որդով սեղան նստել,7 ծունր աղոթք անել,7 օրվա ճամփա, 7 գլխանի վիշապ:

**Աշ.-** 7 թիվը հանդիպում է նաև հայերի՝ արևի հետ կապված պատկերացումներում. հին հայկական տոմարի 7-րդ ամիսը արևի Աստծո՝ Միհրի անունով կոչվել է Մեհեկան:

**Աշ. -** 7 թվի հետ կապված մի այլ պատում. երբ Մեծ Միհրը գալիս է Արմաղանին կնության ուզելու, պարզվում է, որ քաղաքը, ուր ապրում էր Արմաղանը, արդեն 7 օր զրկված էր ջրից: Միհրը վիշապին սպանում է 7-րդ օրը՝ թռցնելով նրա 7 գլուխները:

**Աշ.-** 7 թիվը հայ ժողովրդի պատկերացումների, ավանդությունների ու առասպելների մեջ ևս ունեցել է նույնպիսի դերակատարություն և նույնպիսի աղդեցություն մտածողության վրա, ինչպիսին ունեցել է աշխարհի շատ այլ ժողովուրդների վրա: Օրինակ՝ ըստ հայկական մի ավանդության համաձայն՝ «Մեծ արջի» համաստեղությունը ստացել է նաև «Յոթ սանամոր աստղեր» անվանումը:

**Աշ.-** Մի այլ ավանդության համաձայն՝ քուրդ ավազակների սպանած 7 եղբայրների թափած արյունից աճում է լեռնային արնագույն մի ծաղիկ, որին ժողովուրդն անվանում է «7 եղբոր արյուն»:

**Աշ.-** Մեր էպոսի հերոսները ուսման, գիտելիքի յուրացման համար պիտանի և հասուն են համարվում 7 տարեկանից.

Երբ որ Միեր էկավ- էղավ յոթ տարեկան,
Յոթ շենք էղավ իր բոյ:
էն օր վանք-վարժարան դրին,
Քիչ մի սորվավ, շնորհքով լցվավ:

**Աշ.-** 7-ը դարձել է ուժ ու հզորություն, առավելություն դրսևորող, չափազանցություն արտահայտող թվերից մեկը: Ջենով Օհանը 7 գոմշի կաշի է փաթաթում իրեն ու նոր բղավում:

**Աշ.-** Թումանյանի մոտ - Օխտն աղբյուրից ջուր է առել կույս սափորով լուռ ու մունջ, Օխտը ծաղկից ծաղիկ քաղել, կապել սիրո ծաղկեփունջ:

Հարկ եմ համարում, որ սովորողներն իմանան, թե ով է Աբու-Լալա Մահարին, որին Իսահակյանը ընտրել է իր պոեմի հերոս.

Աբուլ-Ալա-Ալ-Մահարի (լրիվ անունը՝ Աբուլ-Ալա-Ահմեդ բին Աբդուլլահ ալ- Մահարի 973-1057), արաբ բանաստեղծ, փիլիսոփա: Ծնվել է Մաարեթ-ան-Նուման գավառական քաղաքում /Սիրիա/, ազնվականի ընտանիքում: Վաղ ժամանակից զրկվել է տեսողությունից: Աշակերտել է բանասեր հորը, ապա բազմակողմանի կրթություն ստացել Հալեպում, զբաղվել է ուսուցչությամբ: 1007-1009թթ. եղել է Բաղդադում, շփվել առաջադեմ մտավորականների հետ: Թողել է գրական մեծ ժառանգություն, որի մեծ մասը կորել է խաչակրաց արշավանքների ժամանակ: Նրա ստեղծագործությունները տոգորված են վստահության, վշտի ու բողոքի տրամադրություններով /«Ճանապարհին լքվածը»/: Քննադատել է իշխողներին, օրենսգետներին, կրոնական քարոզիչներին: Նրա շիրմաքարին փորագրված է. «Իմ հայրն ինձ դժբախտացրեց, ես ոչ ոքի չեմ դժբախտացրել»:

Կենսագրական այս տեղեկություններն ընթերցելուց հետո աշակերտների ուշադրությանն եմ ներկայացնում Աբուլ-Ալա ալ Մահարու բեյթերից, որոնք ցույց են տալիս, որ նրա պոեզիան իրոք ներշնչանքի աղբյուր է ծառայել Իսահակյանի համար.

Զգույշ կացեք բարեկամից, անծանոթից անցեք ահով,
Թե գիտունն էլ ճամփա ցույց տա՝ չզգաք բնավ ձեզ ապահով:

Ով աշխարհի տիրակալներ, իշխելու մեջ է ձեր կյանքը,
Քանի ապրեք, այնքան ավել չարիք է ծնում ձեր կամքը:

Փախի՛ր մարդկանցից և զվարճալի խրախճանքներից փախի՛ր զայրագին,
Քո այդ քարոզած ճշմարտությունը ամբոխի աչքում չունի ոչ մի գին:

Պերճ քաղաքից առավել է, թե որ ապրես անապատում,
Ուր գազանը և շունն են հեզ լոկ ճամփորդին շրջապատում:

Մարդիկ նման են հաճախ գայլերի՝ հետևում են քեզ՝ դունչները տնկած,
Ու պատրաստ են քեզ ձեռաց հոշոտել, երբ որ տկար ես և ուժից ընկած:

Բաշխի՛ր գանձդ ողջ ունեցած՝ առանց բնավ ափսոսալու,
Գիտցի՛ր, երբ որ շիրիմ մտնես, քո ետևից նա չի լալու:

Արաբ բանաստեղծ Աբու Ալ Ալա Մահարուց Իսահակյանը կատարել է հետևյալ թարգմանությունը.

Ես տեսնում եմ՝մարդկանց տարված կռիվներով, վեճերով,
Աղանդավոր, մոլեկրոն, ապուշ ամեն կողմերով,
Թագավորներ,որ խորհում են միայն ուտել, շվայտել:
Նախարարներ, որ հոգում են հարկ ու տուգանք սոսկ կապտել,
Նրանց անհագ ցանկությունն է՝ հպատակի տները
Ավար առնել, ավար անել, բռնաբարել կիները:
Կա՞ նվիրված արդյոք մի վայր իրավունքիս երկրիս մեջ,
Այս խավարում ման գամ, գտնեմ՝ ձեռքիս լապտեր մի անշեջ:

Այս ամենից հետո անցնում ենք խմբային աշխատանքի. դասարանը բաժանում եմ 6 խմբի և յուրաքանչյուր խմբի տալիս եմ մի հարց.

1.Բանաստեղծի վերաբերմունքը կեղծ բարեկամի, ընկերոջ, ծանոթների նկատմամբ, և դրանց քննադատությունը պոեմում:

2.Բանաստեղծի վերաբերմունքը սիրո և կնոջ նկատմամբ, և

դրանց քննադատությունը պոեմում:

3.Բանաստեղծի վերաբերմունքը հայրենիքի, հայրական տան նկատմամբ:

4.Բանաստեղծի դատողությունները մարդու, ամբոխի, համայնքի մասին, և դրանց քննադատությունը պոեմում:

5.Փողի, հարստության, օրենքի, իրավունքի և իշխանության քննադատությունը պոեմում:

6.Բանաստեղծի գերագույն իդեալի արտահայտությունը պոեմում:

10 րոպե անց լսում և քննարկում ենք խմբերի պատասխանները, կատարում լրացումներ, եթե դրա անհրաժեշտությունը կա, որից հետո անցնում ենք դասի երրորդ՝ կշռադատման փուլին:

## *Կշռադատման փուլ*

1. Ի՞նչն էր պատճառը, ի՞նչը դրդեց Իսահակյանին գրելու «Աբու- Լալա Մահարի» պոեմը:

2. Քանի՞ տող է «Աբու-լալա Մահարի» պոեմը, քանի տող են կազմում հերոսի մտորումները, քանի տող են կազմում հեղինակային պատմությունները:

3. Ինչու՞ է այպես ասում . «Խփեմ վրանս օձ-կարիճների բընների գլխին վրանս խփեմ, Այստեղ բյուր անգամ ես ապահով եմ, քան թե մարդկանց մոտ կեղծ ու ժպտադեմ»:

4. Մեր անցած բանաստեղծությունների մեջ կինը մարդու էության և օջախի սրբության խորհրդանիշն է («Արազի ափին բոստանս լինի», «Մաճկալ ես, բեզարած ես»): Բայց Իսահակյանը պոեմի հերոսի բերանով նզովքի խոսքեր է ուղղում այդ գեղեցիկ սեռի հասցեին. «Օհ, կնոջ մարմին, պագշոտ, օձեղեն, դիվական անոթ ոճիրների չար, Դու, որ մսեղեն դառն հաճույքով արևը հոգու դարձնում ես խավար»: Ինչու՞ այսպես:

5. Ձայրացած բանաստեզծը պոեմում քննադատում է ոչ միայն բարեկամին, կնոջը, մարդուն, այլև՝ ընկերոջը, հորը: Բայց կա մեկը, որին սրբորեն հավատում էր բանաստեղծը, պաշտում էր ինքնամոռաց: Ով էր այդ սրբությունը:

6. «Ատում եմ, ավա՜ղ, և հայրենիքը-պերճ արոտավայրը հարուստների ցոփ, Որ հողն արնոտ՝ անդուլ հերկողը չոր քար է կրծում իր հացի հանդեպ»: Ատու՞մ է բանաստեղծը հայրենիքը:

7. Ինչի՞ց է բխում աշխարհի, իրականության բացասում, ժխտումը Իսահակյանի կողմից:

8. Իսկ որտեղից է գալիս արևի պաշտամունքը, արևի՝հբրև

կյանքը նորոգող ուժի պատկերացման ակունքները:

Երկրորդ հարցին պատասխանելու համար անհրաժեշտ էր նախօրոք պատրաստվել, ուստի ինքս եմ ասում, որ պոեմը բաղկացած է 364 տողից, հերոսի մտորումները կազմում են 233տող, իսկ հեղինակային պատմությունը՝ 131 տող:

8-րդ հարցի հետ կապված՝ անում եմ հետևյալ լրացումը.

Ակունքները թաքնված են ժողովրդի մտածողության խոր ծալքերում:

Հին Հայաստանի ամենատարբեր վայրերում կառուցվել են կռապաշտական տաճարներ և դրվել քանդակներ: «Հրային Աստծու» կուռքին էին նվիրված Բագառիճի և Գառնիի հեթանոսական տաճարները:

Խորենացին վկայել է, որ հայոց թագավորության առաջին մայրաքաղաք Արմավիրում Վաղարշակը կանգնեցրել է արևի և լուսնի քանդակները, որոնք հետագայում Երվանդը տեղափոխել է Բագարան, Արտաշեսը՝ Արտաշատ:

Հնագետ Հ.Իսրայելյանը իր՝ «Արևի պաշտամունքի հետքերը բրոնզեդարյան Հայաստանում» աշխատության մեջ ցույց է տվել, թե արևի պաշտամունքը որքան ուժեղ է արտահայտվել նաև նախնադարում. «Բրոնզեդարյան Հայաստանի բնիկները արևին վերագրել են արարչական զորություն, պաշտել են այն որպես զարթոնքի, պտղաբերության և ամենայն բարիքներ ստեղծող գերբնական ուժի: Այդ պատճառով էլ նրանք բազմաթիվ առարկաների վրա պատկերել են արև»:

Մարդիկ արևով երդվել են, արևով օրհնել. «արևդ ապրի», «արևս վկա», «կանաչ արև լինես», «երկար արև ունենաս», «արևդ վառ մնա»: Մարդիկ նաև արևով անիծել են.«արևդ մեռնի», «արևդ խավարի», «արևդ թաղեմ»: Հեթանոս հայերն ունեցել են արևի Աստված, որին կոչել են Միհր:

Դասն ավարտում եմ՝ ասելով, որ պոեմը թարգմանվել է աշխարհի շուրջ 30 ժողովուրդների լեզուներով, իսկ դրա պատճառն այն է, որ հեղինակը ինքնատիպ ու բարձր արվեստով է արտահայտել որքան ազգային, նույնքան էլ համամարդկային գաղափարներ:

# *Ակսել Բակունցի «Ալպիական մանուշակ» պատմվածքի ուսուցումը*

***Դասի թեման*** Ակ. Բակունցի «Ալպիական մանուշակ» պատմվածքը

***Դասի նպատակը՝*** աշակերտը կարողանա կապակցված, կուռ տրամաբանական հաջորդականությամբ մտքեր արտահայտի
կարողանա փաստարկված, պատկերավոր ու արտահայտիչ խոսք կառուցի
զարգացնել աշակերտի պատկերավոր մտածողությունը, խորացնել գեղագիտական ընկալումները
նպաստել աշակերտների վերլուծական կարողությունների զարգացմանը
զարգացնել բանավոր խոսքի մշակույթը:

***Դասի տեսակը՝*** խոսքի զարգացման

***Մեթոդը՝*** հետազոտական, հարց ու պատասխանի

***Դիդակտիկ նյութեր՝*** Հ.Կոջոյանի «Լեռնային հեքիաթ» և «Աղբյուրի մոտ», Մ.Ավետիսյանի «Ծնունդ», Մ.Սարյանի «Մեռնող օր», Մ.Աբեղյանի «Աշուն» նկարների վերատպությունները, մանուշակի պատկերներով նկարներ:

***<u>Խթանման փուլ</u>***

Մարդու և հայրենի բնաշխարհի նկատմամբ Բակունցի սիրո մեծագույն արտահայտություններից մեկը «Ալպիական մանուշակ» պատմվածքն է: Որպեսզի աշակերտները լավ պատկերացնեն այս երկի տեղն ու դերը, նշանակությունն ու արժեքը ոչ միայն Բակունցի գրական ժառանգության, այլև մեր գրականության մեջ, ընթերցում ու մեկնաբանում ենք նշանավոր մարդկանց ասույթները Բակունցի և «Ալպիական մանուշակ» ստեղծագործության մասին: Այս աշխատանքը կազմակերպում եմ՝ կիրառելով պատկերասրահի մեթոդը: Յուրաքանչյուր աշակերտ Բակունցի այս ստեղծագործության մասին մի ասույթ է գրում ա4 չափի թղթի վրա և ամրացնում այդ նպատակի համար պատրաստված վահանակին: Ամբողջ դասարանով շրջում ենք վահանակների մոտով, յուրաքանչյուր աշակերտ կարդում է իր գրած ասույթը և մեկնաբանում: Ասույթների մեջ կարելի է ներկայացնել նաև հենց իրենց՝ աշակերտնե-

րի գնահատական-կարծիքը ստեղծագործության մասին: Ընթերցումը վերջացնելուց հետո դասարանով որոշում ենք, թե ում ասույթն է ամբողջական և ճիշտ պատկերացում տալիս «Ալպիական մանուշակ» ստեղծագործության մասին: Ահա այդ ասույթները.

«Բակունցը մեր նորագույն արձակի ամենափայլուն երկնաքարն է, նրա պայծառ, լուսավոր ապագան: «Ամենեն գեղեցիկ խոսքը անզարդությունն է»,- Պարոնյանի այս միտքը ամբողջապես վերաբերում է Բակունցին:

«Նրա մաքուր, լեռնային վտակի նման վճիտ լեզվով մեր գրականությունը մի նոր գույն ստացավ: Նա կարողացավ թափանցել հայ մարդու հոգևոր ներքնաշխարհը, կրկնել ու ցույց տալ մեր ժողովրդի՝ դարերի խորքից եկող հոգևոր գեղեցկությունը:

Բակունցի խոսքը հնչեղ էր, դյութիչ, հյութեղ, այդ խոսքն ասես հյուսված էր մեր բնաշխարհի բոլոր գեղեցկություններով»:

**Ն. Շահնազարյան**

«Բակունցի բառերը «հնամենի են, բուրյան», հին մատուռների «անջնջելի գրեր հնադարյան», «մյուռոնի նման սրբազնագույն», «մշտահմա», «որպես խորհուրդը մեր այրական ոգու»:

**Ե. Չարենց**

«Բանաստեղծական հուզականությամբ հագեցված, գեղանկարչական ու քանդակագործական նրբակերտ պատկերներով զարդարված արձակի անկրկնելի նմուշ է Բակունցի «Ալպիական մանուշակը»»:

**Արտաշես Իսախանյան**

«Մարդու և հայրենի բնաշխարհի նկատմամբ Բակունցի սիրո մեծագույն արտահայտություններից մեկը «Ալպիական մանուշակ» պատմվածքն է»:

«Դա ամեն ինչ է, բանաստեղծություն, բնության երգ, զանգեզուրյան պոեմ, քնքշություն, սեր ու թախիծ, սոցիալական ծանր պրոբլեմ, դառնություն և բոլորը միասին վերցրած՝ անզուգական մի ստեղծագործություն. մեկը հայ գրականության մարգարիտներից»:

«Բակունցը մեր արձակի ամենամեծ նկարիչն է, խոսքի արվեստի կախարը»:

**Ն. Շահնազարյան**

«Կոմիտասի երգերի և քո գույների մասին խոսում են որպես բառերով անթարգմանելի հրաշքների մասին: Բայց դա այնքան էլ ճիշտ չէ: Հայաստանում կա մի գրող, որի բառերը զրնգում են կոմիտասյան շնչով և փայլատակում են քո կտավների գույներով:» Դա Ակսել Բակունցն է»:

**Ավ.Իսահակյան**

«...Ուրիշ ո՞վ է կարողացել այդքան բույր ու իմաստ գտնել Հայաստանի սարերում: Սարյանի նկարներում սարերն ավելի կապույտ են, արևն ավելի վառ ու դեղին... Ձորերը շատ են գեղեցիկ: ... Շատ է նկարել ծաղիկներ. չէ՞ որ ծաղիկները կյանքի խորհրդանիշն են, որոնք իրենց քնքուշ թերթիկներում արտահայտում են աշխարհի գեղեցկությունը՝ այնքան մոտիկ ու հասկանալի: Սարյանը նկարում է կյանքի այդ գեղեցկությունը, որի համար պայքարել են մարդիկ՝ բոլոր ժամանակներում»: Այս բնութագրություններն առանց վարանելու կարելի է վերագրել նաև Բակունցին, որը մեր արձակի ամենամեծ նկարիչն է, խոսքի արվեստի կախարդ Սարյանը»:

**Վ. Պետրոսյան**

«Ոչ թե բնավորության կամ գործողության նովել է, այլ քնարական-փիլիսոփայական պատկեր, որ զուրկ չէ փաստագրական տարրերից և որում առկա է հեղինակային հստակ դիրքորոշումը»:

**Զ. Օհանյան**

«Պատմվածքը նման է քնարական զեղումի, որը հագեցված է բնության գունագեղ նկարագրություններով, գրված է հյութեղ ու ճոխ լեզվով»:

**աշակերտ**

«Բակունցի պատկերավոր խոսքը, հուզաթաթավ լիրիզմը, բար գեղագիտական խոր գաղափարները սովորեցնում են խորապես սիրել հայրենիքը, ապրել մայր Ժողովրդի բախտով, սիրով կապվել հայրենի բնաշխարհի քար ու թփին, նախնիների թողած սուրբ մասունքներին»:

**աշակերտ**

Բակունց ստեղծագործողի դիմանկարն ավելի ամբողջական լինելու համար ես ընթերցում եմ Համո Սահյանի բանաստեղծությունը.

## *Միրհավի կանչն ես տանում դարերին*

Դու ոչ թե խոսում, այլ երգում էիր,
Ականջ էր անում լեռնաշխարհը քեզ,
Մեր լեռների պես զրնգում էիր,
Զրնգում էիր ցուրտ աղբյուրի պես:

Ներդաշնակում էր քո երգը այնպես
Կյանքի որոտն ու սոսափը կյանքի,
Եվ ոլորվում էր հորովելի պես,
Հորովելի պես, բայց առանց հանգի:

Երգդ սրտերի խոպանն էր հերկում,
Ու տառապանքն էր հերքում մարդկային:
Ծիրանի ծառեր կային քո երգում
Եվ ալպիական ծաղիկներ կային:

Դու կանգնած էիր հայրենի հողին,
Նրանից բուսած ծառ էիր կարծես,
Գյազբելի նման բարձր էր քո հոգին,
Եվ խոր էր խորունկ Մթնաձորի պես:

Դու քանդակեցիր անմահ կոթողներ,
Սրբատաշ տողեր քանդակեցիր դու,
Արևի շողեր, անձրևի քողեր,
Ծիրանի փողեր քանդակեցիր դու:

Իջար բարձրաբերձ Կաքավաբերդից,
Մարուքա սարից իջար միգապատ.
Պաղ ջուր խմեցիր Բասուտա գետից,
Հասար Կարմրաքար ու հասար Դորպատ:

Լացացրել է ինձ քո Վանդունց Բադին,
Խոնարհ աղջիկն է ինձ գերել մանկուց,
Վրնջում է դեռ սպիտակ քո ձին,
Իմ հուշերի մեջ, ո՛վ Ակսել Բակունց:

Արձագանքն էիր դու մեր ձորերի,
Անտառներն ի վեր փռված սարերին...
Եվ շառաչի հետ այս մեծ օրերի
Միրհավի կանչն ես տանում դարերին...

**Հ.Սահյան**

Բանաստեղծության ընթերցումից հետո աշակերտների ուշադրությանն եմ ներկայացնում մանուշակի մասին ավանդապատումներ Արամ Ղանալանյան «Ավանդապատում» գրքից:

Մանուշակը ժամանակին մի գեղեցիկ, բայց շատ խաբարբզիկ աղջիկ է եղել: Իրենց տան գաղտնիքները նա հայտնել է ուրիշներին, ուրիշներինն էլ տանեցիներին: Մայրը երկար խրատելուց հետո, երբ տեսել է որ չի ուղղվում, անիծել է նրան՝ ասելով. «Չոլերն ընկնես, լեզուդ ծոծրակովդ դուրս գա»: Եվ նա անմիջապես ծաղիկ է դարձել:

Ճանապարհից հոգնած Հիսուսը նստում է մի թփի տակ հանգստանալու: Մանուշակը, չճանաչելելով նրան, ասում է.
-Բարեկամ, մի քիչ հեռու ինձանից, շունչս կտրեցիր, հոտս առար:
Հիսուսն անիծում է մանուշակին՝ ասելով.
-Դեռ չզորացած՝ չորանաս:
Դրա համար էլ մանուշակը բացվելուց հետո շուտ թառամում է:

Տեսնելով իր մոտով անցնող Քրիստոսին՝ մանուշակն ասել է.
-Հեռացիր մոտիցս, չխենթանաս հոտիցս:
Բարկացած Քրիստոսն անիծել է նրան՝ ասելով.
-Լեզուդ ծոծրակիցդ դուրս գա:
Դրա համար էլ մանուշակի գլուխը միշտ դեպի ցած է խոնարհված:

Վարդն ու մանուշակը քույր ու եղբայր են: Նրանք միշտ իրար կարոտ են: Եթե մեկը կարողանա պահել մանուշակին և ցույց տալ քրոջը, ցանկացածն անմիջապես կկատարվի:

Վարդն ու մանուշակը քույր ու եղբայր են եղել: Վարդը փշերով միշտ ծակոտել է մանուշակին, սա էլ ծծել է նրա արյունը և քսել իր երեսին: Տեսնելով քրոջ ու եղբոր անվերջ կռիվները՝ մայրը անիծել է նրանց, որ միմյանց կարոտ մեռնեն: Այդ օրվանից վարդն ու մանուշակը այլևս մեկը մեկի երես չեն տեսնում: Ասում են, թե ով նրանց իրար մոտ բերի, մուրազաչոր կմեռնի:

Ապահովելով միջառարկայական կապ՝ նպատակահարմար եմ գտնում որոշ բուսաբանական գիտելիքներ հաղորդել մանուշակ ծաղկի մասին: Մինչ այդ հարցնում եմ աշակերտներին, թե ինչ գիտեն ծաղկի արտաքին տեսքի, գույնի, չափեհր, աճման պայմանների, խնամքի մասին:

«Խորհուրդներ այգեգործներին» գրքից ընթերցում եմ հետևյալը՝ ամբողջացնելով աշակերտների ասածը.

«Ցածր բույս է՝ 10-15սմ բարձրությամբ: Տերևները կլորավուն, սրտաձև են, մուգ կանաչ գույնի: Ծաղիկները հոտավետ են, մինչև 2 սմ տրամագծով, կապույտ կամ թանաքագույն: Կան սպիտակ այլատեսակներ: Ծաղկում է ապրիլի կեսերին, մասամբ նաև՝ աշնանը: Բազմանում է սերմերով և թփերի բաժանումով:

Սերմերը ցանում են ուշ աշնանը:Ծիլերը նոսրացնում են՝ թողնելով բույսերի միջև 15-12սմ տարածություն: Երիտասարդ բույսերը ծաղկում են երկրորդ տարում: Լավ են տանում կիսաստվերը: Սիրում են փուխր, պարարտ հող, վատ են տանում թարմ գոմաղբը: Նույն տեղում թողնում են 3 տարի, որից հետո հարկավոր է թփերը բաժանել, հակառակ դեպքում ծաղկման առատությունը նվազում է»:

Խթանման այս փուլում, որպեսզի չթուլանա աշակերտների ուշադրությունն ու հետաքրքրությունը, ասում եմ, որ ծաղիկներն էլ «լեզու ունեն», որ մարդիկ, ծաղիկներ նվիրելով, ծաղիկների միջոցով ցանկանում են ինչ-որ բան ասել: Յուրաքանչյուր ծաղիկ որևէ բան է խորհրդանշում.

երբ նվիրում են **մեխակ**, նշանակում է՝ իմ սիրտը լի է քեզնով, **հովտաշուշան** - ես քեզ սիրեցի առաջին հայացքից, դու հմայիչ ես, **վարդագույն մեխակ** - ես երբեք չեմ մոռանա քեզ, **կարմիր մեխակ** - ես կարոտում եմ քեզ, **թրաշուշան** - արի հանդիպենք**,** (ծաղիկների քանակը նշում է հանդիպման ժամը) **նարգիզ** - չնայած դու անսիրտ ես, բայց մնա այդպես հմայիչ, **խատուտիկ** - հավատարմություն, **քաջվարդ** - երջանիկ ամուսնություն, **գարնանածաղիկ** - ես չեմ կարող ապրել առանց քեզ, **սպիտակ վարդ** - արի մտերմանանք, ես արժանի եմ քեզ, **վարդագույն վարդ** - գերագույն երջանկություն, **կարմիր վարդ** - միևնույնն է, դու իմը կլինես, **եղրևանի** - առաջին սեր, **սպիտակ եղրևանի** - սիրենք միմյանց, **կակաչ** - հիանալի սիրեկան, **աստղածաղիկ** - ես քեզ ավելի եմ սիրում, քան դու ինձ, **սպիտակ քրիզանթեմ** - հին սերը չի մոռացվում, **դեղին քրիզանթեմ** - դու ինձ հիասթափեցնում ես, **սպիտակ հակինթ** - ես երջանիկ եմ քո սիրով, **հասմիկ** - երբևէ կսիրե՞ս ինձ, **նարդոս** (լավանդա) - ես հավատարիմ եմ քեզ, **լալա** - երազում եմ քեզ հետ լինել, **մարգարտածաղիկ** - դու նման ես հրեշտակի, **անթառամ** - քո պատճառած ցավը չեմ կարող մոռանալ**, անմոռուկ** - հիշիր իմ մասին, իսկ **մանուշակը** խորհրդանշում է համեստություն և գաղտնի սեր, **զառ մանուշակ** (Անյուտայի աչիկներ) - միայն քո մասին եմ մտածում:

Առիթն օգտագործելով՝ տեղեկություններ եմ հաղորդում Բակուր իշխանի և Կաքավաբերդի մասին՝ ապահովելով նաև միջառարկայական կապ պատմության հետ.

Բակուր Ա. իշխան - (ծննդյան և մահվան թվականները անհայտ) Մեծ Հայքի Արշակունի թագավոր 161-162թթ. Գահ է բարձրացել Պարթևաց Վաղարշ Երրորդ թագավորի աջակցությամբ, հռոմեական Դրածո Սոհեմոս թագավորի տապալումից հետո: Կրել է «Թագավոր Հայոց Մեծաց» տիտղոսը:

Կաքավաբերդ, Կաքավու բերդ, Կքեբերդ-բերդ, Մեծ Հայքի Սյունիք նահանգի Ջորք գավառում: Ստ. Օրբելյանը վկայում է, որ Կաքավաբերդը 1126-ին գրավել և կործանել են սելջուկ թուրքերը:

Այսքանով ավարտում եմ դասի խթանման փուլը և անցում կատարում իմաստի ընկալմանը:

## *Իմաստի ընկալման փուլ*

Նշում եմ, որ «Ալպիական մանուշակ» պատմվածքը պարզ է, համարյա թե առանց սյուժեի, առանց բացահայտ կոնֆլիկտի, սուր բախումների ու հակադրությունների: Բակունցի գեղագիտական ըմբռնումների արտացոլումը հանդիսացող այս գողտրիկ պատմվածքը, սակայն, ունի ներքին կոնֆլիկտ, որն արտահայտվում է կերպարների բնութագրմամբ, բնության ու գյուղական կյանքի նկարագրության մեջ, որի միջոցով էլ Բակունցը բացահայտում է կերպարների վարքագիծը, հոգեբանությունը, կենցաղը, ապրելակերպը, թախիծն ու ուրախությունը, կատարում է ընդհանրացումներ, արտահայտում կյանքի մասին իր ըմբռնումները:

Պատմվածքի գաղափարը, հեղինակի գեղագիտական իդեալը դրսևորվում են հիմնականում ուշագրավ կերպարներով և բնանկարով:

Այս կարճ ներածականից հետո անցնում ենք հնագետի և նկարչի կերպարների բնութագրմանը Վենի դիագրամի միջոցով:Երկու կերպարների ընդհանրությունների բաժնում աշակերտները գրել էին.

Ե՛վ հնագետը, և՛ նկարիչը օժտված են իրենց զբաղմունքի մոլեռանդ պաշտամունքով և միշտ արարման արգասավոր պահի մեջ են:

Նկարիչն ու հնագետը անանուն հերոսներ են:

Ե՛վ նկարիչը, և՛ հնագետը միակողմանի հակումների տեր անձնավորություններ են:

Ե՛վ նկարիչը, և՛ հնագետը աշխարհի հոգսերին ու կարիքներին անտարբեր, անհոգ ապրող մարդիկ են:

Ճիշտ է, նկարիչն ու հնագետը տարբեր բնավորության տեր մարդիկ են, սակայն երկուսն էլ մի ընդհանրություն ունեն: Նրանք իրական Հայաստանից բավական հեռու էին կանգնած:

Տարբերությունների բաժնում լրացրել էին.

Տարբեր նախասիրությունների և հակումների տեր են հնագետը և նկարիչը: Եթե կյանքը արվեստ է, ապա հնագետն ու նկարիչը տարբեր ձևով են ընկալում այդ արվեստը:

Նկարիչը հնություններ չէր որոնում, հնագետն էլ անտարբեր էր գեղեցիկի նկատմամբ, քանի որ ամբողջությամբ կլանված էր հնություններով:

Նկարչի մասին խոսելիս աշակերտներն ասում են, որ նա օժտված է բնատուր շնորհքով, զգայուն սրտով, երևույթների արտաքին փայլով ինքնամոռացության աստիճանի տարվելու հատկանիշով: Նկարիչն ավելի շատ ապրում է իր երազներով, վայելում գեղեցիկի արտաքին հմայքով: Նա կարող է ժամերով հիանալ ու զմայլվել ալպիական տեսարաններով, անգղների թռիչքի ահեղ թափով, մանուշակի նուրբ թերթիկներով և նկարել այն ամենը, ինչ տեսնում են նրա սուր աչքերը, զգայուն հոգին: Սակայն նկարիչը նույնպես սահմանափակ մարդ է, ունի թերություններ: Նա չէր խորանում իրերի ու երևույթների էության մեջ: Նկարչին հատուկ են լիրիկան և երազանքը: Նա ունի գեղեցիկի պաշտամունք: Նա տեսնում է լեռնաշխարհի գույները, լսում է օրերի երգը, տեսնում գետի, ծովի ու ծաղկի հոգեպարար գեղեցկությունը, անմնացորդ հմայվում ու կախարդվում է դրանցով: Կաքավաբերդը նկարչի ներկապնակին նոր ու վառ գույներ հաղորդեց: Հեռանալով ավերակներից՝ նա իր մտապատկերում տանում էր մի ներդաշնակություն՝ գեղջկուհի-մանուշակ:

Նկարչից հետո անցնում ենք հնագետի կերպարի բնութագրմանը:

Պատմվածքում հնագետի մասին կա ընդամենը 22 տող: Սակավաթիվ այս տողերում մենք տեսնում ենք իր նախասիրությանն անսահման հավատարիմ, նպատակին հասնելու վճռականությամբ լի մտավորականի: Ամբողջ ճանապարհին նա ոչինչ չէր նկատում: Նրամ չէին գրավում լեռնաշխարհի զմայլանքը և լեռնաբնակների կյանքը, որով-

հետև ամբողջովին կլանված էր հայոց փառավոր անցյալով: Նա գերված էր մագաղաթյա մատյանների պատմությամբ, իշխանական որսորդության աղմկոտ տեսարաններով, ամրոցի երբեմնի աղմկոտ կյանքով: Այնքան էր տարված իր երևակայությամբ, որ չէր տեսնում մոխրի մեջ խաղացող կիամերկ երեխային և նույնիսկ իրեն թեյ մատուցող մանուշակի պես գեղեցիկ գեղջկուհուն: «Աշխարհը նրա համար ընդարձակ թանգարան էր, ուր չկար ոչ մի կենդանի և ոչ մի բզեզ»,- գրում է հեղինակը:

Իր տենդագին տարերքի մեջ, կտրված իրականությունից՝ հնագետը եռանդագին պեղում էր՝ չափսոսալով ալպիական մանուշակն ու խոտը: Ակնոցավոր մարդը ուսյալ աչքերով զննում է պատմությունը, ընբոշխնում Կաքավաբերդի հեռաբույրը, լսում դարերից եկող հնավանդ երգը, որոնում է գերեզմաններ: Հնագետը միակողմանի հետաքրքրությունների տեր մարդ էր, չուներ հոգու քնքշանք, սեր դեպի գեղեցկությունը, իսկ դա մեծ ցավ է պատճառում հեղինակին: Բնության զավակը, առավելապես կրթված ու զարգացած մարդը պարտավոր է զգալ, տեսնել բնությունը, հաղորդակից լինել և ապրել իր ժողովրդի ցավերով ու հոգսերով:

Աշակերտները մի առանձին սիրով ու հաճույքով են բնութագրում գեղջկուհուն.

Գեղջկուհին բարձրահասակ է, բարակիրան, լայն,բարձր ու սպիտակ ճակատով, սև ու երկար ծամերով, նույնքան սև ու գրավիչ աչքերով: Նա ավանդապահ է և ինքնաարտահայտման մեջ զուսպ է: Խանդի զոհը մահակի հարվածից գալարվում է, բայց աղմուկ չի հանում, այլ դուրս է գալիս՝ վրանի առջև զսպված հեկեկալու:

Բակունցը, նկարչի հետ ունեցած առնչությամբ, զարգացնում է գեղջկուհու կերպարը: Գեղջկուհին նկարչի ուշադրության և հետաքրքրությունների կենտրոնում է: «Ֆետրե գլխարկով մարդուն օջախի մոտ նստած կինը, որի զգեստի տակ պարզ երևում էին նրա ծնկները, թվում էր քրմուհի՝ եռոտանու առաջ ծխի շարժումները գուշակող»:

Ժպտալիս նրա շրթունքները հիշեցնում են արնագույն մեխակի թերթեր: Գեղջկուհին միայն օջախի կրակը չէ, որ բորբոքում է. նա բորբոքում է նաև նկարչի հոգում անթեղված կրակը, զարթնեցնում տանջալիորեն գեղեցիկ հուշեր:

Գեղջկուհին աշխարհ է եկել կյանքը գեղեցկացնելու, հաճելի պահեր պարգևելու, բայց ինքն էլ իր արժանիքները լավ չի գիտակցում:

Կաքավաբերդի բնության գլուխգործոցը գեղջկուհին է: Հեռավոր եզերքը, գույներն ու ձայները առկայծում ու արձագանքում են նրա էության մեջ: Նա այդ լեռների պոեզիան է, որը աչքի է ընկնում սպասումներով, տագնապներով, խորտակված անուրջներով:

Գեղջկուհու մեջ կա ազնվություն, նրբություն, տառապանք: Նա ապրում է սահմանափակ ու ձանձրալի կյանքով: Նա անպաշտպան է, թույլ, բայց գեղեցիկ է ու հպարտ: Ոչ ոք, բացի նկարչից, չի տեսնում նրա գեղեցկությունը:

Չենք մոռանում մի քանի տողով էլ բնութագրել կորեկի արտի հնձվորին: Գլխիկոր ու մռայլ այս մարդը, սոցիալական ծանր բեռի տակ կքած, անպտուղ երազող է (Քանի կով կառներ….): Անբավարարվածությունն ու համակերպվելու հոգեբանությունը հնձվորի բնավորության բնորոշ գծերն են: Հնձվորը սխալ է վարվում, երբ ծեծում է կնոջը: Բայց հոգեբանորեն նրան էլ կարելի է հասկանալ, խանդոտ հնձվորը չէր կարող լուռ ու մունջ տանել իր օջախում իր բացակայությամբ անծանոթ մարդկանց որոշ քայլերը՝ երեխային արծաթե դրամ, կոնսերվի տուփեր տալը, մինչև անգամ կնոջը նկարելը: Կյանքի պայմանները նրան դարձրել են խավարամիտ ու մռայլ, սահմանափակել աշխարհայացքն ու աշխարհըմբռնումը: Նա խիստ ավանդապահ մարդ է:

Պատմվածքի հերոսներից մեկը հեղինակն է: Բակունցի հոգին ծուլված է բնության շնչին, հարատև շարժմանը, բնության հետ խոսում է, հնագետի հետ պեղում, նկարչի հետ նկարում, կիսում է գեղջուկի հոգսերը, ուրախությունը, անկեղծորեն ապրում գեղջուկի ծանր վիճակը: Հեղինակը մեծ սեր ունի խեղճ ու միամիտ, անկեղծ ու անմիջական, աշխատասեր ու հյուրասեր մարդկանց նկատմամբ:

Եթե հնագետի և նկարչի ընկալմամբ Հայաստանը ներկայանում է հեքիաթային գույներով, ապա հեղինակի եսը հեքիաթը փոխում է իրականության և ներկայացնում է իրական Հայաստանը՝ իր մարդկանցով, բնությամբ, կենցաղով, հոգսերով: Բացում է մարդկային հոգու վարագույրները, ցույց տալիս աշխատավոր մարդու մեջ եղած **ՄԱՐԴԸ**:

Ըստ հեղինակի՝ արվեստագետը չպիտի թռուցիկ տպավորությունների, պարզագույն պատկերացումների տակ ներկայացնի իրականությունը: Նա պարտավոր է թափանցել երևույթի էության խորքը, ճանաչել ու արտացոլել կյանքն իր բազմաբովանդակ դրսևորումների մեջ:

Նա պահանջում է լավ ճանաչել մարդուն, թափանցել նրա խոհերի ու զգացմունքների աշխարհը, պեղել, լույս աշխարհ հանել նրա հոգու աննշմարելի խորքերի գանձերը, ցույց տալ նրա հոգու պոեզիան, հաղորդակից լինել նրա հոգսերին, կարիքներին և բարձրացնել նրան:

Հերոսների բնութագրմամաբ ավարտում ենք իմաստի ընկալման փուլը և անցնում կշռադատման փուլին:

## *Կշռադատման փուլ*

Այս փուլը կազմակերպում եմ հարցերի նիջոցով.

1. - Ինչու՞ է պատմվածքը կոչվում «Ալպիական մանուշակ»: Ի՞նչ դեր ունի այստեղ այդ գեղեցիկ ծաղիկը, ինչի՞ խորհրդանիշ է, յուրաքանչյուր դեպքում այն ի՞նչ է իմաստավորում:

- Մանուշակը խորհրդանշում է մեղմություն և ներդաշնակություն:
- Ալպիական մանուշակը խորհրդանշում է նրբություն, քնքշություն՝ շրջապատի դաժանության, բիրտ ուժի դեմ հանդիման:
- Մանուշակը գեղեցկության մարմնացում է, գեղեցկություն, որ ոչնչացնում է իր օտար զբաղմունքով տարված մոլեռանդ մի մարդ:
- Ալպիական մանուշակը, ինչ-որ հետադարձ ներգործության ուժով, մեզ համար դառնում է սիրո և մտերմության խորհրդանշան, երբ ասում է հեղինակը, թե «այն կնոջից» բաժանվելուց հետո նկարչի «մտքի մեջ մնացին մի զույգ մանուշակագույն աչքեր»...: Իսկ երբ խավար գիշեր է իջնում, մանուշակը մխիթարության աղբյուր է, գեղեցկություն, որ սփոփանք է բերում:
- Նկարչի քաղաք և ծոցատետրի մեջ դրած մանուշակը խորհրդանշում է կարոտ, խռովք, սփոփանք:
- Մանուշակը խորհրդանշում է նաև կորուսյալ գեղեցկություն, երբ հնագետի կողմից փայտի ծայրով արմատախիլ է արվում քարի ճեղքում աճած այդ գեղեցկությունը:
- Մանուշակը՝ որպես գարնան ամենասիրելի ծաղիկ, ժողովրդական հավատալիքներում խորհրդանշում է անբիծ գեղեցկություն, անաղարտություն:
- Մանուշակի բույրի հետ սովորաբար համեմատում են այն կանանց ու աղջիկներին, ովքեր միշտ մնում են մաքուր ու անաղարտ:

2. - Գրականության մեջ «Ալպիական մանուշակը» դիտվում է և՛ որպես պատմվածք, և՛ որպես նովել: Ձեր կարծիքով ի՞նչ է այն:

- Այս ստեղծագործության մեջ նկարագրությունները, խորհրդածություններն ավելի շատ են, քան գործողությունները: Շատ են նաև քնարական շեղումները, երկն ունի սրընթաց ավարտ: Այն, ուրեմն,

քնարաշունչ նովել է, բանաստեղծական մանրապատում:

3. - Պատմվածքում ի՞նչ մտքեր ու պատկերներ կան, որոնց «բառերը զրնգում են կոմիտասյան շնչով և փայլատակում են Սարյանի կտավների գույներով»:

4. - Գրողը պարզապես վերարտադրու՞մ է լեռնաշխարհի ինքնատիպ պեյզաժը, թե՞ հատուկ միտումով կերտում է բնանկար:

5. - Ինչպե՞ս հասկանալ «ծաղկափոշու մեջ թաթախված գունավոր բզեզին մանուշակը ճոճի էր թվում, իսկ աշխարհը՝ ծիրանագույն բուրաստան» մեծախորհուրդ պատկերը:

(Փոքրիկ երեխաների պատկերը ուրախ թռչկոտելիս):

6. - Ինչի՞ մասին և ինչպե՞ս է պատմում Բակունցը:

7. - Ծանոթանալով պատկերվող միջավայրին, տիպական հանգամանքներին՝ ի՞նչ տպավորություն եք ստանում, ի՞նչ ապրումներ եք ունենում, ի՞նչ զգացումներ են համակում ձեզ:

8. - Պատմվածքի կերպարներից ու՞մ եք համակրում, ու՞մ եք մերժում, ինչու՞: Ձեր տեսակետները հիմնավորեք կուռ ու տրամաբանական փաստարկներով:

9. - Ի՞նչ անուն կարող եք տալ գեղջկուհուն կամ ինչ անուն կսազի նրան:

-վայելչատես լեռնուհի, մանուշակ, եղեգնյա վրանի տիրուհին, ջրահարսը բնության գրկում, իսկական ալպիական մանուշակ խստաշունչ լեռների ու վեհաշուք ավերակների մեջ, Կաքավաբերդի քայլող ծաղիկ

10. - Ինչո՞վ է պատմվածքը գեղեցիկ:

11. - Ինչու՞ նա հանկարծ ծոցից հանեց ծոցատետրը, մատների արագ շարժումով նկարեց կնոջը:

-Որքան էլ թանկ են և նվիրական հնուց մնացած կոթողները, մարդն է ամենաանգնահատելի գեղեցկությունը, իր հոգով ու մարմնով նա է բնության ստեղծած գեղեցկությունների պսակը:

Հարցերի պատասխաններն ամփոփում եմ՝ մեջբերելով հետևյալ խոսքերը. «Մեր բազմահանճար ժողովրդի հայրենանվեր այրերն ու փափկասուն տիկնայք ձեռակերտ բազում գոհարներ են թողել ժամանակակիցներին ու սերունդներին: Դրանց մեջ են մեր անմահության գավազանակիր Մաշտոցի երկաթագիր գրերը, «Սասունցի Դավիթ» էպոսը, աստվածախոս Նարեկացու հոգու պոռթկումները, Քուչակի սիրո մրմունջները, ամենահայ-ամենահայր Կոմիտասի երգերը, արևային Սարյանի գույները, Չարենցի անզուգական «Անուշ Հայաստանը...»: Այս շարքում է, անշուշտ, ոսկելեզվակ Բակունցի՝ ցողունը կաքավի ոտքի պես կարմիր, ծաղիկը՝ ծիրանի գույն ալպիական մանուշակը, «Մանուշակ», որ շատ ու շատ սերունդների է բաշխել և էլի կբաշխի իր

անկրկնելի բույրն ու հմայքը»:

Այս աշխատանքի ավարտից հետո էլ հանձնարարում եմ տանը մի անգամ ևս ուշադիր կարդալ պատմվածքը, ուշադրություն դարձնել պատկերների միջոցով կյանքի ճշմարտացի արտացոլմանը, որովհետև «Ալպիական մանուշակ» պատմվածքի հիման վրա «նկարահանելու են կինոնկար»:

Այդ նպատակով սովորողներին բաժանում եմ չորս խմբի ու յուրաքանչյուր խմբի տալիս եմ սցենարի հարցերը.

**Առաջին մաս**

1.Ինչպե՞ս կսկսեիք Ձեր նկարահանած ֆիլմը:

2.Ինչպե՞ս ավելի ցայտուն կարելի է ներկայացնել բերդի ավերակ, լքյալ վիճակը:

3.Ինչպե՞ս կներկայացնեք քարերին քանդակված քարե արծիվը:

4.Ինչպե՞ս պետք է ներկայացվի ալպիական մանուշակը, որ համընկնի բակունցյան նպատակադրմանը:

5.Ինչպե՞ս պետք է ներկայացնել Բասուտա գետը, նրա ափին թառած գյուղը

**Երկրորդ մաս**

1.Ինչպե՞ս կնկարեիք սարվորների վրանները:

2.Ինչպե՞ս կնկարեիք հնագետին, նկարչին ուղեկցող գյուղացուն Կաքավաբերդում:

3. Հայ աշխատավորի ծանր կյանքը, հոգսն ու կարիքը:

**Երրորդ մաս**

1.Ինչպե՞ս կնկարեիք գեղջկական վրանը:

2.Ինչպիսի՞ն է գեղջկուհին. ինչպե՞ս կնկարեիք նրան:

3.Հակադրության ինչպիսի՞ հնարանք կարող եք օգտագործել լեռնային գեղեցկուհու և ծովային գեղուհու կերպարները կերտելիս:

**Չորրորդ մաս**

1.Ինչպե՞ս կներկայացնեիք հնձվոր գյուղացուն երեկոյան աշխատանքից տուն վերադառնալիս:

2. Հնձվոր գյուղացու խանդի տեսարանը:

3.Ինչպիսի՞ն կլիներ ֆիլմի ավարտը:

# *Գրերի գյուտի, Մեսրոպ Մաշտոցի կյանքի ու գործունեության ուսուցում*

***Դասի թեման՝*** Գրերի գյուտը: Մեսրոպ Մաշտոցի կյանքն ու գործունեությունը

***Նպատակը՝***

***սովորողը պետք է իմանա՝*** հայոց գրերի ստեղծման պատմական հանգամանքները, Կորյունի «Վարք Մաշտոցի» երկի համառոտ բովանդակությունը

***սովորողը պետք է կարողանա՝*** Կորյունի երկի հիման վրա ներկայացնել Մաշտոցի կյանքը, արժևորել գրերի գյուտը և Մաշտոցի հետագա գործունեությունը

***Դասավանդման մեթոդը՝*** դասախոսություն

***Դասի տևողությունը՝*** 2 ժամ

***Դիդակտիկ նյութեր՝*** Մոսրոպ Մաշտոցի դիմանկարը (նկարիչ Ստեփանոս Նազարյան), պատմական Հայաստանի քարտեզը, Գրիգոր Խանջյանի «Հայոց այբուբենը» գոբելենի նկարը. էջմիածնի եկեղեցու թանգարանում պահվող ոսկեձույլ և ադամանդակուռ հայ գրերի նկարը, Մատենադարանի, Մաշտոց և Կարյուն քանդակի, Մաշտոց և Սահակ Պարթև քանդակի, Օշականի Գրերի կոթողը հուշարձանի նկարները:

## *Իմաստի ընկալման փուլ*

Դասի այս փուլում ընթերցում եմ հունգար բանասեր, հայագետ էդմոն Շուցի, գերմանացի գիտնական, հայագետ Մարկվարտի, անգլիացի բանաստեղծ Ջորջ Բայրոնի, Ֆրանսիացի գրող Վիկտոր Հյուգոյի, Ֆրանսիացի հայագետ Ֆրեդերիկ Ֆեյդիի, ֆրանսիացի գիտնական, հայագետ Անտուան Մեյեի, Ֆրանսիացի լեզվաբան էմիլ Բենվենիստի, Լեոյի, Գ.Սևակի, Սիամանթոյի, Էդ.Աղայանի, Դանիել Վարուժանի, Մարիետա Շահինյանի, Գևորգ Էմինի արտահայտած մտքերը Մաշտոցի, այբուբենի և հայոց լեզվի մասին:

«Մաշտոցի հրաշալի ստեղծագործության՝ հայկական այբուբենի կատարելությունը աշխարհի մեծագույն լեզվաբանների զարմանքն է առաջացրել»:

**էդմոնդ Շուց**
**(հունգար բանասեր, հայագետ)**

«Եթե նկատի առնենք պատմական այն բացառիկ ծանր իրադրությունը, որի մեջ Մաշտոցը կարողացավ արթնացնել հայ ժողովրդի ազգային գիտակցությունը…և նրա այդ գործը համեմատենք Պիպինոսի և նրա զինակից Վինֆրիդի գործունեության հետ, որ նրանք արին գերմանական ժողովրդի համար, այս վերջինները «խեղճ թզուկներ» կերևան մտքի այդ հսկայի համեմատությամբ»:

**Մարկվարտ**
**(գերմանացի գիտնական, հայագետ)**

«…Ճոխ է հայոց լեզուն, և առատորեն կվարձատրվի նա, ով կուսումնասիրի այն: Ես փորձում եմ, իմ փորձն առաջ է ընթանում»:

**Ջորջ Բայրոն**
**(անգլիացի բանաստեղծ)**

«Ձեր հնամենի լեզուն ես չգիտեմ, բայց սիրում եմ այն: Դրա մեջ արևելքն եմ զգում, դարերն եմ նշմարում այնտեղ, տեսնում եմ անցյալի խորհրդավոր նշույլի շողարձակումը: Ինձ համար պարծանք է հայերեն թարգմանվելը»:

**Վիկտոր Հյուգո**
**(ֆրանսիացի գրող)**

«…Ձբաղումներուս գլխավոր նյու՞թը այսօր: Մեկն ու միակը՝ հայերենը: Գրաբարը, հայոց բարբառները: Այս է իմ սիրուս առարկան: Մի զարմանալի մասնավոր շնորհ ունեցող այս լեզուն, որ այսօր իսկ զորություն ունի ազատորեն և ստույգ արտահայտելու գիտական խստորոշ միտքը, փիլիսոփայական գաղափարները և բանաստեղծական նրբին, բազմերանգ կիսաստվերները միաժամանակ: Կյանքիս ամեն մի վայրկյանը նվիրված է այդ ուսումնասիրությանը: …Իմ գիտցած լեզուներուն մեջ հայերենը բացառիկ է նախ որպես զարմանալի տրամաբանական լեզու, ապա նաև՝ իր ճկունությամբ, նոր բառեր կազմելու դյուրություններով»:

**Ֆրեդերիկ Ֆեյդի**
**(ֆրանսիացի հայագետ)**

«Հայ այբուբենը գլուխգործոց մըն է: Հայ հնչյունաբանության հնչյուններեն յուրաքանչյուրը հատուկ նշանով մը նոթագրված է, և համակարգը այնքան լավ հաստատված է, որ հայ ազգին հայթայթած է հնչաբանության վերջնական արտահայտություն մը, արտահայտություն, որ պահպանված է մինչև այսօր՝ առանց փոփոխություն մը կրելու»:

**Անտուան Մեյե**
**(ֆրանսիացի գիտնական, հայագետ)**

«Լատիներենի և հայերենի այբուբենները նշանագրության զարմանալի օրինակներ են, որ անվանում ենք հնչութային: Ժամանակակից վերլուծողը գրեթե ոչինչ չի կարող փոխել այստեղ, յուրաքանչյուր տառ միշտ համապատասխանում է միայն մեկ հնչույթի, յուրաքանչյուր հնչույթ միշտ վերարտադրվում է նույն տառով»:

**Էմիլ Բենվենիստ**
**(Ֆրանսիացի լեզվաբան, հայագետ)**

«Մեր հազարամյա անցյալի այն երկար ճանապարհին, որի վրա փռված են մեր անհուն տառապանքները, ոչ բանակներ ունեինք մեր պահպանության համար, ոչ ուժ, ոչ հնարավորություն, ոչ էլ դրսի օգնություն, այլ մի հատիկ բան միայն՝ Մեսրոպյան գիրը»:

**Լեո**

«Մեսրոպի շնորհիվ հայ ժողովուրդը ձեռք է բերել մի անխորտակելի հոգևոր հայրենիք՝ մայրենի լեզվի իր կուլտուրան»:

**Գուրգեն Սևակ**

«Հայոց գրերը նույնքան են նպաստել հայ ժողովրդի պահպանմանը, որքան և հայ ռազմիկները»:

**(Մատենադարանի այցելուի գրառում)**

«Մեսրոպ, հայ դարերուն դիմաց կեցող Դուն ադամանդյա ապառաժ…»:

**Սիամանթո**

«Դարերի ավերիչ շունչը չկարողացավ եղծել Մեսրոպի ստեղծած գիրը, իրար հաջորդող աշխարհացունց արհավիրքները՝ նվաճումները, կոտորածը, գերությունը, գաղթը չկարողացան մարել Մեսրոպի վառած լուսավոր ջահը, նվաճողների զորքերն ու ասիմիլյատորների բոլոր բռնություններն անզոր գտնվեցին 36 տառերի ամենահաղթ զորության առջև»:

**Էդուարդ Աղայան**

«Փառք հայ տառերուն…Հայ լեզուն այդ տառերու սանդխտամատերուն վրա ոտն առ ոտն բարձրացավ ամեն դարու ճակատին վրա՝ հոն փորագրելու համար անմահությունը մեր ցեղին»:

**Դանիել Վարուժան**

«Մաշտոցի հայոց այբուբենի գյուտը վիթխարի նշանակություն ուներ հայ ժողովրդի գոյության, նրա ազգային ինքնատիպության

պահպանության համար: Ուսումնասիրելով դարաշրջանն ու Մաշտոցի գործը՝ բացառիկ պարզությամբ ես տեսնում եմ, թե մարդկության պատմության մեջ ինչպիսի վճռական ուժ է հոգևոր մշակույթի զենքը: Հայ ժողովրդի ինքնատիպ զարգացումը ոչ մի տեսակի զենք, հնագույն սրից մինչև ռումբը, չէր կարող պաշտպանել այնպիսի ուժով, ինչպես որ այդ արեց Մեսրոպ Մաշտոցի հայկական գրերի գյուտը»:

**Մարիետա Շահինյան**

«Մեսրոպ Մաշտոցը անհնարին պայմաններում արեց միակ հնարավորը. ստեղծեց ժողովրդին կործանումից փրկող, միավորող, գալիք օրհասների դեմ նրան զինող և նրա հարատևումն ապահովող միակ, պարզ ու հասարակ թվացող բանը՝ հայոց տառերը, հայոց գիրը, որը ուժեղ դուրս եկավ հայ ժողովրդի ունեցած բոլոր զենքերից… Մաշտոցն իր այդ առաքելությունը կատարեց այնպիսի մի ժամանակ, երբ նրա ստեղծածը, փաստորեն, տառեր չէին միայն, այլ մի ամբողջ երկրի ու ժողովրդի փրկության բանալի…»:

**Գևորգ Էմին**

## *Իմաստի ընկալման փուլ*

Այս փուլը կազմակերպում եմ դասախոսության միջոցով, ուր արծարծում եմ ներքոհիշյալ թվարկված հարցերն՝ ըստ տրված հերթականության.

1. Մաշտոցին բնութագրող Խորենացու տողերը.
2. Մաշտոցի ծննդյան տարեթիվը, ծննդավայրը, ծնողները.
3. Ստացած կրթությունը.
4. Ծառայությունը Խոսրով Գ-ի արքունիքում՝ դիվանատան քարտուղարի և թարգմանչի պաշտոնում.
5. Հմտանալը զինվորական արվեստում.
6. Աշխարհիկ կյանքից հրաժարվելը և նվիրվելը ճգնակեցությանը.
7. Կրոնական-քարոզչական գործունեությունը իր հետևորդ հավատացյալների և աշակերտների հետ.
8. Հայ ժողովրդի քաղաքական և սոցիալական վիճակը Մաշտոցի քարոզչության տարիներին.
9. Մտահոգությունը հայ ժողովրդի ճակատագրով.
10. Մտադրությունը սեփական գիր ունենալու համար.
11. Մաշտոց, Սահակ Պարթև, Վռամշապուհ թագավոր.
12. Վահրիճը Հաբել երեցի մոտ՝ դանիելյան նշանագրերը վերցնելու.
13. Դանիելյան նշանագրերի փորձարկումը.
14. Մաշտոցը Ամիդում, Եդեսիայում, Սամոսատում.

15. Հակիրճ տեղեկություններ Ամիդի, Եդեսիայի, Սամոսատի մասին.

16. Մաշտոցյան այբուբենը և նրա 5 հիմնական սկզբունքները.

17. Մաշտոցի հանդիպումը հունական դպրության հմուտ գրագիր Հռոփանոսի հետ.

18. Վերադարձը հայրենիք.

19. Մաշտոցի, Սահակ Պարթևի և Վռամշապուհ թագավորի մշակութային գործունեության շարունակությունը.

20. Մաշտոցը վրաց և աղվան ժողովրդի այբուբենի ստեղծող.

21. Պայքարը «բորբորիտներ » աղանդավորական շարժման դեմ.

22. Մաշտոցը և Սահակ Պարթևը «Աստվածաշնչի» թարգմանիչ.

23. Մաշտոցի վախճանը և Խարենացու վկայությունը.

24. Հուղարկավորության հետ կապված հարցեր.

25. Մաշտոցի գրական ժառանգությունը՝ շարականներ, թղթեր և «Յաճախապատում ճառք» ժողովածուն:

1600 տարեկան է այսօր հավերժ կենդանի Մեսրոպ Մաշտոցը, և սակայն ամեն տարի նա յոթ տարեկան է դառնում՝ չէ որ ամենից շատ նա պատկերանում է մեզ առաջին դասարան հաճախող յոթ տարեկան երեխաների կերպարանքով, որոնք, առաջին անգամ դպրոց մտած, հեգում են հայոց այբուբենի `դարերի ճամփա կտրած տառերը՝ այբ, բեն, գիմ, դա….

Մեսրոպ Մաշտոցն ու նրա ստեղծած տառերը այսօր 1600 տարեկան են: 1600 տարին նրանց երկուսի համար էլ պատանեկան տարիք է, և նրանց գալիք կյանքը չափվելու է տասնյակ հարյուրավոր դարերով:

«…Նա հրեշտակի տեսք ուներ, բեղմնավոր միտք, պայծառ էր խոսքով…, մարմնով՝ փառահեղ…, հավատով՝ ուղիղ, սիրով՝ անկեղծ»,- այպես է նրան բնութագրել Մովսես Խորենացին:

Մեսրոպ Մաշտոցը՝հայ գրերի ստեղծողը, մատենագրության հիմնադիրը, առաջին թարգմանիչը, առաջին ուսուցիչն ու հայալեզու դպրոցի հիմնադիրը, ծնվել է պատմական Հայաստանի Տարոն գավառի Հացեկաց գյուղում (այժմ՝ Թուրքիայում) կիսաազատ գյուղացու ընտանիքում: Մաշտոցի ծննդյան տարին ընդունված է համարել 361 թվականը: Նա Վարդան անունով երանելի մարդու որդին էր, որի մասին Մաշտոցի կենսագիրները ոչինչ չեն պատմում: Մեսրոպը իր ժամանակի համար լավ կրթություն է ստացել. նա կրթվում է հունական դպրությամբ հայրենի գավառում՝ Տարոնում: Խորենացին մի կարևոր հիշատակություն է անում, ըստ որի՝ Մաշտոցը սնվել ու սովորել է Ներսես կաթողիկոսի մոտ: Հետո գնացել է Վաղարշապատ մայրաքաղաքը և ծառայության մտել Խոսրով Գ-ի արքունիքում դիվանատան քարտուղարի և թարգմանչի պաշտոնով: Նա իմացել է հունարեն, ասորերեն և պարսկերեն: Արքունիքում Մաշտոցը հմտանում է զինվորական արվեստում,

որով սիրելի է դառնում իր զորականներին: Թե քանի տարի է Մեսրոպ Մաշտոցը պաշտոնավարել արքունիքում, ստուգապես հայտնի չէ: Այնուհետև նա թողնում է զինվորական ծառայությունը, տարվում է կրոնական գրքերի ընթերցանությամբ, թողնում է աշխարհիկ կյանքը ու իր անձը նվիրում ճգնակեցության (394թ.): Խստակեցությամբ՝ միանձնությամբ, լեռնակեցությամբ, օրերը քաղցած ու ծարավ անցկացնելով՝ իր նկատմամբ հավատ է առաջացնում և ունենում բազմաթիվ հետևորդներ ու աշակերտներ, որոնց հետ սկսում է կրոնական-քարոզչական գործունեություն: Մաշտոցը իր հավատացյալներին առնելով՝ մեկնում է Գողթնի կողմերը (ներկայիս Ադրբեջանի Նախիջևանի տարածքում), ուր դեռևս ամուր էր հեթանոսական կրոնը: Կորյունի վկայությամբ՝ Մաշտոցը Գողթնի «անկարգ ու անխնամ» տեղի աստվածավախ ու հյուրամեծար իշխան Շաբիթի օգնությամբ սկսում է քարոզել և շատերին «գերում» ու բերում «Քրիստոսի հնազանդությանը»: Ըստ Կորյունի և Խորենացու՝ Մաշտոցը հենց այստեղ, գործնականում տեսնելով օտար լեզուներով եկեղեցական մատյանների միջոցով քրիստոնեության քարոզչության դժվարությունները, մտահղանում է հայոց լեզվով գրականություն ունենալու անհրաժեշտությունը:

Մաշտոցը մտահոգված էր ամբողջ հայ ժողովրդի ճակատագրով: Հայ ժողովրդի վիճակը Մաշտոցի գործունեության տարիներին չափազանց ծանր էր և հղի շատ ավելի լուրջ հետևանքներով: Բաժանված լինելով երկու մեծ տերությունների՝ բյուզանդական և պարսկական պետությունների միջև՝ հայ ժողովուրդը ոչ միայն կորցրել էր իր միասնականությունն ու անկախությունը, այլև ընկել էր քաղաքական և մշակութային տարբեր ազդեցությունների տակ: Երկրում՝ իբրև պետական և ուսումնական ու կրոնական-պաշտամունքային լեզու, տիրապետում էին հունարենն ու ասորերենը: Պարսից թագավորները ձգտում էին վերացնել քրիստոնեությունը և հայերին պարտադրել զրադաշտական կրոնը, որը, ինչպես հայտնի է, հանգեցրեց Վարդանանց պատերազմին: Ձուլման վտանգը սպառնում էր երկու հատվածներում էլ: Այս պայմաններում զարմանալի չէր Մաշտոցի մտահոգությունը՝ սեփական գիր ունենալու համար: Իր մտադրությունը իրականացնելու նպատակով Մաշտոցը վերադառնում է Վաղարշապատ և դիմում Սահակ կաթողիկոսին: Պարզվում է, որ Սահակ Պարթևն էլ նույն մտատանջությունների նեջ է: Մաշտոցն ու Սահակ կաթողիկոսը որոշում են հրավիրել «երանելի միաբանյալների» խորհուրդ՝ գրերի ստեղծման հարցը քննության առնելու: Ժողովը հավանություն է տալիս այդ ոգևորիչ ծրագրին: Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևը իրենց մտադրության մասին պատմում էն Վռամշապուհ թագավորին, խնդրում և համոզում են, որ հոգ տանի գրեր ստեղծելու ուղղությամբ: Քաջալերելով այդ նախաձեռնությունը՝ Վռամշապուհ թագավորը հայտնում է, որ Դանիել անունով

ասորի մի եպիսկոպոսի մոտ կան հայերեն նշանագրերը: Թագավորը Վահրիճ անունով մեկին հրովարտակով ուղարկում է Հաբել երեցի մոտ, որն ասորի Դանիել եպիսկոպոսի մերձավորն էր: Հաբելը շտապ գնում է Դանիելի մոտ, նրանից վերցնում գրերը և ուղարկում հայոց արքային: Կորյունը պատմում է, թե ինչպես դանիելյան գրերը ստանալուց հետո թագավորի օժանդակությամբ դպրոցներ են բացվում, և Մաշտոցն սկսում է զբաղվել ուսուցման գործով: Սակայն շուտով պարզվում է, որ այդ գրերը, որոնք հայագիտության մեջ «դանիելյան նշանագրեր» անունն են ստացել, չեն բավարարում հայոց լեզվի պահանջներին. հայերենի հարուստ հնչյունական համակարգի համար այն թեր, անկատար է: Ուստի Մաշտոցը հրաժարվում է այդ գրերից ու սկսում որոնումները: Որոնումները շարունակելու նպատակով Մաշտոցը իր աշակերտներով լինում է այն ժամանակվա ուսումնական ու գիտական աչքի ընկնող կենտրոններում՝ Ամիդում և Եդեսիայում: Աշակերտներից մի քանիսին ուղարկում է Սամոսատ՝ հունական կրթություն ստանալու: Այստեղ ընդհատում եմ դասախոսությունը և հակիրճ տեղեկություն տալիս Ամիդի, Եդեսիայի և Սամոսատի մասին.

### *Եդեսիա*

Եդեսիա - էդեսսա, Ուռհա, Ուրֆա քաղաք Միջագետքի հյուսիս-արևմուտքում՝ Եփրատի վտակ Դայսան գետի վրա: Մեծ հռչակ էր վայելում Եդեսիայում Եփրեմ Ասորու հիմնադրած պարսկական դպրոցը, ուր ուսանելու էին գնում նաև Հայաստանից: Եդեսիայում կար հարուստ մատենադարան: Ավանդության համաձայն տակավին Քրիստոսի օրոք Եդեսիայի բնակչությունն ընդունել է քրիստոնեություն: Որոշ ուսումնասիրողների կարծիքով Մաշտոցն այստեղ է ստեղծել հայոց գրերը: Եդեսիան 5-6-րդ դարերում եղել է կռվախնձոր Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև: 640 թվականին Եդեսիան գրավել են արաբները, որոնց տիրապետության տակ է մնացել մինչև 944 թվականը: Ապա Եդեսիային տիրել են բյուզանդացիները, իսկ 1071 թվականին՝ սելջուկթուրքերը: 11-12-րդ դարերում ստվարանում է Եդեսիայի հայ բնակչությունը: 1144 թվականին Եդեսիայում կար 47 հազար հայ բնակիչ: 12-րդ դարի արաբ պատմագիր Իբն ալ Ասիրի հավաստմամբ Եդեսիան ամբողջությամբ հայերով է բնակեցված: Երբ 1144 թվականի Եդեսիայի վրա հարձակվեցին Մոսուլի Զանգի ամիրայի հրոսակները, քաղաքի պաշտպանների առաջին շարքերում հայերն էին, որոնց արիությունը Ներսես Շնորհալին համեմատում է Վարդանանց նահատակների սխրանքի հետ, իսկ Եդեսիայի ավերումը համարում նույնպիսի դժբախտություն, ինչպիսին Անիի կործանումն էր: 1391 թվականին Եդեսիան ավերել են Լենկթեմուրի հրոսակները:

## *Ամիդ*

Դիարբեքիր - բուն անունը՝ Ամիդ. քաղաք Մեծ Հայքի Չորրորդ Հայք նահանգում, Արևմտյան Տիգրիսի աջ ափին: Հիմնադրման ժամանակն անորոշ է: Ասորեստանյան տիրապետության քայքայումից հետո (մ.թ.ա.7-րդ դարի վերջ) Դիարբեքիրը միացել է Հայաստանին: Տարբեր ժամանակներում Դիարբեքիրում հայերի կողքին բնակություն են հաստատել ասորիները, հրեաները, քրդերը, թուրքմենները, թուրքերը: Դեռևս վաղ միջնադարում Դիարբեքիրը հայ մշակույթի կենտրոն էր: Հայերն այստեղ զբաղվում էին արհեստներով, առևտրով, երկրագործությամբ: Մերձավոր արևելքի շուկաներում հռչակված էր Դիարբեքիրի ոսկերիչների, ջուլհակների, ներկարարների, կաշեգործների, դերձակների արտադրանքը: 19-րդ դարի վերջին Դիարբեքիրում կար 7 հայկական վարժարան, որից երկուսը պատկանում էր եկեղեցուն: 19-րդ դարի վերջու Դ-ում ապրում էր շուրջ 10 հազար հայ: նրանց մի մասը դարձավ 1895թ. համիդյան ջարդերի զոհ:

Այժմ Դ. Թուրքիայի համանուն վիլայեթի կենտրոնն է: 20-րդ դարի սկզբին հայերն ունեին երկու եկեղեցի՝ Ս. Սարգսի հնգախորանը (ուներ բազմաթիվ արժեքավոր ձեռագրեր) և Ս. Կիրակոսի յոթնախորանը:

## *Սամոսատ*

Սամոսատ, Շամուշատ-հնագույն քաղաք Կոմմագենեում՝ Եփրատի աջ ափին: Մ.թ.ա.8-րդ դարում հաճախ դաշնակցել է Ուրարտու պետությանը՝ ընդդեմ Ասորեստանի: Մ.թ.ա. 330-ից հետո մտել է Երվանդունիների հայկական թագավորության մեջ, մ.թ.ա. 3-րդ դարի առաջին կեսին դարձել Երվանդունիների միացյալ թագավորության մայրաքաղաքը և Սամոս Ա թագավորի անունով վերանվանվել Սամոսատ: 639-ին արաբները գրավել են Սամոսատը և մտցրել Ջազիրա նահանգի մեջ: Սամոսատի բյուզանդացիների նվաճումից (958) հետո այնտեղ հաստատվել են մեծ թվով հայեր: Ըստ արաբ աշխարհագիրՅակուտ ալ-Համավիի՝ 13-րդ դարի սկզբին Սամոսատում եղել է հայկական թաղամաս: Մինչև 1915թվականի Մեծ եղեռնը Սամոսատի բնակիչները հիմնականում եղել են հայերը:

Ներկայումս կոչվում է Սամսատ:

Եդեսիայի դիվանատանը Մաշտոցն ուսումնասիրում է տարբեր լեզուների այբուբենները, ծանոթանում դրանց կառուցվածքին, տառերի ձևերին, գրության սկզբունքներին: Արդյունքն այն եղավ, որ ծնվեցին մեր սեփական գրերը՝ եղած օտարներից միանգամայն տարբեր, օժտված բոլոր լավագույն արժանիքներով, որ ունեին այդ եղածները: Մաշտոցի ստեղծած հայկական այբուբենի հիմնական սկզբունքները հետևյալներն են. 1. մեկ տառին մեկ հնչյուն, մեկ հնչյունին՝ մեկ տառ,

2.առաջընթաց հորիզոնական գրություն, 3. տարորոշիչ նշանների բացակայություն, 4. հնչյունային գիր, 5. Մաշտոցն ընտրեց տառերի անջատական գրություն, տառերը գրվում են հատիկ-հատիկ և առանձին:

Եդեսիայում ավարտելով իր գործը՝ Մաշտոցը գնում է Սամոսատ: Նա այնտեղ հանդիպում է հունական դպրության հմուտ մի գրագրի («գրիչ ոմն հելլենական դպրութեան»)՝ Հռոփանոս անունով, որին և հանձնարարում է իր ստեղծած տառերը ձևավորել գեղագրորեն: Ստեղծված այդ այբուբենը հետագա երախտագետ սերունդների կողմից կոչվեց Մեսրոպյան գիր, իսկ նրանով գրվածը՝ Մեսրոպատառ հայերեն: Սամոսատում էլ Մաշտոցը թարգմանել է Սողոմոնի «Առակաց գրքից» մեկ նախադասություն. «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»: Գործն ավարտած համարելով՝ Մաշտոցը դիմում է դեպի հայրենիք: Դեպքերի մասնակից Կորյունը Ասորիքից հայրենիք վերադարձող Մաշտոցին համեմատում է Մովսես մարգարեի հետ: Կորյունը ոգեշունչ խանդավառությամբ է նկարագրում այն ընդունելությունը, որին արժանանում է Մաշտոցը հայրենիք վերադառնալով: Թագավորն ու կաթողիկոսը, «նախարարագունդ ավագանու ամբողջ բազմությունն առնելով», դուրս էին եկել քաղաքամայր Վաղարշապատից, հասել Ռահ կամ Երասխ գետը ափը, ուր դիմավորել էին Մեսրոպ Մաշտոցին և նրա աշակերտներին:

Ստեղծված էին հայկական գրերը և գործադրմամբ հավաստվել էր դրանց պիտանիությունը: 405 թվականին հորինելով տառերը՝ Մոսրոպ Մաշտոցը հայ ժողովրդին նվիրեց իր հոգեկան կերտվածքի բյուրեղացման, իր մշակույթի զարգացման հզոր մի զենք: Մաշտոցը անհնարին պայմաններում արեց միակ հնարավորը՝ ստեղծեց ժողովրդին կործանումից փրկող, միավորող, գալիք բոլոր օրհասների դեմ նրան զինող և նրա հարատևումն ապահովող միակ, պարզ ու հասարակ թվացող բանը՝ հայոց տառերը, հայոց գիրը, որը ուժեղ դուրս եկավ հայ ժողովրդի ունեցած բոլոր զենքերից: Դրանք տառեր չէին միայն, այլ մի ամբողջ երկրի ու ժողովրդի փրկության բանալի:

Բայց գրերի գյուտը ժողովրդին ոչ մի բարիք չէր տա, եթե Մեսրոպ Մաշտոցը, Վռամշապուհ թագավորը և Սահակ Պարթևը հետևողականորեն չշարունակեին իրենց մշակութային հոյակապ գործունեությունը: Գիտական, եկեղեցական և մանկավարժական կադրեր պատրաստելու նպատակով թագավորի հրամանով Արևելյան Հայաստանի տարբեր վայրերում պետական ծախսերով բացվում են բազմաթիվ դպրոցներ: Այդ դպրոցներում սովորում էին ոչ միայն հարուստների, այլև ռամիկների որդիները: Մաշտոցը կարողացավ վերացնել հունական իշխանությունների կամայականությունները և Արևմտյան Հայաստանն էլ լուսավորել մայրենի դպրության լույսով: Մաշտոցի գործունեությունը բարձր է գնահատում Թեոդոս Բ-ն (408-450թթ.), «որից և հրաման դուրս

եկավ, որ վայել մեծարանքով **Ակումիտ** ( տքնող, անքուն, հսկող) անունով կոչեն սրբին»,-գրում է Կորյունը:

Որոշ ժամանակ անց Մաշտոցը մտահոգվում է ստեղծել նշանագրեր հարևան ժողովուրդների լեզվի համար ևս: Նա գնում է Վրաստան և ներկայանում Բակուր թագավորին և Մովսես եպիսկոպոսին: Սրանց օժանդակությամբ և Ջաղա անունով մեկի գործակցությամբ, որը հայերենի և հունարենի թարգմանիչ էր, Մաշտոցը «իրեն տրված երկնային շնորհով», ինչպես գրում է Խորենացին, ստեղծում է վրաց լեզվի նշանագրերը: Սրանից հետո Մաշտոցը նույն մտադրությամբ գնում է Աղվանից աշխարհ: Ե՛վ Վրաստանում, ե՛վ Աղվանքում Մաշտոցը կազմակերպում է «աստվածային գրքերի» թարգմանությունը և դպրոցական ուսուցման գործը:

Մաշտոցի բազմաբովանդակ գործունեության մեջ հատկանշական է նաև այն ժամանակ նոր ծագած աղանդավորական «բորբորիտոններ աղանդ» շարժման դեմ տարած պայքարը: Մաշտոցի ջանքերը զուր են անցնում՝ աղանդավորներին «կամավոր» պաշտոնական եկեղեցեու դավանանքին բերելու, ուստի ստիպված են լինում նրանց երկրից դուրս քշել:

Միայն իր առաքելությունը ավարտելուց, Հայաստանի բոլոր կողմերում, ինչպես և Աղվանքում ու Վրաստանում լուսավորության գործը հաստատուն հիմքերի վրա դնելուց հետո նա վերադառնում է մայրաքաղաք, միանում Սահակ Պարթևին և շարունակում գրական-թարգմանչական գործունեությունը: Նրանք երկուսով թարգմանում են «Աստվածաշունչը» գրեթե ամբողջությամբ ( կասկածի տակ է առնվում միայն Մակաբայեցվոց գրքի թարգմանությունը): Հավանական է համարվում նաև այլ եկեղեցական գրքերի թարգմանությունը Սահակ Պարթևի և Մոսրոպ Մաշտոցի ձեռքով կամ գոնե նրանց անմիջական մասնակցությամբ:

Մեսրոպ Մաշտոցը վախճանվում է 440թվականին՝փետրվարի 17-ին: «Խաչի աղոտ ձևով լույս էր շողում այն տան վրա, որտեղ երանելին հոգին ավանդեց, և շուտով չանհետացավ այդ շողքը, քչերին տեսանելի չեղավ, այլ ամբողջ բազմությանը»,-գրում է Մովսես Խորենացին: Այնքան մեծ էր նրա ժողովրդականությունը, որ Վաղարշապատ մայրաքաղաքում բուռն վեճեր են առաջանում մարմինը թաղելու տեղի շուրջը: Խորենացին պատմում է, որ հասարակության ու իշխանավորության մի մասը առաջարկում է տանել ծննդավայր՝ Տարոնի Հացեկաց գյուղը, մյուս մասը՝ Գողթն, որտեղ առաջին անգամ Մաշտոցը սկսել էր ուսուցանել, մի մասն էլ առաջարկում էր թաղել հենց մայրաքաղաքում: Սակայն իր իշխանական դիրքով հաղթում է ժամանակի հազարապետ (այսօրվա ըմբռնմամբ՝ վարչապետ) Վահան Ամատունին, որը Մաշտոցի աշակերտներից էր: Նա արժանավայել ու փառավոր հուղարկավորու-

թյամբ ուսուցչի աճյունը տանում է իր գյուղը՝ Օշական: Թաղումը եղավ փառահեղ. ամբողջ հոգևորական դասը, մայրաքաղաքի ժողովուրդը մասնակցեց թաղմանը: Ի հավերժացումն Մաշտոցի անվան՝ Վահան Ամատունին նրա գերեզմանին տաճար կանգնեցրեց մահվանից երեք տարի հետո: Օշականն այսօր սրբավայր է. այստեղ ամեն տարի երկու անգամ մեծ տոնակատարություն է լինում՝ Սուրբ Սահակի և Մեսրոպի տոնը (հունիսի վերջին, հուլիսի սկզբին) և Թարգմանչաց (նրանց աշակերտների) տոնը (հոկտեմբերին):

Մաշտոցին են վերագրվում նաև ինքնուրույն երկեր, ինչպես՝ Ապաշխարհության շարականները, «Յաճախապատում ճառք» ժողովածուն, Պրոկղ եպիսկոպոսին ուղղված թուղթը և այլն:

***Շարական*** - հոգևոր երգի տեսակ, որ երգվում է եկեղեցական արարողությունների ժամանակ: Շարականն օրհներգություն է՝ ձոնված ամենակալ Աստծուն: Առաջին շարականներն ստեղծեցին և երգեցին Ս. Պարթևը, Մ. Մաշտոցը: Շարականներ պարունակող ժողովածուն կոչվում է «Շարակնոց» կամ «Շարական»: Սակայն կարծիք կա նաև, որ այն նշանակում է թանկարժեք ակների (քարերի) շարան. քանի որ այս չքնաղ հոգևոր երգերը շատ նման են թանկարժեք քարերի շարանի:

Մաշտոցը «Յաճախապատում ճառք»-ը գրել է 420-ական թվականներին: Համառոտ կանգ առնենք Մաշտոցի այդ գրքի գաղափարական բովանդակության վրա: «Յաճախապատումը» ընդհանուր առմամբ կրոնափիլիսոփայական և քրիստոնեաբարոյախոսական բովանդակություն ունի: Նրա տեսակետով՝ ամեն ինչի ստեղծողն ու արարիչը ամենազոր Աստվածն է: Հայր Աստվածն իր զորությամբ, գիտությամբ, իմաստությամբ, արարչությամբ և բարերարությամբ անժամանակ, անսկիզբ, անվախճան ու հավիտենական է: Նա ունի որդի և Սուրբ հոգի, որոնք միասնություն են կազմում, մի անձ, մի էություն: Մաշտոցի ստեղծագործության մեջ աշխատանքի միջոցով մարդը հասնում է իր հանճարի գագաթնակետին: «Ճառերում» Աստված դիտվում է իբրև ողջ բարության ու լավության մարմնացում: Աստծու բնավորության մեջ բացասական ոչինչ չկա: Մեսրոպ Մաշտոցն անհուն սիրով կապված է մարդու հետ և ցանկանում է, որ նա բարոյապես անբիծ լինի: Մարդը պետք է սիրի իր նմանին, սիրի իր ծնողներին, ընկերներին, մերձավորներին, քաղաքացիներին: Բանակար մարդը պետք է բարի գործ կատարի: Նա չպետք է զբաղվի մարդասպանությամբ, գողությամբ, ավազակությամբ, բանսարկությամբ, սեռական սանձարձակությամբ:

Մաշտոցը մարդու բարոյական ամենաբարձր հատկանիշներից մեկը համարում է ***<u>հեզությունը:</u>*** Մաշտոցի հասկացողությամբ հեզությունը խոնարհության, համբերության և ժուժկալության ամենախոր արմատն է: Հեզությունը ուսուցիչ և դաստիարակ է մանուկներին, ծերունիների փառքն է, երիտասարդների պատիվն է, կույսերի պանծալի

պսակն է: Հեզությունը եկեղեցու մանուկների հոգևոր սնունդն է, առաքինության զգաստությունը, բարոյական անձանց զարդը, հավատի, հույսի, սիրո, սրբության, աղոթքի, պահքի, խոնարհության, ժուժկալության և շատ բարության հիմքն ու հենարանը:

Մաշտոցի բարոյախրատական բովանդակություն ունեցող ստեղծագործություններում մեծ տեղ են բռնում ***գթության*** գաղափարները: Ամեն մարդ պետք է ունենա գթության զգացում: Առանց հեզության ու գթության մարդը դադարում է Աստծու պատկեր լինելուց: Գթությունը սուրբ սիրո խնամք է, ծնողների հիշատակը, բարության արմատը, ուրախության ծաղիկը: Գթություն ոչնչացնում է ագահությունը, մարդկանց վարժեցնում է սակավապետության, հանդիմանիչ է լկտիությանը, անմարդասիրությանը: Գթությունը հպարտության թշնամին է, նենգությունների լուծողը, խորամանկությունը խայտառակողը, ոխակալության մերժողը, համբերողներին քաջալերողը, զգաստության պսակը, մարդու մեջ սուրբ, անարատ ու անբիծ սեր ստեղծողը: Մաշտոցը գթությունը համարում է բարոյական հավիտենական նորմաներից մեկը, որ կյանքում պետք է կիրառեն բոլորը:

***Սիրո*** գաղափարը նույնպես մեծ տեղ ունի Մաշտոցի աշխատության մեջ: Քրիստոնեական հոտի բոլոր անդամները պետք է սիրով կապված լինեն միմյանց հետ: Պետք է անսահման սիրել ու փառաբանել Սուրբ Երրորդությունը: Սիրո բարիքները անչափ են ու անսահման. սերը առողջության, անարատության, անբիծության և աշխարհի ողջ բարեգործությունների ու բարոյական չափանիշների հիմքերից մեկն է: Սերը բարիքների հորդ աղբյուր է, բոլոր խռովությունների թշնամին է, խաղաղություն բերող, նեղությունների ու վշտերի լուծիչ: Առաքինության բոլոր չափանիշները սիրով ու հեզությամբ են կապվում միմյանց հետ:

Ահա այսքանը Մաշտոցի «Հաճախապատում Ճառերի» գաղափարական շատ համառոտ բովանդակությունը:

Սրանից հետո բոլոր սովորողներին բաժանում եմ Սիլվա Կապուտիկյանի «Երդում մայրենի լեզվին». բոլոր սովորողները կանգնում են իրենց տեղում, ամենալավ ասմունքողին կանգնեցնում եմ դասարանի կամ լսարանի կենտրոնում և հանձնարարում կարդալ. պահանջում եմ ուշադիր հետևել ընթերցողին, որպեսզի երբ ընթերցվում է «երդվում եմ» բառը, բոլորը բարձրաձայն ու խրոխտ կրկնեն՝ երդվում եմ:

Երդման արարողությունից հետո պահանջում եմ, որպեսզի բոլորը երդման այս թերթիկները տանը ամրացնեն գրականության տետրի հենց առաջին էջին:

## *Երդում մայրենի լեզվին*

«Ժամանակի ակունքներից ես գալիաս դու, իմ հա՛յ լեզու, դարերի լեռնապարի վրայով: Հայկյան նետի սույլ ու շառաչը կա քո մեջ, Ավարայրի վրա կանգնած աղոթք-աղաղակի սաստկությունը: Դու՝ փիղ ու բաբանի զարհուրանքին դիմադիր հառնած անկործանելի պարիսպ, Ձվարթնոց տաճարի չեղծված, չավերված սկզբնապատկեր:

Երդվում եմ ծնունդովս կամուրջ դառնալ քո դարեդար անցումին, քար դառնալ քո պարսպացյալ ամրությանը, աղոթարար լինել քո սրբազնագույն տաճարին: Երդվու՛մ եմ:

Դու Գողթան կրակված գուսաններից ինձ հասած մոխրաթաթախ անթեղ, ժամանակի ժանգը չբռնող ՝ ոսկեդարի ոսկի, Դավթի իմաստուն պայծառություն և Միհրի իմաստնագույն խռովք, Նարեկացու տիեզերաձավալ ալեկոծում և Քուչակի վարդաշաղախ սիրերգություն, Եղիշեից Եղիշե ձգվող անհուն մաքառումի զորավոր զրինգ:

Երդվում եմ շուրթերովս բորբոք պահել քո վահագնաբոց կրակը, շքանշանի պես կրել քո ոսկին, լցվել քո լույսով ու քնքշությամբ՝ ինչպես վաղորդայնի օդով, զրահավորել հոգիս քո արի գեղեցկություններով: Երդվու՛մ եմ:

Դու՝ հայրերիս քրտինքին շաղախված՝ սևահողի պես ազնի՜վ հորովել և մայրական կաթնաբու՜յր մրմունջ:Դու՝ բյուրավոր նահատակների վերջին հառաչի հետ ինձ ավանդված պատգամ, օտարության բիրտ ալիքների միջից ինձ կանչող, ինձ ապավինող հարազատ: Դու՝ հոգեդարձ իմ ժողովրդի նորածնության նվիրական ճիչ, արարման և ստեղծումի աշխարհալուր ղողանջ:

Երդվում եմ պահպանել քեզ որպես սերնդեսերունդ փոխանցած և ինձ վստահած տոհմանման սրբություն, նվիրումովս լրացնել քո մասունքանման կորուստները, նորոգել քո մագաղաթյա ազնվականությունը նոր ժամանակների հյութ ու ավիշով, քեզնով արտասանել միայն արդարությա՛ն խոսքեր: Երդվում եմ կրել քեզ շնչո՛վս, արյունո՛վս, այրումո՛վս և ինձնով տանել-հաղորդել զավակներիս քո հավերժական կենդանությունը:

Երդվու՛մ եմ»:

Երդման արարողությունից հետո անդրադառնում եմ Գրիգոր Խանջյանի «Հայոց այբուբենին»: Նախքան «Հայոց այբուբենը» գոբելենի նկարի դիտումը հանրագիտարանային հակիրճ տեղեկություն եմ հաղորդում Գրիգոր Խանջյանի մասին.

***Գրիգոր Խանջյան***

Հայաստանի ժողովրդական նկարիչ, ՍՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթա-

կից անդամ, ՍՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր Գրիգոր Սեպուհի Խանջյանը ծնվել է Երևանում 1926թ.: Նկարչական կրթությունը ստացել է սկզբում Փանոս Թերլեմեզյանի անվան ուսումնարանում (1945թ.), ապա՝ Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում (1951թ.): Նա բազմաթիվ միջազգային, միութենական և հանրապետական մրցանակների դափնեկիր է: Նրա հիմնական գեղանկարներից են՝ «Մթընշաղ», «Եվ՛ հաց, և՛ սեր, և՛ երազանք», «Հացը լեռներում» կտավները, գրաֆիկական գործերից են փարիզյան, իտալական, իսպանական և մեքսիկական շարքերը, Հովհաննես Թումանյանի պոեմների՝ «Լոռեցի Սաքոյի», «Սասունցի Դավթի», Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի, Պարույր Սևակի «Անլռելի զանգակատուն», Գևորգ Էմինի «Սասունցիների պարը» պոեմների, Միխայիլ Շոլոխովի «Մարդու ճակատագիրը» վիպակի նկարազարդումները: Նկարչի գործերից են գոբելենների համար արված մեծադիր և բազմաֆիգուր ստվարաթղթերը (1981թ.)՝ .Վարդանանքը» և «Հայոց այբուբենը»:

Այս տեղեկություններից հետո անցնում ենք նկարի դիտմանը: Սովորողների միջոցով և իմ օգնությամբ պարզում ենք, թե ով և ինչ է նկարված, ինչ խորհրդանշական պատկերներ կան, ինչ են խորհրդանշում դրանք: Սովորողներին լսելուց հետո ընթերցում եմ Ասատուր Մնացականյանի մեկնաբանությունը «Հայոց այբուբենի» մասին. «Ներկայացվող գոբելենը, որ ստեղծել է շնորհապարգև նկարիչ Գրիգոր Խանջյանը, հոգեբուխ ու հավերժող փառաբանություն է՝ նվիրված Հայոց գրերին ու դպրությանը:

Տաճար է երկնասլաց ու պատարագ՝ հայաբարբառ: Այն մարմին է առել մաքրամաքուր լույսից և վար իջել՝ հարատևելու Արարատյան դաշտում՝ Մասիսների զանգաղողանջ գմբեթների առջև:

Կենտրոնում Մեսրոպ Մաշտոցն է՝ հայոց նորահնար այբուբենի տառերը ձեռքին: Նրա, Ազատ Մասսի, թագուհու և հազարապետ Վահան Ամատունու միջև արքայավայել կանգնած է Վռամշապուհ արքան՝ բազմախորհուրդ մտածմունքով, ձախում՝ Սահակ Պարթևը՝ անթաքույց հրճվանքը դեմքին: Շուրջը հայ ժողովուրդն է՝ երազային հաղթանակի հպարտությամբ: Երկնակամարի վրա Հայաստան աշխարհի հավերժական գոյատևման արեգակն է բոլորվել՝ Հայոց դպրության ազգապահպան ուժի խորհրդանիշ Է-ի ճառագումով: Տեղ են հասել Ստեղծագործ Ոգու թևատարած սուրհանդակները՝ Մաշտոցին պսակադրելու առաքելությամբ: Բուրվառում են գծերը, գույները, մանավանդ գույների վրա իշխելու միտող մագաղաթագույնը, մոմագույնը, քանդակազարդ գրակալը, հայակերպար ոգիները և հրեշտակակերպ այն աղջիկները, որոնցից մեկի ձեռքին աղավնին է թառել, իսկ մյուսն ինքն է փոխակերպվել անմեղության աղավնու:

Դարագլուխ է, սահմանազատվում են ներկան անցյալից, հավեր-

ժականը՝ հավիտենականից, Մաշտոցյանը՝ նախամաշտոցյանից: Զրբաժան գիծն անցնում է 4-5-րդ դարերի հանդիպման կետից և ձգվում տաճարի կարպետազարդ աստիճանների վրայով: Այտեղից մտովի կարելի է իջնել դեպի պատմության խորխորատներն ու վաղնջական ժամանակները, երբ Հին Արևելքին էր ճակատագրված մարդկությանը գիր ու գրականություն պարգևելու շնորհքը:

Կենտրոնում հաստատուն կանգնել է Մեսրոպ Մաշտոցը՝ Հայոց համաժողովրդական այբուբենը ձեռքին: Այբուբենն այդ, սակայն, սոսկ այբուբեն չէր, այլ նաև Արտաշեսյան զորաբանակներին ու Տիգրան Մեծի այրուձիուն փոխարինելու եկած մի ոգեղեն զորագունդ: Նրանով էր, հիմնականում, որ բյուզանդա-պարսկական ամենակուլ բանակներից ու հետագայի բոլոր բարբարոսներից պիտի փրկվեին երկիրն ու ժողովուրդը: Այդ մասին է խորհում Վռամշապուհ արքան, այդ հույսն է փայփայում Սահակ Պարթևը՝ կրծքին սեղմած Մաշտոցյան հրաշագործության հակիրճ դյուցազնավեպը. ***Եղիցի՛ լոյս, եւ եղեւ լոյս:*** Այդ ոգով է բարբառում տաճարային երկնակամարում արծվաբար սավառնող մարգարեական կոչը. ԵՍՆԱՉԵԼ ԶԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԶԽՐԱՏ, ԻՄԱՆԱԼ ԶԲԱՆՍ ՀԱՆՃԱՐՈՅ….

Գրիգոր Խանջյանը հմտորեն է ներդաշնակել գաղափարների մարմնավորման արվեստի եղանակները: Երանգապնակային հայտնի գույներից բացի նրան հաջողվել է օգտվել մի ուրիշ, հզորահզոր երանգից ևս, որը թափանցել է բոլոր գույների ու գծերի, հոգիների ու հայացքների խորքերը և իշխում է տեսարանի անպարփակության վրա: Եթե նյութականանար այդ երանգը, ապա այն կանվանվեր ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՐԱՆԳ: Ա՛յդ երանգով է կանգուն նրա նոր կառույցը և ա՛յդ երանգի շնորհիվ է, որ այն պիտի շողշողա հավերժորեն՝ իբրև ոգեղեն լույսի փառաբանության անձեռակերտ տաճար ու ԱՆԼՌԵԼԻ ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ»:

***Տնային առաջադրանք*** **-** կարդալ Պատվական Խաչատրյանի «Ասք Մաշտոցի մասին», Սարմենի «Մեսրոպ Մաշտոց» պոեմները, անգիր սովորել «Երդում մայրենի լեզվին»:

## *Լրացուցիչ նյութեր դասը հետաքրքիր դարձնելու համար*

### *Սահակ Պարթև*

5-րդ դարի հայ եկեղեցականների շարքում՝ որպես կրոնական, պետական ու քաղաքական գործիչ, ամենամեծ դեմքը Սահակ Պարթևն է: Նա 4-րդ դարի հայ կաթողիկոս Ներսեսի և Վարդան Մամիկոնյանի դուստր Սանդուխտի որդին էր: Ներսեսը և Սանդուխտը միասին սովորում էին Կեսարիայում: Այդ երիտասարդ ուսանողները 384թ. սեպտեմբերի 29-ին ունենում են իրենց ավագ որդուն, որին անվանում են Սահակ: Վերջինս հազիվ երեք տարեկան կլիներ, երբ մահանում է մայրը: Փոքրիկ Սահակը մանկության շրջանը անցկացնում է Տարոնում՝ իր պապի՝ Վարդան Մամիկոնյանի տանը: Երբ Սահակը չափահաս է դառնում, նրա հայրը՝ Ներսես Պարթևը, նրան ընդունել է տալիս Կեսարիայի և Բյուզանդիոնի միջնակարգ ու բարձրագույն դպրոցները, ուր տաղանդավոր երիտասարդը ուսումնասիրում է կրոնական մի շարք առարկաներ, անտիկ շրջանի գրականություն, քերթողական արվեստ, պատմություն, փիլիսոփայություն, լեզուներ: Սահակ Պարթևը հատկապես խորանում է հունարեն լեզվի և դպրության մեջ, լավ ուսումնասիրում է նաև ասորերենը և պարսկերենը: Ուսումնառությունից հետո Սահակը վերադառնում է Հայաստան: Հայոց Խոսրով թագավորը Ասպուրակես կաթողիկոսի մահից հետո, հաշվի առնելով Սահակի կազմակերպչական ընդունակությունները, 40-45 տարեկան Սահակին է հանձնում հոգևոր գերագույն իշխանությունը՝ կաթողիկոսությունը: Նա իր ամբողջ կյանքում պայքարում է հայկական կենտրոնական միապետության ամրապնդման համար: Փաստերը ցույց են տալիս նաև, որ Մաշտոցը իր ստեղծած այբուբենի վերջնական տեսքը, տառանվանումները, թվային արժեքների որոշումը կատարել է Սահակ Պարթևի մասնակցությամբ: Նորաստեղծ հայկական դպրոցները ենթարկվում էին հայոց եկեղեցուն: Սահակ կաթողիկոսն այդ ժամանակվանից Հայաստանի ամբողջ տարածքում՝թե արևելյան, թե արևմտյան մասերում, նաև հայաբնակ այլ վայրերում, որոնց հոգևոր առաջնորդն ինքն էր, արգելեց հայ երեխաներին հաճախել հունական կամ ասորական դպրոց: «Աստվածաշնչի» թարգմանությունից բացի Սահակ Պարթևը թարգմանել է նաև հույն հեղինակների մի շարք երկեր: Նա կազմել է հայոց եկեղեցու պատարագի կանոնը՝ Պատարագամատույցը: Նրա կարգադրությամբ Մեծ Հայքի ամբողջ տարածքում, նաև Փոքր Հայքում ու հայաբնակ այլ վայրերում հայ եկեղեցուց հանվեցին հունարեն և ասորերեն լեզուները և փոխարինվեցին հայերենով: Սահակ Պարթևը Մաշտոցին օգնում է հայոց եկեղեցու ծիսարանը կազմելու գործում: Այդ ծիսարանը հետագայում կոչվեց «Մաշտոց»: Սահակ Պարթևը գրեց նաև մի շարք հոգևոր բանաստեղծություններ՝ շարականներ, որոնք մտան հայոց Շարակնոցի մեջ:

*Կորյուն*

Կորյունը հեղինակն է հայերեն առաջին գրքի, որը նվիրված է Մոսրոպ Մաշտոցի կենսագրությանն ու գրերի գյուտի պատմությանը: Կորյունի մասին կենսագրական որոշ տեղեկություններ պահպանվել են իր երկում: Հայտնի չեն ոչ նրա ծննդյան տարին և ոչ էլ վայրը, միայն գիտենք, որ եղել է Մաշտոցի ավագ աշակերտներից Վաղարշապատի վարդապետարանում՝ հայկական առաջին դպրոցում: Ուսման շրջանն ավարտելուց հետո իր ընկերների հետ ուղարկվել է Հայաստանի գավառները՝ ուսուցչության և քարոզչության, ապա 424թ., հավանաբար Մաշտոցի առաջարկով, ընկերներից Ղևոնդի հետ մեկնել է Կոստանդնուպոլիս՝ հունական մատենագրությանն ու հունարենում հմտանալու, թարգմանություններ կատարելու նպատակով: Ավարտելով կրթությունը՝ Կորյունը վերադառնում է հայրենիք, շարունակում զբաղվել կրթության, քարոզչության գործով: Մաշտոցի մահից հետո Կորյունը մտորում է գրել իր ուսուցչի կենսագրությունը և գրում է իր գիրքը «Պատմութիւն վարուց և մահուան առն երանելւոյ սրբոյն Մաշթոցի վարդապետի մերոյ թարգմանչի», որը համառոտ կոչվում է «Վարք Մաշտոցի»: Ամենայն հավանականությամբ այն գրվել է 443-450թթ. միջև: Այս աշխատությունը մեզ է հասել երկու տարբեր խմագրությամբ՝ ընդարձակ և համառոտ: Կորյունի գրչին պատկանում է ընդարձակը: Կորյունը համեմատաբար ընդարձակ է խոսում Մաշտոցի մեծ գործի անմիջական մասնակից Սահակ Պարթև կաթողիկոսի մասին: Թեև Կորյունի նպատակն է եղել տալ միայն Մաշտոցի կյանքն ու գործունեությունը, սակայն նրա երկում կան կարևոր տեղեկություններ Հայաստանի ներքին քաղաքական ու հասարակական կյանքի մասին:

«Վարքը» վերջանում է ժամանակագրական մի հատվածով: Սա առաջին ժամանակագրությունն է հայ մատենագրության մեջ: Այն հաղորդում է տվյալներ Մաշտոցի կենսագրության, գրերի գյուտի տարեթվի վերաբերյալ: Ըստ էության՝ Կորյունի երկը միակ և հավաստի աղբյուրն է հայ գրերի գյուտի և դպրության սկզբնավորության վերաբերյալ:

Կորյունն ուրիշ աշխատություններ գրելէ, թե ոչ, հայտնի չէ: Սակայն այդ միակ երկն էլ բավական է նրան հայ մատենագրության նշանավոր դեմքերից մեկը համարելու: Եվ իզուր չէ, որ նրան բնութագրել են «Կորյուն սքանչելի», «Կորյուն երանելի», «Կորյուն հանճարաբան» և այլ մեծարական խոսքերով: Կորյունի երկը Ոսկան Երևանցին թարգմանել է լատիներեն, թարգմանվել է նաև ռուսերեն և եվրոպական լեզուներով:

*Վռամշապուհ*

Ծննդյան թվականն անհայտ է, ապրել է մինչև 414 թվականը: Հայոց Արշակունի թագավոր 389-ից: Հաջորդել է եղբորը՝ Խոսրով Գ-ին: Գահակալել է համեմատաբար խաղաղ ժամանակաշրջանում, հաշտ ու բարեկամական հարաբերություններ պահպանել ինչպես Սասանյան Պարսկաստանի, այնպես էլ Հռոմեական կայսրության հետ: 398-399-ին մեկնել է Հայոց միջագետք, հաշտարար-միջնորդի դերով կարգավորել պարսկահռոմեական վեճերը: Այստեղ էլ նա հայ և ասորի մտավորականներից տեղեկացել է հայկական հին նշանագրերի մասին: Վռամշապուհը մեծապես նպաստել է հայ գրերի ստեղծման և լուսավորական ձեռնարկումներին:

**«Մեսրոպ Մաշտոցն ու Կորյունը» արձանի մասին**

Քանդակագործն է Ղուկաս Գրիգորի Չուբարյանը. ծնվել է 1923թ. Երևանում: 1942թ. ավարտել է Երևանի Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանը, 1950-ին գեղարվեստական ինստիտուտը: Չուբարյանը ստեղծել է պատմական կերպարների մի ամբողջ քանդակաշար՝ «Մեսրոպ Մաշտոց», «Մովսես Խորենացի», «Ֆրիկ», «Թորոս Ռոսլին», «Անանիա Շիրակացի», «Մխիթար Գոշ», որոնք Մատենադարանի ճարտարապետական-քանդակագործական համալիրի մաս են կազմում:

**«Մաշտոց և Սահակ Պարթև» արձանի մասին**

Այս արձանի քանդակագործն է Արա Միհրանի Սարգսյանը. ծնվել է 1902թ. Կ.Պոլսում: Մասնագիտական կրթությունը ստացել է նախ ծննդավայրի գեղարվեստի վարժարանում, որտեղ հանդես է եկել ինքնուրույն դիմաքանդակներով, հայկական կոտորածների և Առաջին համաշխարհային պատերազմի ազդեցությամբ՝ ողբերգական թեմաներ պատկերող կոմպոզիցիաներով: Արա Սարգսյանն այնուհետև կրթությունը շարունակել է Վիեննայի գեղարվեստի ակադեմիայի բարձրագույն դպրոցում 1921-24թթ.: 1925թ. Վիեննայից տեղափոխվել է Երևան: 1943-ին ստեղծել է իր մտահղացումների գլուխգործոցը՝«Սահակ Պարթև և Մեսրոպ Մաշտոց» երկֆիգուր կոմպոզիցիան: Այս քանդակի մոնումենտալ տարբերակը կանգնեցվել է Երևանի պետական համալսարանի մուտքի առջև:

**Մաշտոցի դիմանկարի մասին**

Պարզ է, որ Ս. Մեսրոպի իրական դիմանկարը մեզ հասնել չէր կարող, չնայած միակ պատմական անձնավորությունն է, որի գերեզմանը պահպանված է առ այսօր:

Մաշտոցի կերպարը ստեղծագործական ներշնչանքի աղբյուր է

եղել բազմաթիվ արվեստագետների համար: Ստեղծվել են ավեստի շատ գործեր՝ Մաշտոցի դիմանկարով: Այդ բոլորի մեջ կա մի դիմանկար, որ յուրաքանչյուրիս սրտում սեր ու խանդաղատանք է ջրվեժում, որ շուրջ 130 տարի սիրելի ու հարազատ է բոլորին: Մեսրոպ Մաշտոցի այդ դիմանկարի հեղինակն է Ստեփանոս Ներսիսյանը: Ստեփանոս Ներսիսյանը ծնվել է 1815թ. Երևանում: Սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում: 1840թ. ավարտել է Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիան: 1846թ. նկարչություն է դասավանդել Թիֆլիսի դպրոցներում: Աշխատել է նաև Շուշիում: Ստեղծել է պատմական ու ժանրային նկարներ, դիմանկարներ, բնանկարներ:

Այս նկարում Մաշտոցը պատկերված է ոգեշնչման պահին: Կրծքին դրված ձեռքը, դեպի լույսն ուղղված հայացքը, հայկական բնորոշ դիմագծերը կերպարին հարազատ ու մտերմիկ երանգ են հաղորդում:

Նկարի հեղինակային բազմաթիվ օրինակներից մեկը (հեղինակի ստորագրությամբ) պահպանվում է էջմիածնի վանքի թանգարանում 1882 թվականից: Բնօրինակում Երանելին նայում է երկնքից կախված ձեռքին, ինչպես պատկերել է նկարիչը: Անշուշտ, նկարիչը ներշնչված է եղել Քերթողահոր տողերով. «Եվ տեսնում է ո՛չ երազ քնի մեջ, ո՛չ տեսիլք արթնության մեջ, այլ սրտի գործարանում նրա հոգու աչքերին երևում է աջ ձեռքի թաթ՝ քարի վրա գրելիս այնպես, որ քարը գծերի հետքը պահպանում էր, ինչպես ձյունի վրա»:

### *Մշո ճառընտիր*

Սա հայերեն ամենամեծ մագաղաթյա ձեռագիրն է: Այն գրվել ու ծաղկվել է 1200-1202 թվականներին Երզնկայի Ավագ վանքում Բաբերդի տանուտեր Աստվածատուրի պատվերով: Գրիչը Վարդան Կարնեցին է, ծաղկողը՝ Ստեփանոսը: Այժմ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող ճառընտիրը ունի 601 թերթ: Դրանցից յուրաքանչյուրը պատրաստված է մի երինջի կամ արջառի կաշվից: Բաժանված է 2 մասի, կազմ չունի, քաշը 27,5 կիլոգրամ է, իսկ մեծությունը 55,3x70,5սմ: Ձեռագիրն ըստ տարվա տոների դասավորված ճառերի, վարքերի, վկայաբանությունների, պատմական քաղվածքների ու ներբողների ժողովածու է, որի համար կոչվում է «Տոնական»: Մշո ճառընտիրը սկզբում ունեցել է 660 թերթ,որից 601-ը Երևանում է, 17 թերթ պահվում է Վենետիկում: Ձեռագիրը 1202 թվականին հափշտակել է Բաբերդի այլազգի դատավոր Ալլադինը և 2 տարի Խլաթում թաքցնելուց հետո 1204 թվականին 4000 արծաթե դրամով վաճառել Մշո Առաքելոց վանքին: Փրկագինը հավաքել են շրջակայքի բնակիչները և վանքի միաբանները: Մինչև 1915 թվականը ձեռագիրը գտնվել է վանքում: Մեծ եղեռնի օրերին երկու հայ կանայք ձեռագիրը երկու մասի են բաժանել (ծանր

լինելու պատճառով) և շալակած հասցրել Արևելյան Հայաստան: Ապա երկու մասերը տարբեր ուղիներով հասել է Թիֆլիսի Հայոց ազգագրական ընկերություն, որտեղից էլ բերվել է Երևան:

Մաշտոցը, լինելով առաջին հերթին կրոնական գործիչ, այբուբենը ստեղծել է հավասարակողմ եռանկյունու տեսքով, որի մեջ արտահայտված է քրիստոնեության հիմնական էությունը՝ Սուրբ Երրորդությունը՝ Աստված, Սուրբ Հոգի և Որդի, այսինքն՝ Քրիստոս:

Ա **(Արարիչ)**
Բ Գ
Դ Ե Զ
Է Ը Թ Ժ
Ի Լ Խ Ծ Կ
Հ Ձ Ղ Ճ Մ Յ
Ն Շ Ո Չ Պ Ջ Ռ
Ս **(Սուրբ Հոգի)** Վ Տ Ր Ց ՈՒ Փ Ք **(Քրիստոս)**

Հայոց ոսկեձույլ այբուբենը ստեղծվել է 1967 թվականին ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի պատվերով, պահպանվում է Էջմիածնի գանձատանը: Գործ՝ Բ.Արզումանյանի և Ժ.Չուլոյանի:

Ակրոստիկոսի ձևով կազմված մի այբուբեն, որը միաժամանակ աղոթք է ՝ նվիրված Աստծուն: Այս աղոթք-այբուբենում Աստծու անունը կրկնված է 7 անգամ՝1. Արարիչ. 2. Դուռ երկն, 3. Զորավոր էության, 4. Թագավոր ժամանակաց, 5. Յիսուս Նազովրեցի, 6. Տեր, 7. Քրիստոս: Պատահական չէ նաև, որ Կորյունի «Վարք Մաշտոցի» աշխատության մեջ ***Աստված, Հիսուս Քրիստոս, Տեր*** բառերը գործածված են 49 անգամ(7x 7), քանի որ 7-ը սուրբ թիվ է:

| | | | |
|---|---|---|---|
| **Ա**րարիչ | **Ժ**ամանակց, | **Ճ**եմարան | **Ռ**աբբի, |
| **Բ**ովանդակ | **Ի**րաց, | **Մ**տաց, | **Ս**րբոց |
| **Գ**ոյութեանց, | **Լ**ուսոյ, | **Յ**իսուս | **Վ**կայարան |
| **Դ**ուռ | **Խ**ավարի, | **Ն**ազովրեցի, | **Տ**եր |
| **Ե**րկնի, | **Ծ**ովուց | **Շ**ների | մե**Ր** |

| | | | |
|---|---|---|---|
| Զօրաւոր | Կենսականաց, | Ըգեշունչ | Ցանկալի |
| Էութիւն | Համայնից: | Չարեաց | Ի |
| Ըստհուն | Ձսյն | Պատաղիչ, | Փառք |
| Թագաւոր | Ղօղանջանաց, | Ձանադիր | Քրիստոսիդ |

*Տառերն իրենց անվանումով և թվային արժեքով*

| | | | |
|---|---|---|---|
| Ա - այբ - 1 | Ժ - ժե - 10 | Ճ - ճե - 100 | Ռ - ռա - 1000 |
| Բ - բեն - 2 | Ի - ինի - 20 | Մ - մեն - 200 | Ս - սե - 2000 |
| Գ - գիմ - 3 | Լ - լյուն - 30 | Յ - յի(հի) - 300 | Վ - վեվ - 3000 |
| Դ - դա - 4 | Խ - խե - 40 | Ն - նու - 400 | Տ - տյուն - 4000 |
| Ե - եչ - 5 | Ծ - ծա - 50 | Շ - շա - 500 | Ր - րե - 5000 |
| Զ - զա - 6 | Կ - կեն - 60 | Ո - վո - 600 | Ց - ցո - 6000 |
| Է - է - 7 | Հ - հո - 70 | Չ - չա - 700 | Ւ - վյուն - 7000 |
| Ը - ըթ - 8 | Ձ - ձա - 80 | Պ - պե - 800 | Փ - փյուր - 8000 |
| Թ - թո - 9 | Ղ - ղատ - 90 | Ջ - ջե - 900 |Ք - քե - 9000 |

Որպես աշխարհի հնագույն լեզուներից մեկը՝ հայերենն ունի մեծագույն արժեք լեզվաբանությանն ու պատմությանը հուզող շատ հարցեր պարզելու համար: Ահա թե ինչու հայոց լեզվի ուսումնասիրությամբ զբաղվել և զբաղվում են օտարերկրացի շատ անվանի գիտնականներ. հիշենք նրանցից մի քանիսին՝ գերմանացի Յո. Շրոդերին, Ֆ. Վինդիշմանին, Ֆ. Մյուլերին, Հ. Հյուբշմանին, Յո. Մարկվարտին, ֆրանսիացիներ Ա. Մեյերին, Է. Բենվենիստին, Ֆ. Ֆրեյդին, դանիացի Հ. Պեդերանին, չեխ Լ. Մոտալովային, հունգարացի Էդ. Շուցին և ուրիշներին:

Ներկայումս հայագիտական կենտրոններ կան աշխարհի մի շարք երկրներում՝ ԱՄՆ, Իտալիա, Անգլիա, Գերմանիա, Ֆրանսիա, Բելգիա, Իրան, Բրազիլիա և այլն:

Հայագիտական ամբիոններ կան մի շարք նշանավոր համալսարաններում՝ Օքսֆորդի, Հարվարդի, Կալիֆորնիայի, Կոլումբիայի և այլն:

*Պատմիչ Եղիշեն հայերենի մասին*

Հունարենը մեղմ է, հռոմեական լեզուն՝ հզոր, հոներենը՝ ահաբեկող, ասորերենը՝ աղերսական, պարսկերենը՝ պերճ, ալաներենը՝ գեղեցկազարդ, գոթերենը՝ հեգնական, եգիպտերենը՝ տափակախոս ու խավարածայն, հնդկերենը՝ ճռվողական, հայերենը՝ քաղցր, որը միաժամանակ կարող է բոլոր լեզուների հատկություններն ամփոփել իր մեջ:

5-րդ դարից մինչև օրս մաշտոցյան այբուբենի մեջ կատարվել է չնչին փոփոխություն. 12-րդ դարում **օ** (աւ երկհնչյունի փոխարեն) և **ֆ** տառերը: 1922 թվականին գործածությունից հանվեց **և** տառը, որի փոխարեն գրվեց **վ**:

Թեև հայերենի բաղաձայնների թիվը հինգ անգամ մեծ է ձայնավորների թվից(30:6), այնուամենայնիվ, խոսքի մեջ 100 հնչյունից 42-ը ձայնավոր է, որով ստեղծվում է բաղաձայնների և ձայնավորների ներդաշնակություն:

100 հնչյունից 42-ը ձայնավոր է նաև ռուսերենում, 48-ը՝ իտալերենում, 51-ը՝ ֆիններենում, 36-ը՝ գերմաներենում:

Եվրոպական լեզուներից ամենակարճ այբուբենը ունեն իտալերենը և ֆիններենը՝ ընդամենը 21 տառ:

Հայերեն առաջին տպագիր գիրքը՝ «Ուրբաթագիրքը», լույս է տեսել 1512 թվականին Վենետիկում: Անցած 500 տարում աշխարհի այլևայլ կողմերում լույս է տեսել 100 հազար անուն հայերեն գիրք: 1512 թվականից մինչև 1800 թվականը լույս է տեսել 1000-ից ավելի գիրք: Այդ գրքերը կոչվում են հնատիպ:

Լեզվաբանները հաշվում են 24 լեզվաընտանիք, որոնցից ամենամեծը հնդեվրոպականն է: Հնդեվրոպական ընտանիքի զավակներից մեկը հայերենն է, որի եղբայր լեզուներն են հնդկերենը, պարսկերենը, ռուսերենը, ուկրաիներենը, չեխերենը, գերմաներենը, ֆրանսերենը, հունարենը, լեհերենը և այլն:

Աշխարհի ժողովուրդները խոսում են մոտ 2000 լեզուներով, որոնց շարքում խոսողների թվով հայերենը գրավում է 38-րդ տեղը:

Հայերենը այն տասը լեզուներից է, որոնցով ամենից վաղ են տպագրական տառեր ձուլվել. այդ լեզուներից են՝ գերմաներեն, իտալերեն, ֆրանսերեն, ֆլամանդերեն, եբրայերեն, արաբերեն, անգլերեն, սլավոներեն:

Հայ նշանավոր ճարտարապետների գերդաստանի ներկայացուցիչ Հակոբ Պալյանը( 1838-1874) «սովորություն ուներ շաբաթականն ավելցնել իր այն գործավորին, որ հետը հայերեն խոսած ատեն հաջողեր օտար բառ չգործածել»:

Գրավոր հայերենն անցել է զարգազման 3 շրջան՝ գրաբար (5-11-րդ դդ), միջին հայերեն (12-17-րդ դդ), աշխարհաբար (18-ից մինչև

մեր օրերը):

Լեզուն ունի այնպիսի հատկություններ, որոնք ընդհանուր են և հենց այդ լեզվի սեփականությունը: Հայոց լեզվի սեփական հատկություններն են՝ դյուրահնչյունություն, հարստություն, ճոխություն, համառոտություն, կանոնավորություն, հստակություն, պարզություն, մաքրություն:

*Մատենադարանի մասին*

Մատենադարանի շենքը կառուցվել է 1945-1957 թվականներին: Շենքի ճարտարապետն է Մարկ Գրիգորյանը: Նախասրահի «Ավարայրի ճակատամարտ» խճանկարի, ինչպես նաև որմնանկարների հեղինակն է նկարիչ Հովհաննես Խաչատրյանը: Շենքի առջև կանգնեցված են հայ մշակույթի ականավոր գործիչների արձանները. ձախից աջ՝

Թորոս Ռոսլին (քանդակագործ՝ Ա.Շահինյան)

Գրիգոր Տաթևացի (քանդակագործ՝ Ա.Գրիգորյան)

Անանիա Շիրակացի (քանդակագործ՝ Գ.Բաղալյան)

Մովսես Խորենացի (քանդակագործ՝ Ե.Վարդանյան)

Մխիթար Գոշ (քանդակագործ՝ Ղ.Չուբարյան)

Ֆրիկ (քանդակագործ՝ Ս.Նազարյան):

Մատենադարանի շենքի առջևի ներքևի հարթակում Մեսրոպ Մաշտոցի արձանն է (քանդակագործ՝ Ղ.Չուբարյան): Նրա գլխավերևում արձանագրված է՝«Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»: Թուրը բռնած արծիվը խորհրդանշում է հոգևոր մշակույթի ուժը՝ ժողովրդի ազատության և անկախության համար մղված դարավոր պայքարում:

Վերջին տասնամյակներում հայագիտության բուռն վերելքը նոր խնդիրներ թելադրեց Մատենադարանին, ուստի Մատենադարանի շենքին հարող լեռան տակ կառուցվեց մի նոր եզակի գրապահոց, որտեղ գիտության վերջին խոսքով հրաշալի պայմաններ ստեղծվեցին ձեռագրերի պահպանության համար:

## *Հատված «Ասք Մաշտոցի մասին» պոեմից*

…Շարվել էին կարգով-շարքով
Երեսունվեց քույր ու եղբայր,
Մեկը մեկից սիրունատես,
Մեկը մեկից հեզ ու խոնարհ:
Շարվել էին՝ երթի պատրաստ,
Ոտքից գլուխ երկաթակուռ,
Նպատակով խավարամերժ,
Երազանքով վառ ու մաքուր:
Ամեն մեկը իր իսկ տեսքով,
Իր տարազով արևալույս,
Ու բոլորն են հայրենաբույր՝
Լեռների պես մեր երկնասույզ:
Հայր Մաշտոցը դիմեց սիրով
Զավակներին իր խելամիտ,
Ասաց՝մեր ջինջ հայերենի
Պատկերն եք դուք լուսաժպիտ:
Լեզու առեք քաղցր ու ճարտար
Զրնգացեք երկաթաձայն
Եղե՛ք հպարտ, եղե՛ք անպարտ
Ձեր երթի մեջ հայապահպան:
Ծնվելն հեշտ է արևի տակ,
Ճիշտ ապրելն է հաճախ դժվար,
Ու եթե ճիշտ ապրեք կյանքում,
Ձեք ժանգոտվի դուք դարեդար:
Այսօրվանից հանձնում եմ ձեզ
Պատվիրաններն իմ փայփայած,
Որոնք սրտիս հույսերն են տաք՝
Երազանքով լուսահայաց:
Պիտի դրանք, իմ որդիներ,
Ականջներիդ օղեր արեք,
Որ մեր նավը հողմահալած
Դեպի պայծառ ափեր տանեք:

**Պատվական Խաչատրյան**

## *Հայոց տառերը*

Դուք այն գամերն եք,
Որոնցով մեր հին, մեր հին ոսոխը
Գամվեց մեր բերդի հին պարիսպներին:
Մահը նահանջեց,
Մենք անմահացանք:
ՌազմիկՏոնոյան

## *Մեր այբուբենը*

Այբուբեն չէ սա.
Բերդ է անմատույց,
Դանձ է աննվաճ,
Դուռ է փրկության,
Ելք, երբ հույս չկա,
Զարթոնքի նվագ:
Էությունն է մեր,
Ընթացքն ու ուղին,
Թագ ու զորավար.
Ժողովուրդ մի կանչ,
Իմաստուն խորհուրդ
Լինելու համար:
Խարիսխը նավի,
Ծառը դպրության,
Կնիքն ինքնության,
Հացն հանապազօր հայի
սեղանին
Ձիրքերի հնձան:
Ղողանջ երգի, ղեկը ընթացքի,
Ճեմարան ճառի,
Մարզարան մտքի, մատյան
հավատքի,
Յուղ՝ անմար ջահի:
Նախահիմքն է մեր,
Ոգին մեր ճարտար,
Ձինարին այգու,
Պարիսպը մեր տան,
Զրաղացն արդար…
Ռումբն է մեր ռազմի, ռունգը
բնազդի,
Ռահվիրան փառքի,
Սերն ու սիրտն է մեր, սերմը միշտ
ծլող,
Վեմ ու վիմագիր:
Տունը ցամաքում, Տապանը ջրում,
Րոպեն սլացքում.
Ցորյանը արտում,
Ուղին անհայտում,
Փառքը սխրանքում:
Քիստն ու քաղն է մեր, քանքար ու
քնար,
Քարավան ու ափ
Եվ
Օջախն անմար, Օժիտն
անհատնում
Ֆե-ից մինչև Այբ:

**Գևորգ Էմին**

## *Տառերն հայոց*

Երբ ծնվեցին, ոտքի ելան ու շարվեցին իրար կողքի,
-Իմաստությու՛ն սիրեք,- ասին մեր նորածին տառերն հայոց:
Երբ անողոք, բիրտ թշնամին խուժեց երկիրը մեր հայոց,
-Միշտ իմացյալ մահով մեռեք,- պատգամեցին տառերն հայոց:

Դար ու դարեր թալանվեցին, հրկիզվեցին գրքերը մեր,
Ու բոցերից նորից ելան, զինվոր դարձան տառերն հայոց:
Եվ հիմա էլ վերածնված ու դարերի հրով օծված՝
Խաղաղ կյանքի, հավերժ երթի երգ են գրում տառերն հայոց:

**Զոհրապ Մարկոսյան**

## *Մեսրոպ Մաշտոցին*

Որ մեր լեզուն, մեր երկիրը և մեր ոգին հայկական
Աշխարհացունց հողմերի դեմ կանգուն մնար մշտական,
Ստեղծեցիր մեր գրերը-մեր սրերը փրկության,
Ո՛վ դու զավակ բազմախորհուրդ աշխատավոր հայության,
Այդ գրերով մեր ոսկետառ մատյանները գրվեցին,
Մեր երգերը թևեր առած աշխարհով մեկ ցրվեցին:

**Խաչիկ Դաշտենց**

## *Մեսրոպ Մաշտոցին*

Գիշեր է խավար. Եփրատի ափին
Այն ո՞վ է անքուն մտորում անվերջ,
Փնտրում անհանգիստ հայոց ջինջ արփին
Դարերի համար ու դարերի մեջ:
Եվ տքնեց հույսով նա գիշեր ու զօր,
Եդեսիա, Ամիդ, հեռու Սամոսատ.
Եվ երեսունվեց երկաթե զինվոր
Իր ձեռքով հղկեց ու շարեց հատ-հատ:
Ձեռքին «ավարը» լույս մագաղաթե,
Դարձավ նա «կռվից» անհաղթ բանակով,
Ոչ մի զորավար պատմության մեջ դեռ
Չի դարձել այսպես մեծ հաղթանակով:

**Սուրեն Մուրադյան**

## *Դարերի ճամփորդին՝ Մեսրոպ Մաշտոցին*

Դու ճամփա ընկար դժվար մի դարում
Այբուբենը՝ զենք, հավատդ՝ զրահ մեկնած աշխարհին,
Եվ, օ՜, ուրիշ էր, բարձր ու վսեմ
Նպատակը քո՝ ուսուցիչ արի:
Քո բառը բարի հունցեցիր փոշով ապառաժ քաիր,
Ու խոսքդ դարձավ ամրոց, բերդ ու սյուն,
Ձայնդ թևածեց, ճեղքեց շեկ կուրծքը հրե ամպերի
Ու խոլ ժայռերն իսկ ծնրադիր եղան ոգուդ իմաստուն:
Ճամփան երկար էր, քայլելը՝ դժվար, տոկացիր սակայն,
Դու՝ մեր պատմության սրբազնագույն էջ, հոգու դու մշակ,
Դու՝ լույս խնկարկող ոսկեհուռ գրիչ,
Դարերի ճամփորդ՝ մեր մեծ ուսուցիչ:

**Վարդանուշ Թորոսյան**

«Սուր լեզուն միակ կտրող զենքն է, որը մշտական գործածությունից ավելի է սրվում»:

**Իրվինգ**

«Լեզվի հստակությունը հստակ մտածողության արդյունք է»:

**Լիբկնեխտ**

«Մարդկային ցեղը լեզվի իրական ստեղծողն է, ինչպես և նրա իսկական պահպանողը»:

**Կանտ**

«Լեզուն նույնքան հին է, որքան գիտակցությունը »:

**Մարքս և Էնգելս**

«Լավ լեզուն ազնիվ զենք է»:

**Թ. Ֆուլե**

«Օտար լեզուն զենք է կյանքի պայքարում»:

**Մարքս**

«Իմանալ շատ լեզուներ, նշանակում է շատ բանալիներ ունենալ միևնույն փականքի համար»:

**Վոլտեր**

«Լեզուն աճում է մշակույթի հետ միասին»:

**Տոլստոյ**

«Լեզվի հարստությունը մտքի հարստությունն է»:

**Կարամզին**

«Ժողովրդի լեզուն միշտ ամենասերտ կերպով կապված է ազգային ոգու հետ»:

**Հումբոլտ**

«Լեզուն ժողովրդի հոգին է: Լեզուն գաղափարների, զգացմունքների, մտքերի կենդանի մարմնացումն է»:

**Տոլստոյ**

## Լեզու - առածանի

«Թռչունը թակարդն է ընկնում կտուցով, մարդը՝ լեզվով»:

«Լեզուն ավելի խորն է խոցում, քան սուրը»:

«Լավ է ոտքով սայթաքել, քան լեզվով»:

«Լեզուն ոսկորներ չունի, բայց ոսկորներ է ջարդում»:

«Սրի տված վերքը կբուժվի, լեզվինը՝ չէ»:

«Քո լեզուն քո զենքն է և դժվարություններիդ պատճառը»:

«Մարդկանց շրջանում լեզուդ կարճ պահիր, սեղանի առաջ՝ ձեռքերդ»:

«Դանակը մարմինն է վիրավորում, լեզուն՝ սիրտը»:

«Աշխարհի շինողն ու քանդողը լեզուն է»:

«Լեզու կա դեղ է, լեզու կա մկնդեղ է»:

«Մինչև թուրն եկավ, լեզուն գլուխը կտրեց»:

«Դանակը մի բերան ունի, լեզուն՝ հարյուր»:

«Լեզվի վրա փականք չես դնի»:

«Լեզուն կարող է մարդուն և՛ փառք բերել, և՛ անպատվություն»:

# *Նաիրի Զարյանի «Ասք Անդրանիկ զորավարի» պոեմի ուսուցումն աշակերտների կողմից տարվող որոնողական աշխատանքի մեթոդի կիրառմամբ*

Մեզ համար այսօր կարևոր է ոչ միայն այն, թե ինչ սովորեցնել, այլև այն, թե ինչպես սովորեցնել, ինչպես կազմակերպել ուսումնառության գործընթացը, որ այն առավել արդյունավետ լինի:

Ուսուցչի և ուսուցման գլխավոր նպատակը պետք է լինի վեր հանել ու զարգացնել սովորողների ողջ ներուժը, ինքնուրույն մտածողությունը, որոնողական, պրպտողական աշխատանքի ձգտումը: Այսօր ուսուցիչը պետք է օգնի սովորողին ինքնուրույնաբար ձեռք բերել գիտելիքներ: Սա պահանջում է դասի այնպիսի կազմակերպում, երբ գիտելիքները տրվում են ոչ թե պատրաստի վիճակում, այլ սովորողը ձեռք է բերում ինքնուրույնաբար: Հայտնի փաստ է, որ սեփական ջանքերով հայտնաբերած գիտելիքները ոչ միայն ուշ են մոռացվում, այլև ոգևորում են սովորողին, նրան մղում որոնողական գործունեության:

Դասավանդումն անհիմաստ է՝ առանց ուսուցման գործընթացում սովորողների ակտիվությունը խթանելու: Դպրոցականի ակտիվությունը պետք է ուղղված լինի ոչ միայն նյութի ըմբռնմանը, մտապահմանը, այլև գիտելիքի ինքնուրույնաբար ձեռքբերմանը, փաստերի հետազոտմանը և դրանց ընդհանրացմանը:

Որոնողական աշխատանքը ձևավորում է ոչ միայն արժեքավոր մտավոր կարողություններ և հմտություններ. այն զարգացնում է կամք, նպատակին հասնելու համառություն, վստահություն իր ուժերի նկատմամբ:

Մանկավարժական հայտնի դրույթ է, որ ամեն մի առարկայի դասավանդում, ուսուցողական նպատակներից բացի, հետապնդում է նաև դաստիարակչական լուրջ նպատակներ:

Իսկ ինչու՞ընտրեցի հենց այս մեթոդը այս ստեղծագործությունը ուսուցանելու համար: Արդարության դեմ չմեղանչելու համար ասենք, որ այս ստեղծագործությունը այն ստեղծագործությունը չէ, որ համակողմանի, ամբողջությամբ ներկայացնի մեր ազգի պարծանքի՝ Անդրանիկի թե՛ մարդկային նկարագիրը, թե՛ կատարած անգնահատելի գործը, թե՛ հայրենասիրությունը, թե՛ հայ և թե այլազգի ժողովրդի սերը Անդրանիկի նկատմամբ և բազում այսպիսի որակներ: Հենց այս և նման այլ բացեր լրացնելու համար ընտրեցի ուսուցման այս մեթոդը՝ ավելի ամբողջական ներկայացնելու մեծ Հայդուկապետին:

Սովորողի որոնողական աշխատանքը արդյունավետ է լինում

միայն այն դեպքում, երբ ուսուցչի կողմից կազմակերպվում է գործուն օգնություն, բայց չափավոր, որ չկաշկանդի սովորողի ինքնուրույնությունը: Տեղեկություններ հաղորդելուց ուսուցիչը պատք է դառնա երեխայի ինքնուրույն ուսումնառությանն աջակցող:

Ուսուցման աշխատանքը կազմակերպում եմ այսպես. երեք շաբաթ առաջ դասարանը բաժանում եմ աշխատանքային-որոնողական խմբերի: Խմբերի անդամների քանակը կարող է լինել երեքից հինգ հոգի: Խմբի քանակը պայմանավորված է քննարկվող կամ առաջադրվող որոնողական հարցերի քնակից: Տվյալ դեպքում կազմում եմ ութ խումբ՝ բաղկացած երեք հոգուց, քանի որ դասարանը քսանչորս հոգանոց է: Աշակերտներին եմ տրամադրում աշխատանքային տարիների ընթացքում կազմած երկու հաստափոր թղթապանակ՝ Անդրանիկի մասին բազմաթիվ նյութերով, հոդվածներով, հիշողություններով, վկայություններով:

Սովորողներին տեղեկացնում եմ նաև, որ կխրախուսվեն այն աշակերտները, ովքեր կօգտվեն այլ աղբյուրներից՝ համացանցից և Անդրանիկի մասին հրատարակված գրականությունից (Հովհաննես Այվազյան, Զորավար Անդրանիկ և Հովհաննես Թումանյան, Երևան, 2004: Սուրեն Սահակյան, վիպասք «Ասք Անդրանիկի մասին): Յուրաքանչյուր խմբի տալիս եմ ներքոհիշյալ առաջադրանքներից մեկը: Խմբի անդամները իրենց հատկացված ժամանակահատվածում պետք է գտնեն առաջադրանքին համապատասխան նյութեր՝ դասի ժամանակ ներկայացնելու: Յուրաքանչյուր խմբի թղթապանակները տրվում են երկու օրով:

Այդ առաջադրանքներն են՝

1.Գնահատանքի խոսքեր և բանաստեղծություններ՝ նվիրված Անդրանիկին.

2.Հերոսական կյանքի էջերից.

3.Հայդուկապետի մտորումները և խոստովանությունը.

4.Մեծ բարեկամություն (Անդրանիկ - Հովհաննես Թումանյան).

5.Վկայություններ Անդրանիկի քաջագործությունների մասին.

6.Անդրանիկի ելույթը իր պատվին կազմակերպված հանդիսավոր երեկույթում և կոչը.

7.Զորավարի բժշկի վկայաությունները՝որպես ականատեսի.

8.Արժանահիշատակ այլ փաստեր, տեղեկություններ:

Դասն սկսում ենք առաջին խմբի աշխատանքով՝ բանաստեղծությունների և գնահատանքի խոսքերի ընթերցմամբ. պահանջում եմ ուշադիր լսել և ասույթների բովանդակությունն ասել մեկ բառակապակցությամբ կամ նախադասությամբ:

# *Անդրանիկի սուրը*

Անդրանիկի սուրը կտրուկ
Շողացել է ու պիտ շողա
Կայծակնաթափ դար ու դարեր,
Որ թշնամին անարգ՝ դողա.
Մեր ցասումն է արդարության
Այդ սրի մեջ նվիրական,
Ազատության հայոց ոգին,
Արծվաթև ու հաղթական:
Հողից ծնված, հողից սնված,
Դու մեր ոգու արևադաշտ,
Պատվի գերի, անհնազանդ,
Հայրենաբեր ու ազգապաշտ
Անդրանիկի սուրը կտրուկ
Եղել է սուրբ մի դրոշակ,
Ըր հավաքել է քաջերին
Իր պանծալի հովանու տակ:
Անդրանիկի սուրը փրկիչ
Մեր պատմությունն է մարտական.
Ցողված վշտի արտասուքով
Ու օրհնանքով հայ մայրերի,
Բյուր յաթաղան է փշրվել
Այդ սրի դեմ դյուցազնական,
Ուժն է Աստվածը մեր ցեղի
Կերպարանքով հայ քաջերի…
Սրին սրով պատասխանել,
Դու հառնել ես ու մաքառել,
Ստեղծագործ իմ ժողովուրդ,
Եվ օջախիդ լույսը վառել.
Ավարայրից է ճառագել
Հերոսական քո մեծ ոգին,
Որ բարձրացավ Անդրանիկի
Կայծակնաթափ սրով կրկին:
Այդ սրի հետ աշխարհներում
Քո փառքն անհաս ծիածանեց,
Ազատաշունչ վսեմ կյանքի
Հրաշագեղ սերմեր ցանեց…
Բարձրացել ես՝ իրավունքով
Քո հանճարի ու ինքնության,
Նոր ու հզոր զարթնած աշխարհ՝
Վերածնվող իմ Հայաստան:

**Բաբկեն Կարապետյան**

## *Անպարտ ֆիդային*

*Զորավար Անդրանիկին*

Աշխարհ էր եկել սրտերի կանչով,
Որպես առաքյալ մեծ
ազատության,
Ու լցրել հոգին պայքարի կոչով
Եվ ծաղիկներով գալիքի
գարնան:
Այնպես էր ուզում՝ մարդն ամենուրեք
Մարդ մնա կրկին ու լինի ազատ.
Սուրբ Նոյան լեռն էր նրան
բարուրել՝
Հայոց աշխարհի լույսերով
արդար:
Եվ նրա համար ճշմարիտն անհուն
Հայրենյաց դատի լույսն էր
փրկարար:
Նա գիտեր անդող պատժել
թշնամուն,
Բայց լացել մի մերկ որբուկի
համար:
Նա գիտեր տոկալ անհույս թեժ
մարտում,
Հրդեհել ցրտում իր սիրտը բարի
Եվ գիտեր կամքը թրծել
քուրայում
Ահեղամռունչ իր դաժան դարի:
Նա գիտեր մարդուն մարդորեն
նայել,
Իսկ չարի հանդեպ - աչքերը
կախարդ՝
Շանթեղեն նետեր լինեին ասես…
Երազող էր նա ու մեծ հոգեխույզ,
Խառնվածք ուներ բանաստեղծի.
Անգամ օրերում այն խռովահույզ
Ճախրում էր մտքով որպես մի
արծիվ,
Տենչում էր փակված դռները
բանալ.
Հավատարիմ էր նա իր երազին՝
Կեսնում էր գալիք օրերը զուլալ.
Իր ամբողջ կյանքը ողջակեզ
արեց
Հանուն հայրենյաց հողի
փրկության:
Նա խիղճն էր ազգի, ոգին
արդարև,
Անհաղթ ասպետը վեհ
ազատության:
Մեզ հետ է ոգին ըմբոստ քաջերի,
Անպարտ ֆիդայու ոգին
ճառագած.
Եվ քաջ գնդեր են ուղեկցում
մարտի՝
Սուրն ազատության պատյանից
հանած:

**Գագիկ Հակոբյան**

«Հանձին Անդրանիկի՝ ողջունում եմ իսկական ժողովրդական հերոսին»:

**Ստեփան Շահումյան**

«Ատելի թուրքական լծի դեմ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի պատմության մեջ Անդրանաիկը վաստակեց ժողովրդական լայն մասսաների խորը սերը»:

**Հովհաննես Բաղրամյան**

«Հայերի շրջանում Անդրանիկի անունը շրջապատված էր փառքի լուսապսակով»:

**Անաստաս Միկոյան**

Առաջին երեք ասույթի միտքը ձևակերպում են այսպես.

***Ա՞ղ.-*** Փառքի լուսապսակով, ժողովրդի սերը վայելող ազգային հերոս:

«Ես ոչ առաջինն եմ, ոչ վերջինը. յուրաքանչյուրը, ով կարող է, պետք է գրի, պատմի, երգի Անդրանիկի մասին, որովհետև այդպիսի իսկական ազգային հերոսներ աշխարհ են գալիս ոչ այնքան հաճախ: Անդրանիկը պատրաստ էր մարտնչելու հայրենիքի կեղեքիչների դեմ ազգային պարտիզանական խմբերում, բուլղարական բանակի կազմում, ռուսական կանոնավոր բանակի շարքերում, ընդ որում կռվել ոչ միայն շարքային քաջարի մարտիկ, այլ նաև որպես իսկական զինվորական մարդ, որ քաջածանոթ էր իր ժամանակի ռազմական արվեստին: Անդրանիկը մարտնչում էր առաջավոր շարքերում՝ արհամարհելով մահը, սակայն այդ չի եղել սոսկ դրագունյան խելահեղ հերոսություն, այլ վառ անձնական օրինակ մյուսների համար: Չէ որ թշնամիներն շատ անգամ խոստովանել են, որ նրա հաղթանակները ձեռք են բերվել, Սուվորովի խոսքով ասած, «ոչ թե թվով, այլ խելքով»:

**Հովհաննես Իսակով**

***Ա՞ղ.-*** Ազգային հերոս, որ քաջածանոթ էր ռազմական արվեստին, մարտնչել է առաջավոր շարքերում և արհամարհել է մահը:

«Եթե հայերս իրավունք ունենք մեր անցյալը հերոսական անվանելու, և եթե հարատևել ենք որպես ժողովուրդ առ այսօր, ապա այդ բանում մենք մեծագույն չափով պարտական ենք մեր դարավոր հերոսապատումի հավերժ անմոռանալի դյուցազուններից մեկին՝ Անդրանիկին»:

**Մարտիրոս Սարյան**

*Ա2.-* Մեր անցյալը հերոսականացնողը:

«Մենք հպարտանում ենք մեր անցյալի ազգասեր զորավար Անդրանիկով և անցյալի բազմաթիվ քաջ հայորդիներով»:

**Վիկտոր Համբարձումյան**

*Ա2.-* Մեր հպարտությունը:

«Հայերեն խոսիլ ես չսորվեցա՝ մինչև որ մեծ մայրս մեր տունը եկավ ու ամեն առավոտ երգեց զինվոր Անդրանիկի մասին և մինչև որ ես գիտցա, թե ան հայ մըն էր, լեռնական գեղջուկ մը, որ ափ մը մարդկանցով կը կռվեր թշնամիին դեմ…

Հանձին Անդրանիկի՝ հայ ժողովուրդը հիշում է իր անհամար նահատակներին, ինչպես նաև ողջերին, աշխարհի որ ծայրում էլ գտնվելիս լինեն նրանք:

Անդրանիկը մեր բոլորի մեջ է»:

**Վիլյամ Սարոյան**

*Ա2.-* Հային հայ պահող Անդրանիկը:

«Անդրանիկը հայ ժողովրդի համար անհատ չէ, այլ մարմնացումն է մի հզոր ու անսասան գաղափարի: Եվ իբրև այդպիսին՝ նա ժողովրդի երևակայության մեջ անանձնացած, դյուցազնացած է: Կուռք է Անդրանիկը, որ մեր ժողովուրդն է կռել, կոփել ու քանդակել՝ համապատասխան իր դարավոր իղձերի, ձգտումների, ամբողջ իր իդեալին, արդարության և իրավունքի ծարավ իր հոգու պահանջներին»:

**Ավետիս Ահարոնյան**

*Ա2.-* Հայ ժողովրդի իղձերը, ձգտումները, իդեալները մարմնավորող կուռքը:

«Անդրանիկ ֆիդային եղավ, ամեն բանեն առաջ, ասպետական հայդուկը, որ փոթորիկներուն մեջեն վեր կը բարձրանա, տառապանքի և արցունքի հովիտներեն, վեր, սարերու կատարներուն վրա հնչեցնելու, որոտացնելու համար քաշկռտվող ստրուկներուն բողոքը: Մրրկահավուն պես թելադրական, անիկա համակերպության տմույն ուխտավորներուն կը ներշնչեր ըմբոստ խիզախումներու կամ էությունը, ու ցեղին դարերով ինկած բարոյականը կը բարձրացներ՝ ազատ լեռներն ի վեր քաշելով, առինքնելով, զոհերու շլացած աչքերուն առջև դառնալով շանթ ու պատուհաս բռնության ու կեղեքումի ուժերուն գլխուն…:

Սուրիդ մատա՜ղ, Անդրանի՛կ…:

**Սուրեն Պարթևյան**

*Ա2.-* Ստրուկների բողոքը հնչեցնող, ըմբոստ խիզախումների կոչող, բռնությունների ու կեղեքումների դեմ պայքարող մրրկահավ:

«Անդրանիկը մեռավ իր փափագին չհասած, որ ազգինն էր միանգամայն, բայց նա երկար ու անձնվիրությամբ ծառայեց համազգային նպատակին, ուստի իր անունն ու հիշատակը դարձան համազգային:

Իր գործը ծանոթ է ամենքին և անցած է պատմության, իսկ կյանքը եթե գրվի ստուգապես, ընտրանքով և վերապրումներով, լավագույն դպրոցը կդառնա հետագա սերունդների համար, որ այնտեղ կառնեն գաղափարական նվիրման և անշահախնդիր ռազմասիրության դասեր»:

**Նիկոլ Աղբալյան**

*Ա2.-* Գաղափարի նվիրման ու անշահախնդիր ռազմասիրության օրինակ:

«Որքան տարիներ թավալին իր գերեզմանին հողին վրա, այնքան պիտի մեծնա Անդրանիկի դեմքը և մեծնալով՝ հայութեան երկինքին վրա անիկա հուսափայլ ու մեկ հատիկ պիտի դառնա»:

**Վահան Թեքեյան**

*Ա2.-* Անդրանիկը տարիների հոլովույթում:

«Անդրանիկը հայության կենդանի սուրն է, ազգին իրավանց անպարտելի պաշտպան, թշնամվույն մշտական սարսափ…

Անդրանիկը մեր պայքարն է, աներկյուղ ու անբասիր ասպետը»:

**Արշակ Չոպանյան**

*Ա2.-* Մեր կենդանի սուրը, թշնամու սարսափը, մեր պայքարի աներկյուղ ու անբասիր ասպետը:

«Խրիմյան Հայրիկեն ի վեր, մեր ժամանակներուն մեջ, ոչ մեկ հայ չէ եղած, որ այնքան խորապես բնազդորեն, անվերապահորեն սիրված ըլլա ամբողջ ժողովրդեն, որքան Անդրանիկը: Անիկա բնութենեն օժտված էր, ինչպես Հայրիկը, առնական ու միանգամայն հանկուցիչ գեղեցկությամբ մը և հոգիներուն վրա ազդելու, սիրտերուն տիրելու, ժողովուրդ մը իր հետևեն քաշելու կարողությամբ»:

**Արշակ Չոպանյան**

*Ա՛ղ.-* Խրիմյան Հայրիկ և Անդրանիկ:

«Անդրանիկը հայ ազատագրության դրոշն է ու յուրաքանչյուր հայ անհատի պատիվը: Ավելին՝ նա խիղճն է համայն հայության, ուղեցույցն ու փարոսը նրա ինքնության և բոլոր զինվորագրյալ հայերի անմոռաց երդումը»:

**Վահրամ Փափազյան**

*Ա՛ղ.-* Հայի պատիվն ու ազատության դրոշը:

«...Ձեր անունը միայն Ձերը չէ, նա արդեն վերացական է, ընդհանուրի սեփականությունը, քանի որ «Անդրանիկ» նշանակում է մարմնացումն հայկական դատի վրեժխնդրության»:

**Ս. Մելիք-Ստեփանյան**

*Ա՛ղ.-* Հայ դատի վրեժխնդրության մարմնացում:

«Անդրանիկի այն սրի վրա, որ նա նվիրել է Հայաստանի պատմության թանգարանին, դաջված են «Իրավունք, պատիվ» բառերը: Սրով է պաշտպանել հայոց Գարիբալդին իր ժողովրդի ոտնահարված իրավունքն ու պատիվը»:

**Հ. Ղանալանյան**

*Ա՛ղ.-* Հայոց Գարիբալդին:

«Այս անունը ինքնին խանդավառութիւն մը, հպարտութիւն մըն է հայ ժողովուրդին համար, մշակէն ու արհեստաւորէն սկսեալ մինչեւ մտաւորականն ու բանաստեղծը: Անիկա սիրելի ու ակնածալի էր ամէնուն, անոր երգը կը թրթռար բոլորին շրթներուն վրայ, անոր քաջութիւնները շրջան կընէին բերնէ բերան: Հայրիկէն յետոյ, ժամանակակից Հայութեան մեջ դէմք մը, որ այնքան ժողովրդականութիւն վայելած ըլլա, որքան ինքը:

Ուսյալ չէր ան, բայց հանճար մըն էր ու ատիկա կը ցոլար իր ամէն արտահայտութեան ու շարժուձեւին մեջ: Ձինուորական արուեստ ու գիտութիւնը չէր սորված եւ ոչ մեկ տեղ, բայց հերոս ծնած էր, ու հերոս մը եղաւ իր արիական գործերով, իր պաղպատի պէս կուռ ու ամուր կամքով: Իր մաքուր ու անգծելի նկարագիրը, վճիտ ողջամտութիւնը, իր խորաթափանց հեռատեսութիւնն ու սրատեսութիւնը, եւ իր անսասան հավատքն ու հայրենասիրութիւնը իրեն կուտային այնպիսի հեղինակութիւնն մը, որ պատկառանք կը պարտադէր ամէնուն, հայուն եւ օտարին հաւասարապէս:

…Թշնամին ոչ միայն կը սարսափէր իրմէ, այլ նաեւ կը յարգէր զինք, իր բարութեան ու արդարամտութեան համար: «Այդ մարդը չէք կըրնար նուաճել դուք, կըսէին Քիւրտ ու Թուրք զինուորներ իրենց հրամանատարներուն,-որովհետեւ ոչ միայն քաջ է ու արի, այլ նաեւ բարի ու արդար»: Իր անունը նույնացած էր յաղթութեան հետ:

սէրը, եւ իր ամբողջ կեանքը նուիրեց անոր ազատագրութեանը:

…Եւ Անդրանիկ գերազանցապես եղաւ ժողովուրդին, ազգին զինուորը: Ոչ մեկ նկատում կրցաւ աւելի բարձր խօսիլ իր մէջ, քան հայրենասիրութիւնը, ոչինչ կրցաւ յաջ ու յահեակ հրապուրել զինք ու շեղեցնել շիտակ ճամբէն: Իր շրջապատէն բարձր մնաց միշտ, ոչ մէկուն անսաց, այլ միայն իր խղճի ու հանճարի ձայնին, գնաց հոն, ուր որ պարտականութիւնը կանչեց զինք. եւ պարտականութեան ճամբեն քայլեց ճակատը միշտ բարձր ու անսայթաք»:

**«Պայքար», Բոստոն, 4 սեպտեմբերի 1927թ.**
**(հատված)**

*Աշ.-* ճակատը միշտ բարձր ու անսայթաք քայլող հանճարը:

«Ես երբեք այլևս չհանդիպեցա նման սքանչելի խումբ մը: Զարմանալի ներդաշնակություն մը և համերաշխություն մը կար անոնց մեջ, ավելի կարծես նահապետական մեծ ընտանիքի մը հարազատ եղբայրները լինեին, հոգատար իրար հանդեպ, գուրգուրոտ և ուշադիր»:

**Մալխաս**

*Աշ.-* Նահապետական մեծ ընտանիք հիշեցնող ազատամարտիկների՝ իրար հանդեպ հոգատար և ուշադիր խումբ:

***Այս աշխատանքն ավարտելուց հետո անցնում ենք երկրորդ խմբի կատարած աշխատանքին: Այս խումբը ներկայացնում է Անդրանիկի հերոսական կյանքի էջերից՝ թվական տվյալներով:***

# *Հերոսական կյանքի էջերից*

1865 - ծնվել է Անդրանիկ Թորոսի Օզանյանը փետրվարի 25-ին Շապին Գարահիսար գյուղաքաղաքում, արհեստավորի ընտանիքում: Սովորել է տեղի Մուշեղյան վարժարանում:

1884 - փոխադրվել է Կ. Պոլիս և աշխատել որպես հյուսն: Երիտասարդ հասակից զինվորագրվել է Արևմտյան Հայաստանի ազատագրական գործին:

1890 - դարձել է Արևմտյան Հայաստանում գործող հայդուկային խմբերի ղեկավար:

1894-1896 - հայկական կոտորածների ժամանակ Տարոնում և Սասունում մասնակցել է թուրքական զորքերի դեմ մղվող ազատագրական կռիվներին:

1901 - ժողովրդական հերոսի համբավ է վայելել Մշո Առաքելոց վանքի պաշտպանական մարտերում:

1902-1904 - կռիվներ է մղել Տարոնում, Սասունում, Վասպուրականում: Նշանավոր է Գոմեր գյուղի մոտ տարած հաղթանակը 1902 թվականի մայիսին:

1905 - հոկտեմբերին անցել է Թիֆլիս, հանդիպել հայ գործիչներին:

1905-1914 - հիմնականում ապրելով Բուլղարիայում՝ եղել է Շվեյցարիայում, Ֆրանսիայում, Անգլիայում, կապեր հաստատել հայ ազգային-ազատագրական շարժման գործիչների հետ, զենք ու զինամթերք հայթայթել Արևմտյան Հայաստանում գործող զինվորական խմբերի հետ:

1906 - գրել է իր «Մարտական հրահանգները», որը պարտիզանական կռիվների կանոնագիրք ստեղծելու մի յուրատեսակ փորձ էր:

1907 - հեռացել է դաշնակցական կուսակցությունից:

1912-1913 - մասնակցել է Բալկանյան պատերազմին:

1914 - Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին եկել է Թիֆլիս և նշանակվել Կովկասյան բանակի կազմում գործող հայկական կամավորական առաջին ջոկատի հրամանատար: Նրա ջոկատն աչքի է ընկել Աշնակի, Սարայի, Մոլլա Հասանի, Բարդուղիմեոսի վանքի, Բաշկալեի, Հայոց ձորի, Աղթամարի, Կարճկանի, Դատվանի, Վարդենիսի (Մուշի մոտ), Արճեշի կռիվներում և հատկապես Դիլմանի ճակատամարտում:

1918 - հունվարին Կովկասյան ռազմաճակատի հրամանատարությունը նրան շնորհել է գեներալ-մայորի կոչում, իսկ փետրվարին նշանակել էրզրումի պաշտպանության ղեկավար:

Ապրիլից նշանակվել է հայկական առանձին հարվածային զորա-

մասի հրամանատար: Պաշտպանական կռիվներ մղելով՝ իր զորամասով նահանջել է Սարիղամիշ-Կարս-Ալեքսանդրապոլ ուղղությամբ՝ ապահովելով արևմտահայերի գաղթը դեպի Արևելյան Հայաստան:

1919 - հիասթափվելով հայ ժողովրդի հանդեպ Անտանտի տերությունների քաղաքականությունից, ինչպես նաև չհաշտվելով դաշնակցական կառավարության հետ՝ գալիս է էջմիածին: Այստեղ նա ցրում է իր զորամասը, ունեցվածքը հանձնում կաթողիկոսին, գնում Թիֆլիս՝ արտասահման անցնելու մտադրությամբ: Թիֆլիսում մի քանի օր հյուրընկալվում է Հովհաննես Թումանյանի մոտ:

1922 - մինչև մահն ապրել է ԱՄՆ-ի Ֆրեզնո քաղաքում:

1927 - մահացել է օգոստոսի 31-ին Չիքո ( Սակրամենտոյի մոտ ) քաղաքի Ռիչարդսոն Սփրինգս հանքայի ջրերի առողջարանային համալիրում՝ սրտի կաթվածից: Սեպտեմբերին թաղվել Ֆրեզնոյի «Արարատ » գերեզմանատանը:

1928 - աճյունը փոխադրվել է Փարիզ և ամփոփվել Պեր-Լաշեզ գերեզմանատանը:

1965 - Խորհրդային Հայաստանը և Սփյուռքի հայությունը նշեց Անդրանիկի ծննդյան 100-ամյակը: Ուջան գյուղում կանգնեցվեց Անդրանիկի հուշարձանը:

***Հայդուկապետի մտորումները ներկայացնում են երրորդ խմբի անդամները:***

# *Հայդուկապետի մտորումները*

«Հայրենիքը մեր կուռքն է այսօր. պետք է երկրպագենք անոր սրբազան սեղանին առջև և ուխտենք հերոսաբար պաշտպանել օսմանյան բարբարոսներու հարձակումներեն»:

«...Ընդունելով այս պատմական սուրը՝ խոսք եմ տալիս հայ ժողովրդին իմ կյանքը դնել նրա փրկության և աշխատավոր մարդկության համար՝ առանց ցեղի խտրության, իսկ թշնամու հանդեպ լինել անողոք, բռնության դեմ լինել անհաշտ, անարդարության դեմ լինել անսասան: Հայրենիքի փրկության համար արհամարհել գնդակն ու մահը... թող կեցցե հայ աշխատավոր ժողովուրդը, որի անմահ հոգին լինելու է մեր հաղթանակների ու անմահության կարմրի դրոշը»:

«Մեղքը մերը չէ, եղբայրք, անեծք դուշմանին, նա պարզեց դրոշն արյունոտ մարտի...»:

«Ես ազգայնական չեմ, ես ճանաչում եմ միայն մի ազգ՝ բոլոր ճնշվածների ազգությունը»:

«Ես ոչ մի կուսակցություն չեմ ճանաչել, ես կճանաչիմ հայ ժողովուրդը և նրա ազատության համար կկռվեմ թուրք բռնակալության դեմ»:

«Աշխատեցեք, որ ապագա սերունդին և ապագա պատմությանը լավ բան տաք և ոչ անեծք»:

Պետք է ցույց տալ թուրքերին, թե հայ բազուկը գիտե հրացան բռնել, հայ սիրտը գիտե կռվել և պաշտպան կանգնել իր իրավունքներուն: Այս ամենը պետք է ի հայտ բերեին «ափ մը ճան ֆիտայիներ», որոնք ուխտած էին զոհվիլ ազգին ազատության սիրույն, արդարացնելով այն մեծ հավատքն ու հույսը, որ ժողովուրդը կենտրոնացուցած էր իրենց վրա:

**Անդրանիկի հուշերից**
**(հոկտեմբեր - նոյեմբեր 1901թ.)**

# *Զորավարի խոստովանությունը*

***Ամենատխուր պահերս***

1921թվականին. երբ Իզմիրեն Եգիպտոս կանցնեի Կիլիկիա երթալու և բանակ կազմելու թուրքերուն դեմ, հեռագրալուր մը գուժեց, թե թուրքեր 8000 զորքով Կարսը գրաված և պարտության մատնած են հայկական 47600 հայ բանակը:

1907 թվականին, երբ Գևորգեն(Գրորգ Չավուշեն) մահվան լուրը հսավ ինձի:

***Ուրախ պահս***

1904 թվականին, երբ Մշո դաշտին մեջ ս. Հովհաննեսի վանքին տակ գտնված Գոմերու կռիվը կը մղեի տասնյոթ զինվորներու հետ 1800 թուրք և քուրդ ուժերուն դեմ: Այդ կռվի մեջ մեզի հետ էին երկու հայ կիներ, որոնք դիրքեր կը շինեին մեզի համար և Խաս գյուղաց Տեր-Քերովբե քահանան, որ զենքը ձեռքին կը կռվեր թշնամիին դեմ:

Երբ երկաթե կամքով և մաքուր հայրենասիրությամբ այդ փոքրիկ խումբը կը կռվեր հաղթանակը շահելով, այդ պահը իմ ամենաուրախ օրն էր:

***Չորրորդ խմբի որոնողական աշխատանքի արդյունքը մեզ ներկայանում է Անդրանիկի և Հովհաննես Թումանյանի մեծ բարեկամության մասին տվյալների ներկայացմամբ:***

# *Մեծ բարեկամություն*
## *Զորավարի և բանաստեղծի նամակագրությունից*

Անդրանիկը բարձր էր գնահատում հայ գրողների դերը մեր ժողովրդի ազատագրական պայքարում: Նա անձնական կապերի մեջ էր անվանի գրողներ Հովհաննես Թումանյանի, Սիամանթոյի, Վահան Թոթովենցի, Արշակ Չոպանյանի, Լևոն Շանթի, Զապել Եսայանի, Դերենիկ Դեմիրճյանի և ուրիշների հետ, որոնցից շատերը գրել են Անդրանիկի կյանքի ու սխրանքների մասին:

1917 թվականի դեկտեմբերի 23-ին «Հայաստան» թերթում Հովհաննես Թումանյանը տպագրում է իր հայտնի կոչը՝**«Նամակ Անդրանիկին»** վերնագրով.

«Սիրելի Անդրանիկ.

Ահավոր մոմենտի առջև ամեն մարդ պետք է ընդհանուրի սեղանին բերի, ինչ որ ունի և կարող է՝ թե վերահաս վտանգը կանխելու և թե բաղձալի խաղաղությանը հասնելու համար:

Ես չորս տղա ունիմ, չորսն էլ երկրի կառավարության, Ազգային խորհրդի և Քո տրամադրության տակ են, իսկ չորս աղջիկս էլ պատրաստակամ գնում են թիկունքի աշխատանքներին, ինչի որ ընդունակ կլինեն:

Ես էլ, անշուշտ, սրանից թանկ ոչինչ չունեմ, հետևաբար ոչինչ չեմ խնայեր, միայն թե կարողանանք բոլոր ազնիվ ժողովուրդների և ազատասեր հոգիների հետ միասին ետ մղել վերահաս վտանգը և պաշտպանել ամենքիս սրբազան իրավունքներն ու ազատությունը: Ես անսասան հավատում եմ Քո՝ շատ փոթորիկների մեջ ձեռք բերած փորձությանը, վառ հայրենասիրությանն ու ազատասիրությանը, այլև բնական մարդասիրությանը և զինվորական բարձր տաղանդին, և պատրաստ եմ գալու, երբ և ուր կկոչի քո եղբայրական ձայնը:

Համբուրում եմ հերոսական ճակատդ:

Միշտ քո՝ Հովհաննես Թումանյան»:

Դեկտեմբերի 29-ին Անդրանիկն իր թերթում տպագրում է «Բաց նամակ բանաստեղծ Հովհաննես Թումանյանին» վերնագրով պատասխանը.

«Սիրելի Հովհաննես.

Ես հրճվանքով կարդացի նամակդ: Հասած է ժամը, որ բոլորը նմանին Քեզի՝ տրամադրելի ընելով իրենց զավակները և դրամը հայրե-

նիքի պաշտպանության գործին: Պետք է մոռանանք պահ մը՝ գրիչը փոխարինելով սուրին, ստեղծելու համար հայրենիքը, որուն խաղաղ ծոցին մեջ միայն կծաղկի գեղարվեստին կյանքը:

Ես շատ զգացված եմ Քու բարձր տրամադրութենեդ և կհուսամ, որ մեր բովանդակ մտավորականությունը կհետևի Քո օրինակին և այսպիսով կդարբնենք մեր սրբազան ազատությունը: Քոյդ՝ Անդրանիկ»:

Թումանյանի հետ առաջին հանդիպման մասին այսպես է պատմում Անդրանիկը.«Բանաստեղծը իր զվարթ ու խնդուն բնավորությամբ լավ տպավորություն և անուշ զգացումներ ունենալու հմայքը ստեղծեց մեզ: Մեկ նայվածքը մը բավ էր հասկանալու և ճանաչելու անոր սրտի անբիծ ու նկարագրին անաղարտ վիճակը: Մագնիսական ուժ մը քաշած, կապած էր զիս իրեն ավելի սիրելու, ավելի մտերմանալու, ավելի հիանալու և հարգելու: Լոռիի Դսեղ գյուղին մեջ նահապետական կյանք մը կապրեր բազմանդամ ընտանիքի մը հայրն ըլլալով: Բաց էին իր տան դռները բոլորին առջև: Վանքի մը պես ամեն օր ուխտավորներ ու այցելուներ կմտնեին ու կելնեին՝ վայելելով այդ նահապետական տան ճոխ սեղաններն ու բարիքները: Առանց հյուրի սեղան չէր նստեր: Վրեժխնդրություն, քեն, ատելություն, չարիք և նախանձ՝ կյանքի այս զգացումները անծանոթ էին իրեն: Բյուրեղի պես մաքուր և պարզ էր իր սիրտն ու հոգին, ու մանիշակի չափ խոնարհ ու քնքուշ: Տիպար հայ էր՝ ազգասեր ու գործունյա: Առաքինության և սիրո մարմնացում էր Թումանյանը»:

Մի օր, էլի սեղանի շուրջը, Թումանյանն առաջարկեց խմել Անդրանիկի կենացը և ինքը վերցրեց առաջին խոսքը:

-Սրանից քսան տարի առաջ - սկսեց Թումանյանը,- կար երկու նշանավոր բան - Խրիմյան Հայրիկը և իմ «Շունն ու կատուն», քսան տարի է անցել, բայց էլի երկու նշանավոր բան կա - իմ «Շունն ու կատուն» և Անդրանիկը, խմում եմ երկու նշանավորներից մեկի՝ Անդրանիկի կենացը:

Բոլորն էլ սկսեցին ծիծաղել: Անդրանիկն էլ ծիծաղեց:

Անդրանիկը Թումանյանին պատասխանեց.

- Կանցնեն տարիներ, ո՛չ ես կլինեմ, ո՛չ էլ Թումանյանը, բայց կլինի մի նշանավոր բան՝ «Շունն ու կատուն», խմենք նրա կենացը:

Թումանյանն այնքան ծիծաղեց, որ ձեռքի գինին թափվեց:

*Հետաքրքրական աշխատանք են կատարել հինգերորդ խմբի աշակերտները՝ հավաքելով փաստեր, վկայություններ Անդրանիկի քաջագործությունների մասին:*

## *Բուլղարական բանակի սպա Կոնևի վկայությունը հայ կամավորական վաշտի և նրա հրամանատար Անդրանիկի քաջագործության մասին*

«Օ՜, առյուծներ են, կատարյալ առյուծներ, այսօր մեզ բոլորս անոնք փրկեցին, եթե անոնք չըլլային, մենք բոլորս կը ջարդվեինք, կը զոհվեինք: Այո, մեր կյանքը անոնց պարտական ենք, անոնք փրկեցին դրությունը:

Ասիկա ես կըսեմ և, իբրև հրապարակախոս, բարոյական պարտք կը համարեմ ինձ, պուլկար հասարակության առաջ ալ կրկնելու նույն խոսքերը: Ինչպիսի քաջ տղաք կան, մարդ կը զարմանար: Շատ քաջ է մանավանդ Սարերու Ասլանը(Անդրանիկը), միաժամանակ թե՛ կերգե և թե՛ կը կրակե:

Այդ օրը թշնամին ապաստանած բնական ամրություններու ետին, անընդհատ կը ռմբակոծեր պուլկարական դիրքերը՝ անշարժության դատապարտելով պուլկար զորաբաժինը. փոքրիկ շաժում մը մահացու կը վերջանար: Կռվի այդ տաք միջոցին, Անդրանիկը, իր հետ ունենալով միայն 14 անձնուրաց կտրիճ, գնդակներու տարափին տակ կը մոտենա թշնամի դիրքերուն ու երկուսուկես ժամ տևող սաստիկ հրաձգությունե ետք, կստիպեն զայն նահանջի: Հաղթությունը տարված էր:

**«Վիթոշ-Արարատ», Պուլկարահայ**
**տարեգիրք, Պլովդիվ, 1935, էջ 191-192**
**1916, 1917, 1918 թթ. արշավանքներ**

## Հունաստանի թագավորություն

Բանակի հրամանատարությունը պարգևատրում է Պատերազմական խաչի երկրորդ աստիճանի շքանշանով ՁՈՐԱՎԱՐ ՊԱՐՈՆ ԱՆԴՐԱՆԻԿԻՆ ընդհանուր թշնամու դեմ, հանուն քաղաքակրթության և արդարության մղվող պայքարի հաջողության համար նրա մատուցած փայլուն ծառայությունների դիմաց:

**ռազմաճակատ.**
**19 սեպտեմբերի 1920թ.**

Անդրանիկը տեղանքի և թշնամու էության գերազանց իմացությամբ, իր ռազմական փորձով ու խորհուրդներով, իմ ջոկատում եղած ժամանակ, բազմիցս մատուցել է անգնահատելի ծառայություններ: Անձամբ խենթորեն խիզախ մարդու նրա նշանաբանն էր - հարձակում: Բացի այդ, իր մեծ վստահությամբ Անդրանիկը գերազանցորեն ազդում էր անվարժ զանգվածի վրա և համառությամբ ու կամային ուժով կարգուկանոն պահպանում խմբում:

**Կովկասյան երկրորդ հրաձգային**
**դիվիզիայի հրամանատար,**
**գեներալ-մայոր Թ.Նազարբեկով**
**12 մայիսի 1917թ.**

## *Ողորմած տեր, պարոն Անդրանիկ*

Պատերազմի սկզբից ևեթ Դուք ներգրավվել եք Կովկասյան ճակատի ռազմական գործողություններին: Կազմավորելով առաջին հայկական ջոկատը՝ Դուք նրա հետ մասնակցել եք մի շարք մարտերի՝ ցուցաբերելով անձնական քաջություն և մարտական դրության հմուտ կողմնորոշում:

Ինձ համար հաճելի պարտականություն եմ համարում հայտնելու Ձեզ՝ Ձեր գործունեության համար իմ անկեղծ երախտագիտությունը:

Միանգամայն վստահորեն ընդունեք իմ հարգանքն ու հավատարմությունը:

Միաժամանակ առաքում եմ Ձեզ շնորհած Գեորգիևյան երկրորդ աստիճանի խաչը:

**Կովկասյան ռազմաճակատի**
**գլխավոր հրամանատար**
**գեներալ Ն. Յուդենիչ**
**7 հունիսի 1917 թ.**

*Վեցերորդ խումբը ներկայացնում է իր կատարած աշխատանքը. այն է՝ Անդրանիկի ելույթը իր պատվին կազմակերպված երեկույթում և կոչը:*

## *Անդրանիկի ելույթը իր պատվին կազմակերպված հանդիսավոր երեկույթում*

«...Իհարկե ինձ շատ հաճելի է լսել այստեղ ոգևորված «կեցցեներ», «ուռաներ» և այլն: Շատ եմ տեսել ես նման բանկետներ և լսել օվացիաներ, գեղեցիկ ճառեր, ճռճռան ֆրազներ... սակայն, ինչ օգուտ այդ բոլորից իմ տանջված ժողովրդի համար... Ես մեծ կրթության տեր չեմ, ես ժողովրդի զավակ եմ, չեմ կարող արտասանել գեղեցիկ ճառեր, բայց ձեզ եմ դիմում, ողորմած տիկիններ և պարոններ, ես կուզենայի, որ դուք առանց խոստովանահոր ինքներդ ձեր ու ձեր խղճի առաջ հարցնեիք, թե ինչ եք արել դուք տանջված, խոշտանգված տաճկահայության կյանքի բարօրության համար... Ես տեսել եմ շատ արցունքներ և տառապանք, տեսել եմ արյունալից արցունքներ իմ ցեղակիցների, տեսել եմ ՝ ինչպես նրանք քաղցած, ծարավ, հյուծված կերակրվել են խոտերով ու արմտիքներով... Եվ այս րոպեիս, երբ լսում եմ այդ փքված ճառերը իմ ժողովրդի մասին, իմ աչքի առաջ պատկերանում են նրա դաժան անցյալի ստվերները, ու ես սարսափում եմ սոսկումից...

Իմ քույրեր, ձեր վրա եմ ես հույսս դնում: Հայ մայրեր, իմ հույսս ձեր վրա է, դուք պետք է ձեր զավակներին կրթեք, դաստիարակեք և նրանց ներշնչեք հերոսական ոգի, սեր դեպի իրան հայ եղբայրները...

Ինչու համար եք դուք զուգվել թանկագին զգեստներով, ինչու եք զարդարվել այդ թանկագին ադամանդներով, հանեցեք այդ ամենը և զոհաբերեք բախտից անիծված, սև ճակատագրի զոհ, աղքատ ու քաղցից մեռնող հայ եղբայրներին...

Այ, այստեղ արտասանում եք գեղեցիկ ճառեր, իսկ կես ժամից հետո, հեռանալով այս դահլիճից, դուք մոռանալու եք ձեր բոլոր ճառերն ու ասածները, որոնք այնքան ոգևորությամբ արտասանվեցին այստեղ: Ես խնդրում եմ ձեզ խոսքից գործի անցնելու և կարեկցության, օգնության ձեռք մեկնեք դժբախտ տաճկահայությանը:

Կրկին անգամ շնորհակալություն, թանկագին քույրեր ու եղբայրներ, ձեր բոլոր բարեմաղթանքների համար»:

**«Արմյանսկի վեստնիկ»**
**ամսագիր, 1916թ.**

## *«Խոսքս դավաճաններուն և հուդաներուն չի, այլ մարդասեր բոլոր ժողովուրդներուն» (Անդրանիկի կոչը)*

«… Մենք կեցած ենք, հայ տառապած ժողովուրդ, հայկական պատմության այնպիսի փոթորկոտ էջին վրա, ու մեր ժողովուրդը կապրի կամ վերջին օրերը և կամ կգտնվի վաղվան ազատության նախօրյակին:

Վայրկյանը, ներկա օրերը մեզ չեն ցուցներ միջին ճանապարհ: Վաղվան պատասխանը հայ ժաղովրդին պիտի ըլլա այո՛ կամ ոչ՛:

Դարեր ի վեր մենք բռնեցինք հավաքական ազատության ճանապարհը, որ պսակեցավ մեր արյունով և հայ երիտասարդության անասելի ոգորումներով:

Հասած է ժամը վերջին մարտնչումի:

Իմ խոսքս կուղղեմ այն բոլոր մարդոց, որոնք խոր գիտակցություն ունին հայ ժողովրդի լայնածավալ տառապանքին, որոնք ունին մարդասիրական սիրտ, ամեն ազգե, ըլլան անոնք հույն, եզիդի, ասորի, քյուրդ, իսլամ կամ ոչ իսլամ, որոնք ենթակա եղած են օսմանյան բռնակալ կառավարության անմարդասեր սարսափներուն:

Կոչ կընեմ բոլոր զենքի ընդունակ տղամարդկանց առանց դասակարգելու խտրության, գյուղացիեն, արհեստավորեն մինչև բարձր դասու մտավորականությունն ու հարուստը:

Ես կոչ կընեմ բոլոր չափահաս դպրոցականներուն, որոնք կը բաղձան ծաղկավետ տեսնել վաղվան մշակույթին դաշտը, թող դիմեն զենքի, թող վազեն դեպի ճակատ:

Ուղղելով իմ խոսքս մեր բոլոր մայրերուն և քույրերուն՝ կը հորդորեմ, որ չընդունին իրենց սրբազան հարկի տակ հուդաներն ու դավաճանները, թող թքեն անոնց երեսին և ղրկեն դեպի զորանոց: Դավաճան է այն մայրը, որ կքաջալերե իր զավակը, ամուսինը կամ եղբայրը մնալու տունը՝ իբրև կորովազուրկ և որբացած ազատության սերեն…»:

**«Հայաստան»,**
**22 դեկտեմբերի 1917թ.**

Զորավար Անդրանիկը գնահատում էր մարդու գործունեությունն ու նվիրվածությունը՝անկախ նրանից, թե տվյալ անձնավորությունը ինչ ազգի է պատկանում: Հայոց հայդուկապետը, իրոք, ժողովուրդների բարեկամության պաշտպանն էր ու ջատագովը:

Եթե թվարկելու լինենք հայազգի հերոսների շարքը, անշուշտ, առաջինների մեջ, իսկ շատերը հենց առաջինը անպայման կնշեն հայ հռչակավոր զորավար Անդրանիկ Օզանյանի անունը:

*Շատ հետաքրքրական փաստեր են ներկայացնում յոթերորդ խմբի աշակերտները:*

## *Զորավարի բժշկի՝ Վաղարշակ Հովակիմյանի և Աշխարհաբեկ Քալանթարի վկայությունները՝ որպես ականատեսների*

Լսելով գեներալ Տրյուխինի հրամանի մասին՝ դուրս բերել զորքերն ազատագրված Վանից, սաստիկ վրդովված տմարդի այդ արարքից, ինչպես վկայում են զորավարի բժիշկ Վաղարշակ Հովակիմյանը և Աշխարհաբեկ Քալանթարը, շռնդալից ապտակ է հասցնում գեներալին և պոկում նրա ուսադիրները:

Նազարբեկովի վկայությամբ՝ իր և Չերնոզուբովի հրամանատարությամբ գործող կոզակները պաշտելիս են եղել Անդրանիկին: Ահա մի կարևոր վկայություն այդ մասին: Ռուսական բանակում ծառայող գեներալ Աբացիևը՝ ծագումով կես օս, կես թաթար, Բաղեշում եղած ժամանակ թաքցրած է լինում մի թուրք գեներալի: Վերջինս թաքստոցից կրակում է Անդրանիկի զինվորների վրա: Փոխհրաձգության ժամանակ թուրք գեներալը սպանվում է: Իմանալով այդ միջադեպի մասին՝ Աբացիևը կոզակների ուղեկցությամբ մտնում է Անդրանիկի վրանը և հրամայում զինաթափ անել զինվորներին: Անդրանիկը, ինչպես վկայում են Վ.Հովակիմյանը և Ա.Քալանթարը, մի շռնդալից ապտակով գետին է տապալում Գեներալ Աբացիևին: Վերջինս հրամայում է կրակել: Կոզակները չեն ենթարկվում գեներալի հրամանին, հրացանները գետին են գցում և սկսում են համբեւրվել Անդրանիկի և նրա զինվորների հետ:

Անդրանիկի հերոսական դիմանկարին բնորաշ գծերից մեկն էլ սպարապետներ Վարդան և Մուշեղ Մամիկոնյաններից ժառանգած պատգամներն են եղել՝ չարատավորել կանանց պատիվը, հարգել զինվորական աստիճանը:

Կորդվաց լեռներում և Տիգրիսի կիրճում թուրքերի ճիրաններից փրկելով քուրդ և պարսիկ կանանց ու երեխաներին՝ Անդրանիկը կարգադրում է կերակրել սովալլուկ այդ թշվառներին իր գնդի սուղ միջոցներից, ապահովել ճամփի պաշարով և ապա ազատ արձակել, ուր որ իրենք կկամենան գնալ:

«Անդրանիկը դեռ իր խոսքը չէր ավարտել,- վկայում է զորավարի գնդի բժիշկը,- երբ քրդուհիներից շատերը իրենց գլխի շորերը աճապարեցին փռել փաշայի ոտքերի տակ՝ գոչելով.

-Մատաղ լինենք սարերի անհաղթ առյուծ Անդրանիկ փաշային, մեր գլխին, մեր աչքերաց վրա թող փայլե նրա արևը»:

Հայ մայրերի համար Անդրանիկի վրանն անգամ ուխտատեղի է եղել:

Մի անգամ՝ իր վրանի մոտ նստած ժամանակ, զորավարը հեռվից

նկատում է, որ դեպի իր վրանն է գալիս պառավ մի կին՝ ցուպը ձեռքին: Անդրանիկը իսկույն ընդառաջ է գնում՝ ասելով.

-Մարս, ինչ կարիք կար այդքան նեղություն կրելու՝ լոկ զիս տեսնելու համար:

-Ուրեմն դու՞ ես Անդրանիկ փաշան, բա ես քու ջան ու ջիգյարին մատաղ, բոլոր սրբերին ուխտի կերթամ՝ Աստծուց խնդրելու, որ քո կյանքը երկարացնի մեր խեղճ հայոց ազգի համար:

Զորավարը սրտացավ վերաբերմունք ուներ իր գնդի բոլոր զինվորների նկատմամբ՝ անկախ ազգային պատկանելությունից: Բայց միաժամանակ խստաբարո և անզիջում է եղել, երբ անթույլատրելի բաներ էին փորձում անել զինվորները:

Տիգրիսի կիրճով անցնելիս զորավարը նկատում է սարի լանջը զուգող թարմ կանաչ խոտի վրա ընկած է արյունաթաթախ մի առևանգված հայ կնոջ դիակ՝ կողքին հինգ-վեց տարեկան արու զավակը: Անդրանիկը, ինչպես պատմում է ականատեսը, լուռ ծունկի է գալիս նահատակների դիակի առջև, արցունքոտ աչքերով համբուրում է նախ մոր և ապա մանկան ճակատը: «Այդ պահին,- գրում է ականատես Հովակիմյանը,- մեր գնդի հերոս տղաներից մեկը՝ մշեցի կամավոր Ճազոն, հեկեկալով դարձավ Անդրանիկին.

-Կուլաս, հապա հորի՞ զիս կարգելես թշնամու խետ վարվելու այդպես:

-Զավակս,- պատասխանում է Անդրանիկը,- եթե ընդունակ ես անմեղ մարդկանց դեմ ատանկ գազանություններու, ապա դու և քեզ նմանները չեն կրնա տեղ ունենալ իմ գնդի շարքերուն մեջ:

Հայրենիքի պաշտպանության համար մարտնչող Անդրանիկի ազատարար բանակի ոչ մի զինվոր իրավունք չի ունեցել ձեռք բարձրացնել ծերերի, կանանց, երեխաների կամ զենքը ցած դրած գերիների և վիրավորների վրա: Նրանք երբեք ավարի, կողոպուտի չեն դիմել. այդպես է կրթել զորավարը իր մարտիկներին:

Արաքսի կամուրջով անցնելիս կռվի բռնվելով թուրքերի հետ՝ Անդրանիկը գերի է վերցնում մի թուրք գեներալի: Նախաճաշի ժամանակ հրավիրում է այդ գեներալին իր հետ սեղան նստել:

-Հարգելով Ձեր զինվորական աստիճանը, չեմ թույլ տա զիս Ձեր ռազմական ուժերու մասին որևէ տեղեկություն հարցնելու, ատիկա կհամարեմ անհարմար և անվայել: Սակայն եթե Ձերդ գերազանցությունը կցանկանա մեզ իրազեկ դարձնել, մեր շնորհակալությունը կհայտնենք:

Թուրք գեներալը զինաթափվում է Անդրանիկի ասպետական վերաբերմունքից և ինքնակամ հայտնում է դիվիզիաների քանակն ու դասավորվածությունը, նրանց ունեցած զենքի տեսակները և այլ կարևոր տեղեկություններ:

*Իր հավաքած արժանահիշատակ փաստերով և տեղեկություններով ներկայանում է նաև ութերորդ խումբը, որի ներկայացրածը պակաս արժեքավոր չէ մյուս խմբերի ներկայացրածից:*

## *Խօսք*
## *Զօր. Անդրանիկի հուշարձանի բացման առթիւ, 4-նոյեմբեր 1945թ.*

*Անդրանիկ ջան.*

Ահա տասնեակ տարիներ է անցեր, ինչ դուն հեռացար անդարձ՝ թողելով Հայ ժողովուրդը և Քու այնքան սիրած՝ զէնքի հաւատարիմ ընկերները սուգի և հառաչանքի մէջ, օտար երկնքի տակ, որոնց համար երեսուն աւելի տարիներ մարտնչէցար մեր ոխերիմ թշնամու բռնակալութեան դէմ, կուրծքդ վահան և կամքդ նիզակ ըրած:

Անդրանիկ ջան, միշտ ու միշտ ականջիս Քու վերջին խոսքերուդ արձագանքը դեռ կը հնչէ զոր ըսիք. «Մահս չեմ հոգար, այլ գործս, որ կիսատ մնաց»: Անդրանիկ ջան, թող Քու տառապած ու յոգնած ոսկորները հանգիստ ընէ, այդ կիսաւարտ գործդ մեզ համար ամենասուրբ է և նուիրական: Հայ ժողովուրդը խորին երկիւղածութեամբ կխոնարհի ու ատրուշաններ կը վառէ կիսաւարտ գործիդ առջև, և որպեսզի հանգիստ նիրհես Քու յաւիտենական քունը, Հայ ժողովուրդը ոտքի է կանգնած, մէկ շունչ, մէկ բերան, և մէկ ույժ այդ թանկագին գործդ աւարտելու աշխատանքին լծուած:

Անդրանի ջան, ես վստահ ունիմ, որ շուտով կաւարտուի այդ կիսատ գործը…

… Իսկ ես, իմ անմոռանալի Զօրավարս, ես զերթ վիրաւոր կռունկ մը, երամից զրկուած անզօր թեւերով ման կուգամ, մինչեւ որ տեսնեմ Ձեր սուրբ գործին լրիւ աւարտումը: Այո՛, ես դեռ պիտի ապրիմ, պիտի տեսնեմ մեր մարտիրոս ժողովուրդի երջանիկ օրը: Ու երբ օր մը ես ալ հրաժեշտ տամ այս անցաւոր աշխարհին ու գամ Ձեզ միանալու, Ձեզի պիտի բերեմ այդ սրբազան աւետիքը…

## *Զորավարի մկրատը*

Մեր տանը մի քանի մկրատ կա: Դրանցից մեկին Զորավարի մկրատ ենք ասում: Թեև մկրատներից ամենահինն է, բայց ամենափայլունն ու ամենասուրն է:

-Փաշի նվերն է, լաո՛, սուրբ նվեր է: Զորավարի տվուկ մկրատ զորավոր է, լավ պահեք, լաո՛,- պատգամում էր պապս:

…Գաղթի ծանր օրերին է լինում: Անդրանիկն իր զորախմբով

գալիս է՝ գաղթականների քարավանը հետևից: Ճանապարհին դադար են առնում: Իր Ասլանին նստած՝ շրջում է Անդրանիկ Զորավարը…

-Էս երեխուն հաց տվեք…

-Հիվանդներին տեղադրեք սայլերն…

-Բոլորին՝ ալյուր ու չամիչ…

-Աստված քըզի երկար արև էնե, փաշա՛,- շշնջում են մայրական հարյուրավոր շուրթեր:

Անցնում է պապիս գերդաստանի մոտով: Տատս, երեքամյա իր որդուն գրկած, խոնարհաբար գլուխ է տալիս: Տեսնելով երեխայի երկար մազերը՝ ասում է.

-Քույրի՛կ, էրեխի մազեր կտրե, որ շուտ զորանա…

Տատս թե.

-Քու արևուն մեռնիմ, փաշա՛, կըկտրենք, հմը չըհասցրինք մկրատ վերցնենք, մկրատ մնաց տուն…

Եվ մինչև տատս կվերջացներ իր ասելիքը, Զորավարը կողքից կախված կաշվե պատյանից մի մկրատ է հանում, մեկնում տատիս՝ ասելով.

-Վերցրու՛, քույրի՛կ, տղի մազեր կտրե, թող շուտ զորանա…

Տատս ամաչում է, վարանում:

-Վերցրու՛,- պատկառազդու ասում է փաշան…

-Շնորհակալ իմ, փաշա,- ամոթխած շշնջում է տատս…

Զորավարի մկրատը զորավոր խորհուրդ ունի մեր տանը:

## Սուրեն Դավթյան

Անդրանիկն իր զինվորներից մշտապես պահանջում էր. «Ձիդ չխնամած, զենքդ չմաքրած, կոշիկիդ ու հագուստիդ պատռվածքները չկարկատած ու մարմինդ կեղտից չմաքրած մի նստի ճաշի »:

Գեներալ Անդրանիկը քաջ զորավար լինելուց և փայլուն ռազմական գիտելիքների տիրապետելուց բացի ունեցել է նաև հարուստ բժշկական գիտելիքներ:

Անդրանիկի մասին հիացական խոսքեր են գրել քուրդ գրողները ևս: Հիշենք «Սպիտակ Ձիավորը» խորագիրը կրող պատմվածքը: Անդրանիկին ազատարար են անվանել Հայաստանում ապրող ասորիները, հրեաները, հույները, որոնց նույնպես օգնության ձեռք է մեկնել նա:

«Մահս չեմ հոգար, այլ գործս, որ կիսատ մնաց…»:

Անդրանիկ

«Այսուհետև իմ բարձը Հայաստանի լեռներն են լինելու, իմ ամենաբաղձալի երազանքը՝ Հայրենիքի համար մեռնելը»:

**(Ֆիդայիների երդումից)**

1990թ. Արմենֆիլմը նկարահանեց վավերագրական ֆիլմ՝ նվիրված Անդրանիկի ծննդյան 125 ամյակին: Ֆիլմի ռեժիսորն է Լևոն Մկրտչյանը: Ֆիլմի տեքստը կարդում է դերասան Խորեն Աբրահամյանը:

Անդրանիկի անունով են կոչվում հրապարակներ, փողոցներ, դպրոցներ. նրա պատվին տեղադրված են արձաններ և հուշատախտակներ աշխարհի մի շարք երկրներում (Հայաստան, Բուլղարիա, Ֆրանսիա, Ռումինիա):

Այս ամենը լսելուց, քննարկելուց և վերլուծելուց հետո հարցերս ուղղում եմ բոլորին.

-Ի՞նչը տպավորվեց ձեր մեջ, ինչը կհիշեք հպարտության և երախտագիտության զգացումով:

-Անդրանիկի ո՞ր խոսքերը կընտրեք որպես ձեր կյանքի նշանաբան:

Նախքան դասի ավարտը կարդում եմ Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա խոսքը Անդրանիկի գերեզմանին.

«Անդրանիկ, քաջ զավակ հայ ժողովուրդի, դուն ազատության զինվոր, դուն՝ արդար բազուկ, դուն՝ պաշտպան հավատո և հայրենյաց, դուն մեր պատմության քարայրներեն լույս աշխարհ եկած նոր օրերու Մհեր. ահավասիկ ես՝ Հայոց Հայրապետը, քեզի կուգամ ս. Էջմիածնեն, հայոց աշխարհեն, և քեզի ողջույն կբերեմ:

…Հայրենիքեն ափ մը հող ես չբերի հետս գերեզմզնիդ, վասնզի հոգիս կվկայե, թե հեռու չէ այն օրը, երբ ինքը՝ հայրենի հողը, իր կուրծքը պիտի բանա և ընդունի աճյուններդ, ուր Դուն պիտի հանգչիս հավիտյան»:

**Ամենայն Հայոց կաթողիկոս**
**Վազգեն Ա**
**1965թ. փետրվարի 4,**
**Փարիզ, Պեր-Լաշեզ գերեզմանատուն**

Սիրելի՛ աշակերտներ, այս մարգարեական խոսքերն իրականացան 35 տարի անց՝ 2000թ.: Անդրանիկի աճյունը տեղափոխվեց Հայրենիք և ամփոփվեց Երևանի Եռաբլուր պանթեոնում:

Դասն ավարտում եմ Անդրանիկի պատգամով. «Երբ իրիկունը գլուխներդ բարձին կդնեք, որ քնանաք, մի քիչ մտածեցեք Ձեր ազգի մասին»:

**Տնային հանձնարարություն**

Կարդալ Նաիրի Զարյանի «Ասք Անդրանիկ զորավարի» պոեմը, գրականության տետրերում պոեմից դուրս գրել Անդրանիկին բնութագրող բառերը, բառակապակցությունները, տողերը (արծվաքիթ, թավաբեղ, Հայաստանի զինվոր, ազատության զինվոր, անունդ բոց, երջանկության խոստում, քաջաբազուկ որդի, ասպետասիրտ քաջ, հայոց ազատամարտի ոգի, նոր օրերի Սասնա Դավիթ, դյուրաբարբոք, իմաստուն հոգի), ինքնուրույն գրել զորավարին բնութագրող բառեր, բառակապակցություններ և գրավոր պատասխանել այն հարցերին, որոնք առաջ են քաշված պոեմում:

# Օգտագործված աղբյուրներ

1. Ա.Դոլուխանյան, Հայ գրականության դասավանդման մեթոդիկա, Երևան, 2006:

2 . Ս.Հովհաննիսյան, Հայ գրականության ծրագրային նյութերի թեմատիկ պլանավորում և մեթոդական մշակում, Երևան, 1978, 1-ին և 2-րդ մաս:

3. Ս.Հովհաննիսյան, Գրականության ժմանակակից դասը, Երևան, 1983:

4. Հ.Հովասափյան, Գրականության ուսուցման հարցեր, Երևան, 1979:

5. Հ.Խաչատրյան, Սոսյաց անտառ, Երևան, 1988:

6. Հ.Խաչատրյան, Հայոց հնօրյա զվարճախոսները, Երևան, 2003:

7. Հ.Խաչատրյան, Վանատուր, Երևան, 1978:

8. Քննադատական մտածողության զարգացումը կարդալու և գրելու միջոցով, ուղեցույց, 1-7 պրակ, 1988:

9. Ա.Մկրտչյան, Հինգերորդ դարի հայ դպրություն, Երևան, 1968:

10. Երևանի պետական համալսարան, Հայ մշակույթի նշանավոր գործիչները 5-18-րդ դարեր, երևան, 1976:

11. Մ.Մկրյան, Հայ հին գրականության պատմություն, Երևան, 1976:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Սովորողը գրականության ժամին պետք է կարողանա 3

Կենսագրության ուսուցման մեթոդիկա 5

Կերպարի ուսուցման մեթոդիկա 20

Հովհաննես Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի ուսուցումը խիկ համակարգով 42

Չափածո ստեղծագործության ուսուցման փորձ «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության օրինակով 53

Ուսուցչի հարցադրումը որպես աշակերտի քննադատական մտածողությունը խթանող միջոց Չարենցի «Գանգրահեր տղան» նովելի ուսուցման օրինակով 61

Պետրոս Դուրյանի «Լճակ» բանաստեղծության ուսուցումը 72

Դանիել Վարուժանի «Ձոն» բանաստեղծության ուսուցումը համագործակցային մեթոդի կիրառմամբ 77

Ուսուցչի հարցադրումներով ուղղորդված ընթերցանության և կանխագուշակման մեթոդների կիրառումը Գր. Զոհրապի «Երջանիկ մահը» նովելն ուսուցանելիս 87

Դաս-բանավեճ Նար-Դոսի «Սպանված աղավնի» վիպակի օրինակով 100

Վահե Հայկի «Կաթիդ փարան չմոռնաս, մամա» պատմվածքի ուսուցումը 108

Ավետիք Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմի ուսուցումը 116

Ակսել Բակունցի «Ալպիական մանուշակ» պատմվածքի ուսուցումը 130

Գրերի գյուտի, Մեսրոպ Մաշտոցի կյանքի ու գործունեության ուսուցումը 143

Նաիրի Զարյանի «Ասք Անդրանիկ զորավարի» պոեմի ուսուցումն աշակերտների կողմից տարվող որոնողական աշխատանքի մեթոդի կիրառմամբ 171

Օգտագործված աղբյուրներ 196

Կիրակոսյան Գագիկ Հակոբի

# ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

ԵՐԵՎԱՆ 2015

**Киракосян Гагик Акопович**

# МЕТОДИКА ПРЕПОДАВАНИЯ АРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЫ

**УЧЕБНО-МЕТОДИЧЕСКОЕ ПОСОБИЕ**

**ЕРЕВАН 2015**

Ստորագրված է տպագրության 16.03.2015թ..
Թղթի չափսը 60x84 $^{1}/_{16}$ , 12,5 տպ. մամուլ, 10 հրատ. մամուլ
Պատվեր 175: Տպաքանակ 100:

ՀԱԱՀ-ի տպարան, Տերյան 74